digitised

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«*Բազմեն*»ի ներկայ բացառիկին մէջ ստորագրութիւն ունեցող հայրենի մեր գրողներուն բոլոր գրութիւնները արտագրած ենք հոն հրատարակուած առանձին ժողովածուներէն և «*Սովետական գրականութիւն*», «*Սովետական Հայաստան*», «*Գրական թերթ*», «*Հայրենիքի ձայն*», «*Երիտասարդ*», «*Գրքերի աշխարհ*», «*Երեկոյեան Երեւան*», «*Վէմ անկարծ*» եւ «*Բանբեր*» անուն թերթերէն:

Նկարները առած ենք Հայաստանի մամուլէն եւ Վարուժան Մէրթեանի ալպոմէն:

Արտասահմանի գրողներէն արտատպում չենք կատարած:

Ներկայ բացառիկին համար յատուկ գրութիւններ պատրաստած են՝

Կ. ԱԱՍՈՒՆԻ
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
Պ. ՍՆԱՊԵԱՆ
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ
Մ. ԹԷՕԼԷՕԼԵԱՆ
Յ. ԿԱՐԱՊԵՆՑ
Ն. ՁԱՐԵՈՒՏԵԱՆ
Լ. ՄԿՐՏՉԵԱՆ
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ա. ՆՈՒՐԵԱՆ
Ա. ՏՕՆՈՑԵԱՆ
Ց. ՁՈՐԵՑԻ
ԱՐՄԱՆՏ
Գ. ՃԻՆՊԱՇԵԱՆ
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
Է. ՍԱՐԱՃԵԱՆ

Կազմի նկար՝ Յարութիւն Զալաքեան

digitised by A.R.A.R.@

Բագին

ԱՅՍԱՓԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԹ. ՏԱՐԻ, ԹԻՒ 6 — 7 ՍԱՆԴԱՐՄԵՏ — ՍԱՂԱՐԻՆ 1972 ՊԷՅՐՈՒԹ

«ԱՄԵՆԱՀԱՅ» ՍԻՐԵԼԻՆ

Ներկայ բաստիկը ուրացեալ Պարոյր Սեւակի գրական կոդմերը վերլուծող ակադեմական գրութիւններու հաւաքածոյ մը չուզեցինք ընել եւ չէ, այլ Սեւակի չանթահարող մահուան պարագաներէն բխած, այդ առիթով գրի առնուած թարմ, բարեխուն, իրաւ սաղրումներն ու մտածումները մէկտեղող հանդէս մըն է, ուր իրեն համար բանաստեղծի ճշմարիտ պատուանդան մը չինել ակտած առաջին («Ընտիր էիզ հետ» — 1957) գործէն ու յաջորդներէն տրուած լաւագոյն նմոյշներուն եւ կուտակուած մեծ վաստակին մասին «Հպանցիկ թեամբ» բռնուած խօսքերուն քով՝ բանաստեղծին, գիտնականին, հայուն, հայրենասէրին, համամիտական ապրումներով ստեղծած մարդուն, բարեկամ հոգիին ու ամենահարազատին անփոխարինելի կորուստին անանց կսկիծը կայ ամէնէն առաջ, իր բարեկամներուն, մերձաւոր մտերիմներուն ու հեռաւոր երկրպագուներուն ափսոսանքը կայ, համատարած սէրը, արցունքի, աղօթքի, հայհոյանքի ծով մը, որ չէր կրնար չդղմանալ այս արժէքով ու այսպէսի պայմաններու մէջ մեռնողի մը առիթով։

Թերեւս մեր ժողովուրդը իր զաւակներէն մէկուն կորուստով երբեք այնքան չէ ցնցուած, որքան ցնցուեցաւ Պ. Սեւակի անբնական մահուան է լուր։ Միւս բոլոր բացառիկներուն մահերը բացատրելի էին հիւանդութիւններով, ընդհանրապէս թոքախտով, թոքախտէն աւելի անողոք դահիճներուն թրքութեամբ, բայց այս մէկը, այս սիրելիին մահը կատարուածին հետ հաշտեցնող ոչ մէկ պատճառ ունեցաւ։ Մեռաւ, թաղուեցաւ, հողաթումբ ունեցաւ, տարի անցաւ, բայց մեր ժողովուրդը, հոս թէ հոն, դեռեւս չի հաւատար այս անըմբռնելի, անմեկնելի, անկարելի իրականութեան, Պ. Սեւակի մահուան փաստին, չի հաւատար, չ'ուզեր հաւատալ «Եղիցի լոյս» ազերսած, լոյս տրտած իր այս լուսասիւնին խորտակման...

Մահուան նախզգացումը, նախահաշակը անծանօթ չէր Պարոյր Սեւակին, մա՛նաւանդ վերջին տարիներուն յաճախադէպ էր այդ զգայնութիւնը իր լեզուին մէջ ու գրչին տակ, մտերիմ յարաբերութիւններու ընթացքին ու մտերմագոյն թուղթին առջեւ։ Մահը կար, պի-

Digitised by A.R.A.R.@

ալ պատահէր ուշ կամ կանուխ, բայց առարկայական կամ հոգեբանական չէս գիտեր թ՚նչ պատճառներէ զրգռուած՝ Գ. Սեւակ մահը եւ անոր ձեւերը, անբնական մահով մեռնելու մըզ-ծաւանքը նեւրի կը դարձնէ լարուեալ ու բնական մահով մեռնելու բաղձանքի մը մասին էր խօսի.

... Միամի՞տ եմ գտնուում ճարից,
Հաւատում եմ արդարութեա՞ն,
Ու քանում է, թէ ես պիտի իմ··· բնական մահով մեռնիմ···

Այդպէս չեղաւ սակայն, չար ուժ մը նորէն անարդար եղաւ իրեն հանդէպ, մեռաւ անբնական մահով։

Ուրիշ տեղ մը գտնենք նոյն գրաքննութիւնը.

Կարգին մեռնելու համար էլ
Պիտի մարդ բախտ ունենայ···

«Կարգին մեռնելու» այդ բախտը չունեցան իրմէ առաջ «տո՛ւշ-տո՛ւշ» ծնածները, եւ չունենայաւ ինք, վերջին «տո՛ւշ-տո՛ւշ» ծնածը, որ բնատուր էր յարդ հարելիութիւններուն շրայլ փիթիւմով, արագ ձեռքերումներով, կեանքի փորձին մէջ իր չենցուցած խմաստութեամբ խրատաւ զարեր ի վար ու իր հոգիին մէջ, ժամանակն ի վեր ու անիսկ դեմինեարու վրայ, սառատեսութեան ճանրեց բոլոր ուղղութիւններով ու անրաղարձեց մինչա եւ, ինչպէս կը պատահի բազմաթիւ ծնունդներուն հետ, մէկ կողմէ հիացում առաջացուց եւ միւս կողմէ՝ ալեկոծեց գարտակարգի դէմ դրսի տալուն վարք «նոյն ինքը··· Նարին Միքա-կուրիանը»։

Իր ժամանակին նեարգնեարով կապուած մարդ, «հառազայթային ախտով հարուստ խառնուածք, համաչխարհային մշակոյթին հագորդ միտք, մեր հնոյ ժառանգութեան հիւ-թը ներծծած, այլ ժառանգութիւն լմնելու հերոսական ելգումներ տուած նախանձախնդիր էութիւն էր Գ. Սեւակ, որ գնոր օրէնք ու կարգ սահմանելու նախատեսմանեան ճակա-տագրով մը տաղնապեցաւ, պայքարեցաւ գազանային հաւասարութեան պարտադիր կնրգերուն եւ գազանային նուաստութեան ենթակայ գաճեմներուն համակերպութեան դէմ ու ապրեցաւ անատի օրէնքով, եւ դեռ օրինական յաւելումներու ի խնդիր ընդվզեցաւ թիթեւօրէն կա-տարուած ուրացումներուն, գատաստաններուն ու ծուլութեան մահացու ճարպակալութենէն դէմ եւ քաջէն տուաւ գասական ահռելու գայլերուն զլաստացնող, այխուժացնող, ինքնա-թեան կլլող, սեմեան ատաքնորդող ու զորացնող եղանակներուն։

Այս գնով էր, այս ենդով, կիրքով, եռքով ու յաջակութեամբ էր, որ Սեւակ մխրճուեցաւ մեր պատմութեան խռոմայոյզ ժամանակներուն մէջ, ու դարաշրջանները ձայ-ները, խռովքները, իմաստութիւնները իրենց անձերուն մէջ խտացուցած ծնունդներուն էու-թեան խորքը եւ անրելի եւ այրական քաներ պատմեց մեզի, առաւ «Մարդը ափի մէջ» ու անոր բազմաբարդ ներաշխարհին հակասութիւնները հաշորդեց, լոյսի պակաս մը, պապակ մը զգաց ու տղերսեց լոյս, արտրեց լոյս, մեր դպրութեան կատակելով լուսոյ ամրողջ մատ-եան մը։

Մարդ էր Գ. Սեւակ, բարդ էր, հայ էր, հրայրք, բանաստեղծ էր, բացառիկներէն, «իմ տառապած, իմ փառապանծ» Հայաստանի երկունքէն ծնած բանաստեղծ մը, տառապա-ծին վիշտով ալեկոծ ու փառապանծին փառքով սնած հոգի մը, որ չերբհեւ նաեւ իր փա-ռապանծ վաստակին, եղաւ ու յաւիտանս յաւիտենից պիտի մնայ ամենայն հայոց «ամենա-հայ» սիրելիներէն մէկը։

digitised by A.R.A.R.@

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Լուսեղէն հորիզոնին վրայ հայեացքս սեւեռուն կը մնայ Հայաստանի հողին յանձնուած Պարոյր Սեւակին:

Կան անհետացողներ, որոնք սակայն միշտ ներկայ են մըթնոլորտին մէջ: Ներաշխարհային ապրում մըն է, որ լոյսով կ'ողողէ հոգիս: Անլռելի զանգ մըն է, որ միշտ կը հնչէ ականջիս:

Ներապրումի այս զօրանոցը թերեւս ներքին ձայն մըն է, թերեւս ինքնադատում մը, բայց՝ անվրէպօրէն հայաշունչ:

Այս մտածումները զիս կ'առաջնորդեն դէպի արշալոյսը մեր ժողովուրդին, դէպի անլռելի զանգը մեր լինելութեան: Կայինք, կա՛նք ու պիտի մնանք:

Պարոյր Սեւակի գրականութիւնը հայ ժողովուրդի հոգիէն բխած զանգահարումն է, ձեւակերպուած իր հմուտ եւ գիտակից մէկ զաւկին կողմէ: Հայոց աշխարհի ընդերքէն բխած ձայն մըն է՝ ցնցող, բայց հոգեթով:

Պ. Սեւակի բանաստեղծութիւններուն քով եթէ դնենք իր գրական քննադատութիւններն ու պատմական վերլուծումները, գերազանցապէս *մութի մարդը* կ'արձանանայ մեր դիմաց: Այս եւակէտէն եթէ քննութեան առնենք Սեւակի բանաստեղծութիւնները, պիտի համոզուինք, որ մտքի ճառագայթումը սրտի բաբախումներուն հետ համընթաց կը զարգանայ: Մտքի տիրապետութիւնը մեզ խորունկ մտածումներու կը մղէ, իսկ զգացական զարկերակի երաժշտական բաբախումները կը գեղազարդեն մտածողական աշխարհը:

Հայաստանի այս տաղանդաւոր բանաստեղծը առաջին օրէն ուշագրաւ դարձաւ եւ եղաւ միշտ վերելքի ճամբաներուն վրայ:

Ու այսօր, երբ տարի մը անցած է արկածահար իր մահէն ասդին, բանաստեղծը միշտ ներկայ է հայ հոգեկան հորիզոնին վրայ:

«*Եղիցի լոյս*»ը միշտ պիտի շլացնէ հայ ընթերցողները եւ բոլոր գիտակից մարդերը պիտի մղէ լոյսին յառել իրենց աչքերը եւ սպասել, որ շրջապատը լիովին լուսաւորուի:

Նոյն մտածողութեան կը մղուինք, երբ լսենք «*Անլռելի զանգակատուն*» պոեմին զրնգուն հնչիւնները:

Լոյսի եւ զանգահարումի այս մթնոլորտը Պարոյր Սեւակի բանաստեղծութիւնները վերածած են հայկական լինելութեան եւ համամարդկային խորունկ ապրումի: Ինչպէս միտքը եւ զգացումը զօրուած են իրարու, նոյնպէս եւ ազգային ու համամարդկային ձգտումները արձանացած են անոր կառուցումներուն մէջ:

Ու արձանը լոյսով ողողուած է եւ ճառագայթները զանգահարում մը կը բերեն մեր լսողութեան:

Աչքն ու լսողութիւնը կապուած են մտքին եւ սրտին հետ:

Ու Պարոյր Սեւակ կը մնայ հայութեան մտքին մէկ *Լուսակը* եւ մշտահնչիւն *Զանգակը*:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

digitised by A.R.A.R.@

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

«ԵՍ ԼՈԿ ԿԱՐՈՂ ԵՄ ՁԵԶ ՍԻՐԵ՛Լ... ԱՅՍՔԱՆ»

Սնապեան էջ մը կը պահանջէր Պարոյր Սեւակի մասին: *«Բագին»* բացառիկ թիւ մը պիտի նուիրէր անոր, որ գիսաւորի մը նման անցաւ մեր բնաշխարհին ու բանաստեղծութեան երկնակամարէն, լուսաւորելով, հրահրելով, երբեմն բոցավառելով իր չոլոս դին, բայց, մա՛նաւանդ, կիզուելով:

Փարձեցի թուղթին յանձնել այն տպաւորութիւնները ու ապրումները, որ իմս եղած էին, Պարոյր Սեւակի հետ ունեցած հանդիպումիս ընթացքին ու անկէ ետք, չեղաւ. «չստացուեց» պիտի ըսէր ինք: Տպաւորութիւնները չէ որ կը պակսին. չեղաւ, որովհետեւ իր մահէն ետքն ալ դեռ բան մը կը ճնշէ ու մտածել կու տայ, թէ իր մասին անկաշկանդ տպաւորութիւններու գրի առնուիլը արդեո՞ք պիտի չվնասէ իրեն. չէ՞ որ յարաբերութիւններու չափաստիճանը, ընկալեալը, ընդունելին, ներելին, դեռ համահայկականը չէ, զուտ մարդկայինն ալ չէ տակաւին, այլ...

Ստացուեց... ու ես հրաժարեցայ գրելէ իր մասին: *«Բագին»*ի բացառիկ թիւը վստահաբար գուրգուրանքով պատրաստուած թիւ մը պիտի բլլար, ուր մէկ էջ աւելին կամ պակասը շատ բան պիտի չփոխէր ամբողջէն:

Ու ահա երկտող մը կը ստանամ Պ. Սնապեանէն, որով՝ կը յայտնէ, թէ բացառիկի տպագրութիւնը աւարտած է գրեթէ, բաց կը մնայ ինձմէ իր պահանջած էջը, ուր կ'ուզէ, որ անպայման բանի մը խօսք ըսեմ «Ամենահայ» այդ բանաստեղծին մասին, *«որուն հետ*, — կ'ըսէ, — *աղուհացի լիլատակ մըն ալ կապած էք»*: Այո՛, ճիշդ այդ աղուհացը կը նեղէ զիս, կը մղէ որ գրեմ:

Կրկին կը փնտռեմ թուղթին յանձնել այն բանի մը տպաւորութիւնները, որոնք թանկարժէք հարստութեան մը նման պահած եմ հոգիս մէջ, իբրեւ յիշատակ Պ. Սեւակէն, ա՛յն հայ մարդէն, որուն հոգին ոչ մէկ սահման ճանչցաւ, ո՛չ մէկ կաշկանդում կրցաւ տանիլ, եւ ո՛չ մէկ կազապարուած չափանիշ կրցաւ գործածել: Կը փորձեմ ու կրկին անզօր կանգ կ'առնեմ:

Լռութիւնը ինչպէ՞ս կարելի է գրի առնել:

Մնայունը չըսուածներն են, ըսուած քառերէն անդին գտնուողները, գրուած տողերուն ետին պահուրտած յաւիտենական ներկայութիւնները:

digitised by A.R.A.R.@

Այդպէս է երբ խօսուած բան մը կայ, ըսուած բան մը, գրուած տող մը, տողեր: Սակայն երբ լռութիւն է, երբ իրական ու թանձրացեալ լռութիւն մըն է, որ պէտք է ներկայացնել··· Ինչպէ՞ս կարելի է: Պարոյր Սեւակէն պահած ամենաթանկարժէք յիշատակս իր բաներն չեն, այլ լռութի՛ւն մըն է:

1964 Հոկտեմբեր 1ի կէսօրէ ետքն էր, մեր առաջին, ու գրեթէ վերջին հանդիպումին օրը, Արմէնիա պանդոկի ճաշասրահը, ուր տեղի ունեցած խօսակցութիւնները ներկայացուցած եմ ասկէ առաջ «Բագին»ի մէջ (տես 1971ի «Բագին» թիւ 11ը)· մեր խումբին պատկանող բժիշկներէն մէկ մասը ձգածզացած էր, մնացած էինք երեք բժիշկներ, Պ· Սեւակը եւ իր մտերիմ ընկերը, Գ· Ֆ·: Խօսակցութեանց ստացած բնոյթը զիս կը մղէր աւելի զգուշաւոր դառնալու, պատճառ չըլլալու համար անախորժ հետեւանքներու:

Պարոյր Սեւակ կ'ուզեր· Պարոյր Սեւակ բարձրաղաղակ կը յայտարարէր, թէ ինք, մինակը, առանձինը, հայոց մէջ «հինգերորդ կուսակցութիւն»ն էր: Պարոյր Սեւակ, արտասահմանը առանց տեսած ըլլալու, Սփիւռքի հետ առանց ուղղակի յարաբերութիւններ ունեցած ըլլալու, կը թռչէր սահմաններէն անդին, կը սաւառնէր Սփիւռքի հայութեան երկնակամարին վրայ եւ կը փորձէր գտնել ծիածանի մէկ ոտքը յենելու կէտ մը· ծիածան մը սակայն, որ իր հոգիի երկնակամարը կը կառուցէր՝ կեանքի անձրեւին զիմաց բանալով իր զուտ հայկական արեւը:

Պարոյր Սեւակ բացաւառ էութիւն մը դարձած էր ու կրնար հրկիզուիլ· որոշեցի պատրուակ մը գտնել ու հեռանալ սեղանէն:

— Ներեցէք ինձի, — ըսի ու ոտքի ելայ:

— Ո՞ւր, — հարցուցին:

— Ժամադրութիւն տուած եմ ծանօթներու, որոնք ժամը 5·30ին պիտի գան:

Ուրիշ բացատրութիւն տալ չէի կրնար:

— Ետ դրէք, մնա՛, մի՛ երթար:

— Չեմ կրնար, — ըսի ու սիրտս ցաւեցաւ: Պարոյր Սեւակ լուռ էր, կը նայէր աչքերուս ու ոչինչ կ'ըսէր:

Անցայ մօտէն, կոնակի կողմէն, ու ձեռքս երկարեցի ցտեսութիւն ըսելու համար: Բռնեց ձեռքս, քաշեց իրեն ա՛յնքան ուժգին, որ ակամայ կռացայ վրան ու միւս թեւս ալ վզին խոնարհեցի երկարեցի իր միւս ձեռքին:

Հիմա բռնած էր ձեռքերս ափերուն մէջ, կը քաշէր երկու թեւերս, ամուր, ամուր··· ա՛յնքան ջերմութեամբ, այնքա՞ն ամուր··· ու կը լռէր, կը լռէր:

Ո՛չ երբեք բարով ըսաւ, ոչ ցտեսութիւն, լռեց· միայն լռեց:

Ու երբ բաժնուեցայ իրմէ, երբ բարձրացայ սենեակս, խիղճս սկսաւ տանջել զիս: Ինչպէ՞ս կրցայ ձգել ու հեռանալ այդպէս՝ «ժամադրութիւն տուած եմ», ըսելով··· Միւսնե՞րը, մնացողնե՞րը··· Ի՞նչ չափով կրնայինք հաղորդակից ըլլալ Պարոյր Սեւակի աշխարհին: Ի՞նչ ըրի, Աստուա՞ծ իմ, ի՞նչ ըրի ես···:

Բան մը հարուածած ըլլալու զգայնութիւնը կ'ապրէի հիմա· անգիտակցաբար, ակամայ, տրուած հարուած մը անշուշտ, որ չէր դադրեր ցաւցրնող ըլլալէ թէ՛ իրեն համար եւ թէ ինձի: Չկրցայ այլեւս յամենալ բոպէ մը իսկ, արագօրէն իջայ Արմէնիայի ճաշասրահը: Դեռ նստած էին: Մօտեցայ ու ըսի·

— Ճամբեցի ծանօթներս· ազատ եմ:

Աչքերուն մէջ ուրախութեան ժպիտ մը ժայթքեց, տարածուեցաւ, ծածկեց ամբողջ դէմքը:

— Գնանք Արագիլ, վազուց է ինչ, չենք եղել այնտեղ:

Ու գացինք: Այդ մասին ուրիշ առիթով, թերեւս: Հիմա լռութիւն միայն· լռութիւնը միայն···

Բ· ՓԱՓԱԶԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՐԿՈՒ

Երկրորդ անգամն է, որ կը հանդիպիմ անդարմանելի այս զառանութիւնը։ Առաջինը պատահեցաւ Գարոյը Սեւակի մահէն ճիշդ տասնամեակ տարի առաջ, 1960ին, եր՛նգ նոյն պարմաններուն մէջ, ինքնաշարժի արկածով մը նոյնն, գրականութեան կիսատուսածներէն Ալպէր Քամիւի ինքնաշարժային խորտակումով։

Յետոյտեսակ է ա՛ն յայտնութիւններէն Ֆրբանացի Ալպէր Քամիւն եւ Ալպէր Քամիւի մահուան նախօրէին իր հատակը կարկտած Գարոյը Սեւակ այն երկու դէմքերն էին, որոնց ապրումները, խոհերը, սուզումները, թեւաթափումները, ծայրագոյն խռովավառութիւններն ու քաղաքային տարեկոյսները առաւելագոյն չափով մը կ՚արձագանգէին մէջս, հոն յարգարուած իրենց տեղը ծուալելով օրըստօրէ, յայնցնող դեղեցիկութիւններուն հետ՝ նոր ծարաւներ հրահրելով։

Բազմերանգ, յանգուղն, համապարփակ, վարարող ու վարակիչ Քամիւն, գրագէ՛տը , ու մա՛րդը դրսեւորին մէջ, զաղափարակիրը, հայրենատաքը, մարդը մարդէն վեր մղող կախարդը, հայրենիքը անկախ պահելու համար վտանգներուն մէջ դլխիվայր նետուող անպիտակրեալի զոհարերութիւնը՝ Ալպէր Քամիւն, Անհաւանի փիլիսոփայութեան մղը, որ օր մը անիսկան իր լինելութեան ողբերգութիւնը եւ ուրիշ օր մը իր ժողովուրդին ապատագրութեան կրքատարեր պայքարը սեղիֆեան ժայռի մը պէս կրեց, եւ ուրիշ օր մըն ալ, իր մէկ դիրքին, գիւտին, յայտնութեան փոխարէն, հեռաշէրները յայտնեցին ինքնաշարժի արկածին անհաւանի իրականութիւնը, հսկայնի խորտակումը։

Կարգացի լուրը ու առանձնութիւն մը գացի նոյն օրը, ցրտութիւն մը, հարատահարուած մարդու անդարման թախիծ մը, որ կրկնուեցաւ տասնամեակ տարի հաց,

digitised by A.R.A.R.@

ԱՆԳԱՄ

նոյն պայմաններուն մէջ, ինքնաշարժի արկածով մը դարձեալ, Գ. Սեւակ սիրելիին հանգիստարար մահուան լուրին հետ։

Մեր մոլորակին վրայ նոյն ճակատագրով ինկած երկուորեակներ կա՛ն ան-պարման, զոնէ՝ իմ մտածումիս այլպէս կը նեբկայանան Ֆրանսացի Այլպէր Քամիւն ու Հայաստանեայց գրականութեան մէջ վերջին տասնամեակին հակայացած Գ. Սեւակը։ Իրապէս, հատարակաց որքա՞ն գիծեր ունէին անոնք, կեանքի, կեցուածքի, խանդի, ներքին թոհուբոհերու, սրբոյզգրծութեան, այցքի ու տարածականութեան, նուիրուածութեան, հաւատարմութեան, փութաջանութեան ու փութիտութեան, գործունէութեան, աշխատասիրութեան ու վախճանական բախտի որքա՞ն նոյնութիւն։ Քառասունուն տարեկան էր Քամիւ, երբ փչրուեցաւ ինքնաշարժին հետ, քառասունութէն մէկ տարի պակաս տպած էր տասնամեակ տարի հոգ նոյն պայմաններուն մէջ խորտակուած մի՛ սիրելին։

Այլպէր Քամիւ, Գարոյր Սեւակ։ Ճակատագրակից կրնայիներ, հաւասարապէս անժամանակ՝ կեանքին մէջ թէ մահուան դիմաց։

Կեանքին մէջ՝ այնպէս, իսկ մահուան դիմաց՝ Քամիւն ինքզինք նետեց անհեթեթի փիլիսոփայութեան ահաւոր վիհերուն մէջ եւ Սեւակ ապրեցաւ ծանրութիւնը զանոնոշութեան անորոշ ցաւին։

Անհեթեթութեան անհեթեթութիւնը զգացինք տասնամեակ տարի առաջ, անորոշութեան ցաւին որոշ բաժինը տպրեցանք տասնամեակ տարի հոգ, ինքնաշարժի երկու արկածներով երկու բան չարժեցաւ աշխարհի մէջ, խախտեցան ներդաշնակութիւն բերող երկու շաւոյղ կարողութիւններ, մարեցան երկու լուսեր, խաւարեցանք երկու անգամ, երկո՛ւ անգամ...

Գ. ՍՆԱՊԵԱՆ

digitised by A.R.A.R.@



ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ

«ՆՈՐԻՑ ՔԵԶ ՀԵՏ»

ժողովածուն

1957 թուին լոյս է տեսնում Պարոյր Սեւակի «Նորից քեզ հետ» ժողովածուն:

Բանաստեղծն անցել է արդէն տասնըհինգ տարուան «էլբուրեան ճանապարհ»: Հասունացումն ակնառու է, բանաստեղծն իր հնարքների մէջ գտնել է աւելի նպատակասլաց, կայուն եւ դիպուկ, նա դարձել է աւելի հարատեւ եւ անվրէպ, պահելով սակայն իր յախուռն, անչափ եւ անկշիռ թափն ու աւիւնը: Պարոյր Սեւակի բանաստեղծական Գիպասը միշտ չէ, որ ենթարկւում է բանաստեղծին. նրա թռիչքները յաճախ զլխապտոյտ կարող էին պատճառել ամենափորձուած հեծեալին: Պարոյր Սեւակը սակայն չի կորցնում իր հաւասարակշիռը եւ այնպիսի դէմք է ընդունում, որ կարծես ինքն է վարում նժոյգը, որ իր յանկութիւնն է, որ Գիպասը չափի վիհեր եւ արշաւի թեքութիւններով: — Սիրոյ խնդրում Պարոյր Սեւակը նոյն «խենթն» է:

... Բազմայոյզ ու բաղմերանգ է բանաստեղծի «Նորից քեզ հետ» գիրքը. եւ եթէ սիրահար ու սիրելչակ Սեւակը մեծ հաւատ չի ներշնչում իր հաւատարմութեամբ, ապա հայրենասէր Սեւակը միածոյլ է ու երգուեալ հետեւողական. ոչ մի սիրային երգ նա չի գրել այնպիսի կրքով ու ջերմութեամբ, ինչպիսին նրա «Հայաստան» հայրենական դեղօնն է, որը հնչում է

digitised by A.R.A.R.@

հիմնի ուժով։ Սա մի նոր «Ես իմ անուշ Հայաստանի» է, գրուած նոր երանգ-նելով եւ արդիւնք նոր ժամանակաշրջանի.

Իմ քաղցրանո՜ւն,
Իմ քարձրանո՛ւն,
Իմ ստուպա՛ծ,
Իմ փառապա՛նծ։

Այդ է նա, բանաստեղծի Հայաստանը, հեռի մէջ ալեհեր, նորերի մէջ ջահել, խաղողի վազ, վշտերի ջուր, ինքը աւազ, նա բարդենի է սաղարթա-չատ եւ փչատենի է՝ առուն ի վեր փռուած, նա կիսաւեր ամրոց ու բերդ, մա-գաղաթեայ մատեանի թերթ, նա Զուարթնոց աւեր տաճար է, կոմիտասեան Միրանի ծառ, եւ ջրաղաց խորունկ ձորում եւ հորոմել անուշ ծորուն, դու-թանի փայլ արծաթ խոսքի, նեռ ու նիկակ, մկունդ կապիտ, նա՝ հայրենի ծիրանի ծուխ, նա՝ անգիր վէպ ու Սասնայ ծուռ... Նա՝ մրգերի չտեմարան է եւ ոսկեվազեան գինու մառան, թաւիշ գիգծ է եւ փրփուր հաց, արտաչատ-եան գեւաչ խաղող է, ու Սեւանի վառուող կոհակ, երեւանի սիւն է նա ու խոյակ, նա հանդրուան է եւ կանչող փարոս, նա հայկական դերբ է ու դրօշ։

Խօսուն վկայ կոտրածի
Ու վճիտ աչք ցամքած լացի,
Արդարութեան ահեղ ատեան,
Սրի պատեան,
Սիրոյ մատեան —
Միշտ հի՞ն ու նո՛ր իմ Հայաստան։

Ահա Սեւակի «Հայաստան»ը, որի զարդանկարներն ու քանդակները կարելի է հանգիպել մեր ժամանակակից բոլոր պոեմների մօտ։ Ի՞նչն է մուրիկ-մուրիկ հաւաքել եւ կառուցել իր աքանչելի կառոյցը, թէ՞ նրանից են վերցրել եւ գարդարել իրենց գործերը, կարեւոր չէ, կարեւորն այն է, որ Սեւակին յաջողուել է ստեղծել մի գործ, ընդամէնը երեսունութ տողերից բաղկացած, որը մեր պոեզիայի ոսկէ ֆոնդին է պատկանում։

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ քաղցրանո՛ւն,
Իմ բարձրանո՛ւն,
Իմ տառապա՛ծ,
Իմ փառապա՛նծ:
Հների մէջ՝ դու ալեհեր,
Նորերի մէջ՝ նոր ու ջահել.
Դու՝ խաղողի խշմարուած վազ,
Վշտերդ՝ ջուր, ինքդ աւազ.
Դու՝ բարդենի սաղարթաշատ,
Առուն ի վար փռուած փշատ.
Դու՝ կիսաւեր ամրոց ու բերդ,
Մազաղաթեայ մատեանի թերթ.
Դու՝ Զուարթնոց – աւեր տաճար,
Կոմիտասեան Երիրանի ծառ.
Դու՝ ջրաղաց խորունկ ձորում,
Դու՝ հորովել անուշ ծորուն,
Փայլ գութանի արծաթ խոփի.
Դու՝ նե՛տ, նիզա՛կ, մկո՛ւնդ կոպիտ,
Դու՝ հայրենի ծխանի ծուխ,
Դու՝ անգի՛ր վէպ, դու՝ Սասնայ ծո՛ւռ...

Իմ փառապա՛նծ,
Իմ տառապա՛ծ,
Իմ բարձրանո՛ւն,
Իմ քաղցրանո՛ւն:
Դու՝ մտքերի շտեմարան,
Ոսկեվազեան գինու մառան.
Դու՝ թաւշէ դեղձ, դու՝ փրփուր հաց,
Արտաշատեան խաղող սեւաչ.
Դու՝ Սեւանի վառուող կռնակ,
Երեւանի սիւն ու խոյակ.
Դու՝ հանգրուան, կանչող փարոս,
Դու՝ հայկական գերը ու դրոշ.
Խօսուն վկայ կոտորածի
Ու վնիտ աչք ցամքած լացի.
Արդարութեան ահեղ ատեան,
Սրի պատեան,
Սիրոյ մատեան —
Միշտ հի՛ն ու նո՛ր իմ Հայաստան:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

(«*Նորից քեզ հետ*» — 1957)

digitised by A.R.A.R.@

ԼՈՌ ՁԵՌՔԵՐԸ

Ինչի՞ր ասես, որ չեմ արել այս ձեռքերը...
Լույսը մինչեւ լույս չեմ մարել այս ձեռքերը,
Առաջնակի է երբ որ ծնուել,
Նրա արդար կաթով սնուել:

Ինչի՞ր ասես, որ չեմ արել այս ձեռքերը...
Զրկանք կրել, հոգս եմ տարել այս ձեռքերը
Վավ լուրքեռ՝մբ,
Համբերուրքեռ՝մբ:

Ինչի՞ր ասես, որ չեմ արել այս ձեռքերը...
Երկինքը պարզուած պիտի եմ դառել այս ձեռքերը,
Որ չփլուի իր տան պիտը՝
Որդին կռուից դառնայ տունը:

Ինչի՞ր ասես, որ չեմ արել այս ձեռքերը...
Մինչեւ տատի ձեռք եմ դառել այս ձեռքերը,
Այս ձեռքերը՝ ուժը հատած,
Բայց թառամ հետ որ ուժ գտած...

Դար եմ շրջել, սար եմ շարժել այս ձեռքերը...
Ինչի՞ր, ինչի՞ր, ինչի՞ր չարժեմ այս ձեռքերը՝
Ղա՞ւրբ ձեռքերը,
Սո՞ւրբ ձեռքերը:

...Եկէք այսօր մենք համբուրենք երդիքաբ
Մեզ աշխարհում ծնած, սնած,
Մեզ աշխարհում շահած, պահած,
Մեզանից երբեք չկշտացած,
Փոշի սրբող, լուացք տնող,
Անվերջ դատող, անվերջ բանող
Ա՛յս ձեռքերը,
Թող որ ճաքած ու կոշտացած,
Բայց մեզ համար միտամսի պէտ՝
Խա՞ս ձեռքերը...

ԳԱՐՈՅԻ ՍԵՒԱԿ



Այս ձեռքերը՝ մո՞ր ձեռքերը,
Հիմուտքց ու նո՞ր ձեռքերը...
Ինչի՞ր ասես, որ չեմ արել այս ձեռքերը...
Գասկուեիս ո՞նց եմ պարել այս ձեռքերը՝
Ի՞նչ ճազանիով,
Երգամիջո՞վ:

(Հեղինակ՝ Հեղ)

digitised by A.R.A.R.@

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

ՀԻՆ ԶԱՆԱԽՉԻԻ

ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՑ...

Տարի մը առաջ, 17 Յունիս 1971ին, Հայրենիքի բաց-երկնակամարին տակ եւ Հին Զանախչիի ճամբուն մէկ ամայի կէտին՝ անմիտ, բայց ճակատագրական արկածի մը զոհ գնաց Հայ Քերթողութեան նոր սահմանումներ ու իմաստ պարտադրած Գարոյր Սեւակ։

Անոր մահուան առաջին տարելիցին, վերյուշը մեր մէջ կ'արթնցնէ նախ դարմանքը՝ հանդէպ արագ թռած-գացած ժամանակին, որ կարծէք ակնթարթի մը տեւողութիւնը ունենար. եւ այդ վերյուշը ապա՝ հուսաքած ինչ որ ցաւեր ու կսկիծ՝ կը խուժէ մեր սրտերէն ներս, հան գերուած ափսոսախառն վիշտը ոտքի հանելով, վիշտը մեր մեծ կորուստին։

Հին Զանախչիի ամայի ճամբուն վրայ, տեղ մը, պէ՞տք էր, որ բեռնակառքի մը անաղնիւ վարորդին անհամ կատակն ու «Վոյկոդի դեկին գեռ անվարժ՝ մեծ բանաստեղծին ցլայնում հոգեվիճակը անմիտ եւ տգայական խաղադուպարի բռնուէին, ակնթարթի մը մէջ տալով երկու զոհեր, որոնցմէ մէկը ինքը՝ Գարոյրը ըլլար եւ միւսը կինը՝ Նելլին։ Ու թողլքուէին բաց ամայութեան մէջ երկո՛ւ որբեր, արկածամահ ծնողքին զոյգ մը մանչուկները, որոնք կը կոչուէին Ամէն եւ Կորիւն, այսինքն՝ խորհրդանիշներ՝ հա՛յ ցեղին ու հայկական առիւծասրտութեան, որոնց տպագիր կտակներն եղան «Անլռելի զանգակատուն»ը եւ «Եղիցի լոյս»ը...

Անաղնիւ եւ անխիղճ, ակամայ ոճրագործ՝ բեռնակառքին դիւղացի վարորդը ամարդօրէն խո՛յս էր տուած արկածավայրէն, եւրին ձգելով, Յունիսեան ճենճերուտ արեւին տակ, բաց ամայութեանց մէջ՝ զոհերն ու որբուկները... անօգնական։ Եօթնամեայ Կորիւնին աղաղակներն ու «օգնութի՛ւն... Գարոյր Սեւա՛կն է» ճիչերը չեն գտած որեւէ արձագանգ երթեւեկող ինքնաշարժներու վարորդներուն եւ գիւղական ճամբորդներուն սիրտին մէջ։ Չէ՛ զսպուած մէկը, որ խղճալով եօթնամեայ մանուկին, կեցնել տայ սուրացող կառքերէն մէկին ու մէկը՝ նայելու համար, թէ «բանը

digitised by A.R.A.R.@

ինչո՞ւմն է…։ Ահա՛ պատկե՛ր մը, որ խորհրդածել կու տայ…։ Միճամի՛տ են դանուած Երեւան դարձող երկրաբանները, որոնք քաղաք տարած են արկածին զոհերը։ Մխիթարութի՛ւն մը արդարեւ վերեւի տխուր պատկերին քով…

Վերյուշը, այնուհետեւ պիտի կանդնեցնէ մեր յիշողութեան մէջ տպաւորիչ քանդակներ, ինչպէս՝ Հայոց Աշխարհին Մեծ Սուգը, — պեռական արժանավայել յուղարկաւորութիւն, սեւակեան անւանակոչումներ՝ այս ու այն հաստատութեան ճակտին, բաղում՝ հին Զանխչիի դարաւոր ծառերու հովանիին տակ եւ Մեծ Լա՛ցը ծերունի հօրն ու պառաւած մօրը, մոմուռ վկայութեամբ սեւակեան տողերուն.

Թաղե՞լ է(ր) պէտք.
Որդին թաղէ(ր) պառաւ մօրը,
Ո՛չ թէ մայրը ցահե՛լ որդուն…

Սուգը համազգային էր, եղա՛ւ համահայկական, կոտտաց ամէ՛ն հայու սիրտին վրայ. խորունկ եղաւ նաեւ իմ մէջս այդ մե՛ծ կորուստին կսկիծը։ Դեռ երկու շաբաթ չէր անցած մեր գրական հարազատ եղբայրութիւնը նշանաւորող ողջագուրումին վրայէն եւ ահա «ո՛չ եւս էր» եղբայրը…

Հսկումի այդ օրերուն, ինծի առիթը տրուեցաւ գրել մեր ողջագուրումի մասին։ Գարտաղրանքին տակն եմ վերյուշին, անգամ մըն ալ անդրադառնալու մեր առաջին եւ վերջին հանդիպումի դէպքին, որ տեղի ունեցաւ Հայաստանի Գրողներու Ճրագ Համագումարի հաւաքասրահին մէջ, Ցունիսի 2ին։

Սիւրբահայ 9 կամ 10 հրաւիրեալ գրողներէն մէկը ես էի. պատիւ մը էր ինծի համար ներկայ գտնուիլ Հայաստանի Գրողներու Ճրագ Համագումարի նիստերուն։ Սրահին առաջամասի նրստարաններու առաջին շարքին տեղ տրուեցաւ մեզի։ Գրողներու Միութեան Քարտուղարութեան վերապահուած բարձրադիր տախտակը դիմացն էր, շատ մօտիկ մեր դրաւած նստարաններուն։ Հո՛ն էր Գարոյր Սեւակը, «հարէշական թխութեամբ», թաւ յօնքերով, գիսատիպ մազերով եւ յողնած նայուածքով։

Թէեւ յստակ կը լսէի ելոյթ ունեցողին ձայնը, բառերն ու մարաթոնային չեչտուածութեամբ խօսքերը, սակա՛յն, ուշադրութիւնս յաճախ կը գաւառանէր ինծի, ե՛տ փախչելով դէպի նախորդ Համագումարին մէջ՝ ռումբի պէս պայթած, ինքնատիպ, առողջ, անկրկնելի Գարոյր Սեւակի փայլուն տաղանդին ճարտասանական շքեղ ելոյթը, ուր ան հնչեցուցած էր «խնդրելու պէս պահանջելով» խօսքը, որ նշանաւոր ասոյթ պիտի դառնար յետոյ։ Նորութիւն էր եղածը եւ՝ նոթաթերութիւն. թեր ու դէմ շատ բան դրուեցան այդ ելոյթին մասին, որուն արձագանգները հասած էին նաեւ մեզի…

Արդ, նախորդ այդ հմայքին տեղ, այժմ նստեր էր Գարոյր Սեւակի մութմթագոյն դէմքին հոգեբանական «հէ՞րն անիծած»եան խռովկան տնտրամադրութեամբ մթամածութիւն մը։ Մի՞թէ ծերանալու վաղահաս թուլկամութիւնն էր դինք տնտրբեր դարձնողը,

Մերանում ենք, Գարո՛յր Սեւակ,
Մերանում ենք, սիրելի՛ս։—
Մէկ օր խմում
Եւ երկո՛ւ օր արդէն խումար ենք
ընկնում…

. . . . . .

Մերանում ենք, Գարո՛յր Սեւակ,
Սակայն… խելքի չե՞նք գալիս…

Խելքի չգալու իմաստութի՛ւնը… որմէ մի՛շտ տառապած են անկեղծ, իրաւ, մարդասէր բոլո՛ր հոգիները, առանց խելքի գալու…

Համագումարին ամբողջ տեւողութեան, Գարոյր Սեւակի դէմքին արտայայտութիւնը մնաց խռովկան. մթին քմծիծաղի մը հովը, երբեմն, կը խառնէր անոր դէմքին դիծերը, բայց կը

digitised by A.R.A.R.@

զգացուէր, որ խռովքին արմատները շատ խորունկ թաղուած էին իր ներաշխարհին մէջ։ Համազգային չափանիշով, մեր բանաստեղծութիւնը նուաճած մարդու ո՛չ մէկ հպարտ գիծ կ'երեւէր անոր միապաղաղ դիմագծերուն վրայ։ Գուցէ դառնութեան, երկիւծանքի, հայկական տրիտութեան, ըմբոստացումի եւ հիասթափութիւններու, մեկուսացման բարդոյթներէ առաջացած համակերպուածութի՛ւն մը եւ ամէ՛ն ինչի մէկ անգամէն հրաժեշտ տալու ստոյգ համոզումը կայացուցած էր. տեղ մը, պէտք է գրած ըլլար ան,

...Թէ հա՛րկ լինի, մանաւանդ պէտք,
Ես խաւարի հետ կը մեկնեմ Ինքս՝
Դառնալով Նրա Թագաւորութեան
Հին Հպատակն ու Նոր Քաղաքացին՝
Անդարձ կը մեկնեմ խաւարի հետ Ես,
Միայն թէ մեր այդ մեկնումից յետոյ
Ժամանի ինքը Արշալո՛յսը...

Համագումարի առաջին օրուան առաջին ընդմիջումին, ճեմասրահին մէջ խոնուողներու ալիքը մակընթացուելով պիտի ջլէր դէպի իր թուխ-թխութեամբ փարուացած Պարոյր Սեւակը։ Կարելի էր ըսել, թէ ան բարձրահասակ էր. շրջապատուած էր երկրպագուներով կամ աւելի ճիշդ՝ համակիրներով, որոնց մէջ մեծ թիւ կը կազմէին կիները, որոնք կրնային նախանձ շարժել տալ. եւ արդէն կատակի սլաքներ կ'արձակուէին դէպի «հարէշական թխութեամբ» յայտնի թիրախը...

Ինծի ընկերացող Վ. Դագէսեանի հարցին, թէ կը ճանչնայի՞ Սեւակը, ըսի՝ «ճանչնալը դիւրին է. հետը խօսած չեմ. անձնապէս չենք ծանօթացուած խրարուն։ Մօտեցանք Սեւակին ու ճեղքեցինք զինք շրջանցող շղթան։ Վ. Դագէսեան ներկայացուց զիս. հարցրեց թէ անուս լսած էր, փլաս վրաս ու փաթթուեցաւ վզիս։ Այլոց հետ ծանօթացման արարողութիւնը միշտ վերջացած էր՝ անկիրք, ծանօթացումը՝ տոմարական ձեռքի սեղմում, ապա՝ անտարբերութիւն։ Իսկ Սեւակին հետ մեր ծանօթութիւնը ողջագուրումով սկսաւ։ Կարծէք երկու եղբայրներ երկար տարիներու բաժանումէ ետք կը գտնէին զիրար։ Հասկնալի՛ էր, որ ան ծանո՛թ էր իմ մշակած դրականութեան ու անտեղեակ չէր իր մասին արտայայտած իմ մտքերուս։ Ուրեմն, մենք հոգեպէս ծանօթ էինք իրարու եւ հարազատութիւն մը կար մեր երկուքին դրական ըմբռնողութեան մէջ։ Աչքերը թրջուած էին, երբ կը կրկնէր.

— Ինչպէ՞ս ես, եղբա՛յրս...։

Ափսո՛ս. ընդմիջումին վերջ։ դնող զանգը բաժնեց չուտով մեզ իրարմէ եւ այնուհետեւ բնա՛ւ առիթ չներկայացաւ, որ միասին ըլլայինք։ Երկօրեայ նիստերէն ետք, մենք այլեւս գործ չունէինք նիստերու հետ։ Ու լսեցինք, որ Պարոյր Սեւակ Գրողներու Միութեան նոր Քարտուղարութեան մաս չէր կազմեր եւ մեկնած էր իր ծննդավայր գիւղը։

Ու մեկնելով ծննդավայր գիւղը՝ Զանգեզուր, հաւանաբար իր միտքին մէջ, անգամ մըն ալ հնչեցուցած էր իր յօրինած «Դարակէսի հիմնը»ի բոլո՛ր հատուածները, կարելի՛ համբուն երկարութիւնը անդդալի դարձնելու համար,

Հարիւր տարին մէկ են ծնուում
Մեծութիւններն այս աշխարհի,
Բայց ամէն օր հարիւր մեծ է գալիս
աշխարհի,
Ծնուում են մեծ, բայց չեն թողնում,
որ դառնան մեծ...

Երբեմն, համլէթեան երկդիմութեան կամ պարզապէս՝ թէականութեան անորոշ մտալկումը կը չարչրկէ մեզ հարցադրումներով։ Գրողներու Միութեան Քարտուղարութեան կրկին մաս կազմելով, արդեօք պիտի խնայուէ՞ր մեզի Պարոյր Սեւակին մահասուքը, — Զանգեզուրի համբուն վրայ ամառվայրի պատահա՛ր։ Բայց, հարց ու պատասխանները պէտք չէ մթաստուեր ձգեն իրողութեանց վրայ։ Պիտի ըսենք, թէ իր ճակատագի՛ր էր այդպէս տեղերեանած եւ

digitised by A.R.A.R.@

այդ ճակատագիրին մէջ կը մտնէր, ա-հա՛ անակնկալօրէն ու ինքնիրմէ բուսած ազդակ մը, բեռնատար կառքին չփացած վարորդին վարորդական անմիտ «հանա՛-ֆը»...

Եւ այդ աղիտաբեր «հանաֆին» առ-ջեւ անհրկա՛ծ անվարժութիւնը ավտո-վարումի մէջ Պարոյր Սեւակին, որ մեր արդի քերթողութեան բերած էր մեծ Հարտասան – տոդակառուցողի, նորարա-բի, «Հեղինակ տարականոն գրքերի եւ չգրուած օրենքների վերծանող» բանաս-տեղծի նուաճուած համբաւը... Սակայն, այս բոլորը չէին օգնած ավտովթարի կանխումին: Մեծ բանաստեղծին տաս-ներեքամեայ որդին՝ Արմէն կու տայ ա-ղէտին Ֆարագրականը — «Պապան կա-րածից «Վոլկա»ն դուրս հանեց, եւ ու-րախացաւ, որ «հանճարեղ է» դուրս հա-նել, որ անպայման ի՛նքը, առանձին մեզ նրեւան պիտի տանէր: Մաման չառար-կեց... Տատիկն ու պապիկը մեզ ճանա-պարհ դրեցին եւ մենք հեռացանք Ջա-նախչիի մեր տնից...»:

Ամէ՛ն ինչ նպաստած է աղէտին: Պարոյր Սեւակ ուրախ է, որ «հանճարեղ» կրնար վարել «Վոլկա»յին ղեկը. կինը՝ Նելլին «չէ առարկած», որովհետեւ, վեր-ջին երկու շաբաթները ջղային դարձած ամուսինը կրնար բարկանալ. յետոյ՝ սա գիւղական վարորդը, որ ճամբայ չէ ու-զեր տալ եւ ճամբայ տալէ ետք, «Վոլկա-յի վարորդը վախցնելու համար, հան-ճարեղ միտքը յղացած է» բեռնակառքը թեքե՛լ «Վոլկա»յի կողմը... ու՝ պատա-հած է ավտովթարը, խլելով երկու դո-հեր...

Յանկարծ տարիներ առաջ, Պարոյր Սեւակ գրած է «Մեռնիլ» քերթուածը, գրեթէ միեւնոյն խորքով, ինչպէս Պետ-րոս Դուրեանի «Իմ մահը»: Սեւակ կտա-կած է անով իր իղձը,

Եթէ մեռնի՛լ...
Թող սպանուե՛մ,
Թող կործանուե՛մ
Այնպէս ապրած ու բան արած
Որ նորածին մանուկների տեսքո՛վ նորից
Վերածնուեմ՝
Իմ անունո՛վ կնքեն նրանց...

«Անլռելի զանգակատուն»ը եւ «Եղի-ցի լոյս»ը, երկու լրի՛ւ ամբողջութիւններ են, «այնպէս ապրած ու բան արած»ի, որ անվիճելի է իր վերածնո՛ւնդը, նորա-ծին մանուկներու տեսքով եւ անոնց տըբ-ւելիք իր անունին կոչումով...:

Եւ վերյուշը կ'ոգեկոչէ, արամու-թեամբ, թախիծով՝ մեր ողբագուրումի առիթով, սեւակեան բառերով ու շունչով, արձագանգի մը պէս,

— Ինչպէ՞ս ես, եղբա՛յր...

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԱՋԳԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԽՕՍՔ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

•

Մեր ժողովուրդը, որ կէս դար առաջ կանգնած էր մահուան անդունդի առաջ եւ թւում էր, թէ այլեւս վերջն է հայոց, հրաշալի պայմանների մէջ, բայց մանաւանդ հերոսական ճիգերով, արիւն եւ արցունքով, նա փոխեց իր սեւ ճակատագիրը, իր հայեացքը դարձրեց դէպի կեանք, դէպի վերածնունդ, դէպի վերաշինութիւն, դէպի նոր ստեղծագործութիւններ, դէպի նոր ապագայ։ Ահա այդ-

digitised by A.R.A.R.@

պիսի պայմանների մէջ, որանից կէս դար առաջ Հայաստանի վերածնունդով, ծնաւ, հայ լինական համեստ յարկի տակ, Պարոյր Սեւակը։

Պարոյր Սեւակի ծնունդը՝ մեր կեանքի, մեր մշակոյթի, մեր ներկայի ու մեր ապագայի համար եղաւ ճշմարտապէս մի պայծառ «եղիցի լոյս»։ Նա իր ողջ կեանքով ու ստեղծագործութեամբ դարձաւ շողացող մի լոյս մեր կեանքում։ Ահա այսպէս ճշմարտուեց, թէ «լոյս եղեւ» մեր կեանքում մի անդամ եւս։

Մենք բոլորս տակաւին ծանր զգացմունքների ներքեւ ենք գտնուում, Պարոյր Սեւակի դերեզմանի առաջ, որովհետեւ մեղանից ոչ ոք, ո՛չ ոք չէր սպասում այսպիսի վաղաժամ եւ ողբերգական մահ։ Նա համայն հայ ժողովրդի սիրելին էր եւ պաշտելին, տակաւին երկար տարիներից ի վեր։ Նա իբրեւ գիտնական, իբրեւ Հայաստանի քաղաքացի, իբրեւ հայրենասէր, բայց մա՛նաւանդ իբրեւ ստեղծագործող բանաստեղծ եղաւ շատ քչերից մէկը, պայծառ մի աստղ նոր ծագած, հայոց նոր կեանքի երկնակամարին վրայ, ուրիշ աստղերի կողքին։ Նա պայծառ իմացականութիւն էր՝ լի ճշգրիտ եւ ճշմարիտ գիտելիքներով, ծանօթութիւնների եւ հետաքրքրութիւնների լայն հորիզոնով, բառին ամբողջական իմաստով՝ մտաւորական եւ գիտնական։ Նա մի բարի սիրտ էր, գեղեցկօրէն բարի՝ զարդարուած բազում առաքինութիւններով, մի բարոյական նկարագիր, վճիռ ու վճռական։ Բայց մա՛նաւանդ նա մեծ բանաստեղծ էր, երկրպագու գեղեցիկի եւ յօրինող գեղեցկութիւնների, ներդաշնաւորումների։ Կարծում ենք, թէ ճիշդ բնորոշած կը լինենք նրա անձնաւորութիւնը, եթէ ասենք, թէ նա խտացնում էր իր մէջ, իր հոգու մէջ դասական իտէալը, ճշմարիտի, բարու եւ գեղեցկի, ներդաշնակ մի ամբողջական համադրութեան մէջ՝ լուսաւորուած նաեւ անսահման, ջերմ հայրենասիրութեամբ։ Պարոյր Սեւակը հայ ժողովրդի սրտում իր տեղը դրաւեց վիրջնականապէս, եւ մեզ համար նա մահացած չէ։ Ինչպէ՞ս կարելի է Պարոյր Սեւակի դերեզմանի առաջ չհաւատալ հոգու անմահութեանը։ Այն օրը, մենք յիշում ենք, երբ մեր ամբողջ ժողովուրդը ի Հայաստան, մեր հայրենի պետութեան ամենաբարձր դեկավարների առաջնորդութեամբ թափօր կազմած, Պարոյր Սեւակի մարմինը տանում էին դէպի իր հայրենի գիւղը թաղելու, մենք զգացինք, թէ այդ թափօրը մահուան թափօր չէր, այլ ճշմարիտ մի յարութեան թափօր։ Մենք հոգին յանձնեցինք նրա մարմինը լոկ, բայց նրա հոգին առաւել կենդանութեամբ, առաւել պայծառութեամբ կայ մեր մէջ, եւ կը մնայ յաւիտեան, հայ ժողովուրդի յիշողութեան մէջ, այսօր, վաղը եւ միշտ եւ բոլոր ժամանակներում։

Պարոյր Սեւակն այնպիսիներից ե՞ղաւ, որ պիտի ապրի ա՛յնքան ժամանակ, ինչքան ժամանակ պիտի ապրի հայ ժողովուրդը, իսկ հայ ժողովուրդը անմահ ժողովուրդներից մէկին է աշխարհի վրայ։

Թաղման օրը, մենք նոյնպէս յիշում ենք, իր գիւղի մօտ համախմբուել էին Արարատի շրջանի աշակերտները, որոնք կրում էին մի մեծ պաստառ, որի վրայ գրուած կար. «Մի՞թէ այլեւս պիտի լռի Զանգակատունը անլռելի»։ Այս ողբը անչուշտ հարազատ արտայայտութիւնն էր հայ ժողովրդի, որտի մորմոքն էր ողջ հայութեան։ Սակայն մենք մտածում ենք, թէ այդ աղերսի անծանօթ հեղինակը, մենք բոլորս եւ բոլոր հայերը, որ ի Հայաստան եւ որ ի սփիւռս աշխարհի, հաւատում ենք հաստատապէս, թէ ո՛չ, «Զանգակատունը անլռելի» երբէ՛ք չի լռելու այլեւս։ Նա միշտ պիտի հնչի եւ գուցէ աւելի հզօր, աւելի հզօր վաղը, քան այսօր։ Նախ՝ որովհետեւ Պարոյր Սեւակ ճշմարիտ, մեծատաղանդ ստեղծագործող էր, եւ նրա գործը անմահ է անկասկած։ Գալիք ժամանակներում, նոր սերունդները առաւել պիտի գնահատեն նրան, իբրեւ մեր ստեղծագործող մեծամեծներից մէկին։ Բայց նաեւ մի ուրիշ պարագայ, մի ուրիշ հանգամանք պէտք է ընդգծենք, «Զանգակատունը անլռելի»

Գրադ. Գրադ. Գրադ.

երբեք չի լռելու, որովհետեւ «Անլռելի զանգակատուն»ը լոկ Գարոյը Սեւակի անձի կամ ստեղծագործող անձնաւորութեան սեփականութիւնը չէր, այլ եղաւ հայ ժողովրդի հոգու ամենավաւերական, ուժգին արտայայտութիւնը։ Եւ աւելին տակաւին, Գարոյը Սեւակի «Անլռելի զանգակատուն»ը բարձրացաւ այն պատուանդանի վրայ, որ բնորոշում է մեր վերջին յիսուն եւ աւելի տարիների կեանքը, Հայաստանի եւ հայ ժողովրդի վերածնուած կեանքը։ Մենք այստեղ «Անլռելի զանգակատուն» ասելով չենք հասկանում միայն այդ անունը կրող նրա մէկ գիրքը, այլ նրա ողջ ստեղծագործութիւնը եւ այն երկերը, որոնք տակաւին անտիպ են եւ որով պիտի ամբողջանայ եւ հոյակապ մի ամբողջութեան վերածուի Գարոյը Սեւակի ստեղծագործութիւնը։ Ահա այդ ամբողջը ի մի առած, մենք նկատում ենք «Անլռելի մի զանգակատուն», որ ուղիղ կը լինի ասել, թէ բարձրացաւ վերջին յիսուն եւ աւելի տարիների վրայ, վերածննդի պատուանդանի վրայ։ Այդ «Անլռելի զանգակատուն»ը հնչել սկսեց Հենց Սարդարապատի զանգերով. Հայաստանի վերածննդով, յիսուն եւ աւելի տարիների ընթացքում կատարուած աշխատանքով, պայքարով, ստեղծագործութիւններով։ Այդ պատուանդանի կառուցմանը մասնակցեցին բոլոր հայերը՝ չինականներից, բանուորներից սկսած մինչեւ մեր դիտնականները, մեր մտաւորականները, մեր դաստիարակները, մեր պետական գործիչները, եւ մինչեւ հանճարեղ Եղիշէ Չարենց։ Ահա այդ բոլորը հանդիսացաւ այն հիմքը ամուր, որի վերեւ կոթողուեց Գարոյը Սեւակի «Անլռելի զանգակատուն»ը։ Այսպիսով աւելի իմաստաւորւում է ու արժեւորւում Գարոյը Սեւակի անմահ գործը՝ իրրեւ բիւրեղացումը հայ ժողովրդի վերջին յիսուն եւ աւելի տարիների կեանքի, պայքարի, ստեղծագործութիւնների, յոյսերի եւ տեսիլքների։ Ահա թէ ինչու, հետեւաբար, «Անլռելի զանգակատուն»ը պիտի հնչի թ՛ւ այսօր, թ՛ւ վաղը, թ՛ւ յաւիտեան՝ ի փառս հայ ժողովրդի, ի փառս հայ բանաստեղծութեան, բայց մա՛նաւանդ՝ ի փառս Գարոյը Սեւակի հանճարի։

Փառք եւ լոյս եւ սէր եւ պաշտամունք մեծ բանաստեղծի անթառամ յիշատակին։

ՎԱՉԳԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

digitised by A.R.A.R.@

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ



Պ. ՍԵՒԱԿԻ «Անլռելի Զանգակատուն»ը

Հայրենասիրական պաթոսն առաւել հզօր թափով դրսեւորուել է «Անլռելի զանգակատուն» պոեմում։

Սրա սիւժեայինն հիմքում ընկած է Կոմիտասի կեանքի պատմութիւնը։ Արտացոլուած են մեծ արուեստագէտի կեանքի ու գործունէութեան առաւել սուր դրուագները՝ որբ մանկութիւնը, ուսումնառումն ու հետագայ գործունէութիւնը Էջմիածնում, Բերլինում, ստեղծագործական փթթումը, համբաւի տարածումը, Եւրոպայի խոշոր կենտրոններում, եւայլն։

Ի հարկէ հեղինակը խնդիր չի դրել տալու Կոմիտասի կենսագրութիւնը։ «Անլռելի զանգակատուն»ը ամենեւին կենսագրական երկ չէ։ Բուն նպատակը մեծ հայի գեղարուեստական ընդհանրացուած պատկերն է, որն իրականացուած է յուզական ջերմ պոռթկումների միջոցով։ Կոմիտասի կեանքի պատմութիւնը գեղարուեստօրէն ամբողջացնելու համար կատարուած են հոգեբանական վերլուծութիւններ, արտացոլուած են ներաշխարհի զանազան դրսեւորումներ, չիրականացուած սէրը, ընդհարումը Էջմիածնի ճահճացած միջավայրի հետ, վիշտն ու խնդութիւնը, կենդանի կապը ժողովրդի հետ։

Պոեմում նաեւ մանրամասն խօսք է առնում Կոմիտասի ստեղծագործական երկունքների, նրա զանազան մտայղացումների, նրա գրեթէ բոլոր երգերի մասին։ Այստեղ եւս մասնագիտական նպատակ չկայ, այսինքն՝ խնդիր չի դրուել Կոմիտասի արուեստի գեղագիտական վերլուծութիւններ ու գնահատականներ տալու, թէեւ, պէտք է ասել, Պ. Սեւակը հիանալի հասկանում է հայ մեծ երաժշտագէտի արուեստն ու նրա երգերի ոգին։

Խօսելով վերջինների մասին, քանաստեղծը ցոյց է տալիս, որ դրանք ժողովրդի հոգսերի, վշտերի եւ ուրախ տրամադրութիւնների արտացոլումներ են։ «Անլռելի զանգակատուն» պոեմում Կոմիտասի հոգեկան աշխարհի շարժումները ցոլանում են նրա երգերի մէջ։ Դրանց

digitised by A.R.A.R.@

միջոցով բանաստեղծը բացայայտում է պոեմի հերոսի կերպարի բովանդակությունը։

«Անլռելի զանգակատուն»ը խորապէս ազգուած պոետական ոգու արտայայտութիւն է։ Կոմիտասի կեանքի պատմութիւնը ջերմացուած է յուզական համակիչ պոռթկումներով։ Ողբերգական ցնցող պատկերները գալիս են յատկապէս վերջին մասում, որտեղ պատկերուած է Կոմիտասի կեանքը Գոլսում, Եղեռնի պատմութիւնը եւ խելագարութեան դէպքը։

Քնարական վարակիչ ջերմութիւնը ցոյց տալու համար բաւական է բերել պոեմի վերջին էջերը։ Աւարտելով Կոմիտասի դեղարուեստական կերպարը, բանաստեղծը վերջին մասում, թւում է, համապատասխարի է բերում ամբողջ նախորդ պատմութիւնը, նոր խտացումներ կատարում, նոր գոյներ, ցցուն գծեր աւելացնում, որոնցում մէկ անգամ եւս գոլանում է հայրենասէր արուեստագէտի կերպարը. դու մնենայն հայոց երգի վեհափառն ես, մեր երգի Մեսրոպ Մաշտոցը, մեր ձայնալարը, սրբատաղ պատշգարը, մեր փակ հոգին, քաց աշխարհիր, մեր ճարը՝ օտարամուտ ախտի դիմաց.

Դո՛ւ՝ սրբազան
մի աւազան,
Որ մեր հոգին ախտահանեց...
Դու՝ մեր կարօտ ու մեր մորմոք,
Մեր տագի բուրմ,
Մեր խաղի մոգ,
Մեր մշտահունչ ու մշտարթուն
Անլռելի զանգակատո՛ւն...

Բերուած հատուածը պատկերացնում է տալիս պոեմի պոետական թափի եւ յուզական լիցքի մասին։ «Անլռելի զանգակատուն» գործի արժէքն այն է, որ յուզական համակիչ ձեւով արուած է Կոմիտասի գեղարուեստական ընդհանրացուած պատկերը։

Սակայն գրանով չի վերջանում գրքուածքի նշանակութիւնը, ինչպէս եւ Կոմիտասի կեանքի պատմութեամբ չի սպառւում պոեմի բովանդակութիւնը։ Գ. Սեւակն աւելի հեռուներն է գնում, աւելի է ընդարձակում թեմայի ծաւալն ու աւելի բարձրացնում բովանդակութեան նշանակութիւնը։ Այդպիսին է բանաստեղծի ճանապարհը՝ մասնաւորից միշտ գնում է դէպի ընդհանուրը։ «Անլռելի զանգակատուն» պոեմի գաղափարական բուն մտայղացումը կայանում է նրանում, որ Կոմիտասի կեանքի ցնցող պատմութեան միջոցով արտացոլում է հայ ժողովրդի ճակատագիրը, հայոց աշխարհի ճակատագիրը՝ պատմական որոշակի ժամանակաշրջանում։ Երկու ճակատագիր, երկու պատմութիւն՝ իրարից անբաժան, գիրկընդխառն։ Այստեղ պէտք է որոշել պոեմի գլխաւոր արժէքը։ Գրական քննադատութիւնը ճիշդ է նշել այս կողմը։

Կոմիտասի կեանքի ողբերգական պատմութիւնը եւ հայ ժողովուրդի ողբերգական ճակատագրի նկարագրութիւնը գաղափարական է հասնում «Եղեռնի համազանգ» մասում, որտեղ սիմֆոնային երկու դծերը միանում են իրար եւ խտացած ձեւով ընթերցողի առջեւ գնում մի ցնցող պատկեր։

Գ. Սեւակը ի բնէ օժտուած լինելով քնարական ծով յոյզերով, թւում է, մեծ ճնշում է գործադրում, որպէսզի մեղմացնի պոռթկացող բողոքի ճիչը եւ գեղարուեստական ընդհանրացման պլանը դուրս չբերի ափերից։ Բերենք մի հատուած «Եղեռնի համազանգ» մասից. հայոց հարցից Թուրքիան որոշեց ազատուել՝

Մի տեղ ելիով,
Որ ոչ լսուած էր, ոչ էլ տեսնուած
Մարդկային ցեղի
Երբեւէ կրած անպատուութեան մէջ
Եւ մինչեւ անգամ իրենց թուրքերի
Արիւնով հունուած սեւ պատմութեան
մէջ...

Մարդիկ, որ եօթ տարին մի անգամ չտպիկ չեն փոխում, եօթ տարին մէկ օճառ չեն տեսնում, բնաջինջում են մի հին,

digitised by A.R.A.R.@

քաղաքակիրթ, բաղմատաղանդ ժողովրդի զաւակներին՝

Ովքեր Աստծու պէս
Հրաշքներ էին օրէցօր կերտում,
Ու եթէ Աստծուց տարբերւում էին,
Ապա այնքանով,
Որ նա անգոյ էր,
Իրենք՝ իրական...

Եղեռնի առաջին դրուագների նկարագրութիւնները, որոնց հետ միահիւսուած են Կոմիտասի կեանքի ցնցող պահերի պատկերները՝ խելագարութեան հանգամանքը, եւայլն, — ամէն անգամ եզրափակւում են պոետական ազդու դարձուածքներով.— «Դէ՛ ե՞կ, վարդապե՛տ, մի՛ խելագարուիր...», — «Դէ՛ ե՞կ, վարդապե՛տ, ու մի՛ ցնորուիր...», — «Դէ՛ ե՞կ, վարդապե՛տ, եկ ու մի՛ գրգռուիր...», *եւայլն:*

Այսպիսով «Անլռելի զանգակատուն» *պոեմի դաղափարական հիմնական պրոբլեմը հայ մեծ մարդու ողբերգական ճակատագրի արտացոլումն է եւ, դրա հետ միասին ու դրա միջոցով հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի պոետական մարմնաւորումը:*

«Անլռելի զանգակատուն»*ը երանգաւորուած է մռայլ գոյներով ու թախծալի հնչիւններով: Դա պոեմի իւրայատուկ գծերից մէկն է, մի իւրայատկութիւն, որը բխում է ոչ թէ բանաստեղծի ուշխարհայեացքից, այլ նիւթի բնոյթից: Մեր ազգային կեանքի անցեալը այնպիսի նիւթ է տալիս, որի զեղարուեստական պատկերը չի կարող զերծ լինել վշտի ու թախծի երանգներից: Այդ շատ լաւ գիտէին մեր դասական շրջանի գրողները: Յովհ. Թումանեանը իր քննադատին՝ Փ. Վարդանեանին, որը նրան որակել է «Վշտի ու թախծի երգիչ», — պատասխանել է.* «Ընդհանուր առմամբ դու ճշմարտանստեղծին նկատել ու ճանաչե՛լ ես շատ ճիշդ, որ նա իր ժողովրդի թրշուառութեան երգիչն է, թախիծի, վշտի բանաստեղծ, որ այդ տխրութիւնը, այդ թախիծը ունի զանազան ազբիւրներ, բայց բոլորը մի տեղից են գալիս ու մի տեղ են գնում եւ այդ է մեր — հայկական կեանքը, հայկական աշխարհը»:

Պարոյր Սեւակը, ի հարկէ, վշտի եւ թախծի բանաստեղծ չէ: «Անլռելի զանգակատուն»*ը, չնայած այդքան ցնցող, կսկիծ ու բողոք յարուցող բովանդակութեան, զերծ է վհատութեան ու լացի մտայնութիւնից: Ընդհակառակը, բովանդակութիւնը շարժւում է այնպէս, որ մռայլը ցրւում է եւ գրուածքը աւարտւում է լուսաւոր պատկերներով:*

(Հատուածներ)

ՍՈՂՈՄՈՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@



ՂՕՂԱՆՋ ՄԹԱԳՆՈՒՄԻ

Ա՛խ, վանայ ծովա՛կ,
Բայց ախար ի՞զ ինչ
Երկնքի խամբելն ու լիսմբելը,
Երբ քո շուրջը եւ քո հաղորդում
Ծնրադրելի է խաւարը նիւթա՝
Ազօթարանի յերմեռանդութեամբ,
Որ չյամենա՛յ,
Այլ յարատեւի՞
Իր շաղախած իշխանութիւնը;
Իսկ քո հեռաւոր-մօտաւոր քոյրը՝
Լիճը Սեւանա՛յ...

Վարդապետ իմ խե՛ղճ,
Բայց եւ բախտաւո՛ր,
Բայց եւ բախտաւոր, որ չգիտէիր,
Թէ իր սեփական արիւնի գնով
Սեւանայ լիճը լոյսեր պիտի տայ
Մերոյերի՛ն անգամ՝
Ցարուցանելով հարայծամների
Դժգոհութիւնը եւ փոշտացը,
Սակայն ո՛չ մի կերպ չկարողանայ
Լոյս տալ մթամեջդ քաղաքին վանայ,
Վանայ ծովակի խաւար ալիքին,
Նրա հեռաւոր-մօտաւոր քոյրը՝
Իր թանկ արիւնը լոյսի վերածած
Լիճը Սեւանայ...

Դեհ, ի՞նչ, Վարդապե՛տ խեղճ ու բախտաւոր,
Երբէ կարող ես՝
Եկ մի՛ խեւանայ...

digitised by A.R.A.R.@

— Հայայն աշխարհում այդ քանի՞ երկիր
Ունի Արարատ:
Ո՛վ էլ չասի՝
Աստուածաշունչը
Իր մագաղաթէ դէմքը դէմ կ'տնի
Ու կ'ասի՝ կարդա՛:

Այդ քանի՞ երկիր Արարատ ունի,
Իսկ Արարատը...
Է՜հ, ամուսը կայ — տմամուսմ չկայ...

Վարդապետ իմ խե՛ղճ,
Բայց եւ թախտաւո՞ր,
Բայց եւ թախտաւո՞ր,
Որ չգիտէիր,
Թէ հայ կաթոլիկ եկեղեցականներ՝
Ապիսկոպոսներ բարձունքներ սիրող,
Մասիսի դիմաց կը նստեն գնացք,
Որ գնան Կարբիկ,
Էլբրուս գնան,
Լեռներ մագլցեն
Նոյնիսկ հեռաւոր սահմանի վրայ չինուհուտական,
Այնինչ Մասիսի լանջը կուսական՝
Համբուրուած լոկ իր ա՛յն փեսացուից,
Որ հայոց վէրքից արնահոս՝ բնկաւ, —
Այնինչ Մասիսի լանջը կուսական
Մատնի՞ր է սեղնում՝
Հայի տա՛ք մատներ,
Որ հրապուրեն իրեն,
Իրեն գուրգուրեն,
Իրեն ուռնամա՛ն...
Ու դեռ կան հայեր,
Որ հաւատում են զայուրեան Աստծոյ:

Թող գիտութիւնը նոյնիսկ պապանձուի՛,
Աստծուն ժխտում է Արարա՛տն ամբա՛ռ՝
Աստուածաշնչի սրբազան լեռը՝
Բախտա՛ւ իր դժխեմ...

Դե՛հ, մի՛ թրոցրու խելքդ, վարդապե՛տ...

Վարդապետ թշուառ, բայց եւ բախտաւո՛ր:
Քա մտքով անցա՞ւ, որ Մասիսն, այո՛,
Մեր նոր ու վերջին ուստանի առաջ,
Մեր հայրենաբուզ աչքերի հանդէպ,
Կարծես թէ դիտմամբ ու միտումնաւորեն
Մեզ անխղճաբար պիտի գրգռի՛,
Մեր փակուած վէրքը նորից նոր բացայ,
Մացնիսի նման անվերջ ձգելով՝
Գէթ մտիկանալ
Թոյլ չտայ ինձ...
— Դեհ, ե՛կ, վարդապետ,
Ու մի խենթենայ...
Ի՞նչ կայ ուելի ծանր ու խղճալի,
Քան թէ կսկիծը որդեկորոյս մօր:
Իսկ եթէ դա էլ քիչ են համարո՞ւմ
Եւ սպանուածի դիակը, դիտմա՛մբ,
Ցնկուում են թշուառ մօր աչքի առաջ —
Ո՛չ թէ մի շաբաթ,
Այլ ձի՛ց տարիներ...
— Դե՛հ, եթէ մայր ես՝
Եկ մի՛ ցնորուիր...

Մեզ լաւ է ծանօթ
Ցաղրուծանակը այս հոգեխարտիչ,
Դա ծանօթ է մեզ քանի՞ դար արդէն:
Մեր հայրենասէր թագաւորներին
Եւ հերոսներին
Այսպէս պարսկական դահիճներն էին
Մորթազերծ անում,
Մէջը լցնելով դարման ու չոր խոտ՝
Խրտուիլակ շինում
Ու բռնի դնում
Մորթազերծուածին գաշտերի առաջ,
Որ... սեանչանան մէկը միւսով...
Արարատն — այսպէ՞ս — դրել են անա նրեւանի դէմ...
— Դեհ, ե՛կ, վարդապե՛տ...

Գ. ՍԵՒԱԿ

(«Ալիքների գանգատաւոր»)

digitised by A.R.A.R.@

ՄՏՔԻ ՈՒ ՀՈԳԻԻ ՂՕՂԱՆՋԸ

... «Ալոեի զանգակատուն»ը ղօղանջն է մտքի ու հոգիի համանուագա-յին-բերթողական կառոյցի մը, որ թէեւ կամիտասեան եղերերգութեան ճամբով կ'ստանէ իր յայնաշունչ ընթացքը, սակայն կը պարփակէ Հայուն ազգային տրամաբանութեան բոլոր մթին եւ լուսայորդ անդրադարձումները՝ ազգային մեր ինքնութեան մէջ:

Թոպչահար, բգկտուած, ֆիզիքական իր գոյութիւնը վայրագ բնազդներու զոհ դարձուցած մեր ժողովուրդը՝ զինք յաւիտենութեան սահմանող իր հոգեկան ամբողջութիւններով տարազուած է հոն: Մահերգի մը ճնշիչ թախծոտ ու թանձր մթարբին չափ՝ կենսալիր արշալոյսներու արեւն ու լոյսը կայ: Ողբագին հեծեծանքին հետ՝ խանդագին հրճուանքը կը հոսի բառերուն, տողերուն, պատկերներուն, — անոնց մէջ ու անոնց ետեւ խորհրդանշուող բոլոր ապրումներուն հետ: Մտքէն թէ սրտէն փրթած այդ դրուագներով կը հիւսուի համանուագը, որ դասականին չափ նահ'ւ յառաջապահ ոճին երաժշտական տարրերը կը համադրէ, ազգային մեր ճակատագրին վիպերգութիւնը հաւատարիմ ու հարազատ դարձնելու համար խոր իրականութեան:

Հեղեղային իր ընթացքին մէջ՝ Սեւակի այդ բերթողավէպը ի յայտ կը բերէ բառական ստեղծումներ, պատկերացումի յանդուգն ու անակնկալ կերպեր, լեզուական եւ բանաստեղծական թեքնիք մը, որ բոնի բանդակումներու ապաւորութիւնը կը թողու. կը թուի ըլլալ ազդեցիկ դառնալու մասնաւոր ճիգ մը: Այսպէ՞ս պիտի ըլլան բոլոր այն նոր երգիչները, որոնք իրենց մտածումը զգացումի պրիսմակէն անցընելու հարկադրանքը կը զգան եւ կը մրցին այլաբանութիւնն ու խորհրդապաշտական գիւտերը միջոց դարձնելու կասկածելի դէտերու խոժոռանքէն խուսափելու: Շատերու համար անհասկնալի ըլլայ թերեւս այս հաստատումը. սակայն անոնք, որ ի վիճակի են հայրենաբնակ բերթողներու ստեղծագործական պայմանները, անձին ու շրջապատին յանախ հակընդդէմ հոսանքները ըմբռնելու՝ պիտի հասկնան Սեւակներու պարագայական արուեստականութեան գաղտնիքը:

Պայծառ Սեւակի մեծութիւնը՝ իր նկարագրին, քաջութեան, անհատական ու ազգային իր դարձանքին հանդէպ մերկ ու անկեղծ կեցուածքին մէջ է: Իր անձին թէ վաստակին մէջ հայաշունչ-բերթողէն կամ ազնուաշունչ բանաստեղծէն աւելի՝ պէտք է տեսնել տիպարը *մտաւորականին*, հայ մտաւորականին, որ գրկած է իր հոգին ու ժողովուրդին խորունկ հարստութիւնները. ու իր անձը դարձուցած է անոնցմէ թելադրուած ապրումներուն, հաւատքին, տրտմութեան եւ հրճուանքին *վիպերգու*՝ բառին ամէնէն հարազատ ու անայլայլ առումովը:

Իր երգերը թէ վերլուծական էջերը՝ պեղումներ են, որոնումներ են, դղրանչ ու արձագանգ ամէնօրեայ պատարագումի՝ վասն հայրենեաց եւ ցեղասունչ կեանքի: *Թարգմանիչ* մըն է ան՝ ազգային մեր ինքնութիւնը յաւերժացնող պատմական, նկարագրային, մարդկայնական ու տեսական իմացումներու եւ իր այսօրը ապրող մեր ժողովուրդին միջեւ:

«*Ալոեի*»ն՝ իր ամբողջական վաստակին մէջ, իր անձնական արժէքէն եւ արժանիքներէն աւելի, իրմով բառի, շունչի եւ գործի վերածուած *ոգի՛ն է*:

ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԽՕՍՔ ՅԻՇԱՏԱԿԻ

Սրտի կսկիծով եմ գրում այս տողերը: Մի՞թէ արդէն յիշատակի խօսք եմ ասում Պարոյրի մասին: Անողորմ ճակատագիր է: Բայց յիշատակի խօսք է սա մարմնաւոր մարդու մասին, որ մի քանի օր առաջ ամփոփուեց Վայոց ձորի իր հայրենի հողի մէջ: Մարմնաւորն ամփոփուեց, ճշխար դարձաւ: Հոգեւորը մնաց: Մնաց յաւիտեան ու յաւիտենականութեան հետ: Բանաստեղծը մահ չունի: Պարոյր Սեւակը եռամեծ բանաստեղծ էր: Նրա բանաստեղծական խօսքը մարդկային հոգու խոր ծալքերի հետ էր: Եւ որովհետեւ անմահ է մարդկութիւնը, ապա նաեւ անմահ է Պարոյրը:

Պարոյր Սեւակը սոսկ մի լոյս չէր: Նա իր վիթխարի հոգու մէջ ամփոփում էր հազարամեակներ շարունակ բանաստեղծութեամբ շքեղացած հայ ժողովրդի հազարամեակների բանաստեղծական լոյսը: Լոյսը չի մարում, որովհետեւ ակունքն արեւից է: Պարոյր Սեւակն աշխարհ եկաւ նախ եւ առաջ ապրեցնելու: Ցուսահատութիւնը խորթ էր նրա համար: Նա էր ամէնից առաջ ու ամէնից յստակ տեսնում մարդ արարածի ցաւը, մանաւանդ հոգու արատը: Ցաւը բուժում էր նա իր բանաստեղծական կենդանացնող դարմանով, արատը վերացնում էր իր արարչական ուժով:

Պարոյր Սեւակը մեր ժամանակակիցն էր: Սակայն նա ժամանակակից էր նաեւ Կոմիտասին, Աբովեանին, Սայաթ-Նովային, Նարեկացուն, մաշտոցեան շարականներին: Եւ երբ մենք տեսնում էինք նրան, վայելում նրա շռայլ ծիծաղը ու ձայնի զօրանչները, ապա տեսնում էինք Նարեկացուն եւ Կոմիտասին մեր առջեւ: Մեծ կարուստների վիշտն էր թեթեւացնում Պարոյրը, բանաստեղծական մեծ վիհեր լցնում-լրացնում՝ ստեղծելու իր տիեզերական շռայլութեամբ: Դաժան եղաւ Պարոյրը, ինքը վիհեր լցրեց-վերացրեց իր ազգի ճանապարհին, բայց եւ իր անժամանակ ու առեղծուածային գնալով՝ անտակ վիհ բաց արեց մեր առջեւ: Ո՞վ իմանայ, ո՞ր հարիւրամեակում եւ ի՞նչ մեծութեան ուժով պիտի լրացուի նրա թողած վիհը:

Մեր ժողովուրդը վեհ սգով, մեծ վշտով ճամբու դրեց նրան ոչ դէպի մոռացումը, այլ՝ դէպի իր սիրտը: Պարոյրը թողեց մխիթարելու իր հարստութիւնը՝ դա նրա մեծ ոգին է, բանաստեղծական նրա անսպառ եւ չմարող գանձը, որ դրեց հայ ժողովրդի ձեռքին, իբրեւ կենդանացնող խնկամանի եւ կերոն՝ իրենից ու մեզանից յետոյ եկող սերունդներին առաջնորդելու դէպի հեռաւոր ժամանակները:

Անչափելի եւ խոր եւ երկնամերձ բարձր սքանչելիքներ տուեց մեզ Պարոյր Սեւակը: Անհնարին է վերադարձնել դրա մի փոքրիկ մասն անգամ, ինչ խօսքով ու գործով էլ անելու լինենք մենք՝ նրա ժամանակակիցներս: Նրա մեծութիւնը գնահատողը ժամանակներն են, որ կան ու լինելու են: Ժողովրդի անքիծ սէրը այն յուշարձանն է, որ ստեղծել է ինքը՝ մեծ բանաստեղծ Պարոյր Սեւակը: Այդ սէրը մաքուր ու յաւերժական է: Գնալով այդ սէրը կը բանձրանայ եւ կը ծաւալուի զարնան գարթօնքի նման՝ հիացմունքի եւ ուրախութիւն բերելով ժամանակի ու տարածութեան հեռուներում իրար յաջորդող սերունդներին:

ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՆԴՐԷՅ ՎՈԶՆԵՍԵՆՍԿԻ

ԿՈՐՈՒՍՏԸ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ Է

Զոհուեց Պարոյր Սեւակը: Զոհուեց, ինչպէս ապրեց եւ ստեղծագործեց՝ կայծակնային արագութեամբ, ավտոմեքենայի ազէտի հետեւանքով:

Այդպիսիների մասին ասում են՝ «Աստծոյ ողորմածութեամբ բանաստեղծ» էր: Սեւակը բանաստեղծ էր երկնքի ողորմածութեամբ, Սեւանի ողորմածութեամբ, սարերի հովիւների, ինքնաթիռային անմուն կրակների եւ մարդկային մտքի ողորմածութեամբ:

Ինչպէ՞ս է նա իմաստաւորել Հայաստանի տեղական բնանկարը:

Մնալով գիւղացու յարկի տակ, իբրեւ հոգի անկեղծ որդի, Սեւակը դատապարտում էր պարզունակ, կեղծ ժողովրդականութիւնը: Նա մտաւ պատմութեան եւ մշակոյթի մէջ, ինչպէս այգի է մտնում փորձուած այգեպանը: Նրա մուտան ինտելեկտուալ էր: Մտածող, գիտութեան դոկտոր, հանրագիտարանային հետազօտիչ բանաստեղծն իր միտքը սուզում էր հայկական հին էպոսի խորքերը, նիրհորէն զգում էր ռուսական պոեզիան, անգլերէն անգիր մէջբերումներ էր անում Էլիոտից:

Նա զգում էր ծաղկաթերթի, բառի, զգացմունքի հանդէպ: Զխնայեց իրեն: Սեւակի բանաստեղծութիւնները կը մընան: Նրանք շարունակում են հնչել եւ խորհել: Արուեստը եւ պատմութիւնը մահուան յաղթահարումն են: Բանաստեղծի ոգին եւ անհատականութիւնը, որ ամփոփուած են բանաստեղծական բառատոզերում, «ցպահանջ» հասցէագրուած են միլիոնաւոր ապրող եւ դեռ չապրող մարդկանց: Այդ այդպէս է: Բայց բանաստեղծի ինչ-որ, գուցէ եւ ամենահընչեղ երգը, դեռ չծնուած, մեռաւ իր հետ միասին: Եւ ոչ մի վերահրատարակութիւն չի լրացնի դա:

Մենք կորցրինք մաքուր ձայնի տէր մեր եղբօրը՝ ընկերոջը կորցրինք, մեծ, անպաշտպան շուրթերով բանաստեղծին: Կորուստը անփոխարինելի է: Ռուսական պոեզիան սգում է Պարոյր Սեւակի մահը:

ԱՆԴՐԷՅ ՎՈԶՆԵՍԵՆՍԿԻ

digitised by A.R.A.R.@

ՍԻՐԵԼԻ ՊԱՐՈՅՐ

Այսպիսի վիշտ, գոնէ կեանքիս վերջին տարիներին, ես չէի ապրել: Չէի էլ պատկերացնում, թէ ի՞նչն այլեւս կարող էր ինձ այսքան ցնցել...

Դու ընդամէնը անհատ էիր, բայց ինչպիսի՜ անհատ: Նման էիր լեռնային մի աղբիւրի, որն իր ուժը բնութեան ընդերքից է առնում ու բնութեան ուժն է բերում ժողովրդին: Եւ սիրում էինք քեզ, որովհետեւ չենք կարող բնութիւնը չսիրել:

Ժողովուրդը քեզ ծնեց մաքառման գնով, ծնեց ժամանակին, որպէսզի քո միջոցով երգէր իր ցաւն ու ուրախութիւնը: Այդպիսի անհատների՝ ժողովուրդը հեշտութեամբ չի ծնում եւ չի կարող հեշտութեամբ բաժանուել նրանցից:

Պարոյր, սիրելի՜ կաւակս, դու շատ լաւ գիտէիր այս բոլորը եւ գիտէիր, որ դու միայն քոնը չես: Դա պիտի գիտակցեն շատերը, դա պիտի լինի մեր առաքելութիւնը, մեր մտածողութեան արմատը: Եւ ճակատագիրը այդքան դաժան չպիտի լինէր քո հանդէպ, ժողովրդի հանդէպ:

Յունիսի 20ին ես մտքով քեզ հետ էի, ժողովրդի հետ, եւ տեսնում էի ինչ էր կատարւում աշխարհից հեռու, մեր հեռու սարերի գրկում: Իր մէջ մայր բնութիւնը, նրա ստեղծող ոգին, վատի դէմ ըմբոստ ու միշտ բարի բնաւորութիւնը խտացնող, հողից ելած մի բեկոր էր ժողովուրդը յանձնում հողին: Դա ժողովրդական ողբերգութիւն էր:

Ես ականատես եմ եղել մեր ժողովրդի ճակատագրական ողբերգութիւններին, շատ դառն օրերին: Եւ եթէ ես դեռ կամ այսօր, իբրեւ միակը մայր ժողովրդի լուսաւոր բախտը երազած ու վաղուց արդէն անցած իմ սերնդի, ապա թերեւս նրա համար միայն, որ այլեւս կորուստ չտեսնեմ: Դու աշխարհ էիր եկել կորուստներից յետոյ, կորուստներ ծածկելու, ոչ թէ կորուստ դառնալու:

Դու աշխարհ էիր եկել քո բնութեան ուժով եւ խորը, շա՜տ խորը հաւատում էիր այդ ուժին: Ժողովուրդը կը շարունակի հաւատալ Քո հաւատին:

Յիշատակդ բարի, Սեւա՜չ Պարոյր: Ժողովուրդը կը սպասի Քո գալուն:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՆԱԵՒ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԵՒ

Սեղանիս վրայ է անուտրտ նամակս. «Միրելի Պարոյր, քո երեւան գալու հետ յոյսեր չեմ կապում, այստեղ դու ձեռ չես ընկնի, աւելի լաւ է այցի գամ քեզ Զանգիչի, խլեմ քեզ քո պարտէզի ծաղիկներից եւ ուղարկես յափ, ուղարկես հարցերի մասին զրուցեմ հետդ...»:

Նամակս եւ Զանգիչի (Սոլեուաչէն) դնալու ծրագիրս նա խմբագրեց ո՛չ իր ոճով, ահա այսպէս ո՛չ պարոյրավարի. նամակի փոխարէն այս խօսքն իր մասին, հայրենի կիզում իրեն այցելելու տեղ, ուղեկցել իրեն այնտեղ, իր վերջին հանդրուանը...

Փորձեմ ետ նայել, յիշելու համար, թէ ե՞րբ մտաւ նա մեր կեանքի մէջ, ինչպէ՞ս էինք ապրում մինչ այդ, որպէսզի կարողանամ պատկերացնել, թէ այսուհետեւ ինչպէ՞ս ենք ապրելու առանց նրան:

Պատերազմական տարիների դաժան ձմեռներից մէկն էր: Առաւօտները, եթէ չէինք հասցնում մեր տներում կամ փողոցներում գրուած ռազիոբարձրախօսներից լսել սովինֆորմբիւրոյի վերջին հաղորդումները, ապա հիմնարկ մտնելուն պէս, աշխատանքային ընկերների դէմքերին նայելով, հասկանում էինք՝ ուրա՞խ լուրեր են ստացուել ռազմաճակատներից, թէ՞ տխուր:

Ահա այսպիսի մի առաւօտ մտնելով իմ հիմնարկը՝ Հայպետհրատ, տեսայ աշխատասենեակների դռները բաց, մարդիկ խմբուած միջանցքում, բոլոր դէմքերը չոլարծակ: Ի՞նչ է պատահել: Ի՞նչ բնակավայր է ետ վերցուած: Ոչ մի: Ռազմաճակատներում գրութիւնն անփոփոխ է: Հիմնարկային մեր այդ օրը ուրախ դարձնողն ուրիշ բան էր:

— Ռուբէնը նոր մեղ հրաշալի բանաստեղծութիւններ կարդաց...

Ռուբէ՞նը... Ռուբէն Զարեանը, որ գեղարուեստական գրականութեան բաժնի վարիչն էր ու միաժամանակ «Սովետական գրականութիւն» ամսագրի խմբագիրը, իր հերթական ուրախութեամբ վարակել էր բոլորին. գրական ուշագրաւ մի նոր փաստաթուղթ, ձեռքի տակ գտնուող բանաստեղծական մի նոր ժողովածուի մէջ մի փայլուն տող գտնելուն պէս, նա չտապում էր բաժանել իր ուրախութիւնը բոլորիս հետ: Այսօրուայ անակնկալը մի երկու ձեռագիր բանաստեղծութիւններ էին, որոնք Ռուբէն Զարեանին էր յանձնել կողմնակի մէկը... Հեղինակը մէջտեղում չկար՝ հեղինակին ոչ ոք դեռ չէր տեսել, հեղինակը, ասում էին, հեռու լեռնային մի գիւղից եկած պատանի է, որ նոր աւարտել է գիւղական դպրոցն ու հիմա սովորում է համալսարանի բանասիրականում: Այդ տարիների մեր երիտասարդական պոեզիան վարակուած էր աշուղայնութեամբ: Մինչդեռ այս պատանու բանաստեղծութիւնները «Մաքուր ուրբանիստական էին», ահա թէ ինչն էր զարմանք եւ ուրախութիւն պատճառել Ռուբէն Զարեանին եւ միւսներին:

Գիւղից եկած պատանի «ուրբանիստ» բանաստեղծի համբաւը արագութեամբ տարածուեց գրական շրջաններում: Սակայն իրեն դեռ չէինք տեսել: Վերջապէս բերին նրան Հայպետհրատ, իրօք՝ ոտից-գլուխ գեղջուկ, հնամաշ վերարկուի կարճ թեւքերի միջից երկարել ու դուրս էին մնացել

digitised by A.R.A.R.@

ՄԱՐԴՈՒ ԻԴԷԱԼ ԷՐ ՆԱ...

բաղուկները, դեղեցիկ չէր, բայց աչխարհի ապոլոնները թող նախանձէին նրան՝ բոլորիս աչքում աչխարհի ամենադեղեցիկը դարձնող իր հմայիչ արտայայտութեան համար, այն հմայիչ ջերմ ժպիտի համար, որ յորդում էր նրա խոչոր, սեւորակ աչքերից, կաթում էր նրա խոչոր, խմաստալից շրթունքներից ու անդամ նրա քթից:

Այդ պահից նա մտաւ բոլորիս սրտերը եւ օրը օրին ընդարձակեց իր տեղը մեր սրտերում:

«Սովետական գրականութիւն» ամսագրում չուտով տպագրուեց նրա երեք բանաստեղծութիւնը: Դրան յաջորդեց գրական մի երեկոյ: Ո՞վ կը մոռանայ այդ երեկոն, եթէ ներկայ է եղել: Ինչպիսի՜ կատաղի վէճերի առիթ տուին այդ երեք բանաստեղծութիւնները: Այն ժամանակուայ գրական կեանքի վրայ խլխող հեղինակութիւնները երկու մասի բաժանուած բախւում էին: Զարմանալի էր այն կիրքը, որով մերժում էին պատանի բանաստեղծին մարդիկ, որոնք չատ չանցած, ստիպուած եղան խոստովանել, որ այո՛, ասպարէզ է եկել մի մեծ գրական անհատականութիւն:

Եւ ահա նա սկսեց արեւի նման բաբմրանալ գրական երկնակամարում: Նա միայն արդարացնում էր ընթերցողների սպասելիքները, ոչ ոքի զարմանալի չէր ո՛չ «Անլուռելի զանգակատան», ո՛չ էլ նրա միւս գլուխ-գործոցների երեւան գալը, ո՛չ էլ այն, որ չուտով գրական ասպարէզն էլ նեղ եկաւ նրան եւ նա ծաւալուեց նաեւ գիտութեան ասպարէզում:

Այն բոլորը, ինչ նա հասցրեց յանձնել թղթին ե՛ւ իր ժամանակակիցներին են, ե՛ւ ապագայ սերունդներինը:

Բայց Պարոյր Սեւակը հօ միայն բանաստեղծ ու գիտնական չէր: Ապրողներս եւ գալիք նորերը զրկուեցին այն ամէնից, որ նա ոտի վրայ, առօրեայ չփման, զրոյցների ընթացքում չռայլօրէն եւ բուռէբուռ բաշխում էր աջ ու ձախ, ամէնքին, առանց մարդկանց մէջ խորութիւն դնելու, առանց խմբերի, խմբաւորումների ու դասերի բաժանելու նրանց: Մենք տեսանք, թէ նա ինչ աշխատանք էր թափել իր պարտէզում, ինչպէս էր ուշադրութիւն յատկացրել ու խնամք տարել ամէն մի ծաղկի, ծառերից իւրաքանչիւրի ամէն մի ճիւղի նկատմամբ: Առաւել ուշադիր ու խնամքոտ վերաբերմունք ունէր դէպի մարդիկ: Դա՞յ մեզանից մէկը, Սեւակից տարեց կամ փոքր, որ իր անձնական վէճերի, անյաջողութիւնների ու վհատութեան պահերին ուժ առած չլինի նրանից:

Մեծ բանաստեղծից, մեծ գիտնականից ու մեծ հայրենասէրից թացի, ահա թէ ում կորցրեցինք մենք:

Մեր՝ նրա ժամանակակիցներիս ու ընկերներիս պարտքն է Պարոյր Սեւակի ներկայ ու գալիք ընթերցողներին հաղորդել նրա կերպարի նաեւ ահա այս բացառիկ կողմը, այն, որ նա մեծ բանաստեղծ, մեծ գիտնական, մեծ հայրենասէր լինելուց զատ, քաղաքացու եւ մարդու իդէալ էր:

ԱՆԱՀԻՏ ՍԱՀԻՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

,,Մարդը ափի մէջ"

«Մարդը ափի մէջ» գրքի յարուցած դէմքերը դեռ չարունակւում են: Մեծ մասամբ բանաւոր զրոյցներում: Նօսրանում են այն ընթերցողների շարքերը, որոնք Սեւակի պոեզիան համարում էին ոտիցգլուխ «բացիոնալ», անգամ «իրրացիոնալ» (սա խոհականի վատ տեսակն է) աւելանում են նրա բանաստեղծութեան, հետեւաբար՝ ինքնատիպութեան բարեկամները:

«Մարդը ափի մէջ», — դա նշանակում է՝ մարդը ժամանակի մէջ, կեանքի մէջ, պատմութեան լոյսի տակ: Դա նշանակում է մարդուն բացել ժամանակի առաջ եւ ոչ թէ փակել ժամանակից: Գրքի վերնագրով արդէն խօսում է ինքը՝ Նորին Մեծութիւն պոեզիան, թէեւ ժեռ ընթերցուել Սեւակի մածօր ու մինօր հնչականութեամբ յաւեցած մեներգութիւնները, ասքերը, ձօնները, խոստովանութիւնները: Անցնում են գրքի էջերով եւ կենցաղային «ափ» բառը իր արժէքով հաւասարւում է կեանք ու ժամանակ բառերին: Մարդը նրանում մեծանում է, խոշորանում, բարդանում՝ իր հակասութիւններով: Մարդը այստեղ հանդէս է գալիս կեցութեան կարեւորագոյն հարցերը կրողի ու թելադրողի դերով՝ առանց գիմակի, ժամանակի իդէալներն ու իգիաները դրամատիկօրէն հաստատող անհատի կերպարանքով: Մանաւանդ այն շարքում, որը կրում է գրքի անունը:

Սեւակի ոչչիտատիւային կառուցուածք ունեցող սուր խօսքը ոչ հոդինների ներդաշնակ զրոյց է, ոչ յուշապատում, ոչ էլ առարկաների գենական մատուցում: Դա կարելի է ասել, երեւոյթների վերլուծութիւն է՝ ամբողջի մասնատման ճանապարհով: Բանաստեղծը ամբողջական մարդուն տրոհում է առանձին

digitised by A.R.A.R.@

կրքերի, ցանկութիւններին, յոյզերի ու մտածումների, բացում է սիրոյ եւ ատելութեան, ցաւի եւ հրճուանքի, լացի ու ենթադրութեան, ախրութեան ու հաւատի, խանդի ու զարմանքի, երազանքի ու հիասթափութեան, հպարտութեան ու մխիթարութեան, հոգեբանութեան ներքին մեխանիզմը բարդ ասոցիացիաների միջով անցնող ու ստուգուող թեմաները ընթերցողին են հաղորդում, նրանց յայտնագործողի կրքով: Մարդու էութեան բոլոր դումարելիները՝ տրոհուած մասերը ասում է Սեւակի պաթոսը, արժէքաւոր ու կարեւոր են մարդու գնահատութեան համար: Այս հայեցքն էլ Սեւակի պոեզիայի վերլուծական թեմաներին սիթեղն է: Այս ճանապարհով հաստատւում է ուժեղ, մեծ, համարձակ անհատը, դրա կողքին՝ հերքւում թոյլը, անզօրը, փոքրը: Մարդուն արժանի յատկանիշների ազդարարում եւ մարդուն անարժան գծերի բացառում, սա է Սեւակի գրքի գլխաւոր մոտիւը:

Սեւակի բանաստեղծութեան շարժիչ ուժը մետաֆորն է: Սովորական առարկաներին ու առօրեական երեւոյթների մետաֆորային համարձակ վերաձեւումներով ու լուծումներով նա հասնում է նրանց բանաստեղծական իմաստին: Ահա, օրինակ, նրա սիրոյ խոստովանութիւնը, որը նաեւ սիրոյ յայտնութիւնն է.

Գուստահողմը՝ յեղուած ոտնաթաթի
վրայ
Խոյանում է երկինք,
Հաստատելով
Ժխտուած առասպելը համբարձումի:

Ցրտոց օդում դանդաղ թպրտում է
Մի կտոր տաք մարմին,
Որ թռչուն է կոչւում...

Ինչ-որ կին է կանգնած խուփ դաշտի
մէջ,
Եւ ոտքերի տակով անց է կենում
Երկրագնդի անտես այն առանցքը,
Որի երեւացող մասն է ինքը:

Առա՛նց յանցանքի մէջ բռնուելու,
Առա՛նց վկաների ներկայութեան,
Ինքս մեղաւոր եմ ինձ ճանաչում
Ու վախուրա՛ծ — քաշուա՛ծ մթմնջում
եմ հեռուից.
Մրմնջում եմ արդէն ո՛չ թէ սրաց,
Այլ այն մէկի՛ն՝ հեռաւորի՛ն,
— Բարի իրիկուն քեզ, ի՛մ մեծաւոր:

Սա Սեւակի համեմատաբար հանդիստ էջերից է, բայց ինչքան անհանդիստ են ռիթմերը, ստոյգ՝ ասոցիացիաները, սուր՝ քնարական հերոսի ընկալումները: Սեւակի հերոսը, որ եւ-ի տունից դու-ով է խօսում կեանքի ու ժամանակի հետ, ունի հոգեւոր այնպիսի մկանունք, որ պատրաստ է անպատեալի շրջադարձերի՝ դաշտի կնոջից շրջուել դէպի մեծաւորը, գէպի սէրը:

Այսպիսի յայտնութիւններով հարուստ են «Նոյն հասցէով», «Ակնոցդ թեր ասեմ», «Մարդը ափի մէջ» շարքերը:

Պարոյր Սեւակի պոեզիան բացառութիւն չէ այն օրէնքից, որը կոչւում է «առարկան ունի իր ստուերը»: Մարդը ափից դուրս է ընկնում, երբ բանաստեղծը չհարկում է իր հարուստ բառարանն ու հարուստ պատկերաւորութիւնը, չգտնելով մարդու եւ ժամանակի միացման մագնիսական դաշտը, երբ կեանքի մեծ երեւոյթներին փորձում է նայել փոքր դիտապակու միջով («Փիմանկարի առաջ»՝ միայնակ ցուցարարի կերպարը), երբ խօսքի զօրանշների հոսանքում մթագնում է պատկերի իմաստը.

Երդիքի նման՝ բաց են աչքերս,
Բերանս է բացւում՝ մի լայն դրան պէս,
Բայց նա ծխի պէս մնում է ներսում
Ու խեղդում տան մէջ բնակուող խեղճիս:

(Սա «Տանջանքի» բանաձեւն է), — երբ տեղի-անտեղի, շուայլ ու շաւայտ, անտնտես ու անդանձ գլխում է ռիթմական-չեչտային ընդգծումների՝ էֆեկտիների ու կուրսիւների, երբ բանաստեղծի խոստովանութեամբ, պատկերներում կա՛մ «թթխմորն է աւել», կամ «աղն է պակասում»:

digitised by A.R.A.R.@

***

Պ. Սեւակի ոտանաւորի շնչառութիւնն ու քայլուածքը նման չէ ոչ մէկին. նրա բանաստեղծական ճաշակը ո՛չ Հ. Սահեանի ժողովրդաշունչ պատկերաւորութեանն է նման, ոչ էլ Վ. Դաւթեանի քնարական ներսուզման։ Նրա պատկերը դերազանցապէս յիշեցնում է դրաֆիկական արտայայտչութիւնը, առանց բացատրական մանրամասնեցումների։ Իր լաւագոյն էջերում նա չի կառուցում ապրումն ու մտածումը, չի բերում զուգահեռ կծեր յարակից երեւոյթներից, այլ հնչեցնում է նոյն երեւոյթների մետաֆորական բազմաթիւ երեւոյթները։ Առաջին հայեացքից նրա ոտանաւորը խայտանկար է, իրականում նրա կտաւը ամբողջական է ու կոնտրաստային՝ առանց աւելորդ ենթադրումների, խօսքը մի զանգուած է՝ առանց օժանդակ էպիտէտների ու նախաբարբերի։ Այդ յատկութեան շնորհիւ էլ նրա երգը դինամիկ է, պատկերը նպատակասլաց գործողութեամբ յագեցած, խոր շնչով։ Բերենք մի օրինակ՝ «Միայնակ ծառը».

Պոկուած անտառից՝
Մենակ ու մռայլ,
Մի ծառ է ցցուել բարձունքի վրայ։

Ինչպէ՞ս չի սիրում անտառը նրան,
Ինչպէ՞ս է ծաղրում,
Քրքջում նրան,
Ի՞նչ է թէ հսկան
Այս թզուկների
Կամքին ու
Կեանքին
Չի՛ կարողանում իրեն ենթարկել,
Ի՞նչ է թէ նրանք չեն կարողանում
Իրենց ճեղքուածքում սրան բանտարկել,

Եւ չի՛ հասկանում անտառը յիմար,
Թէ ծառն այդ ինչ է անտառի համար։

Կաղնի՞ն՝
Անտառի կանաչ շանթարգել։

Միայնակ ծառի ու անտառի աւանդական, սիմբոլիկ թեման այն յայտնի նշանակութիւնից, որ ունեցել է նախորդ մշակումներում (կեանքից վեր կանգնած՝ հպարտ անհատի թեման) շանթարգելի համարձակ մետաֆորով չըջւում է մի այլ նշանակութիւն. հպարտ անհատը հանդէս է գալիս նաեւ որպէս «անտառի» կեանքի մատակարար ու մթնոլորտի ազդարար։

Պարոյր Սեւակի պատկերները, նրա չափազանցումներն ու համադրումները մեծ մասամբ անսովոր են, յուզիչ են չեչտերը։ Նրա վարպետութեան էական կողմն այն է, որ աշխատում է կոնկրետ պատկերից դուրս մղուել, տեքստի հետ տալ նաեւ ենթատեքստը, հենց սկզբից շնչանակել հանդրուանը՝ որտեղից ուր է գնում։

Եթէ շատ բանաստեղծների համար ապրումը միայն տուեալ ապրումն է, ապա Սեւակը աշխատում է ամէն մի կոնկրետ ապրումի հետ արտայայտել նաեւ մի ուրիշ, յայն իմաստ։ Այստեղ էլ նրա երգը յատկանում է փիլիսոփայութեամբ, խոր ընդհանրացումներով։

ՍՈՒՐԻՆ ԱՂԱԲԱԲԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԱՐԴ ՄԵԾԱՑ

☆

Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ոչ ուշացած,
Ծնվում են նրանք նիշդ ժամանակին:
Եւ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց:

Անտոհմ չեն նրանք կամ անհայրենիք,
Հասարակ հորից ու մորից ծնուած՝
Սերում են նրանք եւ ա՛յն վայրենուց,
Որ էլ չէ՞ր կարող ապրել քարայրում:

Սերում են նրանք եւ ա՛յն ծերունկից,
Որ նախընտրում էր քնել տակառում:
Սերում են նրանք եւ ա՛յն պատանուց
Որ սիրահարուեց իր իսկ պատկերին:

Սերում են նրանք բոլո՛ր նրանցից,
Որ սատանային հոգին են ծախում,
Միայն թէ անե՛ն մտածածն իրենց,
Ի՛նչ փոյթ թէ մեռնեն ժամանակից շուտ:

Անվտանգ՝ ինչպէս երդեհն արեւի,
Անվնաս՝ ինչպէս օգտակար լորտուն,
Վախ են ներշնչում պետութիւններին
Մինչեւ իսկ իրենց կամքի հակառակ:

Արքաների հետ խօսում են «դու»ով,
Եթէ, ի հարկէ, լսում են նրանց,
Իսկ թէ չեն լսո՛ւմ՝ մէ՞կ է, չե՛ն լռի,
Կը խօսեն նոյնիսկ իրենց կօշկի՛ հետ:

Ով սահմանում է նոր օրէնք ու կարգ՝
Ցայտարարում է եւ օրէնքից դուրս:
Բայց չե՞ն վախենում նրանք չար մահից,
Ապրում են դժուար ու մեռնում են հեշտ:

(«*Մարդը ափի մէջ*») ՊԱՐՈՑՐ ՍԵՒԱԿ

digitised by A.R.A.R.@

"ԵՒ ԱՅՐ ՄԻ՝ ՄԵԾՏՈՅ ԱՆՈՒՆ"

Այսպէս՝ արցունք է ծնուում աչքի մէջ,
Երբ որ աչքի մէջ ընկնում է աւազ:
Այդպէս՝ դառնում է աւազն ապակի,
Եւ ապակին է հայելի դառնում:

Այսպէս՝ արեւը ամէնից առաջ
Լուսաւորում է բարձրարերձ ծառի
Կատարին թառած թռչունի բոյնը:

Այսպէս գոյութեան տեղ պայքարում
Անփոփոխ պահած իր ներքինն էլի՝
Գազանն է փախում իր մաշկի գոյնը,
Եւ դա թւում է անսպասելի...

Նրանց ծնունդը միշտ էլ թւում է անսպասելի
Եւ յեռոյ մարդկանց դարեր շարունակ զարմանք
պատճառում:
Բայց Նրանք կեանքում միշտ էլ ծնւում են լոկ
այն պատճառով,
Որ անչափ շատ են ապասել նրանց:

Նրանք ծնւում են իրենց ծնողի անօգնութիւնից,
Որպէսզի դառնան ճոր զօրեղութիւն:
Նրանք ծնւում են ինչ-որ հանճարեղ մի
յոգնութիւնից,
Որպէսզի դառնան հանճարեղութիւն:
Նրանք ծնւում են, որ ապացուցեն,
Թէ վերջը մի տեղ դառնում է սկիզբ:

Նրանք ծնւում են, որ ապացուցեն,
Թէ հրաշք չկա՛յ,
Կայ միայն կարի՛ք:
Նրանք ծնւում են, որ ապացուցեն,
Թէ այնտեղ է լոկ սխրանքն սկսւում,
Ուր վերջանում է ամէ՛ն մի հնար...

Եւ այդ պատիւն էր, որ աշխարհ եկաւ
Նա՝
Այր մի՝
Մեսրոպ Մաշտոց անունով:
Որտեղի՞ց եկաւ,
Ի՞նչ ակնոց բերեց:
Եւ ինչպէ՞ս եկաւ,
Հասեց ի՞նչ հունով:

digitised by A.R.A.R.@

***

Այսպէս էլ ծնուեց մէկը նրանցից,
Ծնուեց նա՝
Այր մի՝
Մաշտոց անունով:
Եւ նա չծնուեց, որ տեղացնի
Հարց տուողների քանակն անպակաս:
Նա եկաւ աշխարհ՝ պատասխանելու,
Եւ պատասխանը գտաւ իսկապէս...

***

Զուսէիմ արդէն պետ ու պետութիւն,
Հայրենեաց գահը փլուածք էր տուել:

Եւ նա չծնուեց ինչ-որ մի մօրից.
Նա այդ փլուածքով բուսնեց սխրանքով,
Որ այդ փլուածքը ոչնչանայ ճարից:
Եւ այդ փլուածքը իրօք ոչնչացաւ:
Այն, ինչ որ անել չկարողացան
Արշակ – վաղարշակ,
Մուշեղ ու Մուշէ,
Սա՛ արեց միայն՝ անզէն ու անզօրք.
Մեզանից խլուած մեր պետութեան տեղ
Ստեղծեց մի նոր՝
Զեղեա՛լ պետութիւն,
Թագաւորութիւն մի նզօրագոյ՝
Ո՛չ թէ մեզանից խլուած հողերի,
Մեր բաժան – բաժան հայրենու վրայ,
Այլ մեր անբաժա՛ն,
Մեր անկիսելի՛,
Որքի՛ւ չխլուող հոգիների մէջ:

Եւ այնուհետեւ անվախճան եղաւ
Թագաւորական նրա տունը մեծ.
Եւ մեր հոգեւոր թագաւորութեան
Գահին բարձրացող ամէն թագաւոր
Ծնուեց նո՛յն տնից,
Նո՛յն ցեղից սերեց
Եւ պատուով – փառքով – վեհութեամբ կրեց
Նո՛յն տոհմանունը՝
Մեսրոպ – Մաշտոցեան՝...

***

Մաշտո՛ց...
Այսինքն՝ Ա՛յր մի, որ եկաւ ազատուցելու,
Թէ մի տեղ վերջը դասնում է Սկիզբ:
Այսինքն՝ Ա՛յր մի, որ ազատուցեց
Թէ երբէ՛ չկա՛յ,
Այլ կայ լոկ կարի՛ք:

Այսինքն՝ Ա՛յր մի, որ ազատուցեց
Եւ կոչ է անում ազատուցելո՛ւ,
Որ այնտեղ է լոկ սխրանքն սկսւում,
Ուր վերջանում է ամէ՛ն մի հնար...

Գ. ՍԻՍԱԿ

(«Մարդը ափի մէջ» — հատուածներ)

digitised by A.R.A.R.@



Պ. Սեւակ եւ Ռազմիկ Դաւոյեան դէմ դիմաց, լեռնագագ «Խնգալիս»:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

ԲԱՆԱՄՏԵՂԾԸ

Եւ ահա գժուար է Պարոյր Սեւակի արուեստի բարդոյթներից ու խառնարաններից վերադառնալ դէպի պարզ իրականութեանը՝ իր ֆիզիքական չգոյութեան փաստին, եւ այնտեղից կրկին մեկնել այն խորխորատները, վիհերն ու գագաթները, որոնց ապառաժները ծաղկեցնում էր նրա հոգին եւ որոնք խմատաւորում էին նաեւ նրա գոյութեամբ:

Անհունօրէն ցաւալի է, որ այս դէպքում բարդ իրականութեան պարզեցուցիչը եղաւ մահը, եւ միանգամից յայտնի դարձաւ, որ հայոց ժամանակակից միտքը կորցրեց իր նուիրեալ խոովարարին, հայոց քերթողական արուեստն՝ իր գեղեցիկ կաղապարներ ձուլողին, հայ գրականութեան նոր ծլարձակուող այգին՝ իր բարեհոգի, խստապահանջ այգեպանին ու խնամողին, անխուճապ առաջ քայլող գրական գօրքը կորցրեց իր առաջնորդին.-- մի անձի բացակայութեամբ գատարկուեց ահագին մի տարածութիւն, որ միմիայն ինքը կարող էր լցնել եւ ինքն էր լցնում... եւ լցնում էր առաջին հերթին ոչ թէ արուեստի մանանայով, այլ իր ժողովրդի, իր հայրենիքի գոյատեւութեան խանդավառութեամբ եւ իր ժողովուրդն ու հայրենիքը կատարեալ տեսնելու մտահոգութեամբ ու տառապանքով:

Պարոյր Սեւակը մունետիկի պէս ապդարարելով, ժամացոյցի պէս արթնացնելով, հրամայաբար պահանջելով ու պահանջելու պէս աղերսելով, խոստանալով ու խոստովանեցնելով աշխատում էր իր ժողովրդին մաքրել աշխարհային աղտերից՝ իր հայրենիքում նրա ամբողջացման ճանապարհը կարձելու

digitised by A.R.A.R.@

դիտաւորութեամբ ու շտապողականութեամբ, որից էլ յաճախ առաջանում է շնչարգելութիւն ու սրտի տագնապ: Այդ ճանապարհին, իսկական հայրենասէրին ու արուեստագէտին վայել քաջութեամբ պատուելով բոլոր կեղծ դիմակները, նա իր պօրաւոր ձեռքը պարզում էր՝ աղաւաղուածներին ու մոլորուածներին, թուլամորթներին ու մոլթապաշտներին դուրս բերելու իրերի իշխանութիւնից՝ նրանց համոզել-բացատրելով իրերի կործանարար ընոյթը եւ այդ բընոյթի տիրապետող կատարի համաձարակը աշխարհի վրայ:

- Անդրդաշնակ անհանգստութեամբ նա փորձում էր նէրդաշնակութեան բերել ոգու եւ ոգեղէնի, իրի եւ իրականութեան, նիւթի եւ նիւթականի անյարիրութիւնները, այնքան շտապողականութեամբ եւ կիրքով, որ այդ ճանապարհին, ասենք, արուեստի մատուռում փոքր-ինչ աւելի ծնրադրելը, երբ կեանքն այրող պահանջներ ունի, համարում էր մեղանչում քաղաքացիութեան դէմ, համարում էր մտքի աւելորդ մարզանք եւ ոգու անտեղի վատնում: Մի բան, որ դարեր ի վեր եղել է հայ ժողովրդի ամենախոցելի կողմերից մէկը:

Անդրադառնալով Սեւակի վաղ շրջանի ստեղծագործութեանը, իբրեւ ընդհանրական երեւոյթ, հարկ է նշել, որ 40-50ական թուականներին գրական ասպարէզ մտած բանաստեղծների առաջին գրքերը չմնացին իբրեւ արտակարգ պոռթկման նմոյշներ եւ գրեթէ չդարձան նրանց մնայուն գանձարանի անբաղադրելի մասը, ինչպէս այդ պատահել է մեր եւ աշխարհի շատ դասականների հետ: Այո՛, սա այսպէս է եւ սակայն թէպէտ չենք կարող Սեւակի վաղ շրջանից բանաստեղծութիւններ ընտրել նրա ընտիր ժողովածուի համար, այդուամենայնիւ, չենք կարող չտեսնել, որ այդ գործերում կայ պրպտուն մտախաղութիւն եւ ոչ՝ մտագարութիւն, նորի բանաստեղծական ընկալում եւ ոչ՝ նորարարութեան մոլուցք, բանաստեղծական մաշուած ձեւերի դէմ ապնիւ ընդվզում եւ ոչ՝ փառամոլական ցուցամոլութիւն, ուսանելու կիրք, եւ ոչ՝ էպիգոնութիւն:

Աշխարհում ամէն մի ժողովուրդ ունի իր նուաճելի եւ անանուաճելի հարցուստութիւնները: Թուով փոքրաքանակ ժողովուրդների նուաճելի հարստութիւնները շատ են, անանուաճները՝ նոյնպէս: Անանուաճելիների մէջ ամենաանանուա՛ճը ժողովրդի ստեղծած մշակոյթն է եւ մշակոյթի մէջ առաւել անանուաճելին՝ հոգեւոր մշակոյթը: Բարբարոս պետութիւններն ու ցեղերը նուաճեցին հայ ժողովրդի սրբազան հողը, սակայն Նարեկացու մատեանը մնաց անանուաճելի, անասնօրէն նուաճեցին արեւմտահայ աքանչելի բանաստեղծների ֆիզիքական գոյութիւնը, սակայն նրանց ոգու մարմնացումը մնաց անանուաճ... Հայոց մշակոյթի գետը թափառում է երկրագնդի վրայ եւ տիեզերքում, եւ բարեմիտ ժողովուրդները կարող են բնակութիւն հաստատել այդ գետի ափերին, վայելել նրա ծաղիկների բոյրն ու քնքշութիւնը, նրա շառաչներով ըմբոստանալ, նրա շշունջներով իմաստնանալ, բայց երբեք չեն կարող սեփականել կամ խանգարել այդ ընթացքը:

Նուաճեցին հայոց գահավէժ ու ձորաշառաչ գետերը, բայց հայոց մշակոյթի գետը մնաց անանուաճելի՛:

Երանի նրանց, ովքեր կարող են գոնէ մի կաթիլով աւելացնել այդ սրբազան գետի ջուրը, որովհետեւ նրանք իրենց քամելով, իրենց կեանքի յաւերժութեան մասն են տալիս սեփական ժողովրդի յաւերժութեանն ու յարատեւութեանը:

Երանի նրանց... եւ Պարոյր Սեւակն այդ երանելիներից է:

ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ

(Հատուած)

digitised by A.R.A.R.@

Յ. ԿԱՐԱՊԵՆՑ

ԵՒ ՂՕՂԱՆՋ ՅԱՒԵՐԺԱԿԱՆ

Համակ հայութիւն է Գարոյր Սեւակը։ Իր ամենատիպական ու իմաստասիրական երգերի՛ց անդամ հայութիւն է բուրում, քանզի իր ամէն բառը, իր ամէն միտքը, իր կերտած ամէն մի պատկերն ու գոյնը թաթախուած է հայկականութեամբ՝ լի Հայոց աշխարհի բոյրով ու թոյրով, երգով ու լացով, հայ մտածումով ու հայ ներշնչումով։

Եւ այդ իսկ պատճառով է, որ հայ ժողովուրդը Գարոյր Սեւակի գործերում տեսնում է իր կեանքի ու ապրումների արտացոլումը՝ իր հարազատ լարը։ Եւ այդ իսկ պատճառով է նաեւ, որ հայ ժողովուրդը Գարոյր Սեւակին մեծարում է առաւելաբար նրա հայրենասիրութիւն ու հայրենաշունչ ստեղծագործութիւնների համար, նրա «Եռածայն պատարագ»ի եւ «Անդրեի զանգակատուն»ի համար։

Շատ է գրուել Հայոց Եղեռնի մասին։ Փաստագրական ասմնեակ հատորներ կան հայ միլիոն ու կէս մարտիրոսների չարչարանքների մասին եւ ասկայն մինչ այժմ ոչ ոք չի կարողացել մարդկային ու երկնային այնպիսի զայրոյթատաւալանքով ներկայացնել Մեծ Եղեռնի զարհուրանքը, ինչպէս Գարոյր Սեւակը՝ իր անկրկնելի «Եռածայն Պատարագ»ով։ Ցուսահատ բանաստեղծի հիշը չէ՛ այդ, ոչ էլ ցաւ ու արցունքի մատեան, այլ հայրենի, արիւնծուծ հոգի վրայ կանգնած հայ մարդու բողոքը աշխարհի երեսին, աշխարհի դէմ՝ մոլեգնութեամբ ու նաեւ բռունցքով ու պահանջով։ Նախ ողբում է բանաստեղծը.

Մէկ չէին նրանք
եւ ո՛չ էլ երկու։
Նրանք՝ քի՛ւրք-քիւրո՛ց,
Նրանք՝ ա՛զգք-ազի՛նք,
եւ չվախենանուեց նրանցից ոչ ոք
Իր անկողնու մէջ մահով բնական,
ո՛չ մանուկ, ո՛չ ծեր,
ո՛չ կին, եւ ո՛չ այր...
Զմեռա՞ն նրանք, այլ սպանուեցի՛ն՝
Լեզէոն առ լեզէոն,
Փաղանգ առ փաղանգ։
Չմեռա՞ն նրանք, այլ սպանուեցի՛ն՝
ո՛չ գօտեմարտում,
ո՛չ խրամատում,
այլ իրենց տանը, այգում եւ արտում,
իրենց սրտի պէս լեցուն ցորենի հորերում
իրենց,
իրենց հոգու չափ խոր-խորհրդալի
ձորերում իրենց, —
Մահապարտուեցին հազա՞ր ձեւերով,
ամէնքն՝ անխնայ,
ամէնքն՝ անխտիր...

— Ոդրամ մեռելո՞ց,
Քի՛ւրք-քիւրո՞ց ողրամ։

Ապա «Եռածայն պատարագ»ի «Բեկանեմ շանթեր» մասում բանաստեղծը իր հզաւրներին օրհասական պայքարն է նըկարագրում անարդ ոսոխի դէմ՝ կուռ ու անմիջական պատկերներով։ Ահա մի հատուած.

Նախ՝
կատարեցին միակ կարելին.
Թրի-սրի դէմ,
Հրի դէմ, ջրի,
հրանօթի դէմ ու գնդացրի,
երէկուայ նման ու վաղուայ նման
մարտնչում էին ակռայ-ատամով,
կուում կրունկով,
թաթով ու ծունկով՝

digitised by A.R.A.R.@

վանում, Ուրֆայում, Մուսայի վրայ,
Գարահիսարի կիսաւեր բերդում...
...անխոնարհ մահուան կարմիր
ագերբում, —
անյայտ-անուանի որբազա՞ն խենթեր,
որ մահուան շնչից չտատանուեցին
եւ... դրօշակո՛վ չպատանուեցին,
այլ լոկ հեռուահաս ու բազմադարեան
իրենց ծփացող ծիրանի արեամբ...

⁂

Ո՛չ միայն հայ, այլ թերեւս միջադարային գրականութեան մէջ չկայ մի ժողովրդի արհաւիրքն ու վերածնունդը նկարագրող այնպիսի բիւրեղացած մի գործ, ինչպիսին է Գարոյր Սեւակի «Ներածյն պատարագը»: Այստեղ բանաստեղծը քանդել է իր հոգին եւ նրա մասունքներից կերտել այն հոյաթեւ տաճարը, ուր խնկում են մեր խնկելի մեռելների յիշատակը: Այդ ո՛դր է համընդհանուր, ցասում-վրէժի մի ահարկու կոչ եւ միաժամանակ ձօն ապրողներին:

⁂

Գարոյր Սեւակը սկսել է գրել դեռ դպրոցական չրջանից: Նա մինչ այժմ հրատարակած ունի «Անհաշտ մտերմութիւն», «Սիրոյ ճանապարհը», «Ղարիցֆեզ հետ», «Անմահները հրամայում են», «Մարդը ափի մէջ», «Անգրեալի գանգատուն», «Եղիցի լոյս» բանաստեղծական հատորները եւ «Սայաթ-Նովա» արձակ աշխատասիրութիւնը, որի չնորհիւ դպրոցական տիտղոսին արժանացաւ: Ըստ երեւոյթին, Գարոյր Սեւակը մի շարք անտիպ գործեր է թողել, որոնք, ըստ ժամուլի հաղորդագրութիւնների, հերթականօրէն լոյս են տեսնելու Հայաստանում:

Բաւական պատկառելի արդասիք՝ սեղմուած երեսուն տարիների արանքում:

Եւ դեռ նոր էր հասել իր հասունութեան զենիթին, երբ անիմաստ մի վթար կտրեց այնքան լուսատու կեանքի շողը: Ու մտածել, թէ ինչպիսի՛ գոհարներ պիտի ստեղծէր եւ ինչպիսի՛ զմրուխտներով զարդարէր Հայ բանաստեղծութեան պարտէզը: Իրապէս անդարմանելի կորուստ եղաւ Գարոյր Սեւակի մահը: Այդպիսիները քիչ են ծնւում: Այդպիսիների ծնունդի համար ժամանա՛կ է պէտք ու ժողովուրդ, որն իր կրծքում փայփայի, սնուցի եւ նկարագրի տայ իր երգչին:

Բաղմաթիւ պահեր կան Գարոյր Սեւակի մօտ, երբ առարկայականը տեղի է տալիս վերացականին, այսպէս ասած աւելի մօտենում իրաւ բանաստեղծութեան ակունքներին, ուր կարեւորը այնքան պատգամը չէ, որքան բ՛նքը՝ ստեղծագործութիւնը, ներքին դաշն ու լինելութեան ինքնապատմառը: Այս տեսակէտից եղակի երեւոյթ է Գարոյր Սեւակը Հայաստանի ժամանակակից գրականութեան մէջ: Իսկ աւելի յայն առումով, Եւտուշենկոյի, Վոզնեսենսկու, Տվարդովսկու հետ միասին՝ Գարոյր Սեւակը հանդիսանում է սովետական արդի գրականութեան փայլուն քառեակի մէկ անդամը:

Գերթուածներ կան «Մարդը ափի մէջ» եւ «Եղիցի լոյս» հատորներում, որոնք իրենց թարմութեամբ, արուեստանքով ու այժմէականութեամբ պատիւ պիտի բերեն մշակութապէս բարձր ուէ ժողովուրդի:

Եղերաբախտ բանաստեղծը կարծես նախազգում էր մօտալուտ վախճանը եւ վերջին տարիներին ենդահար ստեղծագործում էր: «Եղիցի լոյս» հատորը այդ տենդահար կշռոյթի արդիւնքն է՝ յորդուն դեռ Գարոյր Սեւակի հասուն ապրումների, եւ համադրումը նրա բանաստեղծական ու իմաստասիրական թռիչքների: Աւելի առնականացել է նա: Բառերը մուրճի հարուածներով պէս իջնում են, քանդում ապառաժը եւ ձեւ ու կերպարանք տալիս անչունչ քարին: Այստեղ, Գարոյր Սեւակը առնում է գաղափարը, դէպի աստղերը նետում եւ իր հոգու աւազանում բռնում ոսկեհունչ բեկորները նրա: Չի ծամծմում բառերը: Արդէն հենց էլխից նա կատակ չէր անում բառերի հետ: Եթէ խօսքը պիտի ասուէր, ապա ասում էր առանց չպարի ու յղկուած կլորութիւնների: Իսկ

digitised by A.R.A.R.@

վաթսունական թուականներին նա արդէն հայութեան ու աշխարհի ճիշդ աչքերին էր նայում՝ առանց ոեւէ մէկին հաճոյանալու, առանց համոզմունքներից մի կաթիլ գիջելու։ Հետեւեցէք բառերի առնական ուժին ու անմեղութեանը.

Ա՜խ, այս աշխարհի հին սպիները...
Մեր նոյնիսկ առո՛ղջ մսերի մէջ էլ նրանք են նստում
Եւ տառապանքով հարստացնում են մեզ
ու մեր կեանքը,
Որ անհամեմատ աղքատ կը լիներ,
Եթէ ամէնքս լինէինք առողջ,
Ինչպէս արջառը
Կամ անասունը։
Էլ ինչո՞ւ էք դուք, սիրելինե՛րս,
այսպէս վախենում
Հին սպիների կազդուրիչ ցաւից։

«Եղիցի լոյսը», կարելի է ասել, մատեանն է Պարոյր Սեւակի հոգեղինացած անդրհանքի, աղօթարանը իր աստուածամերձ մրմունջների եւ իր բողոքի թուղթը ուղղուած ամէն տեսակի պատեհապաշտներին, վախկոտներին ու դիմակաւորներին։ Մաքուր օդ է ուզում Պարոյր Սեւակը։ Երջանիկ բալիկներ է ցանկանում աշխարհին։ Եւ աղնուութիւն ու երջանկութիւն բոլորին։ Սակայն նախ պիտի վար առնել դիմակները։

Լսո՞ւմ էք ինձ։
Բաւակա՞ն է,
Հանեցէ՛ք ձեր դիմակները։
Հանեցէ՛ք,
Որ քամու ձեռքով
Ձեզ կարօտած օդն ապտակի
Ձեր խսկական դէմքը տխեղծ,
Եւ շող-շաղափն արեգակի
Սրսկումի նման ծակի
Ընդարմացած ձեր դէմքը խեղճ,
Որի ծանօթ նմանութեամբ են
յօրինուած
(Մի՛ մոռացէք) աստուածները
(մի՛ մոռացէք)...
Ամաչեցէ՛ք աստուածներից
Եւ հանեցէ՛ք դիմակներդ,
Բաւակա՞ն է։

Ո՞րը մէջբերում անել եւ ո՞րը թողնել։ Թողնելիք չկայ։ Լաւագոյնը Պարոյր Սեւակին կարդալն է՝ ամբողջութեամբ։ Սակայն զգոյշ պիտի լինել։ Որովհետեւ թարմ, կանաչ, փափուկ խոտերի տակ փուչեր կան թաքնուած։ Պիտի կարդալ անչտապ՝ ըմբոշխնելով ու իւրացնելով նրա հոգին ու միտքը։ Սեւակին կարդալու համար մի քիչ էլ տգամարդութիւն է պէտք։

Սակայն ո՞վ է Պարոյր Սեւակը։

Հին ասացուածք կայ, թէ ոճը մարդն է։

Եթէ այդ այդպէս է, ապա առաջին հերթին Պարոյր Սեւակը թունդ հայ է, ապա՝ մարդ, յետոյ՝ աշխարհաքաղաքացի։

Հայ գրականութեան ամենադարգացած ղէմքերից մէկն է նա։

Նոր բան ասելու համար՝ չի ժխտել հինը։ Նորը կառուցելու համար՝ չի քանդել հինաւուրց սիւնը, այլ նախ սովորել է։ Գնացել է ակունքին։ Սերտել մեր Ոսկեդարը, մտերմացել Նարեկացու, Ֆրիկի ու Գուչակի հետ, տաղ է ասել մեր գուսանների ու աշուղների հետ, Սայաթ-Նովայի խաղերի դուռնեղ պարտէ՛ղն է մտել եւ տարինե՛ր շարունակ Հայոց մատենագրութեան ոսկեփոշին ծը-ծել։ Այդքանով չի բաւականացել։ Շուռ է եկել, տակնուվրայ արել Հայ դասական ու արդի գրականութիւնը, նաւարկել աւստրալական ծով գրականութեան ծովում եւ հասել միջազգային ջրեր՝ մխոքը թաթախելով արեւմտեան մշակոյթի ոմկեանում։ Դիցաբանութիւն ու համաշխարհային պատմութիւն, կրօնք ու փիլիսոփայութիւն, ահա՛ այն բնագաւառները, որոնց ազաւինած Սովետաշէնի այս գիւղացի տղան գիւղի փոշոտ կածանին կանգնած բուռն վէճեր է ունեցել հին ու նոր աստուածների հետ։ Աստծոյ հետ։ Ու դեռ Գամիւ, Սարթր, Թամրս Էլիոթ ու Հէմինգուէյ։

Ի սկզբանէ բանն էր։ Պարոյր Սեւակը գիտէր։

Եւ Աստուածաշունչը եղաւ նրա հոգու խորանը՝ թէ՛ որպէս պատմութիւն,

digitised by A.R.A.R.@

թէ՛ գրականութիւն եւ թէ որպէս խոր-հուրդ խորին։

Ոճի մասին ենք խօսում։

Ինչպէս Կոմիտասը ասր ու հանգ ընկած ուծացման ու օտարացումի վտանգից փրկել է հայ գեղջկական գողտրիկ ու տոհմիկ երգերը, այնպէս էլ Պարոյր Սեւակը Հայոց Ոսկեդարի ու Միջնադարի խորքը մտնելով՝ փոշիների տակից վերակենդանացրել է վաղուց մոռացուած հայածին, հայիմաստ հարազատ բառերն ու հնչիւնները եւ է՛լ աւելի հարստացրել իր կուռ լեզուն։ Ինչո՞ւ ապաւինել օտարամաւտ խօսքերին, երբ մենք ունենք մեր աքանչելի ոսկեղնիկը։ Ինչո՞ւ մատենադարաններում փակել մեր հոյակապ գրաբարը, երբ այն մեր ժողովրդի հոգեկան մշակոյթի անխախտելի գանձն է։ Զափն ու օրէնքը, սկզբնապատճառն ու որոմարանութիւնը մեր բոմանդակ լինելութեան։

Այդքանով չի բաւականացել Պարոյր Սեւակը։

Շուրջն է նայել։ Ունկն արել եւ սովորել։

Լեզուն ո՛չ միայն գրքերում է ծաղկում, այլեւ, առաւելաբար, ժողովրդի բերանում — դաշտո՛ւմ, գիւղո՛ւմ, քաղաքո՛ւմ եւ մեծ ու փոքր ճանապարհների երկայնքում՝ բիրտ ու բնական, հարապատ ու դիպուկ։ Բացէ՛ք Պարոյր Սեւակի որեւէ էջը եւ կը տեսնէք, որ հայ դասականի ու արդիականի կողքին՝ Հայաստան աշխարհի դունեղ ծաղիկների պէս՝ վառվռում են գեղջկական-ժողովրդական տաք ու ընտանի բառերը։

Ընդհանուր առմամբ Պարոյր Սեւակի ստեղծագործական տարրերը այնքան յուզականութեամբ չեն յաւեցած, որքան գիտակցականով, այլ կերպ ասած, մրտածողականութեամբ։ Իր նպատակը տրպաւորութիւն կամ տրամադրութիւն ստեղծելը չէ, չնայած նրան, որ իր տաղանդի յուզքոտ գեռը շռայլօրէն վարարում է գոյների ու պատկերների յարափոփոխ ափերը։ Նա ունի իր նպատակէտը, որին հասնում է ճարտարապետական ճշգրտութեամբ։ Մի բան ունի ասելիք։ Այդ դաղափարը ուղում է փոխանցել հնարաւորին չափ պարզ եւ ուղղակի։ Վիթխարի շարժումներով, առանց դարձդարձիկութեան կամ պանուճանքի։ Երբեմն կոպիտ, երբեմն անտաշ, ոսկեայն միչա հարազատօրէն։ Եւ մասամբ այդտեղից էլ իր առնականութիւնը։ Գիտնականի, իմաստասէրի ու բանաստեղծի մի հրաչալի համադրութիւն է Պարոյր Սեւակը։ Հին տաղերի ու խաղերի չափն ու կառոյցը ուսումնասիրած մի վարպետ, որը հինը իւրացնելով նո՛րն է առում, այնպէս՝ ինչպէս չի ասել եւ ո՛չ մի բանաստեղծ։

Որովհետեւ Պարոյր Սեւակը եզակի է։

Ինքնութիւն է՝ ինքնուրոյնութիւն եւ բացարձակապէս հայ։

Մի անրեւելի զանգակատուն։

«Անլռելի զանգակատուն»ը...

Որքան անկատար պիտի լինէր մեր վերջին կէս դարի գրականութիւնը առանց «Անլռելի զանգակատուն»ի, որի մեծութեան առջեւ խոնարհում է միտքը եւ մեծանում խոնարհների հոգեկալած կերպարը։ Այդ զօրանոց չէ, ոչ էլ համազանգ, այլ ամբողջ մի ժողովրդի համանուագ՝ հայաթոյր ու հայաբոյր։ Հայայա՛ր։ Հայաչունչ ու հայաստեղծ։ Այդտեղ ամէն մի բառ մի վէմ է եւ ամէն մի վէմ սիւնաքարը այն հոյաթեւ կառոյցի, որի դմբէթը երկնքի կրծքին խրած բարձրանում է զանգակատունը՝ անլռելին, անկորնչելին, անկրկնելին։

Այստեղ, բանաստեղծը կանգնել է Հայոց դարերի գագաթին, յառել հեռուների խորքը եւ սերտել մագաղաթների տեսանելին ու անտեսանելին։ Սկսել է սկզբից եւ վերջացրել սկզբով։ Մտել է խրճիթներից ներս, բռնել ժողովրդի զարկերակը եւ արեան հարազատ զարկով քանդակել նրա հոգին՝ երբեմն բիրտ՝ ինչպէս ապառաժ, մերթ քնքուշ՝ ինչպէս Արարատեան դիփուռ, եւ յանախ արքշիռ՝ ինչպէս հայրենիքի գոյներով յաւեցած մի բանաստեղծ։

Եւ որչափ խորացել է քերթողը, ա՛յնչափ յստակացել է նրա երգը՝ հաս-

digitised by A.R.A.R.@

նելով մարդարէական պարզութեան։ Եւ որքան Գարոյր Սեւակը մօտեցել է հոգին ու մարդուն՝ ա՛յնքան բիւրեղացել է նրա խօսքը, դառնալով Մեսրոպեան պատգամ։ Եւ առաւելապէս այդտեղ է՝ Հայոց զանգակատան համեստ ու յամառ կամարների տակ, որ նա համաձրւսել է համայն հայութեան հետ, ափերի մէջ առել իր բազմաոչոր սիրտը եւ բեկոր առ բեկոր, մասունքի պէս բաշխել ամէնքին, ամէնուր։

«Անլռելի զանգակատուն»ի մէջ հայ ժողովուրդը նոյնանում է կոմիտասին։ Եւ կոմիտասի մէջ Գարոյր Սեւակը տեսնում է ժողովուրդին իր բիւրաւոր զոդանիներով։ Նրա խիղդն ու ցաւը, աշխատանքն ու հացը։ Լոյսի ծարաւը։ Սէրն ու լացը եւ դեռ օրհասական գալարումներն ու յարութեան մրմունջը՝ սուրբ ու երկնահայեաց։

Ոչ միայն հացիւ, այլ նաեւ բանիւ։

⁂

«Մեր երգի հունը լայնացընելով,
Համանուագի շարքեր ծնելով՝
Ճախրում են Նորից մինչեւ իսկ
Նիւ Եորք,
Սեւանից մինչեւ գոռ Նիագարա
Քանի՞ երգաստեղծ ու նուագարար։
Ու նրանց ամէն նոր համերգի մէջ,
Ու նրանց իրե՛նց — եւ ամէնի՞ մէջ —
Դո՞ւ ես. հոր նման արիւն ես դարձել,
Փոխարկուել չզի, նոր ձեւ ստացել։
Դո՞ւ ես, Նահապե՛տ, դու ես այն հանը,
Որ հայութիւն է հաղորդում նրանց
Իսկոյն ճանաչուող հայ ազգանունը.
Հայկական շունչն ու անտես ա՛յն ոգին,
Որ համակում է նրանց ամէնքին,
Եւ որ աշխարհն է զգում–հասկանում,
Ինչպէս Եւրոպա՛ն, այնպէս էլ Ասիա՛ն։
Այն շունչն ազգային, մշտակայ ոգին,
Որ կեանքում նո՛յնպէս ունի ազգանուն՝
Քո՛ անունը սուրբ քո՛ — Կոմիտասեա՛ն...

Գարոյր Սեւակի հայկական գլուխգործոցն է «Անլռելի զանգակատուն»ը։ Ո՛չ միայն անլռելի, այլ նաեւ անթարդամանելի ու անկրկնելի։ Հա՛յ պիտի լինել զգալու համար այն։ Հա՛յ պիտի լինել հասկնալու այն։ Եւ հա՛յ պիտի լինել ապրելու այդ գործի աստուածային տառապանքը եւ մարդկային յարութիւնը։

«Անլռելի զանգակատուն»ը երկնասլաց կոթող է հայ հանճարին, անմահ Կոմիտասին, անյայտ, խոնարհ բոլոր Կոմիտասներին եւ միլիոն ու կէս մեր նահատակներին։

Ու սակայն Գարոյր Սեւակը ոչ եւս է։

Մարդիկ այդպէս են։ Գալիս, մի պահ դեղերում, մի պահ փայլատակում եւ դեռ երկունքների բովից չանցած՝ անդարձ մեկնում են։

Ես մերժում եմ Գարոյր Սեւակի մահը։

Ես գիտե՛մ, որ նա կա՛յ, տեւո՛ւմ է, յարատեւում, որովհետեւ իր երգերի մէջ տեսե՛լ եմ մարդու յաղթանակը պարտութեան գիշերում։ Տեսե՛լ եմ մարդու անեղծ ոգին, երբ համատարած մահն է տիրել ամէնուր, երբ նոյնիսկ անվերջ խաւարն է փռել իր շղարշը նրա թարմ շիրիմի վրայ։

Ու գիտեմ նաեւ, որ այս պահին, մի տեղ, մի հայ մանուկ կամ երիտասարդ կամ նոյնիսկ տակաւին չծնուած մի էակ՝ ականջալուր իր ցեղի ձայնին, զգում է հին ու նոր զանգերի զօրանիը, որ մի օր «Անլռելի զանգակատուն»ի հիասքանչ համազանգի շունչի ներքոյ փիւնիկի պէս բարձրանալու է մի այլ սեւաթոյր Սեւակ եւ արժագանգելու Գարոյրի լուսեղէն աւետիսը՝

Մեր տաղի ֆուրմ,
Մեր խաղի մոգ
Մեր մշտահունչ ու մշտարթուն,
Անլռելի զանգակատո՛ւն...

Ց. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ՝ մեր եղբայրը

●

Ինչպէս բոլոր իրաւ բանաստեղծները, դուն պատգամաբերը եղար անտեսանելիին։ Հարկաւ այդ պաշտօնին կոչուած էիր ի ծնէ, եւ այդ առանձնաշնորհումը հաստատելու համար, երկրաւոր կեանքիդ ընթացքին ենթարկուեցար փարիսեցիներու պարսաւին եւ արհամարհանքին։

«Իրաւ բանաստեղծը, քանի էր գրչեղբայրդ՝ ելլեւար, կը տառապի մարդկութեան եւ ապգին տառապանքներով, եւ ամէն տեղ կը փնտռէ մարդութիւնը»։

Այս խօսքերը արձագանգեցին հոգիիդ մէջ։

Դուն սիրեցիր արեւը, որ խորհրդանիշն է ճշմարտութեան, լոյսը, որ խորհրդանիշն է գեղեցկութեան, երկինքը, որ խորհրդանիշն է ազատութեան եւ սիրեցիր մանուկներու անմեղ նախնութիւնը, որ խորհրդանիշն է մաքրութեան, եւ փնտռեցիր անկեղծութիւնը, որ ազամարդու ամէնէն մեծ արժանիքն է։ Եւ քու երգերուդ մէջ կրկնեցիր յաճախ.

«Աշխարհիս... մանկան մարդութիւն է պէտք,
«Եւ հենց այն մանկան,
«Որին ամէն օր աշխարհ են բերում...»

Բոլոր բանաստեղծներուն պէս այնքան վեր էիր հասարակ մահկանացուներէն, որ յրդեցիր նախանձը մանր դպիրներուն եւ երկիւղներու խորերը քնակող ասուուածներուն։ Ճուտահատութիւն չճանչցար սակայն, աւելին՝ տառապանքդ վերածեցիր գեղեցիկ երգերու. եւ քու միւս հանճարեղ գրչեղբօրդ՝ Գօյէրին պէս այնքերդ յաւելով կապոյտ անհունին, ըսիր.

«Օրհնեալ եղի՛ր Աստուած, որ մեզի կու տաս տառապանքը,
«Իբր միակ դեղը մեր անմարդութիւններուն,
«Եւ իբր ամէնէն հարազատ եւ լաւագոյն ճեկտարը,
«Որ զօրաւորներդ կը պատրաստէ երկնային հեշտանքներուն»։

Այն ատեն, ասուուածները դիմեցին իրենց վերջին զէնքին եւ քեզի դրկեցին հոգէառը։ Եւ իրարու հանդիպեցաք ամայի ճամբու մը վրայ, ...պայծառ առաւօտ մը, երբ բնութիւնը եր խայտաբղեհ կեանքով եւ իր կանաչ մարմինը կը յանձնէր արեւի բեղմնաւոր ճառագայթներուն։ Աստուածները ուրախացան, ուրախացաւ նաեւ թշնամւոր մթնշաղներու վոհմակը, բայց մենք տխրեցանք։

Բայց հիմա մեր տխրութիւնը փարատած է այլեւս, որովհետեւ հասկացանք քու մեկնումդ պատճառը։ Աստուածները կը ծանձրանային իրենց ոգեմոլոսին վրայ եւ կ՚ուզէին լսել հայերէն նոր ու սրատուչ երգ մը. եւ այդ երգը միայն դո՛ւն կրնայիր երգել։

Հիմա նստած ես հրաշագործ Որփէոսի կողքին եւ քու շուրջդ բոլորուած են անոնք, առանց օրոնց մարդկութիւնը արժանի պիտի չլլար որ մը իսկ ուելի ապրելու, եւ անմահութեան դռներին ճակտիդ վրայ կը փարիս այն միւս անմահներուն, որոնք հեռացան աշխարհէն իրենց կեանքին շրջանը լրացուցած։ Դուն եղբայր դարձար Շենկիէի, Գայրընի, Շելլէի, Ռեմպոյի, Դուրեանի եւ Մենարենցի, միշտ մնալով մե՛ր ալ եղբայրը։

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԵՆՈՒՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՄԻԱՆԳԱՄԻՑ...

Ոչ մի հարուած այսքան յանկարծակի ու ծանր չէր իջել իմ գլխին: Ոչ մի վիշտ այսքան արցունք չէր խլել իմ աչքերից: Ոչ մի կորուստ չէր բերել այսքան ախ ու ափսոսանք:

Հայ գրականութեան բոլոր անշիրիմ նահատակների համար խեղդած արցունքն էր, որ ժողովուրդը հեղեց Գարոյր Սեւակի սուրբ դագաղի վրայ:

Նա կեանքից մի բան էր պահանջում: Պահանջում էր, որ ամէն ինչ լինի միանգամից: Եւ միանգամից եղաւ: Բանաստեղծ դարձաւ միանգամից, ճանաչուեց միանգամից, բոլոր կոչումներն ու դափնիներն ստացաւ միանգամից: Այնքան դանդաղ դժուարութեամբ չինած իր տունն էլ քանդեց միանգամից: Մեր նոր բանաստեղծութեան մայր դեբանն էլ կոտրուեց միանգամից, ու մայր սիւնն էլ ծալուեց միանգամից... Նրան ճանաչող աշխարհն էլ նրա անողոք բացակայութեամբ ամայացաւ միանգամից: Չճանաչող աշխարհն էլ նրանով լցուեց միանգամից:

Մեր սերնդի բանաստեղծների մէջ ամէնից կրտսերն էր նա, բայց առաջնոյնն էր վաստակի ու հանճարի առումով: Բոլոր դռներով մտնելիս նա մեզ ճանապարհ էր տալիս կրտսերի խոնարհութեամբ: Միայն այս անգամ էր, որ խախտեց հերթը, մեզ թողեց դռների մօտ ու ինքն առաջ անցաւ.... Ո՞ւր:

Ասում են՝ «գրծաւ գնաց»: Ասում են՝ «գնաց գրծաւ»: Գարոյր Սեւակը չգրծաւ գնաց: Գարոյր Սեւակը գնաց չգրծաւ: Դեռ ապագան է Գարոյր Սեւակը: Գրաւոր Սեւակի տեղը թափուր չի մնալու, դեռ շատ պիտի մեծանայ այդ տեղը: Մեր պարտքն է՝ մատուռք առ մատուռք հաւաքել, ամբողջացնել անգիր Սեւակի պօրէական եւ աստուածային կերպարը եւ յանձնել սերունդներին:

Դէպի իմ ծննդավայրը, դէպի Զանգեզուր դնացող ճամբորդներ, հին Զանգեզուրի եւ ապագայ Սեւակ գիւղով անցնելիս ամէն անգամ կանգ առէք մի պահ, նայէք դէպի ձախ, խոնարհէք ձեր գլուխները անտէր մնացած առանձնատան առաջ եւ նրա մօտ հանգչող հանճարի ոգուց մի մասունք տարէք ձեր զաւակներին...

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Ես ի՞նչ անեմ առանց քեզ,
Սիրելի Պարոյր,
Դու հաց էիր ինձ համար,
Օդ էիր ու ջուր:

Անհնար է հաւատալ,
Որ չկաս իրօք,
Դու իմ եղբայր, դու իմ պապ,
Դու գիժ, իմ խելօք:

Իմ անգիջում, անողոք
Եւ իմ խմահաճ,
Կամիտասեան իմ մորմոք,
Իմ տնաւէր լաճ:

Իմ հանճարեղ, իմ յիմար,
Իմ պղտոր, իմ ջինջ,
Բաւի զնգոց, խռփի վար,
Ամէն, ամէ՛ն ինչ:

Դու մատչելի, մարդամօտ,
Դու եւ անառիկ, —
Մարգի համեմ, լանջի խոտ,
Բարձունքի ծաղիկ:

Դու իմ բանակ, դու իմ զօրք,
Դու մի տոհմի շիւղ,
Դու հրթիռի հրացոլք
Ու երդիքի ծուխ:

Ինքդ քեզնից հասարակ,
Ինքդ քեզնից վեր...
Դու զալիքից առած վարկ,
Անցեալի նուէր:

Դու դպիր ու շինական,
Դու անխոնջ գրիչ,
Դու իմ անտէր տիրական
Եւ տիրական խիղճ:

Ուտում էինք, մեր բախտին
Երանի տալով,
Ապուրը նոյն ամանից
Եւ նոյն դգալով:

Հիմա ես ո՞ւմ հետ կիսեմ
Հաւատամք ու հաց,
Եւ ո՞ւմ զրոյցը լսեմ
Մինչեւ լուսաբաց:

Ի՞նչ ես անում առանց ինձ,
Ո՞ւմ ես խրատում,
Ո՞ւմ համար ես ձեռագիր
Երգերդ կարդում:

Չես ընդունում դու արդէն
Կանչ ու հրաւէր,
Ոչ էլ մեզ ես ընդունում,
Տօ լաճ տնաւեր:

Չես ընդունում... բայց կը գամ
Սպասիր քիչ էլ,
Զրոյց կ'անենք վիճելով
Մինչեւ ուշ գիշեր...

Այս ի՞նչ խաւար է ասպէս
Իմ սրտին իջել:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՂԵՐԵՐԳ

Չենք հասցնում իրար մի լաւ սիրել
(Պ. ՍԵՒԱԿԻ խօսքերից)

Հիւսիսի այս լոյս գիշերում խորին
Քայլում եմ արբած, գինեմոլի պէս,
Աչքերս են փակւում,
Ոտքերս շարժւում են անհնազանդ,
Մարմինս է այստեղ, իսկ հոգիս այնտեղ...
Այնտեղ հիմա մութ, շատ մութ գիշեր է,
Խաւարն անթափանց նստած է հիմա
Դալար թփերի եւ ծաղկի վրայ,
Եւ այնտեղ, խոնաւ ու ցուրտ հողի տակ
Վայրկեան առ վայրկեան
Անէանում է,
Վայրկեան առ վայրկեան
Չեւափոխւում է,
Վայրկեան առ վայրկեան
Անհետանում է,
Հող է դառնում նա,
Ով կոչուած էր, որ
Խօսեցնի հողը
Նայիրեան լեզուով մեր հնաբարբառ,
Նայիրեան խորունկ վիշտ ու ցաւերից,
Նայիրեան բացուող առաւօտներից,
Նայիրեան շէնշող գալիքի յոյսով։
Նա որոնում էր մեր հոգու բոլոր նրբերանգները,
Ճակատագրի հանելուկներն էր ուզում վերծանել
Ու մոռանում էր, որ ապրել է պէտք,
Մոռանում էր, որ նա ինքը իրեն չի էլ պատկանում,
Ուստի վաղաժամ,
Ուստի տարաժամ
Նա մեկ լքելու իրաւունք չունի...
Մինչդեռ չլսեց մերձաւորներին,
Իսկ թռիչքների սովոր իր միտքը
Չհնազանդուեց մեքենայական
Այս սեւեռումին, որ պահանջում է արդէն մեքենան։
Եւ կոյր աղէտը տօնեց բթամիտ իր յաղթանակը...

digitised by A.R.A.R.@

Եւ ինձ հասկացէք՝ հոգիս լքում է ամէն ակնթարթ
Մարմինն իմ երեր, որ քարշ է գալիս այս կէս գիշերին
Ու մութին ձուլուած թռչում է այնտեղ՝
Չանախչու ձորը,
Ուր թաղուած է նա։
Եւ կէս գիշերին գնգուն քաղաքում,
Որին կապուած եմ Բլոկի տողով
Եւ Եսենինի, ու իմ բարեկամ
Եւտուշէնկոյի տաք ընկերութեամբ,
Ինձ թեւեր տուող եւ ինձ ներշնչող
Այս վեհ քաղաքում,
Շրջում եմ դալով ստուերի նման։
Հոգիս այնտեղ է
Եւ մի պահապան հրեշտակի պէս
Թեւում, սաւառնում է կսկծալով
Չանախչու ձորի թփերի վրայ,
Չանախչու ձորի արտերի եզրին,
Չանախչու ձորի առուների մէջ։
Այնտեղ ինձանից անդարձ հեռացած,
Գնած է ինձնից անբաժանելին,
Գնած է մեզնից անբաժանելին...

•

Խաղաղ թող քնի,
Իսկ հոգիս, թողէք, որ որպէս օրինանք
Թեւածի այնտեղ, այն խորունկ ձորում...
Խաղաղ թող քնի,
Խաղաղ թող քնի,
Ցուշն անմեռ մնայ
Եւ յուշն արարի։
Ու թող այս ձորում
Ու մեր խոցոտուած լեռներում վերձիգ
Նորերը ծնուեն,
Լաւերը ծնուեն,
Թող յիշատակը սերունդներ ծնի՝
Մեր երկրի ոգուն
Հաճոյ եւ վայել...
Թող խաղաղ քնի։

ՇՄԱՒՈՆ ԹՈՐՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԽՈՐՀՐԴԱՆԿԱՐ

Գործ՝ ԵՐԶԱՆ ՊՈՂՈՍԵԱՆԻ

***

··· Այսպէս խօսելով մտանք Համօ Սահեանի տունէն ներս:

Ներս մտանք որ հարսանիք էր կարծես: Գինիով, ֆռնիամով ու պտուզով ծանրաբեռն սեղան, շուրջն ալ՝ հինգ վեց հոգի: Կին ու մարդ: Խանօթացուցին Պարոյր Սեւակը՝ գիսախիւ գլուխ մը, հաստ շրթներ, այտոսկրները ֆիչ մը ցցուած:

— Ծօ՛, վրդ հիչ բանաստեղծի շեռքիք չկայ, ի՛նչպէս ստեղծողը այնքան զրպարտած էր ուզեզովդ, որ ժամանակ չունեցաւ մարմնիդ միւս մասերուն ուշադրութիւն դարձնելու, պիտի ըսէի, բայց չըսի:

Համբուրուեցանք:

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

digitised by A.R.A.R.@

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՒԱԿԻ

«ԵՂԻՑԻ ԼՈՅՍ»Ը

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՒԱԿ

ԵՂԻՑԻ ԼՈՅՍ

«Հայաստան» հրատարակչություն 1969 ԵՐԵՎԱՆ

Շատերին թերեւս յայտնի է, թէ Պարոյր Սեւակի «Եղիցի լոյս»ը երեւանում ի՛նչ դժուարութիւնների միջով անցաւ՝ մինչեւ վերջ ի վերջոյ լոյս տեսնելը։ Այդ մասին որոշ խմաստով անուղղակի վկայութիւն կարելի է համարել եւ Հայաստանի գրողների վերջին ճրդ համագումարում բանաստեղծութեան վերաբերեալ տրուած համադրական զեկուցման այն մասերը, որոնցից երեւում է, որ որոշ գերաչալուրջ տարբեր ջանացել են իրենց ուղած ձեւով չարամիտ մեկնաբանութիւն տալ Սեւակի գրքի հենց վերնագրին, «Եռաձայն պատարագ» կամ «մե՛ծ ուղտի փոքրիկ ականջում» արտայայտութիւններին։ Այսպէս թէ այնպէս, այժմ հրապարակում ունենք գրքի երկու հրատարակութիւն, որոնցից արտաքսամանեանն է գտնում իմ տրամադրութեան տակ։

«Եղիցի լոյս»ը թերթատելիս, սկզբից եւեթ յիշողութեան մէջ ինքնաբերաբար յառնում է Զարենցի «Գիրք ճանապարհին», քանզի նրանից բացի անկարելի է ցոյց տալ խորհրդահայ մի այլ բանաստեղծագիրք, որը որեւէ կողմից համեմատուելու եզրեր ունենայ եւ նոյնօրինակ մտքեր ու զգացումներ յարուցի։ Այս համեմատութիւնը, ի հարկէ, ենթակայական ու պայմանական է, քանի որ Զարենցը Զարենց է եւ Սեւակը՝ Սեւակ, իւրաքանչիւրն իր սեփական դէմքով ու ոչխարհով, ստեղծագործութեան պարունակութեամբ ու յագեցուածութեամբ։

Ըստ իս, ինչպէս որ «Գիրք ճանապարհի»ն Զարենցի ստեղծագործական ուղու աւարտափուլն էր նշանաւորում, այնպէս էլ «Եղիցի լոյս»ը Սեւակի գրական գործունէութեան ամփոփումն է եւ

digitised by A.R.A.R.@

բարձրագոյն աստիճանը։ Հիմնական նը-
մանութիւնը կայանում է նրանում, որ
երկու դէպքում էլ բանաստեղծ հեղի-
նակները ներկայանում են հոգեւոր ու
մտաւոր ակնյայտօրէն ինքնաբաւ անկա-
խութեամբ։ Իրե՛նք են որոշում իրենց
գրական անելիքը եւ ուղղութիւն տալիս
իրենց խօսքին։ Գաղտնիք չէ, որ առհա-
ւարակ հոգեւոր անկախութեան ըմբռ-
նումը այս կամ այն պարագայում տար-
բեր մարդկանց կողմից այլազան ձեւով
է պատկերացւում, երբեմն հասնելով
կեղծ ու անհեթեթ պնդումների։ Բայց
Զարենցի եւ Սեւակի մօտ ստեղծագործ
անկախութիւնը արտայայտւում է որո-
շակի կայուն իմաստով։

Ներքին հոգեւոր անկախութեան
հասնելը բնաւ եւ անպայման չի նշանա-
կում խորթանալ, հեռանալ իր միջա-
վայրից, առաւել եւս՝ հակադրուել այդ
միջավայրին ու գոյութիւն ունեցող ի-
րականութեանը։ (Խորթանալ, հեռանալ
եւ հակադրուել կարելի է եւ առանց հո-
գեւոր որեւէ աստիճանի հասած լինելու,
ամենանախնական վիճակում)։ Այլ դա
պարզապէս նշանակում է առնուազն մտքի
մէջ անվերապահօրէն ազատ ու անկախ
լինել պարագայական ազդեցութիւննե-
րից, սեփական բարձր հայեացք ունենալ
չրջապատի հանդէպ ու չճանաչել պար-
տադրուող կամ հրամցուող սուտ հեղի-
նակութիւններ ու կուռքեր։

Արդ՝ ուրիշ ո՞ր բանաստեղծական
դրքում է կենսական իրականութիւնն ա-
ւելի շատ ներկայ ու ցայտուն, քան յիշ-
եալ «Գիրք ճանապարհի» եւ «Եղիցի լոյս»
դրքերում։ Այս երկու դրքերի հե-
ղինակները էլ անընդհատ ցուցաբերում
են սերտ կապ իրենց ժամանակի ու աշ-
խարհի հետ, ուղղակի այրւում որոշա-
կի արժէքների ճակատագրով։ Բայց նը-
րանք իրենց խոհերն ու յոյզերը, ընդոր-
մին, արտայայտում են արուեստի այն-
պիսի հաւաստի եղանակներով, որոնք
ի սկզբանէ ճշմարիտ երկարակեցութիւն
են ապահովում կտակուող ստեղծագոր-
ծութեան համար։

Կան եւ այսպէս ասած մթնոլորտա-
յին չեչտուած տարբերութիւններ։ Զա-
րենցի դրքում դերիշխում է կարծես թէ
էութեան ընդերքից բխող խիտ, թանձր,
ինքնաթաւալ եւ միաժամանակ տաղնա-
պով լի խօսքը։ Այնտեղ երեւում է ստեղ-
ծագործական երկար ճանապարհ կտրած,
որոշ հանգրուանի հասած, բայց եւ այն-
պէս տակաւին ելք որոնող բանաստեղծ
մարդը։ Սեւակի խօսքը վերերկրային է,
գերազանցապէս լսարանային, կենդանի
լոյսերից ու արձագանգներից հիւսուած,
կծու եւ զրաղեցնող սրամտութիւններով
ճարմանդուած, համեմատաբար թեթեւ
ու դիւրասահ։ Նա իր առջեւ ըստ երե-
ւոյթին չունի ներքին դժուարութիւնե-
րի արմատական յաղթահարման խնդիր,
ի սկզբանէ չտրոհուած ամբողջութիւն է
եւ ընթանում է մէկ ուղղութեամբ ու
ճակատով։

Անշուշտ, Սեւակի յայտնաբերած
բանաստեղծական օղակները մեծ մասամբ
այնպիսի հազուագիւտ նուաճումներից
են, որ սովորաբար իրենք իրենց պատ-
բաստի չեն ներկայանում եւ երկնքից չեն
թափւում. դրանք եւս պէտք է ձեռք բե-
րել տքնաջան որոնումների զնով։ Բայց
դրքում ընթերցողը հիմնականում տես-
նում է շարադրուած արդիւնքը, «կնքուած
զարտադրանքը», իսկ բուն որոնման
տագնապն ու ընթացքը անմիջապէս
չի զգացւում։ Դա առհասարակ սեւակ-
եան այսպէս ասած վերլուծական-հա-
մադրական իւրայատուկ արուեստի բնո-
րոշ գծերից մէկն է։ Արդեօք Զարենցի
եւ Սեւակի խօսքային մթնոլորտի այդ
տարբերութիւնները միայն ստեղծագոր-
ծական անհատականութեան առանձնա-
յատկութիւնները՞վ են բացատրւում, թէ
նաեւ իրենց ժամանակի ընդհանուր պայ-
մաններով։ Հաւանաբար երկուսով էլ
միաժամանակ։

Այստեղ Զարենցի «Գիրք ճանապար-
հի»ն յիշելը ինքնանպատակ չէր։ Նախ՝
որովհետեւ մակարդակային նմանութիւ-
նը ակնյայտ է եւ ուշագրաւ։ Եւ ապա՝
համեմատութիւնն աւելի է նպաստում
պարզելու Սեւակի դրքի տեղն ու չրջա-
նակը։ «Եղիցի լոյս»ը տպարաններից

digitised by A.R.A.R.@

թողարկուող հերթական գրքերից մէկը չէ, այլ այնպիսին, որի մէջ այս կամ այն ձեւով արտացոլում են մա՛նաւանդ մեր ժամանակի ընդհանուր ու հայ իրականութեան առաւել էական կողմերը եւ որպէս բանաստեղծական արուեստի հանգուցային առանձնայատկութիւնները։ Այսօր իսկ դա արդէն ծանրակշիռ ու փնտռուած գիրք է, իսկ ժամանակի ընթացքում, անտարակոյս, առաւել նշանակալից պիտի դառնայ եւ գրաղիցնի գրական տեսաբաններին, առատ նիւթեր տրամադրելով հետազօտութիւններ կատարող մասնագէտներին։ Սա զուշակութիւն չէ, այլ իրերի կացութիւնից բխող տրամաբանական եզրայանգում։

Գարոյը Սեւակի անցած ճանապարհը ընդհանուր առմամբ յայտնի է։ Թէեւ նա սկզբից եւեթ ուշադրութիւն է դրաւել իր ինքնուրոյն անհատականութեամբ եւ բանաստեղծական արտայայտութեան թարմ ու խոստումնալից կողմերով, միանգամից ընդհանուր եւ բաւարար ճանաչում չի գտել եւ հանդիպել է այլեւայլ խոչընդոտների։ Ասենք, շատ զարմանալի կը լինէր, եթէ մա՛նաւանդ Սեւակի նման մէկի ճանապարհը բացառապէս հարթ ու հեշտ լինէր։ Բայց վերջ ի վերջոյ տաղանդը իր ինչ լինելը ցոյց տուեց եւ Սեւակի համար ապահովեց որոշակի տպարէզ ու դէր։ Սեւակը ո՛չ միայն անձամբ արդիւնաւէտ գործունէութիւն ծաւալեց, այլեւ ժամանակին նորահաս բանաստեղծների վրայ ինքնաբերաբար նրկատելի ազդեցութիւն թողեց։ Մի տեսակ սեւակեան փուլ սկսուեց, թէեւ յայտնի է, որ Սեւակը համապատասխան թափի հետեւորդ չունեցաւ։ գոնէ մինչեւ հիմա լուրջ թեկնածուներ դրեթէ չեն երեւում։

Դատելով գրական մամուլի ու այլեւայլն տուեալներից, Սեւակի գրչակիցները մեծ մասամբ գնահատում են նրա վաստակը եւ գիտակցում նրա մեծութիւնը։

Այստեղ մի փոքրիկ չեղում։

Հայ Սահեանը 1949 թուին գրել եւ «մի երիտասարդ բանաստեղծի» է նուիրել իր «Որոճած խօսքեր» բանաստեղծութիւնը, որը զետեղուել է 53 թուին տրուած եւ այժմ հեղինակի կողմից քմծիծաղով յիշուող մի ժողովածուում։ Սահեանը այդ կտորում ջերմ ուրախութիւն է յայտնում, որ իր երկար տարիներ որոճած ու չգտած խօսքերը վերջապէս մի ուրիշն է գտել, եւ բանաստեղծութիւնն աւարտում է այս քառատողով.

Խօսքեր սրտագին, միւնոյն է թէ
Ում ձեռքով էք լոյս աշխարհ հանուած,
Միայն թէ՝ ասուէք, միայն թէ՝ լսուէք,
Միայն չմնաք չարտասանուած...

Այսօր գաղտնիք չէ, որ Սեւակը այնքան ու այնպիսի ճաճանչափայլ «խօսքեր» է գտել եւ հայ գրականութեանը կտակել, որ անկարելի է դրանք չտեսնել ու չգնահատել։ Դա գիտակցում են ընթերցողները եւ առաջին հերթին բանաստեղծները ու գրողներն իրենք, ընդսմին արտայայտում ամէն մի պատեհ առիթով։

«Եղիցի լոյս»ը հեշտութեամբ եւ մէկ ինչով կարդացուող ժողովածուներից չէ։ Ճիշդ է, նրանում զետեղուած երկերը անդուռ-անպատուհան փակ շինուածքներ չեն, առաջին հայեացքից մատչելի են եւ նոյնիսկ թափանցիկ։ Բայց եւ այնպէս հեշտութեամբ չեն ընդգրկուում, ընկալւում ու իւրացուում, որովհետեւ ներքուստ բազմաշերտ են եւ բազմացոլք ու պահանջում են ուշադիր եւ ստիպողական մերձեցում։ Դա Սեւակի ստեղծագործութեան համար նորութիւն չէ, այնուամենայնիւ, առաւել դէպքում առաւելագոյն չափերի է հասցուած, քանի որ դուգահեռաբար աւելացել է եւ մտքերի խտութեան տեսակարար կշիռը։ Եթէ Սեւակն իր մտքերն արտայայտելու լինէր նախնական մերկութեամբ, այն դէպքում առհասարակ բանաստեղծութիւն չէր ստացուի։ Իսկ Սեւակն անկասկած ծնեալ բանաստեղծ է խմացական թեքումով եւ արուեստագէտ նկարիչի նման իր ասելիքն այնպէս է դասաւորել փոքրա-

digitised by A.R.A.R.@

ծաւալ կտաւի վրայ, որ տեղի ունայնութեան գնով առաւելագոյն իմաստ արտայայտուի։ Դա այդպէս է նաեւ այնպիսի դէպքերում, երբ մի պահ թւում է, թէ ասուածը իրականում այնքան էլ նշանակալից ու մեծ տարողութիւն չունի։

Սեւակը, ինչպէս յայտնի է, չափածաձեւած, սահուն ու կաղապարուած քառատողերի բանաստեղծ չէ։ Նրա խօսքի բանաստեղծականութիւնը արտայայտւում է առաւելապէս շարադրանքի տրամաբանական կշռոյթի, շեշտուած եզրերի, կտրուկ անկիւնադարձերի շըրջանակում։ Ընդամենը քիչ չեն եւ արտաքուստ հանելուկային թուացող արտայայտութիւնները։ Ու նաեւ բառախաղի տպաւորութիւն թողնող ձեւական զուգադրումներն ու հակադրումները, որոնք իրականում ըստ էութեան բառախաղեր չեն, այլ սեւեան մտածելակերպի ինքնաբուխ դրսեւորումներ, բանաստեղծական կառոյցի որոշակի ասպեհաններ, ներքին հանգոյցներ՝ անորոշ ու անգոյն արտաքինով։ Այդպիսի տեղերը անպայման ցնցում եւ շփոթեցնում են ընթերցողին, բայց սթափուելուց յետոյ նոր խոհեր յարուցում եւ ուղղութիւն են ցոյց տալիս։

«Եղիցի լոյս»ը վկայում է, թէ ինչպիսի յիրաւի լայն ընդդրկումների կարողութիւն ունէր Սեւակը։ Երբ մի ընդհանուր հայեացք ենք նետում դրքում զետեղուած բաժինների եւ բուն երկերի ցանկի վրայ ու մտովին փորձում նիւթերի ծայրերը որոշել՝ ամբողջութիւնը պատկերացնելու համար, այն ժամանակ ենք տեսնում, թէ ինչ հսկայական տարածութիւն է բռնում եւ բնագաւառներ ամփոփում 300 էջի չհասնող դիրքը։ Նոյն դիրքը միաժամանակ վկայում է, թէ բանաստեղծը ինչպէս էր կարողանում խորանալ, բանաստեղծօրէն տարրալուծել «ամենահասարակ» երեւոյթները, հրանգաւորել իրերը եւ իւրաքանչիւր միաւորի մէջ նոր միաւորների աշխարհ յայտնագործել։ Իր խսկ ասելով՝ «մոլի ոգին հետազօտման» բանաստեղծին առաջնորդում է միշտ ու ամէնուրեք։ Եւ միայն «Դիմակներ» ու «Ողբոյնի քմայքները» վերնագրուած բաժինները չէ, որ կառուցուած են ակնյայտ ներքին «հետազօտման» սկզբունքով, այլ նաեւ միւս բոլորը, որտեղ երկերի վերնագրերը մի պահ կարծես թէ բոլորովին տարբեր նիւթերի են վերաբերում։

Սեւակի վերջին դրքում զետեղուած երկերի մի մասը նախօրօք ընթերցողին արդէն ծանօթ էր գրական մամուլից։ Բայց իւրաքանչիւրի այսօրուայ դասաւորութեամբ մէկ դրքի մէջ ամփոփուելը առանձին կշիռ ու հմայք է տալիս բոլորին, առաւել նշանակալից դարձնում։ Հեղինակն ինքը իր գործի հետ նոր լոյսի տակ է երեւում՝ իր խսկ սիրած լոյսի ներքոյ։ Բանաստեղծական նոյն ձեռագիրն է գործում իւրաքանչիւր երկի մէջ։ Վերստին մեր առջեւն են վաղուց ծանօթ իմացական լուսարձակները, իրերի կեղեւը ճեղքող եւ միջուկին հասնելու ձգտող ճառագայթները, բանականութեան եւ բանական խօսքի ուժի ու թուլութեան խոստովանութիւնները, «ամէ՛ն բան աստուծի վրայ» շրջելու պերճախօս փորձերը։

Դիրքն սկսւում է «Նորօրեայ աղօթք»ով եւ աւարտւում ծաւալուն «Եռաձայն պատարագ»ով։ Վերջինս թէեւ իր անմիջական բովանդակութեամբ ինքնուրոյն տեղ է բռնում եւ մի տեսակ իւրայատուկ յաւելուած ծառայում դրքի համար, այնուամենայնիւ համելիօրէն լրացնում է սեւակեան ստեղծագործութեան պատկերը ընդհանրապէս, իր կոթողային ներկայութեամբ։ Դա էլ մէկ ուրիշ «Անլռելի զանգակատուն» է, սեփական պատուանդանի ու մանրակրկիտ հետազօտութեան արժանի, Սեւակի բանաստեղծական ու քաղաքացիական ինքնութեան եւս մի վառ արտայայտութիւն։ Իսկ «Նորօրեայ աղօթք»ը բանաստեղծի ելակէտն է, դրքի ինքնագիր բնաբան։ Բանաստեղծը ճանապարհ ընկնելուց առաջ՝ իր խոր մտահոգութիւնն է յայտնում «քիւրաւոր ու բուք, թիւրատեսք ու սուտ» հաւատացեալներին եւ ասուած

digitised by A.R.A.R.@

լինելու յաւակնորդներին կոչ անում՝ «Փչեցէ՛ք նրանց բոլոր մոմերը, մարեցէ՛ք նրանց կանթեղներն ամէն, հանգցրէ՛ք նրանց ջահերն այլազան, որ··· եդիցի լո՛յս»։ Ճիրաւի, կեանքում սուտ ու բութ «հաւատացեալներն» են, որ իրենց դոյութեամբ սահման են դնում օդափոխիչ շարժման ու ստեղծագործութեան առջեւ, լճացման դատապարտում կեանքի անդաստանը եւ խափանում իրական լոյսի ճանապարհը։ Որպէսզի «եդիցի լոյս»՝ հարկաւոր է նախ զինաթափել խաւարի դաշնակից չահախնդիր ոտորաքարշներին։

«Նորօրեայ ազօթք»-ին յաջորդում է «Առաւօտ լուսոյ» երկը։ Բանաստեղծն անժիջապէս անցնում է գործի, երբ լուսաւոր ու ջինջ առաւօտ է։ Բայց դա ընթացիկ իմաստով առաւօտ չէ, անշուշտ, այլ բանաստեղծական, Զարենցի երբեմնի «էպիկական լուսաբաց»-ի ոգով, թէեւ միանգամայն այլ տարածութեան մէջ։ Մէջբերենք Սեւակի յաջորդող խօսքերը ոչ թէ տողատուած, այլ պարզ շարադրանքով. «Ու ես անյապաղ անցատում եմ ինձ աշխարհից ծանօթ ու պարզում եմ ինձ. դարձնում մի անօթ, որ լոկ դատարկ չէ, այլ նաեւ անօդ։ Եւ··· նո՛ր աշխարհ եմ ստեղծում հիմա՝ առայժմ եթէ ոչ ձեզ բոլորիդ, ապա գոնէ ի՛նձ միայն ի՛նձ համար, որպէսզի ճախ ե՛ս եւ հենց ի՛նձ վրայ բժշկի նման փորձարկեմ կարգին, ու եթէ լինի այս անգամ սարքին՝ նո՛ր միայն վստահ յանձնեմ ձե՛զ նաեւ, եւ ապրէք այնտեղ դուք մարդավայել»։

Բայց ինչո՞ւ չարունակել համարժէք տողերի արտադրութիւնը եւ ինչո՞ւ փորձել վերլուծելու այս ու յաջորդ բանաստեղծութիւնները, երբ գոնէ իմ հաշուով հաստատ գիտեմ, որ իւրաքանչիւր երկ առանձին վերցրած կարող է հարկ եղած դէպքում մի կոկիկ ինքնուրոյն հետազօտութեան նիւթ ծառայել։ Գանգի կրակն բնութագրման տեսակէտից էականը միայն այն չէ, թէ հեղինակը ո՛ր երկում ինչի՛ մասին ի՛նչ է ասում, այլ նաեւ՝ թէ ինչպիսի՛ պայմաններում ինչպէ՛ս ու ինչո՛ւ է ասում, ի՛նչ կապակցութիւններ կան զանազան երկերի բովանդակութեան միջեւ, որոնք բոլորը միասին կազմում են նրա բանաստեղծական աշխարհը, աւելի ճիշդ՝ այդ աշխարհի մի որոշակի մասը, ու հետեւապէս միմեանց բացատրում եւ միմեանցով բացատրւում։ Բայց դա արդէն ուրիշ գործ է եւ ոչ թէ այսպիսի ընթացիկ արձագանգային յոդւածների նիւթ։ Կարելի է միայն Սեւակի հետ բոլոր ընթերցողներին ի սրտէ մաղթել հետեւեալը.

Բոլո՛րն այժմ կարդալ գիտեն,
Ուրեմն փառք··· կարդացածը
հասկացողի՛ն···

«Առաւօտ լուսոյ»-ին յաջորդում են «Լոյս զուարթ», «Ձայնիւ երկրորդ առ Ցէր կարդամ», «Լոյսի ադիւրը», «Վառեցէք լոյսերը», «Ճակատամարտ պատի հետ», «Աշխարհի հին սպիները», «Հարոյկ՝ սառոյցի վրայ», «Աշխարհին մաքրութիւն է պէտք», «Ամպոտ եղանակ», «Թախծի երկարութիւնը», «Դիշերամուտ», «Ղամակի փոխարէն», «Պարապութիւն» երկերը։ Ապա «Դիմակներ» բաժինը՝ վերջում «Իրերի բնութիւնը» վերնագրով կարկառուն եւ իմաստով միակտուր «հոռամաս» չափածոյ աշխատութեամբ հանդերձ։ Այնուհետեւ թարգմանւում են «Դարակէսի պարգեւները»։ Եւ այլն, եւ այլն։ Սեւակն իր մտքի «թուր-կէնճակին» շողացնելով ճեղքում է խաւարը, նոր աշխարհներ բացում, ձայներով ու արձագանգներով լցնում մթնոլորտը։ Դրանով իսկ իր հոգեւոր փորձը փոխանցում ժամանակակիցներին ու նաեւ, բնականաբար, գալիք սերունդներին։

Վերջում եզրափակման կարգով արժէ ընդգծել, որ «Եղիցի լոյս»-ը ե՛ւ ամբողջովին «դարակէսի պարգեւներից» է։ Սեւակի հետ բոլորս էլ մօտաւորապէս գիտենք, որ՝

digitised by A.R.A.R.@

Հարիւր տարին մէկ են ծնուում մեծու-
թիւններն այս աշխարհի,
Բայց ամէն օր հարիւր մեծ է գալիս
աշխարհ.
Ծնուում են մեծ, բայց չեն թոռնում, որ
դառնան մեծ:

«Հարիւր տարին» ինքնին կլոր թիւ է, ասելու ձեւ եւ պայմանական: Բայց եւ այնպէս բոլորածակի չափ հաստատ է, որ իրական մեծերը միշտ էլ հաղուագիւտ են, սակաւաթիւ, փոքրամանութիւն են կազմում ու այս աշխարհում նրանց ճանապարհը փակելու կամաւորներ շատ կան, լիաշնչուած բռնակալներ լինեն նրանք թէ բռնակալների համհարզներ ու ծառաներ, հեռեւանքը նոյնն է: Վաղաժամ մահերն ու դանդաղ աղէտները լրացնում են «պակասը»: Բայց մեծութեան գրոչմով ծնուածների մեծութիւնն էլ հենց նրանում է կայանում, որ ճակատագրի կողմից իրենց արամադրութեան տակ գրուած սահմանափակ ժամանակն ու հնարաւորութիւնները օգտագործում են առաւելագոյն լարուածութեամբ ու պատասխանատուութեամբ, հետեւապէս եւ որոշակի արդիւնաւէտութեամբ: Բանաստեղծութեան ասպարէզում, օրինակ, նրանք բոլոր ուղղութիւններով թռչում են շարքային մարդկանց համար անհասկանալի ու անմատչելի հեռաւորաններ, մմմեանց յետեւից թռիչքի նորանոր «մրցանիշներ» կոտրելով: Այդ թռիչքները վերջին հաշուով ինքնանպատակ չեն, ինչպէս կարող է թուալ, թէեւ ինքնամուտ են, դրանք շատ դէպքերում աւարտւում են ինչ-որ անկշռելի արդիւնքներով, հոգեմտաւոր կուտակումների մատենագիր մարմնացումներով: Նրանք մէկ-մենակ յամախ շատերի դործ են կատարում նաեւ որակական իմաստով. զանգուածային դործունեութեան սահմանուած մեծ ու փոքր ոտերի ու պատանքների միջից բանաստեղծական իւրայատուկ ճշմարտութեան հատիկներն են անջատում ու լոյսի տակ փռում: Եւ որքան էլ որ կենսարուն ու սուկ «մխիթարական» համարուող ճշմարտութիւնները յարաբերական լինեն տիեզերամփոփ անյայտ բացարձակութիւնների համեմատութեամբ, այնուամենայնիւ նրա՛նք էլ որոշակի չօշափելի ճշմարտութիւն են, մեծ ճշմարտութեան մի ցոլք, իրենց ներդործութեան ենթակայ կենսա-հոգեւոր ոլորտում՝ բացարձակի չափ, հաւաստի ու հարազատ: Շատերը շատ բան են ասում եւ շատ բան կարող են ասել բանաստեղծութեան մասին, առհասարակ: Ամբողջական յափշտակութիւնից հասնելով միտչեւ կորոկան ուրացում: Բայց, ամէնով հանդերձ, արեւի լոյսի չափ պարզ է, որ աշխարհում եղել են ու կան բանաստեղծներ ու բանաստեղծութիւն: Կան նաեւ բանաստեղծութիւն սիրողներ, նրանով ապրողներ ու զինուողներ:

Պարոյր Սեւակը, իր կեանքի ճանապարհը՝ ոչ իր եւ ոչ էլ մեր ուզած ձեւով աւարտելուց առաջ, իր հոգեւոր կրտակն ու գրեթէ պատգամը թողեց երկու պարզ բառով՝ «Եղիցի լոյս»: Այո՛, խկապէ՛ս, «Եղիցի լոյս»: Արձագանգելով՝ այդպէս ենք կամենում ապրող ժամանակակիցներս: Թոյլատրելի է հաւատալ, որ այդ աշխարհամփոփ իղձը արժէք պիտի ունենայ եւ դալիք ճշմարտախոյզ սերունդների համար: Սեւակի «Եղիցի լոյս»ը իր տեսակի անձեռակերտ յուշարձան է, մեր ժամանակի լաւագոյն տրամադրութիւնների հարազատ ծնունդ եւ դարակէսի դրական լաւագոյն պարգեւներից մէկը, իր եզակի դերով ու նշանակութեամբ: Դա ներքուստ ամրացնում եւ ճկուն ու դիմադրունակ է դարձնում հայ արդի բանաստեղծական արուեստը:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԱՆՑԻԿՈՒԹԻՒՆ



(«Եղիցի լոյս»)

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

digitised by A.R.A.R.@

Պ. ՍԵՒԱԿ

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱԽՏ

Ճառագայթային այս ախտը բնաւ նո՞ր չէ, բարեկա՛մ.
Նա նորածի՛ն չէ,
Այլ առնուազըն ութ հազար եւ ութ հարիւր տարեկան:

Այդ ախտով էին տակաւին հիւանդ
Հին հելլէնացիք, հնդիկները հին:
Եւ Հոմերոսի կուրութիւնն իրօք այդ ախտից էր հենց:
Եւ այդ նոյն ախտով գերեզման իջան
Ձե՛ր Նարեկացին, Շէյքսպիրը մե՛ր,
Ու բոլո՞ր նրանք, ովքեր թոք ունեն՝
Մեր մոլորակի կիսագնտերի մեծութեան չափով
Կամ այնքա՛ն մեծ սիրտ,
Որ գրաւում է տեղն էլ թոքերի...

Այս ախտով մարդիկ չե՛ն վարակւում, չէ՛,
Այլ վարակուած են ծնւում մայրերից:

Այս ախտը միայն նրա՛նց է բռնում,
Ովքեր եօթ հազար եօթ գոյն են տեսնում ծիածանի մէջ,
Ովքեր լսում են
Մոլեկուլների խելայեղ վազքի համաձուագը
Ա՛յն մուրճերի մէջ կամ կացինների,
Որոնք մինչեւ իսկ զնգոց չեն հանում,
Այլ համբ են ու լուռ՝ կուռքերի նման...

digitised by A.R.A.R.@

Այս ախտը միայն նրա՛նց է կպչում,
Ովքեր նայում են սեւուկ գոմէշին,
Իբրեւ մի քայլող սեւ դաշնամուրի,
Որ նուագում է լոկ իրե՛նց համար:

Այս ախտը միայն նրա՛նց է կպչում,
Ովքեր ռպառած–անտաշ քարի մէջ
Տեսնում են Ֆորում, տեսնում Զուարթնոց,
Ժայռի զանգուածում տեսնում Աչանտա, Էլլորա, Գեղարդ,
Անգոյն կտաւին՝ Սրբազան ընթրիք ու Մագթաղինէ,
Եւ ամէն անցնող երիտասարդի հոգու խորքերում՝
Մի ննջող Համլէթ, արթուն Օթէլլո···

Ճառագայթային այս հիւանդութեամբ տանջւում են նրա՛նք,
Լոկ նրա՛նք,
Ովքեր մենակութեան մէջ
Միանգամից են ռդջ մարդկութեան հետ նստում զրոյցի·
Լոկ նրա՛նք,
Ովքեր այս երկրագնդի պտոյտն զգում են կրունկո՛վ իրենց
Եւ արմատիքի անումն զգում են իրենց ափերո՛վ,
Եթէ մինչեւ իսկ իրենց ափերը պահում են օդում·
Լոկ նրա՛նք,
Որոնց չեն կարողանում ո՛չ մի կերպ սիրել
Բոլո՛ր դարերի արքաներն ամէն
Եւ կործանում են սրանց ո՛չ միայն ատսորով, բանտում,
Այլ նաեւ սրանց պալատ թերելով
Ու··· սուտ սիրելով···

Ճառագայթային այս ախտը քնաւ նո՛ր չէ, բարեկա՛մ···

Պ· ՍԵՒԱԿ

(«*Եղիցի լոյս*»)

digitised by A.R.A.R.@

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՇՈՒԻՆ

Անդամ մը եւս կարդալէ առաջ «Առաջադրանք համայն աշխարհի հաշուին մեքենաներին եւ ճշգրիտ սարքերին» անուն Գ. Սեւակի հանրայայտ բանաստեղծութիւնը, պիտի թելադրէինք, որ ընթերցողը աչք մը նետէր 29 Մարտ 1963ին «ստեղծագործական ինտելիդենցիայի ակտիւ ժողովուրդ» կարդացած այն օրերու առաջին քարոզուած Զարոբեանի ճառէն դիմացը արտադրուած հատուածը, որ «հաշուիչ»ին մէջ անհաշուելիին սահմանափակելու սոցիալիստական սահմանափակութեան աղաղակող նմոյշ մըն է։

Գաշտոնական ժողովի մը մէջ պաշտօնապէս Գ. Սեւակի ուղղուած այս սաստին եռին դժուար է հաւկաւ տեսնել Զարոբեանի անձը, որ լայնախոհ, ազնիւ, հայրենասէր մարդու, մարդո՛ւ վարք մը ունէր եւ բնաւ այնքան բիրտ չէր, որ մեր դարու հակասութիւններուն, մեքենաներու յաղթանակին եւ մարդ էակի չքացումին առջեւ ի խորոց սրտի տուայտող ճշմարիտ բանաստեղծի մը խռովքը համեմատութեան դնէր Շիր Կանայը «բայլչեւիկացնող տաղաչափին անարիւն ու ըստ ամենայնի անարուեստ բառակոյտին հետ։ Ո՛չ, Զարոբեան չէր կրնար Ցակոբ Ցակոբեանի մը օրինակը Գ. Սեւակ բանաստեղծին յիշեցնելու չափ անողոք ըլլալ։ Այս սաստին եռին, առաւել եւս՝ այս ուղիղութեա՛ն հոին պէտք է տեսնել կամակատար բարակներու բարա՛կ հաշիւները, մա՛ղձը, որ այն օրերէն սկսեալ կար արդէն եւ երկարաձգուելու ու ճիւղաւորուելու մինչեւ մեքենաներէն ահաբեկ բանաստեղծին մեքենակա՞ն վախճանը...

Մեքենաներու մեքենական ճշդրտութեան եւ հետեւաբար նաեւ սահմանափակութեան մեծ հարստութեամբ մը հակադրուած է հոս մարդ էակին բարդ, անհաշուելի, անսահմանելի էութիւնը, ու ոչոքի մը չափ հլապուրիչ ընծայուած է մարդուն ներքին քաոսը ըմբռնելու ու կազմակերպելու աղերսանքը.

Դո՛ւք՝ նոր աստուածներ նո՛ր ժամանակի,
Սատ դուրս չգայիք գէթ դո՛ւք, գոնէ դո՞ւք...

Բա՛ն կ'ըսէ բանաստեղծը, մինչդեռ մարդիկ պաշտօն կատարելու պարտականութեան մը կը կանչեն զինք։

Սոցիալիստական կառոյց, տեխնիկա, ժողովրդական տնտեսութիւն եւ նման բաներ հոլովող յուշարարները քիչ բան ըսին Սեւակին, առոր համար ինք կրցաւ շատ բան ըսել մեզի...

digitised by A.R.A.R.@

ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ՈՒ ՃՇԳՐԻՏ ՍԱՐՔԵՐԻՆ

Վերցնենք ընկեր Պարոյր Սեւակին: Նա ընդունակ բանաստեղծ է, ստեղծել է սոցիալիստական ռեալիզմի եւ սովետական հայրենասիրութեան ոգով տոգորուած ոչ քիչ թւում արժէքաւոր ստեղծագործութիւններ: Բայց նրա մօտ էլ երբեմն լուրջ խոտորումներ են լինում: Ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում «Գրական թերթ»ում 1962 թուականի Դեկտեմբերի 30ին հրապարակուած ընկ. Պ. Սեւակի «Առաջադրանք համայն աշխարհի հաշուիչ մեքենաներին եւ ճշգրիտ սարքերին» բանաստեղծութեան վրայ:

Նախ թոյլ տուէք ձեզ յիշեցնել, թէ կեանքում եղած նոր ու ոգեշնչող երեւոյթն ինչպէս էր ընդունում նշանաւոր բանաստեղծ Յակոբ Յակոբեանը:

Յակոբ Յակոբեանի «Հիր-Կանալը» ակնառու կերպով ցոյց է տալիս, թէ ինչպէս կարելի է գեղարուեստական-բանաստեղծական ձեւով բացայայտել ժողովրդի կեանքում սոցիալիստական կառոյցների նշանակութիւնը, ոգեշնչուել այդ կառոյցներով, դրանցում տեսնել գլխաւորը, նորը, նրանց մօտենալ պատմական մասշտաբայնութեան տեսակէտից:

Իսկ չէ՞ որ Հիրակի ջրանցը մի կաթիլ է ծովում, համեմատած այն վիթխարի կառոյցների հետ, որոնք այժմ կերտում է հայ ժողովուրդը, համեմատած, ասենք, հաշուիչ մեքենաների արտադրութեան հետ: Մինչդեռ անհետաքրքրական չէր լինի լսել, թէ Յ. Յակոբեանից շատ տարիներ յետոյ հաշուիչ մեքենաների մէջ ի՞նչ է տեսնում մեր ժամանակակից Պարոյր Սեւակը: Բանաստեղծի մտքով էլ չի անցնում դրանում տեսնել իր ժողովրդի ինչ-որ նուաճում: Դիմելով մեքենաներին, Պ. Սեւակը նրանցից պահանջում է միայն հաշուել եւ հանրագումարի բերել մեր կեանքի սոսկ ստուերոտ կողմերը, հայ ժողովրդի տանջանքներն ու տառապանքները անցեալում եւ իր սեփական սիրային արկածները:

Եթէ մեր բանուորները, ինժիներներն ու գիտնականները իմանային, թէ Պարոյր Սեւակը ինչ դեր է ուզում յատկացնել նոր տեխնիկային՝ էլեկտրոնային հաշուիչ մեքենաներին, ապա նրանց մէջ կը կորչէր ամէն մի ձգտում ստեղծելու նորագոյն տեխնիկայի այդ իսկական հրաշքը, որը կոչուած է ապահովելու ժողովրդական տնտեսութեան տեխնիկական առաջադիմութեան արագացումը եւ տիեզերքի յաջող իւրացումը:

Բերուած համեմատութիւնից երեւում է, որ կարեւոր են ո՛չ միայն փաստերը, այլեւ այն, թէ ինչ է կամենում տեսնելու բանաստեղծը այդ փաստերի մէջ:

digitised by A.R.A.R.@

Պ. ՍԵՒԱԿ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՇՈՒԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ԵՒ ՃՇԳՐԻՏ ՍԱՐՔԵՐԻՆ

●

Հաշո՛ւմ էք, հաշո՛ւմ...

Հաշուեցէ՛ք հապա,
Թէ ի՞նչ ալիքով, քանի՞ վայրկեանում
Եւ քանի՞ գրամ արիւն է հոսում աղջկայ սրտից
Դէպի ամօթխած այտերը նրա՝
Առաջ բերելով ա՛յն բոնկումը ջերմամիջուկեան,
Որ մինչեւ այսօր, միամտաբա՛ր, շիկնանք ենք կոչել:
Եւ կոսմիկական ճառագայթների ի՞նչ հոսք է անցնում
Մեր մթնոլորտաւած աչքերի միջով,
Երբ յանկարծակի նրանք դիպչում են ուրիշ աչքերի,
Եւ այս փոխադարձ ճառագայթումը
Վտանգաւոր է մեր սրտի համար,
Թէ՞ օգտակար է:

Հաշո՛ւմ էք, հաշո՛ւմ...

Հաշուեցէ՛ք հապա, քէ մեր ափերով
Քանի՞ կիլովատ հոսանք ենք տուել
Երեխաների մազերին փափլիկ ու թաթիկներին,
Մեր սիրածների իրանին նկուն,
Ուսերին նկուն մեր տատիկների,
Եւ մեր ստացածն ինչքա՞ն է պակաս
Կամ ինչքա՞ն աւել:

Թէ չէ՝ հաշո՛ւմ էք, հաշո՛ւմ էք, հաշո՛ւմ...

Հաշուեցէ՛ք, խնդրե՛մ, հաշուեցէ՛ք նաեւ,
Թէ մեզնից զոնէ մէ՛կը իր կեանքում
Քանի՞ կնոջ է տենչանքով նայել,
Քանիսի՛ն՝ մաքուր մի հիացմունքով,
Քանիսի՛ն՝ միայն եղբօր ճնշուածքամբ...
Նշեցէք նաեւ տեղերն ա՛յն կանանց,
Որ կարող էին մեզ խորունկ սիրել,
Բայց մենք այդպէս էլ չհանդիպեցի՛նք:
Եւ քիւն ասացէք ա՛յն մանուկների,

digitised by A.R.A.R.@

Որ կարող էինք ունենալ կեանքում,
Բայց մենք չունեցա՛նք ու չե՞նք ունենայ:
Ու թիւը նաեւ ա՛յն մանուկների,
Որ պիտի մերը լինէին կարծես,
Բայց մերը չեղա՞ն...

Թէ չէ՝ հաշո՞ւմ էք, հաշո՞ւմ էք, հաշո՞ւմ...

Մենք դեռ մի կարգին չգիտենք նոյնիսկ,
Թէ այդ ինչի՞ց է մարդը ծիծաղում,
Մի՛միայն մարդը,
Եւ ո՛չ մի ուրիշ կենդանի էակ:
Դուք մեր ծիծաղի
Ալիքների թիւն ասացէք հապա,
Ցոյց տուէք նրանց գոյները պէս-պէս
Եւ քմծիծաղի ու քրքջոցի
Տարբերութիւնը հասկացրէք մեզ...

Էլեկտրոնական մեր գանկով հուժկու
Ու ճառագայթուն – անսպիտակուց – կիկլոպեան թիրով
Տարբալուծեցէք կարօտն էլ հապա,
Բաղադրեցէք այն ծուխն էլ անտես,
Որ անջատում է միշտ այդ կարօտից
Եւ ո՞ւր է քաշում...

Թէ չէ՝ հաշո՞ւմ էք, հաշո՞ւմ էք, հաշո՞ւմ...

Ա՛յն քաւականը նշեցէք հիմա,
Գէթ այն մօտաւոր – մօտալուտ տարին,
Երբ որ, վերջապէ՛ս, ազգերը խոցուած
Պիտի ողջանան կամ ապաքինուեն,
Եւ վիրաւորող ազգերն ստանան
Հատուցումն արդար ու չբեկանուող:
Թէ չէ՝ շատերը, քանի՞ դար արդէն,
Ցոյսերը կտրած անոգորմ Աստծուց՝
Սպասո՛ւմ են դեռ:
Սպասո՛ւմ են դեռ:
Դո՛ւք՝ նո՞ր աստուածներ նո՛ր ժամանակի,
Սուտ դուրս չգայիք զէթ գո՛ւք, գոնէ դո՞ւք...

Հաշուեցէ՛ք հապա ու թիւն ասացէք
Երկրներ կապող ա՛յն կամուրջների,
Որոնց վրայով
Կ'ուզէինք նաեւ մե՛նք անցած լինել,
Բայց դեռ չե՛նք անցել
Ու չե՞նք անցնելու...

digitised by A.R.A.R.@

Թիւը ցոյց տուէք
Ա՛յն երազների եւ անուրջների,
Որ այս բառով են կոչւում աշխարհում
Լոկ ա՛յն պատճառով,
Որ չեն կատարւո՛ւմ...

Անկասկածելի թիւր ճշեցէք ա՛յն կասկածների,
Ինչից մենք յանախ հաւանացել ենք,
Առաւել յանախ՝ վաղաժամ թօշնել...

Ցոյց տուէք գիծը հիասթափութեա՛ն,
Եւ յուսանք,
Որ դա զէթ չի ունենայ ձեւը կայծակի...

Եւ գիծը նաեւ յուսալսարութեա՛ն,
Որ մեր կեանքի հետ
Վա՛յ թէ հենց կազմի զուգահեռութիւն,
Իսկ զուգահեռը զուգաւեռի հետ
Չի՛ հատւում կարծեմ...

Եւ թիւն ասացէք
Մեր ա՛յն ժամերի, անքի՛ւ–անհամա՛ր,
Որ ծանր ու թեթեւ ժամանակներում կորա՛ն–գնացի՛ն
Ինչ–որ հերթերի
Ու հրթերի մէջ
Եւ ոնթերցման մէջ ա՛յն բազմալեզու օրաթերթերի,
Որոնց սեւաթոց գլխագրերից
Ամէն առաւօտ
Հրաճօթների կենտ աչքն է նայում մեր զոյգ աչքերին,
Սուզանաւերն են մեր տեղեկագրերը հոգու մէջ սուզում,
Ջրածրնային արկերն են ուզում
Մեր հրակների կարմիր արիւնից
Ճերմակ ջուր ծնել...

Այսքանից յետոյ պիտի՛ որ հաշուէք
Եւ ասէ՛ք, թէ դեռ քանի՞ տոնն ատամ ճեղքելուց յետոյ
Հեշտ կարելի է այս Երկրագնտի միջուկն էլ ճեղքել:
Պիտի՛ որ հաշուէք,
Թէ դեռ ի՞նչ զէնքեր ծնելուց յետոյ
Մայրը կը զրկուի զաւակ ծնելու կարողութիւնից:
Թէ այսքանն ասէք՝
Էլ հարկ չի՛ լինի, որ ասէք նաեւ
Ծանրութեան չափը հաւատազրկմա՛ն
Կը մնայ միայն, որ պարզաբանէք,

digitised by A.R.A.R.@

Թէ ի՞նչ հրաշքով
Հաւատազրկման այդ բեռան ներքոյ
Մինչեւ վիզներս չենք խրուած հողում՝ սուր ցցի՛
նման...

Բարեկամաբար ասացէ՛ք նաեւ.
Քանի՞ տարին մէկ աշխարհ է գալու
Ա՛յն անդիրսենեան մանուկը,
Որից
Թագաւորները պիտի իմանան,
Որ մերկ են իրենք:
Եւ խնդրեմ՝ նաեւ աւելացրէ՛ք.
Այդ իմանալով
Թագաւորները
Ծածկո՞ւմ են արդեօք մերկութիւնն իրենց,
Թէ՞ շարունակում կրկին մերկ մնալ
Եւ հակառակը կամեցողներին
Կամ թէ պարզապէս ամաչողներին
Հարկադրրում են
Աշխարհում ապրել կապուա՛ծ աչքերով...

Եւ ասէ՞ք զուցէ,
Թէ բեթհովենեան խլութիւնն արդեօք
Չի՞ կապում քնաւ
Ա՛յն ահագնացող պայթիւնների հետ,
Որ կատարւում են հիմա աշխարհում
Եւ վե՛ր աշխարհից:
Ու թէ կապ ունի, խնդրե՛մ, պարզեցէ՛ք.
Աշխարհը հիմա
Անթիւ-անհամար բեթհովեններո՞վ կը երգանկոնայ,
Թէ՞ կ'աւելանայ պարզապէս թիւը խլացածների...

Հաշուեցէ՛ք նաեւ, մի վերջի՛ն անգամ,
Թէ այդ ի՞նչ ձեւով,
Ի՞նչ մեքենայի օգնութեամբ բարի
Դեռ կարելի է մարդուն մա՛րդ պահել
Եւ կամ նո՛ր միայն մարդուն դարձնել Մա՛րդ...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

(«Եղիկի լոյս»)

digitised by A.R.A.R.@

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ ԵՒ ԴԱՐԵՐԻՆ

•

Դաժան, բայց զրեթէ օրինաչափ մի ճշմարտութիւն է դոյացել մեծ պոետների կեանքի մասին։ Նրանք դալիս են ժամանակին եւ ո՛չ միայն հեռանում են անժամանակ, այլեւ հեռանում են անսովոր մահով։ Այդպէս է հեռանում մեզնից նաեւ Պարոյր Սեւակը՝ անզուգական բանաստեղծը, խորամիտ պիտակիանը, աղնիւ գործիչը, անմեան ընկերն ու մարդը։ Նա երբեմն կատակով ասում էր, որ յիսունից չի անցնի կեանքում։ Աւա՜ղ, այդ կատակը, որին ոչ ոք չէր կարող այն ժամանակ հաւատալ, այսօր դարձել է ողբալի իրականութիւն։ Եւ այն աւանդական հոգը, որին նա փարուել էր վերջին տարիներին, որը նա մշակել, ծաղկաղարդել ու ծառազարդել էր դրչին սովոր իր ձեռքերով, պիտի յաւերժօրէն գրկի եւ ամփոփի իր մէջ նրա ահիւնը։ Փոքր է դերեզմանի փոսը նրա մարմնի համար. բայց խորն ու մեծ է այն վիրը, որ նա բացեց մեր պոեզիայի, մեր գրականութեան մէջ, մեր կեանքի մէջ, վիհ, որ ուրիշ մէկով, ուրիշ մի քանիսով երբեք չի լցուի։

Մեծ է Պարոյրի տաղանդը։ 1944 թուականին, վերադառնալով պատերազմից, եւ գրական շրջաններում առաջին անգամ եւ բազմիցս լսում էի մի անչուք ու խուլ դիւղից քաղաք եկած 20ամեայ Պարոյրի անունը։ Առաջին իսկ անձնական ծանօթութիւնից, առաջին իսկ ձեռագիր բանաստեղծութիւնից նկատեց, որ գրականութեան մէջ ոտք է դնում մի հրաշալի տաղանդ, մի սրաթռիչ միտք, մի ցայտուն բնաւորութիւն։ Զկայ տող նրա բանաստեղծութիւններում եւ պոեմներում, որ իր մէջ չկրի խորունկ իմաստի եւ վառ պատկերի համազրութիւն։ Նրա պոեզիան դարձաւ իր եւ իր սերնդի ապրած կեանքի համապատկերը, իր եւ իր սերնդի ուրախութիւնների եւ ցաւերի, տագնապների եւ յոյսերի, սիրոյ եւ առելութեան զօդանջը, որի արձագանգը կը լսուի եւ հեռաւոր դալիքից։

Ինչ էր Պարոյրի միտքը։ Քչերն են մեզանում տիրում մտքի այնպիսի կամարների, ինչպիսիք նա ունէր։ Էնցիկլոպեդիստի հետաքրքրութիւններ եւ էնցիկլոպեդիստի մտապաշար։ Բանաստեղծութեան, գրականութեան, լեզուի, պատմութեան, հոգեբանութեան որեւէ հարցի շուրջ խօսելիս նա մէջտեղ էր բերում պիտելիքներ, փաստեր, օրինակներ եւ զարմանալի եզրայանգումներ, որոնք համոզելու բացառիկ զօրութիւն ունէին։ Զեմ յիշում որեւէ վէճ, քննութիւն, որտեղից նա դուրս չգար վահանով։ Զեմ յիշում որեւէ դէպք, երբ նա չկարողանար ապացուցել, եթէ կամենար, թէ աղը սեւ է եւ կամ գինին՝ կարմիր։ Բայց նա, յիրաւի, ճշմարիտ գիտնականի, լայնախոհ մտածողի

digitised by A.R.A.R.@

տարերք էր դրսեւորում, երբ խօսում էր միջնադարեան սիրերգութեան կամ լեղուի բառարմատների, Աղուանից աշխարհի մշակոյթի կամ Ցրէօյդի փիլիսոփայութեան մասին:

Սիրելի էր Պարոյրը: Նա սիրում էր արագ, միշտ, բուռն: Նա սիրում էր մարդկայինը, բնականը: Աղբիւրի կարկաչ լինէր թէ ծաղկի վարսանդ, կանացի ժպիտ լինէր թէ ընկերոջ մարմոք, խեղճացած ծերուկ լինէր թէ զուարթ երեխայ, բոլորի մէջ նա տեսնում էր սիրելու համար մի կայծ, մի թրթիռ, մի մանրամասն: Եւ հեղեղ-զգացմունքներ ունէր ամէն ինչի նկատմամբ, եթէ ամէն ինչը արժանաւոր նրա սիրուն: Եւ այդ ժամանակ նրան չէր կաշկանդի ոչ մի նախապաշարում, ոչ մի կեղծ բարեպաշտութիւն, ոչ մի արհեստական ճիգ: Եւ սիրուած էր Պարոյրը ամէնուրեք, հենց առաջին խօսքից, առաջին բաժակից: Դա նրա մարդկային հմայքի ամենացայտուն դրսեւորումներից էր:

Աղնիւ էր Պարոյրը: Այն սանդուղքների փրայ, որոնցով նա բարձրացաւ կեանքի գեանից մինչեւ իր փառքի գագաթները, ո՛չ արեան կաթիլներ կան, ո՛չ ստրկահաճութեան ծծեր, ո՛չ անազնուութեան չիթեր: Մայրից ծայր մաքուր էր նրա կեանքի ճանապարհը: Ցուցադրութեան, յուցամոլութեան, ուռվիրայ երեւալու ոչ մի նշոյլ, մտքի եւ գործողութեան կազմակերպչի ոչ մի արտաքին նշան: Նման դէպքերում նա որսում էր իր աքանչելի քանասաեղծական գործերում:

Իսկական քաղաքացի էր Պարոյրը, իսկական հայրենասէր: Նա հեռու էր քաշւում նրանցից, ովքեր հայրենիքի բարձրագոյն սէրը դարձնում են սեփական անձի զարդարանք, գարձնում են հոգեւոր շահոյթի աղբիւր: Նեղ չէր Պարոյրի հայրենասիրութիւնը: Ես նրան տեսել եմ այլազգի գրողների եւ ընկերների շրջանում, երբ ուսանում էր Մոսկուայում եւ նրանից յետոյ: Նրա ինտերնացիոնալիզմի ապացոյցները շատ են: Դրանցից մէկը, աւա՜ղ, այն ազիկն է, որ իր կանչ պոակը հիւսեց Պարոյրի հետ եւ կիսեց նաեւ նրա անողոք, անադորոյն ճակատագիրը:

Պարոյրին պէտք էին ընկերներ եւ ընկերուհիներ, առանց որոնց չէր կարող ապրել: Բայց Նելլին, Թերեւս, դարձաւ այն հաղուագիւտ միակը, որի հետ նա իր կեանքը դարձրեց համեմատաբար խաղաղ եւ նպատակասլաց: Եւ սարսափելի այն ողբերգութիւնը, որի չորս մասնակիցներից երկուսը դժանօրէն աւարտեցին իրենց կեանքը, ամենաանարդար, ամենանողկալի ապացոյցն է այն հասկացութեան, որ կոչւում է ճակատագիր, որ այդքան թա՜նձր սեւ դուրս եկաւ մեր թանկագին ընկերների համար:

Պարոյրի գրոց մատեանը կ'ապրի եւ կը թերթուի դալիք բոլոր սերունդների կողմից: Եւ գալիք բոլոր սերունդները մեզ նման ափսոսանքով կը հառաչեն այսքան վաղաժամ, կայծակնահար կաղնու տապալման համար:

Գնա բարո՛վ, ընդմիշտ բարո՛վ, մեր թանկագի՛ն եղբայր, մեր սրտակի՛ց ընկեր, որ հայրենի մաշկոյթը ծաղկեցրիր, ինչպէս ծաղկեցրիր քո հօրենական քարքարոտ հողակտորը: Գնա բարո՛վ, ընդմիշտ բարո՛վ, մեր սիրելի՛ քոյրիկ, որ հեռուներից այնքան սէր ու քնքշութիւն բերիր մեր եղբօր համար:

Հողը, որ ծածկելու է ձեզ, թո՛ղ լինի թեթեւ, ինչպէս թեթեւ է մեծ բանաստեղծների մեղքը, եւ յիշատակը, որ մնալու է ձեզնից յետոյ, թո՛ղ լինի ծանր, ինչպէս ծանր է մեծ բանաստեղծների հոգեւոր աւուրքը սերունդներին եւ դարերին:

ՀՐԱՉԵԱՑ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՅՐ ՄԻ ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Բանաստեղծն ինքնին առեղծուած է, եւ առեղծուածային են նաեւ նրա գնահատման չափանիշները:

Կան, որ երգը յղկում են օրերով, ամիսներով, տարիներով: Տեղն է ամէն ինչ. ե՛ւ բարձր ու ընդունելի գաղափարը կայ, ե՛ւ գեղարուեստական պատկերը, ե՛ւ ոսկեջրած լեզուն... Եւ, այնուամենայնիւ, երգը չի գրաւում, չի յուզում սիրտդ: Ինչի՞ց է, ո՞վ գիտէ:

Ուրիշ դէպքում ահա «կոշտ ու կոպիտ» մի այր, անփոյթ իր սանրուածքին, իր ոտանաւորի սանրուածքին՝ ծակում է սիրտդ, դուրս վանում շատ բան, որ աւանդաբար հրաշալիք է համարուել ու կենսական տարածութիւն է գրաւում սրտիդ յարկաբաժիններում: Ինչի՞ց է, ո՞վ գիտէ:

Բայց ես, թւում է, գիտեմ, գոնէ այս դէպքում:

Պարոյր Սեւակը վարմանալի պարտիզպան էր: Գնացէք կարմրագոյն սարերի մէջ թաղուած ծննդավայրը, տեսէք, թէ շալակով կրած ինչքան հող է վարել արեւախանձ ժայռերին՝ դրանց վրայ Հայաստանի ամենաշքեղ վարդերն աճեցնելու համար: Հող, հող, հող, որ այնքան սակաւ է մեր լեռնաշխարհում:

Պարոյր Սեւակը վարմանալի պարտիզպան էր նաեւ հայ տաղաստեղծութեան մէջ: Տեսէք, թէ շալակով կրած ինչքան հող է փոել դարիս ասֆալտին՝ դրա վրայ հայ քնարերգութեան ամենաշքեղ վարդերն աճեցնելու համար: Հող, հող, հայրենի հող, որի վրայ միայն կարող է փթթել հայ մշակոյթի պարտէզը:

Երկու բան յատուկ էր նրան.

Մեծերի հետ էր. Կոմիտաս, Նարեկացի, Սայաթ-Նովա... Մեծերի ընկերն էր եւ չկարողացանք լրիւ հասկանալ իր շռայլութիւնը, որ մեր ընկերն էր նաեւ:

Մեծերն անդաւաճան են: Գնաց մեծերի մօտ:

Եւ ապա. մենակ չէր կարող ապրել: Չէր հաւատում, որ մեր մոլորակն էլ միակ բանականն է տիեզերքում:

Լռեց անլռելի զանգակատունը:

Բայց ասում են երկնքում դեռ բոցկլտում են հրաշալի, խորհրդաւոր աստղեր, որ դադարել են իրենց խօլական պտոյտը քանի՞-քանի՞ լուսատարի առաջ...

Լոյսը նոր է հասնում մեզ, լոյսը չի մարում...

Եղիցի լոյս...

ԽԱՉԱԿ ԳԻՒԼՆԱՋԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՆԼՌԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ

Պարոյր Սեւակը պառկած էր ճեմասրահում, պատուանդանին, ծաղիկների մէջ:

Մենք՝ նրա կրտսեր ընկերները, պատուոյ պահակ էինք կանգնել: Մենք վաղուց գիտէինք, որ պատուոյ պահակները պէտք է կանգնեն ուղիղ, անշարժ, հանդիսաւոր: Բայց բոլորս էլ թեքուել, նրան էինք նայում, լաց էինք լինում ու կամացուկ խօսում էինք նրա հետ:

Եւ կեանքում առաջին անգամ Պարոյրը մեզ չէր պատասխանում:

Չէր պատասխանում այն մարդը, որը չէր կարող անպատասխան թողնել ոչ ոքի՝ ընկեր լինէր, գրականութեան բարեկամ լինէր նա, թէ դիլետանտ կամ թշնամի, որ նրա համար գրեթէ միեւնոյնն էր:

Ռադիոն կամացուկ կոմիտաս էր երգում, յետոյ յանկարծ լռեց ու մէկ էլ խօսեց Պարոյրը: Նա բանաստեղծութիւններ էր կարդում: Եւ կատարուեց մի զարմանալի բան՝ բոլորն էլ բարձրացրին խոնարհած գլուխներն ու վերացած սկսեցին ականջ դնել Պարոյրի ցածրիկ, համոզիչ, կրքոտ ձայնին, այն ձայնին, որ այնքան սիրում էին նրա բարեկամները: Նա խօսում էր մարդ մնալու, աշխարհում ճիշդ ու արժանապատուութեամբ ապրելու, խեղճ ազնիւին սատար լինելու, հաւատի համար սուրբ կռիւ մղելու մասին եւ յորդորում էր կռիւ մղել նաեւ այն ամէնի դէմ, ինչը խանգարում է այդ կռուին, Անտարբերութեան եւ մարտնչող Միջակութեան դէմ:

Դրանք սոսկ բանաստեղծութիւններ չէին: Պարոյր Սեւակը սոսկ բանաստեղծութիւններ երբեք չի գրել: Նրա համար բանաստեղծութիւնը միշտ էլ գենք է եղել, եւ այդ գենքը, ժառանգութեան իրաւունքով, նա կտակեց իր ժողովրդին:

Սգոյ թափորին մէջ մէկը հեծկլտալով ասաց.

— Լռեց մեր անլռելի զանգակատունը:

Չէ՛, ի հարկէ: Դա վշտի խօսք էր, զգացմունքի խօսք: Ճշմարիտն ու անվիճելին այլ է. Պարոյր Սեւակի պոեզիան այն զանգակատունը չէ, որ լռի. նա կը զօրանչի աւելի պարզ ու մաքուր, ազատուած մանր մարդկանց կենցաղային աղմուկից, կը զօրանչի այնքան, որքան ապրելու է իր ժողովուրդը, որքան ընդհանրապէս մարդն է ապրելու այս աշխարհի վրայ:

ԱՐՏԱՇԵՍ ԹԱԼԱՆԹԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Թերանում եմ, Գարո՛յր Սեւակ,
Թերանում եմ, սիրելի՛ս, —

Այս բանաստեղծութիւնը, ի թիւս ուրիշների, նա բերեց մեզ, երբ 1966ի ժմրանը «Գարուն» ամսագրի առաջին համարն էինք մտածում։ Նրա այդ չորս բանաստեղծութեամբ էլ բացուեց մեր «Գարունը»։

Իսկ ինքը չծերացաւ։

Ես հիմա նայում եմ այդ համարում տպագրուած նրա ժպտուն նկարին, լսում եմ նրա ծիծաղը եւ, մա՛նաւանդ, անդուսպ հպարտը... Հա՛զ... 1968ի ժմրանը մենք միասին Ֆրանսիա գնացինք եւ հիւրանոցներում, ամէն առաւօտ ես զարթնում էի նրա հպիցը։ Սարսափելի շատ էր ծխում, դրանից էր։ Նրա հազն սկսում էր միշտ համարեա՝ նոյն ժամին՝ եօթի–ութի մօտերքը։ Եւ ահա մի անգամ մենք պիտի արթնանայինք առաւօտ վեցին, ես կատակեցի. «Գարոյր ջան, չե՞ս կարող հազդ լարել վեցի վրայ...»։ Ցեւոյ նա յանձն էր վերցնում ասածս ու ծիծաղում էր, ծիծաղում։ Արդէն քանի օր է՝ նա չի հազում նաեւ։ Հանգստացաւ...

Ես ինձ համար չեմ վախենում,
Կուզէի վազն էլ ընկնեմ – մեռնեմ,
Վախենում եմ ցրի համար

digitised by A.R.A.R.@

Եւ ցրայինն խնամկար այն քարերի
...Վախենում եմ նաեւ հողի, հողի համար,
...Վախենում եմ, որ գնալիս
Հետս աստղերի ցոլքը տանեմ...

Տարա՞ւ արդեօք...

Նրա վերջին օրը զրնգուն արեւ էր, Աբարար երեւում էր զարմանալի լաւ՝ մաքուր, աղնուական – կապոյտ երկնքի ֆոնին, երեւի գիտէր, որ վերջին անգամն է իրեն նայում բանաստեղծ որդին։ Ճանապարհի շուրջը գաւառային ծաղիկներ էին, որոնց նայել էր բանաստեղծը, յետոյ մենք նայեցինք նրանց. նոյն ծաղիկներն էին։

Բառերը հնազանդ են մեզ եւ չեն բողոքում, երբ մենք իրենց սխալ ենք դործածում, բայց ես խորին համոզումով եմ կրում, որ նա հանճարեղ բանաստեղծ էր։ Արդէն կարող եմ գրել, որովհետեւ այդ բառի դէմ միա՛կ բողոքողը, միա՛կ քմծիծաղ տուողը ինքը պիտի լինէր... Եւ յետոյ, ինձ թւում է, որ մենք յաճախ ժիտ ենք լինում ապրող մեծերի նկատմամբ եւ դրա համար էլ նրանք դնում են, չվայելած շատ բան, որ իրենցն էր։ Պարոյր Սեւակը հանճարեղ բանաստեղծ էր եւ որքան հեռանանք, այնքան պարզ ենք տեսնելու այս ճշմարտութիւնը, իսկ մեր սխալը, յաճախ այն է եղել, որ նրա գրականութեանը մենք մօտեցել ենք հենց ա՛յս օրուայ, ա՛յս եամսեակի չափ ու կշիռով, երբ նրա չափ ու կշիռը յաճախ մոլորակն էր, պատմութիւնն ու յաւերժութիւնը։ Այդ երեւի նրանից էր, որ մեր կողքին էր բանաստեղծը, մեզ հետ սուրճ էր խմում կամ զինի, կուում էր մեզ հետ, սիրում, վիճում։

Հիմա նա չի լինի, եւ մենք կը հեռանանք Սեւակ – մարդուց եւ կը մօտենանք Սեւակ – բանաստեղծին։ Ու երբ մենք նրա աչքերով կարողանանք կարդալ իր իսկ գրածները, շատ բան իր տեղը կ'ընկնի եւ, երեւի, այդ ժամանակ է, որ կը դայ մեծ ափսոսանքը՝ մեր խնայած քնչութիւնների, գրպած հիացմունքի համար։ Նա մարդ էր եւ հաւատարիմ մնաց իրեն մինչեւ վերջ։ Նա սիրում էր իր հայրենիքը օ՛չ միայն որդու, այլեւ տիրոջ նման եւ հաւանօրէն դրանից էին նաեւ բանաստեղծական դառնութիւնները։ Նա չափից աւելի շատ էր ապրում իր ժողովրդով եւ դրա համար՝ ամենաքիչն էր հանդուրժում, երբ ինչ–որ բան այդ սիրեցեալի մէջ թւում էր սխալ։ Նա ասպետ էր՝ ազնիւ, խենթ ու անզաւական, բանկուն ու ներող, դաժան էր ու փխրուն։ Ես տեսել եմ, թէ ինչպիսի հնազանդ որդի էր նա իր մի բուռ մօր առաջ։

Ժամանակը գրագարանավար չէ եւ նա գրողներին չի դասաւորում ըստ այբուբենի. ժամանակի գրապահարանում գրողները այդ սկզբունքով չէ, որ հարեւան են լինում իրար եւ ոչ էլ՝ ըստ գրքերի չափի ու կազմի գոյնի։ Եւ դրա համար էլ՝ արդէն այսօր ժամանակի գրադարակի վրայ մենք տեսնում ենք Սեւակին՝ Նարեկացու, Սիամանթոյի, Թումանեանի, Տէրեանի, Զարենցի հարեւանութեամբ եւ դա ամենեւին էլ աւելք չէ նրա պայծառ յիշատակին, այլ ճշմարտութիւն, որ մենք պիտի հասցնէինք ասել իրեն։ Եւ եթէ դրա համար ուշացել ենք՝ գոնէ ասենք ինքներս մեզ եւ խոնարհուենք նրա մաքուր գերեզմանի առաջ։

ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՈՂՋՈՒՅՆ ԱՆԴՐՇԻՐԻՄԵԱՆ

Հրաշագործութեան դարը կենարար
Բացուէ՛ր վերստին՝
Գարնանայինն իբրեւ այգաբաց.
Եւ անամոթ ոչ մէկ կաթօտ
Զմնա՛ր ադեր
Նետուած քմայքին պատահականութեան:

Հրաշագործութեան դարը ոսկետառ
Գրուէ՛ր առասպել՝
Երկնուած մտքովն անհասանելիին...:

Աշխարհն ըլլար հրաշքի՛ եդեմ,
Ուր կարենայինք ողջունել,
Ըմբոշխնել ամէն երեւոյթ,
Մշտնջենաւորը ամէն երազանք,
Ըստ կամս ձգտումներուն մեր,
Բաղձանքներուն մեր...:

Սակայն կ'ուզէի բազում հրայրքով,
Որ գերազանցօրէն պարզ այլ բանիմաց
«Բարե՛ւ»դ, Սեւա՛կ,
Զոր ուղղեցիր դուն այնքան սրտառուչ
«Գնացքին,
Նաւին,
Կնոջն անձանօթ»՝
Անկարելիին խորհուրդները մեկնող
Դառնար լեզո՛ւ հրաշաբարբառ...:

Հիմա, ժամանակի գաբշապարով
Երբ յարալէզնե՛րն են տրորուած
Եւ հին աստուածները համայն
Կը ննջեն ցնորքներո՛ւ մեռելատան մէջ
Եւ կ'եռեւեփի կեանքը համօրէն
Նոր հանգանակներու տագնապով՝
Սեւա՛կ,

digitised by A.R.A.R.@

«Բարե՛»իդ հնչեզ, «բարե՛»իդ ներհուն
Կ'ուզէի խառնել խա՛նդս, սէ՛րս,
Հաւա՛տքս ամբողջ
Կենսացնցուղ իբրեւ բառ
Եւ ողջունե՛լ քեզ...:

Ցոյսն աչքերուս, սպասումով անձանձիր,
«Բարե՛ւ»,
Ըսէի հողի՛ն հայրենի,
Որ բանար արգանդն իր հանճարաստեղծ,
Պարգեւէր կրկին քեզ կեանք ու աւիւն:

«Բարե՛ւ»
Ըսէի Զուարթնոցին աւերակ
Եւ քեզ ընդունէր նորոգեալ փառքով,
Ուր սքանչելագործ շունչովդ յօրինուած՝
Մատուցանէիր «Եռաձայն Պատարագ»:

«Բարե՛ւ»
Ըսէի Գառնիին թափուր,
Որ դառնար ամպիոն հետախոյզ նիզի,
Ուր իմացական նոր ապ հանէիր
Տարփոտ տաղերը Սայաթ-Նովայի:

«Բարե՛ւ»ս իբրեւ աղերսագիր
Պիտի չյղե՛մ, սակայն,
Դարերու գորովանքին,
Որ յաւերժութեամբ պսակադրեն քեզ:
Զի դափնեշող երեւոյթ ես դուն՝
Բացուած սրտին
Քերթողութեան մեր արուեստին,
Զոր օժտեցիր շունչովդ՝ Սեւա՛կ,
Վարակիչ ու տաք:

Դուն, «Այր մի»,
Անուն՝ Սեւակ,
Վկայեցիր Լոյսը բանաւոր,
Լոյսն անճառելի
«Անլռելի՛»
Անմահին
Եւ պսակուեցար Լոյսովդ ողողուն՝
Ողջո՛յն քեզ, ողջո՛յն...:

ՑԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ

Մարդը

Ռուս. թարգմանեց
Գարեգին Սեւակ

Էդուարդաս Մեժելայտիս իր «Մարդը» ժողովածուով արժանի հուլսկ ձեռք բերեց աշխարհով մէկ եւ դա առաջին հերթին իր ինքնատիպութեամբ, իր նախանձելի պոեսական «ես»ով, իր լայն բնպրկումներով, թեմաների հմայիչ արեւստով ու հասարակական բարձր հնչեղութեամբ։ Կասկած լինել չի կարող, որ մարդուն փառաբանող այս հիմնը՝ մեր ժամանակակից ապագայի նկատմամբ մտորումներով ու տպաւորներով լի այս գիրքը նոյն նախանձելի բախտին պիտի արժանանայ եւ հայ ընթերցողների լայն շրջանակներում։ Նրա երաշխիքը ո՛չ միայն Լիտուացի հեղինակի տաղանդի ուժն է, այլեւ Գարոյը Սեւակի մեծ սիրով ու կրքով կատարած թարգմանութիւնը։ Իսկ թարգմանիչը, Շիրվանզադէի խօսքերով ասած. «Մառամբ կատարում է հեղինակի դերը, այն հեղինակի, որի գրուածքները նա թարգմանում է. հետեւաբար նա յանձն է առնում մի դժուարին աշխատութիւն, մի գործ, որը յաջողութեամբ կատարուելու համար նա պիտի ունենայ համապատասխան արժանաւորութիւն»։ Ունենալով այդ արժանաւորութիւնը, Գարոյը Սեւակի տաղանդը փայլուն է նաեւ այստեղ։ Մեժելայտիսի լեզուամտածողութիւնը, թարմ փոխաբերութիւնների իմաստի խորութիւնն ու ոճի գեղեցկութիւնը հմտօրէն պահպանուել են հայերէնում։ Երկու բանաստեղծների ստեղծագործական խառնուածքներին ծանօթ ընթերցողին մի պահ թւում է, թէ թարգմանիչը իւրատեսակ մրցման մէջ է մտել հեղինակի հետ՝ վերջինիս մտքերը, արտայայտամիջոցներն ու բառերը հայոց լեզուի չքեղութեամբ զարդարելու միտումով։

...Խօսքը առանձին արտայայտութիւնների, առանձին բառերի մասին չէ, այլ այն մասին, որ թափանցելով թարգմանուելիք նիւթի խորքերը, հայոց լեզուի նրբերանգներին քաջահմուտ բանաստեղծը մեզ ներկայացրել է զրեթէ անթերի մի գործ։ Լսում ենք զրեթէ, որովհետեւ նկատելի են մի շարք որոշ անճշդութիւններ։

Լիտուացի տաղանդաւոր բանաստեղծ Էդուարդաս Մեժելայտիսի «Մարդը» ժողովածուի հայերէն հրատարակութիւնը արժանի է ամէն խրախուսանքի. այն հոգեպէս հարստացնում է ընթերցողին, շարժում է նրա զգացմունքները, նրա մէջ աւելացնում մարդու եւ կեանքի, աշխարհի եւ բնութեան նկատմամբ ունեցած սէրն ու կարօտը։ Դրան մեծապէս նրպաստել է նաեւ Գարոյը Սեւակի բարձրորակ թարգմանութիւնը։

(«Գրական թերթ», 1955, թիւ 38)

ԳՈՒՐԳԷՆ ՇԱՀՆԱԶ

digitised by A.R.A.R.@

Առաջին, որ, ցաւոք, դարձաւ վերջին

Երբ Գարոյը Սեւակի խոր փիլիսոփայական գործերի ընթերցումից յետոյ ծանօթանում ես նրա մանկական բանաստեղծութիւններին, զարմանում ես, թէ բանաստեղծը ինչպէ՞ս է կարողացաւել գրուցել նաեւ փոքրիկ ընթերցողի հետ։ Ցարմինք առաջ Սեւակը մանուկների հետ հանդիպեց Ջանի Ռոդարիի «Բարեւ ձեզ» բանաստեղծութիւնների ժողովածուի թարգմանութեամբ։ Ռոդարիի հերոսները այդ գրքում հիմնականում մեծահասակ մարդիկ են եւ ընթերցողին տրամադրում են խորհել կեանքի, աշխարհի հակասութիւնների ու մարդկային առասպանքների մասին։

Գարոյը Սեւակի «Ձեր ծանօթները» ժողովածուն գրուած է հենց այդ ակզբունքով։ Ճիշդ է, բանաստեղծը վերցրել է բանահիւսական սիւժէներ, բայց գրանց տուել է ժամանակի շունչ ու հնչեղութիւն։ Գրքոյկի առաջին բանաստեղծութիւնից իւրաքանչիւրը մի գողարիկ չափածոյ առանցպատում է, որ դիպուկ ու կոնկրետ սիւժէի մէջ, աշխոյժ գրելաձեւով դարձել է մանկան հոգուն հարազատ բանաստեղծութիւն։ Բանաստեղծութիւնները պատկերաւոր են, ուժեղ յանգաւորութեամբ եւ անմիջապէս տպաւորւում են յիշողութեան մէջ։ Ահա «Մանուշակը»։ Յաջնեակ քնարական ու մանկական բանաստեղծութիւններ կան այս գեղեցիկ ծաղկի մասին, բայց, ինչպէս Սեւակի իւրաքանչիւր բանաստեղծութիւն, «Մանուշակն» էլ թնջուկ է իր յղացման ու կառուցման մէջ.

Մանուշակը մի ծամանակ
Ինչ՞ռան առաջ՝ ի՞նչ իմանաք,
Եղել է մի շա՛տ գեղեցիկ,
Մի շա՛տ քնքուշ,
Անո՛ւշ ագիկ։
Բայց եղել է շատ բացթեթաթ.
Արա խօսքը տարել նրան.

Նրա խօսքը թերել սրան,
Ինչ՞ռան զազմիկ նա վատուել,
Ոչ մի զազմիկ նա չի պտնել։

Ագիկայ մայրը խրատելով չի կարողանում ուղիղ համբոյ բերել նրան եւ անիծում է՝

Դրա համար
Մինչեւ հիմա
Մանուշակը ցօղում տալիս
Դեռ ցօր ցցուած՝
Կեռանում է,
Դեռ ցօր բացուած՝
Թառամում է...

Ասացինք, որ Սեւակը, օգտագործելով բանահիւսական սիւժէները, դրանք համահնչիւն է դարձնում մեր օրերի պահանջներին, ընթերցողի մէջ վերարթիմանք ու սիրելիութիւն գաստիարակում։

Գեղեցիկ են մշակուած նաեւ միւս չեզնդները, որոնք ուղեկցում են Ջ. Գապարեանի արամիտ նկարազարդումներով։

«Ձեր ծանօթները» Գարոյը Սեւակի առաջին մանկական գրքոյկն է, որը, ցաւօք, դարձաւ վերջինը։

Այս ժողովածուն կը գտնայ մեր մանկական գրադարանների զարդերից մէկը, մի մասնիկ՝ մեծ բանաստեղծի գրական ժառանգութիւնից։

ՍՈՒՐԷՆ ՄՈՒՐԻԴԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Լայսի Հանապարհին

Ամէն մահ չէ, որ մեծ կորստի սկիզբ է դառնում, ոչ էլ ժողովրդական խոր վիշտ կարող է պատճառել ամէն հեռացում։ Սեւակինը դարձաւ, Սեւակինը պատճառեց, որովհետեւ նրա պոեզիան եւ մեր սրտերը բաբախում էին փոխադարձ վստահութեամբ, որովհետեւ նրա խօսքը մեծ ճշմարտութիւն էր, պետական կարեւորութիւն ունեցող սէր ու հաւատ, հայ ժողովրդի կերտուող եւ կերտուելիք պատմութեան մարդկային ազնիւութիւն, որովհետեւ մեզնից հեռացողը միայն խոշոր բանաստեղծ չէ, այլեւ նոյնքան խոշոր գիտնական ու քաղաքացի, ընկեր ու բարեկամ։

Զկայ այլեւս Պարոյր Սեւակը։

Ճակատագրի դաժանութիւնը ծանր ու ցաւալի իրողութիւն դարձրեց բանաստեղծի իղձը, որ հայրենասիրութեան բարձրագոյն արտայայտութիւն էր եւ պիտի կէս դար յետոյ միայն ասպետական լռութիւն դառնար նրա շուրթերին։

Ապրելու կէսն էլ պատուով մեռնելն է։
Ա՛խ, երանի թէ ես այնպէս մեռնեմ,
Որ դու··· ինձ ոգաս։

Այսօր, այս պահին երկուսն էլ ծանրացել են մեր սրտերին։ բանաստեղծի մահը եւ ժողովրդի սուգը, մէկը՝ դաժան, միւսը՝ մեծ ու խոր, մէկը՝ սեւ կայծակի փայլով, միւսը՝ նման այն ծիածանին, որ ամէն անգամ երիզում է սեւ գոյնով, երբ աշխարհից ընդմիշտ հեռանում են հայրենիքի մեծ երախտաւորները։

Աշխարհին ուղղուած մի բացիկ եմ ես
Մի՛ ծրարէք ինձ···

digitised by A.R.A.R.@

Թախանձագին խնդրել է Սեւակը։

Այսօր, այս պահին, մենք նրան ծըրարել ենք ծաղիկներով եւ ուղղել այն հողին, որին այնքան փառք ու պատիւ է բերել բանաստեղծը։ Աշխարհին ու մարդկանց հասցէագրուած ու նրանց բախտով ապրող մեծ կեանքը մի ակրնթարթում դարձաւ վիշտ ու արցունք եւ խոր, շատ խոր ափսոսանք։ Եւ տա այն ղէպքը չէ, երբ մահը օրինական վերջակէտ է դնում մարդու կեանքին, ընդգրծում նրա վաստակի մեծութիւնը, միխիթարութիւն բերելով ապրողներին։ Սեւակի մահը եկաւ բաղմակէտի նման եւ մեզ ստիպեց յետադարձ հայեացք նետել նրա անցած ճանապարհին ու հաշտուել այն մտքին, թէ այդ անցածը այլեւս անցնելիք չի ունենալու, թէ իր ամբողջ կեանքում, սկսած «Անմահները հրամայում են» անդրանիկ գրքից մինչեւ դափնեկիր «Անլռելի զանգակատուն»ը, լոյս քարոզող եւ լոյսի զինակից Սեւակը հանդիպել է խաւարի։

Մահից մի քանի օր առաջ, երբ խօսք էր բացուել քնութեան հրաշքների մասին, Սեւակը մի առանձին ոգեւորութեամբ եւ հոգի ազնուացնող նախանձով էր խօսում այն հրաշք խնձորենու մասին, որ ինքն էր անկել պապենական այգում։ Ինչպիսի՞ ծաղկունք, ասում էր նա, ինչպիսի՞ հպարտ պտղաւորում եւ այդ ամէնը՝ առանց աղմուկ-ազդակի, իմաստուն եւ համբերատար տատապանքի մէջ։ Բերքի առատութիւնից ամբանը փուում է գետնին եւ դարձեալ ոչ մի տըրտունջ ու ոչ մի հառաչանք։ Ի՛ուղենայի, շատ կ՚ուզենայի ես էլ այդպէս ծանրացած խոնարհուել մայր հողին, իսկ եթէ հարկ լինի յանուն նրա նաեւ ճղակոտոր լինել, միայն թէ դարձանը տերեւաթափ չտեսնեմ։

Սեւակի մահն, ա՜ւ՚ղ, եկաւ դարձան տերեւաթափի նման, անլռելի ցաւ բերելով նրա մեծ տաղանդի երկրպագուներին, մի ցաւ, որ հրամայաբար ստիպում է մեզ մտաբերել Սեւակի այն խօսքերը, թէ կտրուելուց յետոյ է միայն երեւում ծառի բուն հաստութիւնը։ Եւ ահա, ինքն էլ կտրուեց ծառի նման եւ նորից ու դարձեալ երեւաց նրա հոգու պարզութեան խորքը, ամբողջովին կեանք ու արուեստ դարձած նրա սրտի բարախումների տարբերութիւնը։

Լռեց Պարոյր Սեւակը իր ազնիւ կեանքի նոյնքան ազնիւ ընկերոջ՝ Նելլիի հետ միասին։ Երկու լռութիւն, որ ապրում էին մէկ սրտով եւ հաղար երջանկութեամբ։ Մխիթարութիւնք նրանով, որ կայ ու պիտի ընդմիշտ անլռելի մնայ նրա մեծ պոեզիայի զանգակատունը, նրա կեանքն ու գործը։

ՎԱՉԳԻՆ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

...ՍԵՒԱՄՈՐԹԸ

Երբ նայեցայ ժապաւէնիդ ու ժպտեցար դուն յանկարծ,
Խաւարիդ մէջ, ֆիւնասպիտակ շքաֆարեր ծաղկեցան,
Ինչպէս հողին տակ... արիածեալ կաղնի մը, որ ածխացած՝
Ադամանդէն իր հնամեայ կը ժայթքէ լոյս անվախճան:

Մազնիսագիր բերքուածներուդ ամէն տողին ու տառին
Հայուն կապուած ըլլա՞ն արդեօք ճամբադ դարձուց լպրծուն
Եւ հաբազատ լեռներուդ մէջ, գաղափարի մութ վիհին
Նայող Սեւակն ըրաւ... ջրվէժ՝ վրան տխուր ժայռերուն:

Հոն ուր մարդիկ իրենց սիրոյ հոտին համար երգ դարձան
Եւ խնկահոտ մագաղաթներ լոյս ու արիւն ծծեցին
Ու ճամբաներ, Ծաղկաձորէն երազ տարին Երեւան,
Հիմա այնտեղ, լեռ ու ճամբայ... ականջ ու աչք լոկ ունին:

Եւ դուն, Սեւակ, անսպառ ակ, խաղաղութեան նահատակ,
Մեր սէրերու վարար գետին մէջ խեղդամահ եէք բերքող
Ու դեռ ու դեռ՝ ամէնօրեայ, հազարաձայն պատարագ
Եւ վաղահաս մահուան դիմաց՝ անմահութեան սուրբ կոթող:

ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՂՕՂԱՆՋ ՍՊՈՅ ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ

Նա վերադարձաւ դիւղ՝ վերջին անդամ։

Իրիկնամուտ էր։

Լերան երկարած ստուերի մէջ քարացաւ մեքենաների ու մարդկանց թափօրը։

Նա յայտնուեց հայրենի լեռների՝ մարդկանց ուսերի վրայ։

Գիւղը հեծկլտաց։ Ժայռերը դղրդանձուեցին։

Ցեռոյ իր դաստակերտի բակում սուրբ խոսաց, ճայթեց։

Ցնծրացած, ասես ընկնելու պատրաստ աստղերից օրհնութիւն էր ծորում։ Վշտահար ծառերը շորոր էին։ Հովը չոյում էր նրա տանջահար ճակատը։ Սիւքը բերում էր իր ձեռքով ամէն օր չոյուող վարդերի բոյրը։ Հեռուից, հաղար քայլ հեռուից իր ձեռքով փորուած-հանուած աղբիւրից հոնգուր-հոնգուր կաթում էր ջուրը։ Ցունը, պապերի հողը վերջի՛ն անգամ նրան էին միացնում իրենց գնչառութիւնը։

Իսկ համայիւղացիք վշտակից հիւրերին պատմում էին.

— Էս տունն ու այդին 10 տարուայ պատմութիւն ունեն։ Էստեղ զուր էին, ոնց որ կողքի սարալանջին։ Ինքն իր ձեռքով վարեց, մաշկեց, դարձրեց դրախտ։

— Հողից, հողագործութիւնից չէր կշտանայ։ Ցեսար՝ առաւօտուայ վեցից մինչ ի գիշերուայ տասներկուսը կ'աշխատէր։ Յոգնել չգիտէր։ Հողապա՞շտ էր...

Ցեռոյ մոայլւում էին, նզովում այն վայրկեանը, երբ նա վերջին օրը դարպասից հանել էր ավտոմեքենան։ Ի՞նչ իմանաս. գուցէ այդ պահին նրան թուացել է, թէ ինքը մի Սասայ ծուռ է, մի ներօրեայ Զէնով Օհան, եւ մեքենան՝ հրաշք նժոյգ։ Բայց նրա նժոյգը ժեռաղի՛ց էր, եւ ինքը Օհանի նմանութիւնը չունէր...

Առաւօտեան արեւը բարձրանում էր ծանր ու տրտում։

Սարալանջերը պատուեցին մեքենաներով ու մարդկանցով։

Երբեմնի Զանախչի եւ այժմ Սովետաշէն կոչուող լեռնային այս գիւղում խոսաց Հայաստան աշխարհը։ Սարալանջը ամֆիթատրոն դարձաւ. ընկել էր հայոց Պառնասի մեծ դլուդիատորը, նա, որ երեսուն տարի խոնարհեցնում էր խոսքի ցուլի ամեհի եղջիւրները եւ ամէնուր ծափեր հնձում։

— Ափսո՞ս, շատ ցաւալի մահ էր, — բարձրաձայն հառաչեց յուղարկաւոր մի կին։

Կողքինները ներողամտօրէն նայեցին նրան. ՇԱՏ ՅԱՒԱԼԻՆ այնքա՞ն քիչ էր, այնքա՞ն սովորական նրա համար, ով կոչւում էր ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ։ Նրա անակնկալ հրաժեշտին ուրի՛շ խոսքեր էին հարկաւոր։ Բայց... չկային։ Երբ սպում է հողը, խոսքերը դառնում են սկար։

Սիրում էր աւանդապահ լինել։ Մարդիկ նոյնպէս աւանդապահ եղան. նրան ամփոփեցին իր իսկ դաստակերտում, իր իսկ տնկած ծառերի հովին, իր իսկ երբեմնի պտղոտամի համեմատ։

Մեր հողը ծանրացաւ մի նշանաւոր չիրիմով եւս։

Մեզ մնում է մրմնջալ նրա այնքա՞ն սիրած դրաբարով.

— Ցիշատակ արդարոց օրհնութեամբ եղիցի...

ԼԵՒՈՆ ՄԻՐԻՋԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

ՊԵՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1969

Մեր գրական հասարակայնությանը եւ ընթերցասէր ժողովրդին չատ լաւ յայտնի են Պարոյր Սեւակի յօդուածները՝ նուիրուած Նարեկացուն, Սիամանթոյին, Պետրոս Դուրեանին, Թումանեանին եւ հայ մշակոյթի այլ ներկայացուցիչներին։ Դրանք կուռ լեզուով եւ ոճով գրուած ամբողջական ու սպառիչ բնութագրութիւններ են։ իրենց բովանդակութեան խտութեամբ, գրելաձեւի թարմութեամբ՝ կարեւոր արժէք են գրականագիտութեան համար։ Տեղն է ասել, որ խոշոր տաղանդի բանաստեղծը նաեւ գիտնական է իսկական առումով։ Մեզ քաջ յայտնի է, թէ ինչ բնոյթի գիտական յօդուածներ ու գրքեր են գրել գրողներն ու արուեստագէտները։ Դրանք մեծ մասամբ տպաւորութիւններ ու յաճախ ոչ առարկայական վերլուծումներ են, որոնք ընթերցւում են մեծ մասամբ գեղագիտական հաճոյքի համար, թէեւ կան նաեւ բացառութիւններ։ Պարոյր Սեւակը ստանալով բանաստեղծական կրթութիւն, աւարտելով ասպիրանտական դասընթացը՝ մասնագէտի բազմակողմանիութեամբ գիտի հայ հին ու նոր, ռուս ու համաշխարհային գրականութիւնն ու գրականագիտութիւնը։ Եթէ դրան գումարենք նաեւ բանաստեղծի հզաւի ընկալումը, մտքի թռիչքները, ձեւակերպումների կուռ ու սպառիչ գիտական ամբողջականութիւնը, գրականագիտական հարցերին մատենալու թարմ ինքնուրոյնութիւնը եւ պատկերաւոր լեզուն, ապա կը պատկերացնենք այս աշխատութեան գիտական բարձր արժէքը։ Արդարեւ, մի գործ, որ Սայաթ-Նովայի չուրջը ստեղծուած պատկառելի գրականութեան գլուխ-գործոցն է։

Պարոյր Սեւակն յստակաբանում նշում է, որ ինքը միւս ուսումնասիրողների համեմատութեամբ աւելի բարեբախտ վիճակում է գտնւում։ Նախ Սայաթ-Նովայի մասին յիշեալ պատկառելի գրականութիւնը գտնում է իր ձեռքի տակ եւ երկրորդ՝ աւելի կարեւորը, որ թարգմանուած են նաեւ մեծ բանաստեղծի վրացերէն ու ադրբէջաներէն խաղերը, որոնք նկատի չեն առել նախորդ ուսումնասիրողներից չատերը։ Մասամբ սրանով է պայմանաւորուած սոյն աշխատութեան տարբերութիւնը նախորդներից, որոնք աւելի յօդուածագրական, բանախօսական, յատկաբանական, նաեւ տնական բնոյթ են կրում եւ, իրենց այդպիսիք, չէին կարող իրենց մէջ ամփոփել մեծ բանաստեղծի ամբողջական դիմանկարը եւ չէրել իրենց բնորոշ ինչ-որ անհատական մի դէմք։

Սոյն աշխատութեան եւ նախորդների միւս, արդէն ոչ առարկայական, տարբերութիւնն այն է, որ նախորդները յուզել են աւելի բանաստեղծն, քան գրականագիտական եւ արուեստի վերլուծման խնդիրներ, որոնք զարաշրջանի պահանջն ու հնարաւորութիւնը լինելով, անպատճառ անհրաժեշտ էին Սայաթ-Նովայի ժամանակի, անձնատուրութեան, գրաղմունքի, ոիրոյ առարկայի, ծննդեան, տարիքի, բնաւորութեան իր մթնոլորտի հետ ունեցած փոխյարաբերութեան եւ այս կարգի այլ հարցեր եւ խնդիրներ պարզաբանելու

digitised by A.R.A.R.@

համար։ Եւ, ի պատիւ այդ ուսումնասիրողների, Սայաթ-Նովայի կեանքի շատ առեղծուածներ պարզուած են եղել միմեանց ոչն աշխատութեան երեւան գալը, մի աշխատութիւն, որ թուում էր թէ բանաստեղծի կեանքը պէտք է լրջանցի եւ նիւթ ունենայ միայն Սայաթ-Նովայի բանաստեղծութեան մեծ արուեստն ու վարպետութիւնը։ Սակայն խստագոյնս, որ Սայաթ-Նովային նուիրուած ուսումնասիրութիւնը չի կարող լրջանցել բանասիրութիւնը, որ մօտ մէկ ու մի քառորդ դար արդէն է Սայաթ-Նովայի կեանքին ու գործին։ Այդ ընթացքում մեծ չէնքի ամբարիշտ շատ որմեր ու անքանդելի սիւներ են հիմնուել։ Գրախօսուող գրքի հեղինակը ո՛չ միայն արժանին է հատուցել այդ հաստատուն որմերի ու սիւների վարպետ ճարտարապետներին ու կառուցողներին, այլեւ դրանց մէջ թուլացած առանձին քարեր ու շաղախներ վերամբարձրել է առանձնակի վարպետութեամբ։ Իսկ ինչ վերաբերում է խոխուտ, ցիխակոլոլ արուեստ այն հցմըցումներին, որոնք անհամատեղելի են Սայաթ-Նովայի ճարտար ուսումնասիրողներ Գէորգ Ախվերդեանի, Յովհ. Թումանեանի, Վալերի Բրիւսովի, Գարեգին Լեւոնեանի, Գէորգ Ասատուրի, Նիկոլ Ադալեանի, Մորուս Հասրաթեանի հոյակապ կառոյցի հետ, որ կոչւում է սայաթնովագիտութիւն, ապա բանաստեղծ գիտնականը մուրճի ահեղ հարուածներով անխնայ ու հմտօրէն փշրում ու մեկուսացնում է այդ ցեխաշարը։

Գրքի առաջին գլուխը խորագրուած է «Ե՞րբ է ծնուել Սայաթ-Նովան», որտեղ գիտնականը ջնջում է Սայաթ-Նովայի ծննդեան, մահուան, սիրոյ տարիքի, պալատից արտաքսման, կրօնաւորման եւ բանաստեղծի կեանքի հետ կապուած բազմազան այլ հարցեր։ Թէկուզ միայն այս գլուխը կարդալով ընթերցողը հիանում է բանաստեղծի բանասիրական մեծ պատրաստութեան, հարցի բազմակողմանի քննութեանութեան, մի-մեանց հետ կապուող եւ միմեանցից բխող պատճառների ու հետեւանքների տրամաբանական շղթայաւորման ամբակուռ զուգաւորման, երեւոյթների խորքը թափանցելու եւ այնտեղի նրբին, անտեսանելի կապերը դուսելու ու բացայայտելու, դրանք ընթերցողին չգեղօրէն մատուցելու գիտական ունակութիւնների վրայ։

Հաստատելու համար, թէ Սայաթ-Նովան ոչ թէ ծնուել է 1712, 1717, 1719, 1726 եւ ուրիշ թուականների, այլ խստորոշ կերպով 1722ին՝ գիտնականը բերում է 15 անպիսի ծանրակշիռ փաստարկներ՝ իրենց դողմնակի ճիւղաւորումներով ու նրբութիւններով, որ այլեւս անհնար է որեւէ առարկութիւն մէջտեղ հանել։

Եւ Գարսէր Մեւակը պատմական այս ճշմարտութեան վերհանմանը հասել է ոչ միայն զուտ բանասիրական հետազօտութիւնների ջնտութեամբ։ Նա խորամուխ է Սայաթ-Նովայի բարդ բանաստեղծական արուեստի ու ծանծաղիր անմանալի ձեւակերտումների բուիրները եւ դրանցից լրեցրել իր փաստարկումները՝ յարակից մանրամասներով։

Գրքի երկրորդ գլուխը վերնագրուած է «Սայաթ-Նովայի ստեղծագործութիւնը»։ Աշխատութեան ուղն ու ծուռ, էանիւը հենց այս գլուխն է. մօտաւորապէս 250 էջից բաղկացած մի ընդարձակ ուսումնասիրութիւն, ուր բանաստեղծ գիտնականը ձեզ առաջնորդում է Սայաթ-Նովայի բանաստեղծութեան ոգեւորիչ պարտէզի գաղտնարանները եւ ձեր առջեւ փռում է դրանց անհուն գեղեցկութիւնները ու չքեղութիւնները՝ անմոխրանոց վերլուծումներով ու գնահատանքներով։

Գրքի այս մասը սկսում է Նիպլինգի մի թեւաւոր խօսքով՝ «Արեւելքն Արեւելք է, Արեւմուտքն՝ Արեւմուտք, եւ սրանք երբէք չեն համադիպելու»։ Այս խօսքը իր ներքնագրով լոկ մեր մոլորակների երկու հակադիր ատրամների զանազանութիւնն է ցոյց տալիս եւ կարծէք թէ ուրիշ ոչինչ այնտեղ չկայ, իսկ Գ. Մեւակը այդ խօսքի ճշմարտութեան ժխտման տրամադրութեամբ աւելի է խորացնում զանազանութիւնը, որ առարկայորէն գոյութիւն ունի եւ դեռ պէտք է ուսնենայ։

Գոնէ բանաստեղծական արուեստների տեսակետն հանդիպադրումները այդ են ցոյց տալիս։ Արեւմուտքի ու Արեւելքի ժողովուրդների անտեսական, քաղաքական, հասարակական ու իրաւական վիճակների խոր տարբերութեան վերլուծումից յետոյ։ Նա գրում է. «Այդ դարում (18րդ), գրքի մանաւանդ առաջին կիսում (որ համապատասխանում է Սայաթ-Նովայի ստեղծագործական կեանքին) բանաստեղծական յատկանիշներից գործում էր միայն մէկը՝ յանգաւոր չափածոն, որ Ներիկ պոէզիայի անսակարար շարժառիթը, որ Ներիկ պոէզիայի անսակարար շարժառիթը, որ ՆԵՐԻԿ չնչամէջ է կոչւում, ո՛չ միայն մոռացուել, այլեւ ի սպառ վռնդուել էր՝ Ֆրանսիացի Բուալոյի եւ անգլիացի Պոպի օրերից սկսած։ Բանաստեղծելիս

digitised by A.R.A.R.@

աշխատում էին մկանները, մինչդեռ պէտք է աշխատէին լեարդը։ Գործում էր ուղեղը, մինչդեռ հոգու մասնակցութիւն էր հաբիւրը։ Ոգեշնչման տեղը գրաւել էին դատողութիւնն ու սրամտութիւնը, պատկերաւորութեան տեղը բռնել էր պճնազարդ արհեստականութիւնը, տաղանդի տեղը՝ սոսկական գիտելիքը։ Ինչքան ուղէք խրթին ու քարոզ, խորհուրդ ու բարոյախօսութիւն։ Որքան որոնիրդ ասայ՝ չափածոյ հանուորութիւն ու յանգաւոր հրապարակախօսութիւն, ցամաք ու էջիսարան նկարագրութիւններ, լաւագոյն դէպքում՝ սերտրէական երագիտութիւն ու ատոմային լաւիսնութիւն, բայց ոչ հմայիչ արուեստի յանսխանք, բայց ոչ հոգու խռովք եւ ոգու թեւաբախում»։

Այս էր արեւմուտքը Սայաթ-Նովայի ժամանակ։ Իսկ Սայաթ-Նովայի բանաստեղծական արուեստը սահմանուած է հոգու նրբագոյն թրթիռներով, արեւն լերմութեան ու զարկերակների հնչող բարախումով, ոգու թեւաբախումով ու որոի հոլովոյթով։ Անելի քան երեք քառորդ դար յետոյ պէտք է արեւմուտքում յայտնուէին նապոլեոնի հրեայ գերմանացի հայրենի եւ ոգու զանգրահեր բանաստեղծը, որ յանգաւոր չափածոն՝ մկանների բանաստեղծութիւնը դարձնում հոգու եւ ներշնչանքի արուեստ։

Եւ այսպէս Գորոյը Սեւակը Սայաթ-Նովայի մեծ արուեստը քննում է արեւմուտքի բանաստեղծական արուեստի բարձր մակարդակով՝ յանձնառութիւնը ապրելով իր առջեւի նահապետին։ Սայաթ-Նովան զուգադրւում է մեծերից մեծի, հանճարների հանճարի՝ Շեքսպիրի հետ։ Եւ արդարեւ ՀԱՅՈՒՆԻ զանգուռուն հեղինակը իր սրատես աչքով ու խորիմաստ մտքով մեծի ու բովանդակութեան զարմանալի նմանութիւններ է լոյս աշխարհ բերում Շեքսպիրի սոնետների եւ Սայաթ-Նովայի սիրոյ անմահ աղօթքների մէջ։ Սայաթ-Նովայի արուեստը քննում է նաեւ հայ բանաստեղծական արուեստի մակարդակով։

Նա Սայաթ-Նովայի բանաստեղծութեան ներքնաշխարհի քննութիւնը սկսում է սիրուց, որը նրա արեւելեան արուեստի մեծ ու առաջին ճառագայթումն է։ Սայաթ-Նովայի արուեստի այս յատկանիշական թեման քննել են ուրիշ մեծեր եւս։ Առաջին պատիւը պատկանում է մեծ Թումանեանին։ Սակայն ասենք, որ Թումանեանը զուգադրելով Նազաղ Յովսեփանի, Ռուշան Նահապետի ու Սայաթ-Նովայի սէրերը ցոյց է տալիս վերջինիս սիրոյ մի կողմը միայն՝ չվայելած, չհաշտած, դժբախտ սէրը։ Մէկ ուրիշը, ուսումնասիրելով Սայաթ-Նովայի սէրը աւելի մանրամասն, ասում է՝ Սայաթ-Նովայի սէրը իրական, ոչ երեւակայական, բայց եւ անպատասխան մնացած սէր է։ Դա պատանեկան երազանք եւ երիտասարդի անձնանք չէ, այլ հասուն մարդու սէր, մարդ, որ ամուսնացած է, ունի զաւակներ, բայց բռնուած է նոր ու խոր սիրով, որ մահից հզօր է։

Նոր ուսումնասիրութեան հեղինակը ուշադրութեան առնելով Սայաթ-Նովայի սիրոյ այդ յատկանիշները, իւրովի խորացնում է ո՛չ միայն բանաստեղծի անդաւաճան ու անյոյս սիրոյ բնոյթի վերլուծութիւնը, այլեւ այդ մինչ միւնոյն էութեամբ բանաստեղծին մոխրացնող սիրոյ բանաստեղծական արտայայտման բազմազանութիւնն ու բազմաձեւութիւնը, որը ուսս մեծ բանաստեղծ Բրիւսովին իրաւունք է տուել ասելու՝ ապշեցուցիչ բազմազանութիւն նմանութեան մէջ, իրանգների քանաստեղծ, որի նմանը միայն հանդէս եկաւ մէկ հարիւր տարի յետոյ՝ բելգիացի Վերհարն անունով։

Գորոյը Սեւակը չի բաւարարւում մեծ Բրիւսովի այդ զուգադրութեամբ. Սայաթ-Նովային բազդատում է Նարեկացու հետ, որ նոյնպէս ապշեցուցիչ միանմանութիւնը երգում է կախարդական բազմազանութեամբ եւ Ամենուն հաւասարեցնում է սիրոյ հետ այնպէս, ինչպէս որ Սայաթ-Նովան սէրն է հաւասարեցնում ասուածութեան։

Եւ հենց այստեղ ուսումնասիրողը խորամուխ է Սայաթ-Նովայի սիրոյ արտայայտման այդ բազմաչխարհը, պեղում է նրա բանաստեղծութեան թանկագին ադամանդները ու փառք է ընթերցողի առիւ իրենց զրակառադիտական գեղեցկութեամբ ու արժէքաւորումներով, մեծ թանգարանագէտի նման ի տես է բանում իր հաղուագիւտ ցուցանմոյշները եւ պատմում դրանց ստեղծման ու դիւտի գաղտնիքները, մի բան, որ չեն արել Սայաթ-Նովայի սիրոյ միւս մեկնաբանները։

Այստեղ էլ իբրեւ անկողմնակալ դիտողական նա գտնում է Սայաթ-Նովայի արուեստի ժամանակաւոր ու յաւիտենական տարրերը։ Այդ ժամանակաւոր տարրերից մէկը սիրածի գովքն է, որ ինչքան էլ գեղեցիկ է հանճարեղ բանաստեղծի խօսքի մէջ, այնուամենայնիւ, աշուղական է եւ իր վրայ ունի կրկնողութեան անխուսափելի կնիքը՝ դարաշրջանի բանաստեղծական քարացած

digitised by A.R.A.R.@

ձեւերի ու բառապաշարի օգտագործման պարտադրանքը, որ խլում է բանաստեղծի անհատականութիւնից շատ բան եւ զրկում է նրա արուեստի երկրորդ թերութիւնը։ Այդքան գովուած ու գովերգուած զոդալը դոնէ իր ժարմնական ամբողջական չքեղութեամբ չի երեւում, բայց դրա փոխարէն նրա երգը համակ սէր է եւ պաշտամունք ու տենչանք, առանց տոփանքի, որովհետեւ Սայաթ-Նովան ինքը մի բարձր ու մեծ ազնըւական հոգի էր, ուր տոփալից սէրը չէր կարող այնպէս սապնկականութիւն դառնալ։ Հակառակ այն բանին, որ Սայաթ-Նովան բոլոր խազերում գովվում է ու փառաբանում է մէնակ սիրածին եւ համարեա՝ իր մասին չի խօսում, ուստիներսոյ հաստատամար մենք իրեն աւելի լաւ ենք տեսնում, քան նրա սիրուհուն։ Այս գաղտնիքը բանաստեղծի անկեղծութեան մէջ է պահուած եւ բացայայտւում է հենց այդ ազնուական անկեղծութեամբ, մի բան, որ ո՛չ մի այլ պայծառորէն նրան երփնագրում է մեր տեսողութեան ու մտքի առջեւ, այլեւ երկու հարիւր տարուայ հեռաւորութիւնից աւելացող թարմութեամբ խօսում է մեզ հետ եւ դեռ շատ երկար պիտի խօսի։

Գ. Մեսակն իր վերլուծումները չի կատարում սոսկ հիացողի տարուածութեամբ, բացելով երկու հարիւր տարուայ ժամանակի եւ Թիֆլիսի բարբառի թանձր վարագոյրը Սայաթ-Նովայի երգերի վրայից՝ քննարկում է այն ամէն երեւոյթները, որոնք բանաստեղծութեան նիւթն ու թեման են կազմում. յընթացս այդ ամէնի ասում է, որ Սայաթ-Նովայի երգերի մէջ բնութիւնը ազատ է, եւ ազգայինին էլ անկեղծն է, մի բան, որ իրականութիւն է։ Եւ այդ երեւոյթի պատճառների ի՞նչ ժանրամանութիւններ է մեզ մատուցում բանաստեղծ-ուսումնասիրողը. քննում է դարաշրջանի արուեստը, աշուղական արուեստի առանձնայատկութիւնները, ձեւն ու բովանդակութիւնը, որոնց բնութեան համար տեղ չեն ունեցել։ Սակայն մեզ թւում է, որ ուսումնասիրութեան վերջին փաստարկն է այն պատճառը, որ Սայաթ-Նովայի խազերում բնութիւնը տեղ չունի, կամ եթէ կայ ինչ-որ բան, մեր ուզածը չէ։ Սայաթ-Նովան որքան որ աշուղ է, տան անդամ աւելի բանաստեղծ է, նա չէր կարող անտարբեր լինել բնութեան հանդէպ, սակայն նրա դժբախտ սէրը սիրա չի թողել բնութեան վայելքը ներապրելու, նրա կենդանի շնչաւորութիւնը իր մեծ շնչին խառնելու համար։ Այսուհետեւ էլ հենց պատճառը կում չդոյութիւնը այն խազերի, որոնք կրչւում են ինքոյզի ու զրաւորութեան խազեր, եւ որոնց տեղը լիովին լցնում են զարիր բլբուլի սիրոյ ողբերը, ազնիւ տիրը հիշերը եւ աշխարհի անտարբերութեան երգերը, մի տխուր, որտեղ

Վուրրն ախկատ, վուրրն՝ ասկով մէ զանգին,
Վուրին գինի, վուրին ագու մէ բանգի.
Մէկը կոծէ սազ, մէկն էլ՝ իր յանգին.
Մէկին դամ ու վայիլ, մէկին՝ ցաւ ու սուգ.

Սայաթ-Նովան իբրեւ սիրոյ երգիչ ու խոյսի ճոճաք, էքէ մի ազբատանքով մեզ Մենաբենցին թելադրում է Ֆուր իճնի սէր, ուրախութիւնն անանձնական եւ վարուժանին թելադրում է, թէ ինքը Անապատն է իր ցարձակ մէկ բոյսով, միւս կողմից ձայնակցում է Ֆրիկին՝ միւս միջնադարի մեր սոցիալական անարդարութեան բողոքարկուին՝ ասելով նաեւ

Ի՞նչ իմանաս՝ ո՞վ կու դառէ, ո՞վ կ'ուտէ,
Տիրոջ բաճէն գլուխ հանիլ կուլի՞ փուր։

Երբ՝ Հեմիմ ու դատաստան չկայ, մէ դրբուստ
ազալաթ չկայ։

Եւ այս համառարած չարութեան ու արեան ծովի մէջ վեհորէն մեր առջեւ է հանւում ճակատը պայծառ, արի ու բարի, ազօթքն ու օրհնանքը լեզուի վրայ մեծ մարդասէրը՝ ժողովրդասէրը, որը չի վարանում իր լրքերը ազնիւ անէծքով, երբ խօսում է անարդարութեան, անարդարների, խալիֆի սակ ու կեղծիքի դէմ։ Հենց այստեղից էլ սկսում էք տուգուել դրախօսուղ դրքի հատարակական-գաղափարական վերլուծումների աշխարհը, մի աշխարհ, ուր ձեզ առաջորդում է բանաստեղծ-ուսումնասիրողը՝ բացայայտելով այդ աշխարհը ոչ թէ իմացապաշտական դատողութիւններով, այլ Սայաթ-Նովայի խազերը կարդում եւ երգերը լսում ու վայելում ենք՝ միայն մատնանշելով, որ նա մի մեծ սիրերգակ է, այս գիրքը կարդալով համոզում ենք, որ այդ սիրերգը պայծարի առաքամարտիկ բանաստեղծ է, որի մեծ սրտի ուղիղ մէջքանգով անցնում է աշխարհի մեծ սրտի ուղիղ մէջքանգով անցնում է եւ նա էլ Դանէ-անկարիատելի խոր ճեղքուածքը եւ նա կարող էր բարձրացի մեծ ազատասէրի նման կարող էր բարձրացնել վեշխարհը դուրս է տալիս իր շաբաթանքել։

digitised by A.R.A.R.@

դիցդ եւ եթէ չի ասում «մի՞թէ ես պիտի ուղղեմ», որովհետեւ Դանէմարքայի մեծ իշխանի իրաւունքները չունէր, վերիմաստութեան գալարուն քայլով չէր տապակւում. լինելով համակ արժանապատուութիւն, վեհ հպարտութիւն, ընդվզող մեծ հոգի, այնուամենայնիւ, իրեն մեղաւոր էր զգում՝ իր արդար սիրոյ, ժողովրդին ծառայելու, նրա կողմը բռնելու եւ բեգասլեներին խարանելու մեծ առաքելութեան մէջ:

Եւ Գարոյը Սեւակը բանաստեղծի լքուած ու անկեալ համատարած բեւեռային խաւարի մէջ նեառուածի հոգեվիճակը ինչ սրբասազդեցիկ գոյներով է ներկայացնում ընթերցողին՝ բանաստեղծի այդ չրջանի հաստաբենա տողերից, տուռգաքար մնացած արտայայտութիւններից քաղելով փաստեր ու օրինակներ:

Ուսումնասիրողը իր գրքի հիմնական մասը ասարատում է Սայաթ-Նովայի արուեստի յատկանական թաքմութեան գաղտնիքների վերլուծումներով ու բացայայտութիւններով:

Գրքի վերջին գլուխը վերնագրուած է «Մանրագրութիւններ», որտեղ ուսումնասիրողը ծառայում է Սայաթ-Նովայի ստեղծագործութեան հետ կապուած բանասիրական ու գրականագիտական տեսութիւնների բնագաւառում: Փոքրասուն նախադրութիւններից միայն մէկը՝ Ցրտը կարգացէք եւ տեսէք, թէ ինչ խոր գիտակցութիւն է հանդէս բերում Գարոյը Սեւակը Սայաթ-Նովայի ստեղծագործութեան, եւ որքան է տեսնում նրանց հանգէպ, որոնք թէեթ ու ոտնակոխ օրերին ասուրք տարու հոգացողութեամբ են միայն ձեռնարկում բանաստեղծի ստեղծագործութեանը:

Վերջացնելուց առաջ կ'ուզէինք մի երկու դիտողութիւնք անել: Մեզնից առաջ ասենք, որ այս գիրքը չի գրուած միայն մի նեղ լրջանի համար: Սրանից օգտուելու է մեր ուսուցչութիւնը, ուսանողութիւնը եւ նոյնիսկ ընթերցասէր հասարակութիւնը: Արդեօք լաւ չէ՞ր լինի, եթէ հեղինակը գրքի հիմնական մասը (11 գլուխը) շարադրէր յատուկ վերնագրերով: Այս դէպքում մեզ թուում է, թէ ընթերցողն աւելի հեշտութեամբ կը կողմնորոշուէր:

Սայաթ-Նովայի. «Ինձ էն գլխէն. իմանում ես» խաղը համարւում է բանաստեղծի գիտումը Հերակլ արքային: Այս ենթադրութեան առաջին հեղինակը Դ. Ասատուրն է: Սրա դէմ եղել են լուրջ առարկութիւններ, բայց, գիտենալով, այս գրքում այդ մասին որեւէ խօսք չկայ, ընդհակառակը, Գ. Սեւակը նոյնպէս դա ճշմարտութիւն է համարում: Մինչդեռ մենք եւս հարկաւոր ենք կարծում, որ դա ուղղուած է իր սիրելի Անոյշին: Թոգնենք ծեծուած գազալի հարցը: Եթէ Սայաթ-Նովան Հերակլին է դիմել, ինչո՞ւ պէտք է ասէր.

Ցիս խոմ էն գլխէն էրած իմ, Նուրմեհանց
քարաք մի՛ ասի,
Թէ վուր գիդիմ թեզարիլ իս, ուրիշին ասաք
մի՛ ասի:

Հերակլին իր էրուած լինելը ինչո՞ւ պէտք է մատնացոյց անէր բանաստեղծը: Եւ յետոյ ի՞նչ է նշանակում թեզարիլ իս: Հերակլը չէր կռնչել եւ բանաստեղծին ասել, թէ քեզ պալատից դուրս եմ անելու, որ բանաստեղծն էլ պատասխանէր, թէ թեզարիլ իս, այսինքն՝ ձանձրացել ես ինձնից: Աւելի զօրաւոր փաստ է այդ վարկածի դէմ նաեւ յաջորդ արտայայտութիւնը: Ի՞նչ կը նշանակի ուրիշին ասաք մի ասի: Հերակլը եթէ պիտի պատժէր բանաստեղծին, ուրիշին ինչո՞ւ պէտք է պատճառ բռնէր: Ծիլդ է նկատուած, որ այդ ուրիշին բառը բանաստեղծը ակնարկում է ոչ այլ ոքի, քան հենց իրեն: Միգնից ամէն մէկին էլ հայելի արտայայտութեամբ իր ընկերուհուն կամ ընկերոջը կը դիմէր ճիշդ այդպէս, ինքդ չես ուզում, կամ ինքդ ծանձրացել ես, ուրիշին (այսինքն՝ ինձ) ես պատճառ բռնում:

Եթէ ընդունենք, որ իսկապէս այս բանաստեղծութիւնը ուղղուած է Հերակլին, ապա պէտք համարենք, որ Սայաթ-Նովան Հերակլին խոստովանում է իր յանցանքը, որովհետեւ երկրորդ քառատողի երրորդ տողում ասուած է.

Թէ էսանց էլ ուշ ուենեմա՝ գլուխս ապա ալ,
քամաւուր.

այսինքն՝ այսուհետեւ էլ եթէ յանցանք գործեմ, գլուխս կարող են այսուհետ ասել, որ յանցանքը վերաբերում էր ոչ թէ իր սիրուն, այլ սոսկ լեզուին: Ընդունենք, որ այս այսպէս է: Այն ժամանակ ինչո՞ւ պէտք է բանաստեղծն իրեն խրատու համարէր Հերակլի առջեւ, երբ գոնում էր, որ ինքը յանցանք է գործել եւ երկրորդ տնգամ այդ չի կրկնուի: Երրորդ տան երրորդ տողում ասուած է.

Դու, ու սիրտքն իսալակ պահի, յադի խոսկը
[illegible] աւասալու չէ:

digitised by A.R.A.R.@

Այսպիսի խոսքով երբեք բանաստեղծը չէր կարող Հերակլին դիմել։ Դուրս է գալիս, որ հիշատակած բանաստեղծը իրեն աւելի մօտ է համարում Հերակլին, քան նրա հետ նստող-կանգնող եւ նրա ախոյեանին փոփոխող պալատականներին։ Աւելին, բանաստեղծը չէր կարող այդքան աղաչանք-պաղատանքներից յետոյ ասել, թէ

Բուհիարքս առաց չիմանար՝ քարափ է,
քարուկրէն է։

Այսպէս խօսում են միայն սիրածի հետ՝ չսիրուած կամ մերժուած լինելով։ Մեր խորին համոզումով բանաստեղծութիւնը ոչ մի կապ չունի Հերակլի հետ։

Մի այլ դիտողութիւն.

Ուսումնասիրութեան վերջին մասում իբրեւ բնաբան բերում է Սայաթ-Նովայի այն ինքնավստահ խօսքը, որ քամանչային է ուղղուած.

Քիզ ինձնից ո՞վ կանա խլի, աշուղի բա՞ն խ,
քամանչա՛։

Դիւրը կարդացողը կը դայ այն համոզման, թէ Սայաթ-Նովան այնքան ինքնավստահ էր, որ կարծում էր, թէ թագաւորներն անգամ իրենից չեն կարող խլել քամանչան։ Նկատուած է, որ դա միայն վերաբերում է մրցումներին, երբ պաքսուած աշուղը իր նուագարանը յանձնում էր յաղթողին։ Սայաթ-Նովան այդ տողով ակնարկում է իր վարպետութիւնը, այսինքն՝ ոչ մի աշուղ մրցման մէջ չի կարող իր քամանչան խլել։

Սայաթ-Նովան XVIII դարի բանաստեղծ է։ Շատ աւելի ամբողջական կը լինէր Սայաթ-Նովայի բանաստեղծական կերպարը, եթէ նա ուսումնասիրուէր XVIII դարի հողի վրայ, գրական այն միջավայրում, երբ ինքն էր գործում։ Սայաթ-Նովան առհասարակ ուսումնասիրուած է իր դարաշրջանից մեկուսացած։ Երբեմն նկատի է առնուած, որ նա կարաւած է եղել հայ գրական կեանքից։ Ճիշդ է, հայ գրական կեանք իսկական առումով չի եղել, բայց այդ դարում եղել են բանաստեղծներ, աշուղներ, տարբեր ոճերի գրողներ, հրատարակուել են գրքեր ու բանաստեղծութիւնների ժողովածուներ։ Ինչպէս ցոյց են տալիս փաստերը, մեր բանաստեղծը գրքի հետ կապուած մարդ է եղել եւ, անկասկած էր, որ նա ծանօթ չլինէր գոյաշրջանի գրական անցուդարձին։ Այս գրքում, սակայն, չեն ուսումնասիրուած յիշեալ անցուդարձերը եւ Սայաթ-Նովայի կապը իր ժամանակի գրականութեան հետ, մի բան, որ նորութիւն լինելով սայաթնովագիտութեան մէջ, կ'ամբողջացնէր բանաստեղծի գիտական ուսումնասիրութեան գործը։

Մեր մի ցանկութիւնն էլ այն է, որ այս դիտական բարձրարժէք գրքում ուսումնասիրուած անանձնիկ Սայաթ-Նովայի տարաշխութիւնն ու նրա բանաստեղծութեան ձեւական կառոյցների վարպետութիւնը։

ՎԱՐԱԳ ՍՈՒՍԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՆԼՌԵԼԻ ՋԱՆԳԱԿԱՏԱՆ ՋԱՆԳԱՀԱՐԸ

●

Չկայ Պարոյր Սեւակը, մեծատաղանդ բանաստեղծը, Հշմարիտ նորաբան քերթողը, հայ ժողովրդի անցեալն ու ներկան վարպետօրէն համադրող արուեստագէտը, բանիբուն մտածողն ու անկաշառ քաղաքացի հայրենասէրը... Բանաստեղծ, որի ստեղծագործութեան բիւրատոր մակարմատները սնունդ էին ստանում Գողթան անանուն գուսանների անմահ յանգերգութիւններից, անհուն եւ անեզերք Նարեկացու ալեկոծութիւններից, Ֆրիկի կայրակից բողոքներից, 19 եւ 20րդ դարերի մեր մեծ նախորդների վշտերից, յոյսերից, ոգորումներից եւ մայր ժողովրդի վերածնութեան հրաշալի առօրեայից... Բանաստեղծ, որի ստեղծագործական ծառը սաղարթաւորուեց եւ պտղաբեր կանգնեց լենինեան դարաշրջանի կենսաշէն գաղափարներով եւ արուեստի նորագոյն երեւոյթների *զգայուն եւ զգաստ ընկալումներով*:

Պարոյր Սեւակը Մարդ էր, ալնիւ մղումներով անկաշառ հայրենասէր եւ մշտատոկուն քաղաքացի՝ ինչպէս իր ստեղծագործութիւնների մէջ, այնպէս էլ հասարակական կեանքում...

Հերոսական է քո ստեղծագործութիւնը, սիրելի՛ եւ անկրկնելի Պարոյր:

...Ողբերգական եղաւ քո մահը, դաժանօրէն անժամանակ: Դու իրաւունք ունէի՞ր այդքան անփոյթ լինելու քո կեանքի նկատմամբ, եւ մենք իրաւունք ունէի՞նք այդքան անտարբեր լինելու... չէ՞ որ դու պատկանում էիր ամբողջ հայ ժողովրդին, մեր վերածնուած անպուգական հայրենիքին, որի խանդավառ երգիչն էիր դու:

Միակ մխիթարութիւնն այն է, որ Հարտարապետօրէն կառուցած քո անկրկնելի եւ վեհատեսիլ «Անլռելի զանգակատուն»ը միշտ կոթողուած կը մնայ հայ գրականութեան մէջ:

Չկայ Զանգահարը, նա պոռ եղաւ անմիտ եւ անագորոյն պատահականութեան, սակայն անլռելի զանգակատան զոհանչները դարերով հնչելու են հայ բանաստեղծութեան մէջ եւ հայ ժողովրդի ականջին:

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ

digitised by A.R.A.R.@

ԱՅՍ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ...

Վերջին տասնամեակի ամենաբնորոշ երեւոյթներից մէկը Պ. Սեւակի պոեզիայի անոր ազդեցութիւնն է՝ իր դրական եւ բացասական յատկանիշներով: Այս բանաստեղծը, որի առանձնաւորներն ու պոեմները անցեալում արձագանգ էին գտնում գերազանցապէս գրական մարդկանց մէջ, այժմ բարձրացել է հասարակական լսարանի առաջ: Ինչո՞վ բացատրել: Թերեւս այն քանով, որ նրա մօտ զարգացած է բանաստեղծական միտքը, որի համար անցեալում լայն առպարէզ ու հնարաւորութիւն չկար: Մտքի որոշակի ազատութիւնը ազատագրեց նաեւ բանաստեղծի կաշկանդուած ճեռաշխարհը, եւ նա բերից բանաստեղծական նոր աշխարհ, մի կողմից՝ դիմելով Չարենցի պոեզիայի աւանդներին, միւս կողմից՝ մօտենալով ժամանակակից ռուս եւ եւրոպական պոեզիայի որոշ միտումներին:

Նրա աշխարհում շատ բան կայ անկատար, նոյնիսկ վանող, միակողմանի ու ծուռ, բայց այն, ինչ դրական է ու նոր, աւելի ցնդ՝ նորի բերած գրականը այս էտապում անգնահատելի է: Անհանգիստ, ուղիներ որոնող ու մոլորուող, բայց մշտապէս առաջացող բանաստեղծը ոգու մի նոր դրդռտ է բացում, ճշդելով մօտիկ անցեալի բանաստեղծական կեդծիքի շղթաները, դուրս մղելով անգովանդակ, սնամէջ խօսքը, լպրծուն տաղերն ու ծանօթ, շատ ծանծրալի յանգերը: «Վերջին ջաղակատուն»-ը այդ ոգու ամենավառ արտայայտութիւնն է, մի երկ, որի շեղումները երէկուայ կանոններից երբեմն հասնում են ծայրայեղութիւնների, ուր անյանգ, ազատ ուսանաւորին ընկերանալու է գալիս մինչեւ անգամ պարզունակ յանգը, ուր չափի զգացումը ստարացուած սկզբունք է, — տեսա այդ երկը կրճով, երբեմն մաղձով, մտքի խարուրքամբ տալիս է մեր ազգային ապրող ոգու փիլիսոփայութիւնը:

Այս արժանիքներն ու տարօրինակութիւնները թերեւս իրար շաղուռկութիւն են կազմում, թերեւս անխուսափելի են երէկուայ հետ հաշիւ մաքրելու եւ նորը աշխարհ բերելու, մտքի շիկացման համար: Ցիշենք հայոց գարնան, գիւղական չքնաղ բնանկարների եւ միամիտ ուրախութիւնների, ամայացած, մարդկային շնչից զրկուած, որքացած բնութեան ու աշխարհի, ցարդի պատկերները, կը տեսնէք, թէ ինչ է նշանակում ճշմարիտ տարերքի, ազատ մտքի ու ոգու ճախրանքը բանաստեղծութեան մէջ՝ կեանքի համար:

Մտքի հորիզոնի ընդլայնումը, որ մեր պոեզիայի եւ Պ. Սեւակի պոեմի գլխաւոր յատկանիշն է, չէր կարող չթերմացնել նաեւ յոյզերի աշխարհը...: Նրա պոեմը ունենալով լիրիկական բնոյթ, մեզմ ասած՝ երկարաշունչ է: Աւելացնենք նաեւ, որ, հակառակ իր տեսակէտների, նրա պոեզիայում, երբեմն առանձնանալով, նուրբ ու զուլալ է հնչում հինաւուրց սրինգը, այսինքն՝ յոյզը, որ յաճախ, շատ յաճախ պոեմը հեղեղում է հայ բանաստեղծների զարդերով, ժողովրդական պայծառ մտածողութեամբ, որ միջնեւ անգամ կենսունակ ցաւի հինաւուրց պատկերներն իրենց արժանի տեղն ունեն պոեմում: Այս համաձայնաձիգ շնորհիւ է, թերեւս, նա ստեղծել է մի երկ, ուր ժողովրդական ցաւի ու միրոյ զգացումները էլ, նենց զգացումները հասել են էպիկական զօրութեան, գարձել ընդգծուած, գրեթէ շոշափելի, շիկացած ու ազդեցիկ: Եւ այդ լաւ է, շատ լաւ, որ բանաստեղծ Սեւակը ջախջախում է ինքնագոհ Սեւակի գծած սխեմաները:

ՀՐ. ԹԱՄՐԱԶԵԱՆ

(Հայ բանաստեղծութեան ներկան եւ գալիք օրը — հատուած)

digitised by A.R.A.R.@

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՒ ՄԱՀԸ

Մահացել էր բանաստեղծը, եւ մահը իր յաղթանակն էր տանում։

Պարոյր Սեւակ...

Դեռ մինչեւ երէկ, մինչեւ մի քանի օր առաջ, մինչեւ Յունիսի 17ի այդ անհիշելի ակնթարթը, բարեբախտութիւն էր Պարոյրին ճանաչելը, որովհետեւ նման էր լոյսը ճանաչելուն, կեանքը ճանաչելուն, ճշմարտութիւնը, բարութիւնը, պարզութիւնը, բարեկամութիւնը, սէրը, ուրախութիւնը ճանաչելուն։

Այժմ զարմել է դժբախտութիւն, որովհետեւ դիտես կորուստը, ընկել ես անսփոփ վշտի մէջ, օրի պակաս ես զգում, մտանում ես կեանքի դաժան կարճատեւութեան մասին։

Մի ժամանակ չես մոռանում քո բարեբախտութիւնը, որովհետեւ զգում ես, հասատում ու վստահ ես, որ անցնելու է ժամանակը ու քո կեանքում մնալու է լուսատու այն փառաբ, որ ճանաչել ես Պարոյրին, որ քո, իր եւ բազմաթիւ ուրիշների համար ուրախացել ու տխրել ես նրա հետ, որ քեզ հետ, ամբողջ կեանքում ունենալու ես քո բաժին Պարոյրը, նրա բանաստեղծութիւնները։

Բանաստեղծութիւնները։

Դեռ երէկ, մեր հանրապետութեան յայտնի վիրաբուժներից մէկը ցանրաձայն, գուցէ եւ ամայելով, գուցէ եւ նոր վիշտ չպատճառելու մտավոխութեամբ խոստովանեց, որ այնքան էլ չի հասանում..., այնքան էլ մեծ չի համարում...

— Ե՞րբ ես կարդում նրան, — հարցրի ես եւ ինքս էլ լրացրի, — ճաշից յետո՞յ, քնելուց առա՞ջ։

Ոչ, նա այդ զրպարը չէ։

Անհրաժեշտ է քարձրանալ դէպի Պարոյրի բանաստեղծութիւնները։ Բարձրանա՛լ։ Այդ վերելքը հեշտ չի կարող լինել, այդ վերելքը դժուարին մագլցումների գնով կարող է յաղթուել, բայց առաջ գնա՛, յաղթահարիր քո՛ մէջ եղած արդելքները, իսկ երբ հասնես գարմանքին, իմացիր, վայելքը քոնն է լինելու, հոգու ու մտքի չխարդախուած վայելքը։ Եւ նաեւ օրուն, որովհետեւ Պարոյրը նաեւ բացուածպէս որոք բանաստեղծ է։ Միայն թէ՝ ա՛չ փոքրիկ, այլեւ մեծ որոք, որ բարեխելով գոյութեան իւրաքանչիւր փաստի առաջ ու իւրաքանչիւր մարդու համար, միաժամանակ բարեխում է ամբողջ մարդկութեան եւ տիեզերքի համար։

Աչխարհը մի քանաստեղծ կորցրեց, բայց որովհետեւ այդ բանաստեղծին մեր ժողովուրդն էր ծնել, մենք բոլորիս չատ կորցրինք եւ բոլորիս չատ ենք զգալու մեր վիշտը։ Եւ բոլորիս չատ ենք հպարտանալու նրանով։ Նա մեր անունը տանում էր աշխարհ եւ տանելու է նաեւ յաւուհետեւ։

Բանաստեղծ եւ մահ։ իրար չչաղկապուող հասկացողութիւններ են։ Ստեղծագործութիւնը ժխտում է մահը։ Բանաստեղծը գոյի չունի մահուան հետ, նա անմահութեան, յաւերժութեան ուղեւորն է։ Ժամանակը մահը ընկելու է բանաստեղծ Պարոյր Սեւակի առուներից։

ԳՐԻԳՈՐ ՊԷՇԻՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԽՕՍՔ Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻ...

Մէկ տարի անց, թէեւ մեծ դժուարութեամբ, մենք կարենա՛նք հաշտուել ենք կամ փորձում ենք հաշտուել այն դաժան իրողութեանը, որ Պարոյր Սեւակը մեզ հետ չէ։ Մեծերը չեն մեռնում։ Նրանք արեան ուժ են ստանում եւ արեան նման կենդանի, խայտում են սերունդների երակներում։

Մեր մարդ էր Պարոյրը։ Նրա մէջ զարմանալիօրէն ներդաշնակ էին հողի փչիւռոփան եւ քաղաքակիրթ բանաստեղծը։ Մեռնելով դիւղում եւ սերունդով դիւղից, նա իր հոգեւոր հայը հայրենիք հայրենի եւ համաշխարհային գրականութեան այն մեծերից, որոնց խօսքի մէջ սիրան ու միտքը ներդաշնակ են եւ միտքը չի յանձնւում էմոցիային, չի նահանջում յուզականութեան ապրնսիայից, այլ ընկերակցում է նրան։ Պարոյր Սեւակը երկնեց դարերի համար։ Ճամբագնայ են նրա ստեղծագործութիւնները, որովհետեւ լոյսի առաքելութիւն ունեն։ «Ոլորեալ զանգակատուն», «Մարդը ափի մէջ» եւ «Եղիցի լոյս» գրքերը հայ գրականութեան դասական արժէքներից են եւ աշխարհին ներկայացնելիք հոգեւոր մեծագործութիւններ։

Այսօր, երբ Պարոյրը չկայ, երբ նրան ստանձնող սովորականն ու առօրեականն արդէն պարուրուած են որոգայթ մի լոյսով, երբ արքայնել են դէպի նրա առանձնատունն ու այդպէս, նրա բնութեան բնակարանը, իրերն անդամ, որոնց հպում է նրա մեռածը, նա ցաւով ու ժողովրդով եմ յիշում մեր բազմաթիւ զրոյցները, արեւմուտից մինչեւ արեւագալ ձգուող մեր տաք ու բարեբարոյ զէնները։

Մեր եւ խիզախ բանաստեղծ էր Պարոյր Սեւակը։ Նրա փառքը չի կազմակերպուել։ Թերթերի, ռադիոյի, հեռուստատեսութեան եւ ժողովածուների կցուած մեծաղղորդ յանձնարարականները չէ, որ Պարոյրին տարել են դէպի ընթերցողի դժուարահաճ եւ անկաշառ սիրտը, այլ միայն իր, սեւակեան իր ազատ խօսքը։ Փառքը կազմակերպել չի կարելի, չի կարելի տարածել մի քանի տարիներից, ինչպէս չի կարելի կատուից՝ ատիճ վերածելու։ Բանաստեղծ էր ստեղծագործ, մինչեւ ուղղ ու ծուռը։ Չէր սիրում եւ դժկամութեամբ էր գնում հանդիպումների («Գիրքքով համդիպում եմ, բաւակա՞ն է»)։ Չէր սիրում ելոյթներ ունենալ (թէեւ նրա հաղուագէպ ելոյթները դառնում էին իրաղարձութիւն)։ Չէր սիրում ընթերցել իր բանաստեղծութիւնները («Գրքերս եմ, բո՛ղ ուրիշները կարդան»)։

Մենամարտ չէր, որովհետեւ մեծ էր։ Ցունէր նաեւ այն տարբերի, ցուցադրական համեստութիւնը, որ գրողներից ոմանք գործածում են մեծամտութեան փոխարէն։ Փառասէր չէր, որովհետեւ ստուգատուր էր։ Նրա մեռնելը ինքնին մի լինքուտ եւ անստորագիր գայթակղութիւն էր՝ մայր բնութեան կողմից վաւերացուած։

Սիրուած էր։ Գիտէր սիրուել։ Նրա շուրջը մթնոլորտը խանդավառ էր։ Պարոյրը ասկայն խնկարկուել չէր ուզում։ Չէր ցանկանում ակնջ դնել այն լրիկ դրուատանքներին, որոնք սիրուում են յարելեանական ոգեորմի պէս եւ ստեղծում բաժակաճառի նման։ Նրա գրքերը երբեք լոյս չտեսան լուսոյ յանձնարարականներով, որոնցում Թացն ու չորը պաղ ճրթճրթոցով այլուում են նոյն միաումնաւոր կրակին, եւ Թանձր ծխից կանգնում են ընթերցողների աչքերը։ Սիրուած ակնելով հանդերձ, նա երբեք չզատագործեց, չտարաշահեց իր ընկեր-բարեկամների սէրն եւ պաշտամունքը։ Նրա սէրն ուելի գրաւոր էր, քան չղթայադ, ուելի պարտաւորիչնոյ, քան պարտադրող։ Այսպիսին էր մեր Պարոյր Սեւակը՝ իր ազնուագոյն արարքներով, իր կատաղի քննադատութեամբ, իր չպարտաւորիչնոյ սիրով, բարձրաթեամբ, իր չպարտադրող սիրով, բարձրաթեամբ, իր չպարտաւորիչնոյ սիրով, դնայ խօսք ու գրոյցով, մի՛ւռ ինքնին նման, մի՛ւռ Պարոյր Սեւակ...

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԸՆԿԵՐՈՋՍ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Գործ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴԵԱՆԻ

Արդեն մեկ տարի է, ինչ չկայ Գարոյը։ Անհաւատալի է, ու նաեւ սարսափելի, որ մեկ տարի մենք չենք տեսնում նրան։ Սարսափելի է յատկապէս նրանց համար, ովքեր եղել են քանատեզների մտերիմը։ Այդպիսի բախտաւորներ չատ են եղել, բայց կային մի քանի մարդ, որոնց հետ նա յատուկ մտերմութիւն ունէր։ Նրանց հետ էր նա կիսում իր օրուայ հացը ու կիսում էր մրցակցով, խոհերով, հուշերով։ Այդ փոքրիկ խմբի երիտասարդներից մեկին էլ ես էի։ Երիտասարդներից, որովհետեւ շուրջ քսան տարի եղել եմ նրա կողքին, ուրախացել ու տխրել նրա հետ, լսել նրա իմաստուն խօսքը։ Դժբախտներից, որովհետեւ մտերիմ-մտերիմները կարծես թէ որբացան։

Սիրելի Գարոյի կորուստը անհաւատալի է, ու թէեւ արդէն մեկ տարի է անցել իր մահուան օրից՝ անփարատելի է մնացել նրան կորցնողների վիշտը։ Նրան մոռանալն անհնար է։ Եւ ինչպէս մոռանալ մի մարդու, որը, համեստաբար ու ամենահայր լինելուց բացի ու դրանից էլ առաջ, ամենամարդն էր։ Ես յիշում եմ՝ բոլոր տեսակի հաւաքոյթները, որոնց նա մասնակցում էր, դառնում էին իւրայատուկ, ինքն ուրախութիւնն էր ստիպը, ասա ուրախութիւնը քառապատկւում էր, ինքն տխրութիւն էր՝ տխրութիւնն անգամ քանդրանում էր ու խորանում նրա ներկայութիւնից։ Նա զգայուն էր, ինչպէս ամէն մի իսկական բանաստեղծ եւ յախուռն ու բռնկուռ աւելի, քան որեւէ այլ բանաստեղծ։ Նա երբեք անտարբեր չէր ու չէր էլ կարող անտարբեր մնալ որեւէ երեւոյթի հանդէպ։ Երեւի աշխարհի ամենաբարի ու հիւրընկալ մարդն էր։ Ով էլ որ մտնէր նրա դռնից, ընկեր, բարեկամ, խարհուրդ հարցնող կամ պարզապէս երկրպագու, նրա առաջին խօսքը լինում էր՝ «Նեղլի ջան, տեղան գցիր»։ Եւ մինչեւ ուշ գիշերին, երբ բոլորը գնում էին, նա տրաքնչում էր, որ ամբողջ օրը կորաւ, որ երբեք նըստան բան չի կրկնուի, որ ինքը պէտք է սահմանի ինդուկցիան յատուկ օրեր ու ժամեր, եւայլն։ Բայց յաջորդ օրը ամէն ինչ կրկնւում էր նոյնութեամբ, երբեմն այնքան չատ ու տարբեր հարցերով էին դիմում նրան, որ տնից դուրս գալիս գլուխ էր առնում թղթի վրայ, որպէսզի յիշէր ու կարողանար բոլորին անդրադառնալ։

Գրելիք նոյն պատմութիւնն էր կրկնւում դիւրաւորում։ Իր իսկ ձեռքով տարքած տանը, իր իսկ ձեռքով տնկած այգում անգամ նա չէր կարողանում դանել այն ցանկալի առանձնութիւնը, որն այնքան անհրաժեշտ էր նրան՝ գրողի ու գիտնականի աշխատանքի համար։

Նա հիմնականում աշխատում էր գիշերները եւ քանաթ իր մասին ասում էր, թէ լրիւ արթնանում ու կենսունակ է դառնում գիշերուայ 10-11ից յետոյ։ Իսկ երբ աշխատում էր, այնպէս էր ամփոփւում իր մէջ, որ այդ մարդամօտ ու բայսերու մարդը դառնում էր անմատչելի։ օրերով ու ասանելակ ժամերով ոչինչ չէր ուտում ու նոյնիսկ չէր հանգստանում, մեկ անբաժան բանը ծխախոտն էր։ Պապիկան թախտին ծալապատիկ նստում կամ թիկնում էր բարձերին, եւ առանց այն էլ նրա փոքրիկ մարմինը աւելի էր կծկւում, աչքի էին ընկնում միայն խոշոր գլուխը, գեղեցիկ ու սառաւ մազերը, ուսերը առնս թէ ծռվում էին ծան-

digitised by A.R.A.R.@

թութիւնից... Ամէն անգամ, երբ նրան տեսնում էի այսպէս աշխատելիս, յիշում էի իր իսկ տողերը՝ «Մարդ կայ աշխարհն է շալակած տարուած...»:

Կեանքում նա չափազանց հեռաբերբերական մարդ էր, բայց անկիւնելի էր, երբ վիճաբանութեան մէջ էր մտնում: Նա հանճարեղ գրուցակից ու վիճաբանող էր: Նրա համար չկային մեծ ու փոքր հարցեր: Ինչ հարցի վերաբերեալ էլ լինէր վէճը, միեւնոյն է, եթէ նա մտնում էր վէճի մէջ, ապա արում էր իր ողջ էութեամբ, հուժկու կրքով, տպացուցում էր իր մտքերի ճշմարտութիւնը եւ միշտ յաղթող դուրս գալիս: Լինելով քաղաքողջանի ու հաղուագիւտ զարգացման տէր մարդ, նա երբեք մտիերեսաբէն չէր անդրադառնում որեւէ հարցի: Գիտէր լսել, եւ իր պէս լսել. դա նոյնպէս նրա առանձնայատկութիւններից էր:

Լինելով մեծ հայրենասէր ու ազգասէր, ունենալով վաղուց արդէն կազմակերպուած՝ գրքերի ու հայրենասէրի խիստ որոշակի աշխարհայեացք նա միեւնոյն ժամանակ հակասութիւնների չի անմասնորութիւն էր: Վիճելով աշխարհի հետ, նա ամէնից շատ իր հետ էր վիճում: Մի առանձնայատուկ վերաբերմունք ունէր նա բնութեան հանդէպ: Բնութեան հետ նրան կապում էր մի մեծ սէր: Յիշում եմ մի այսպիսի դէպք. մի անգամ բարձրացել էինք Արագածի լանջերը: Գարուն էր եւ շատ դեղեցիկ էր ամբողջ շրջապատը: Ես մի յարմար տեղ ընտրեցի նկարելու համար, իսկ Գարոյրը սկսեց շրջել ճնճղիկների մէջ: Երբ ես վերջացրի եւ մօտեցայ նրան, նա նստած էր մի քարի վրայ, ծոցատետրը կողքին դրած եւ երկիւղի դէմ արտասուում էր: Մենք ոչինչ չխօսեցինք, միայն վերադառնալիս, մեքենայի մէջ նա ինձ ասաց, որ այսպիսի մաքուր եւ գեղեցիկ օրեր նա կեանքում քիչ է ունեցել:

Վերջին տարիներին Գարոյրը ունենում էր ախտութեան դրսեւոր, շատ էր տենչում, շատ էր հասկանում, շատ էր ամէն ինչ որտին մօտ ընդունում: Շատ էր խօսում յաւերժութեան ու մահուան մասին: Գիշերում, երբ այլում չրջելիս, երբ հանում էինք այն ծիրանի ծառին, որ դրբքերից բացի, դրսի թոզած միակ ժառանգութիւնն էր, ցոյց էր տալիս ծառը եւ ասում. «Ինձ դուսաճաճած կը լինէ, եթէ թոյլ տամ, որ ինձ ուրիշ տեղ թաղեն»: Նա, ի հարկէ, գիտէր իր մեծութիւնը, զգում էր, որ այդ ցանկութիւնը դժուարին խնդիր դիտի լինի: Գիտէր նաեւ, որ մահից յետոյ ինքը տայուէս պատկանելու է իր իսկ սիրած ժողովրդին եւ որ իր ժողովուրդն է տնօրինելու իր յիշատակը: Նրա ցանկութիւնը չմերժուեց: Եւ տեսա այն մարդը, որը աշխարհի հոգսն էր ուսերին տանում, արդէն մէկ տարի է, ինչ խաղաղ հանգչում է այդ իսկ աշխարհի գրկում:

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
ՀՍՍՀ արուեստի վաստակաւոր գործիչ

digitised by A.R.A.R.@

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

Պ. ՍԵՒԱԿ — Յ. ՕՇԱԿԱՆ

Անդրշիրիմեան Հանդիպում

●

Ցունիսի աղուոր կիրակի մը էր։

Երկնքի մէջ Հայաստանեան գրողներուն յատկացուած «բաժանմունքը» մասնաւոր եռուզեռի մէջ էր։

Այստեղ, համայնական դահլիճին մէջ հաւաքուած էին հին թէ նոր գրեթէ բոլոր գրողները, որոնք, խմբակներ կազմած՝ կը վիճէին դրական եւ ազգային հրատապ հարցերու շուրջ։

Հայաստանեան գրողներու Տունը շատ մօտ չէր սփիւռքահայ հին թէ նոր գրողներուն յատկացուած բաժնին, բայց հակառակ այդ հեռաւորութեան, Յ. Օշական իր ժամանակին կարեւոր մէկ մասը կ՝անցնէր հայրենի գրողներուն հետ։ Յատկապէս կը սիրէր վիճել եւ նոյնիսկ խաղալ Գ. Մահարիին հետ։

Այդ կիրակի, ըստ սովորութեան, երկու բարեկամները կը հանդիպին եւ կը սկսին իրենց բուռն վիճաբանութիւն։

Խաղի երկրորդ հանդրուանին՝ երբ դահլիճին դուռը զզրդիւնով կը բացուի, խափշիկի նմանող չփոթահար երիտասարդ մը ներս կը մտնէ։ Բոպէ մը կանգ կ՝առնէ սեմին, կը դիտէ չորս դին՝ կը դիտէ դինք ապշահար դիտող իր երէկի ընկերները։

Կը սառի դահլիճը յանկարծ։

Նարտի քարերը կ՝իյնան Մահարիի ձեռքէն ու կը գլորին մարմար սալայատակին վրայ։

Իրենց դայլոյթն ու չփոթը չեն կրնար պահել ներկանները, որոնք կարծէք մխաբերան՝ կը գոչեն՝

— Պարո՛յր, սիրելի Պարո՛յր, դուն այստե՞ղ... այս ի՞նչ դաւաճանութիւն է, այս ի՞նչ դասալքութիւն...

Յ. Օշական սրդէն սկսած էր անդրադառնալ ողբերգութեան ահաւորութեան։ Ահա կանգնած էր դիմացը «Զըւարթ լոյսը» երգող, խաւարին դէմ պայքարող, արեւածագին պապակով արկածահար զանգրահեր բանաստեղծը։

Մոռցած իրենց երկրային վէճերը, խելայեղ յուզումով մը կ՝ողջագուրուին Մահարի եւ Սեւակ։

Պ. Սեւակ, առաջին բոպէին խակ կը նետուի Օշականի բաց բազուկներուն։

— Վարպետ, սիրելի վարպետ...

Փխրուն, բարախուն այդ սիրտը, հայ բանաստեղծութեան նորօրեայ զանգահարը, ուսը դրած վարպետին կուրծքին կը հեկեկար։

Կը փորձէ պատասխանել Յ. Օշական։

digitised by A.R.A.R.@

— Բայց ինչպէ՞ս, ինչպէ՞ս ձգեցիր սիրուած գործդ։ Ինչո՞ւ եկար, երբ նոր սկսած էիր կրակ դնել տողերուդ մէջ, խոսքերուդ հրդեհել հոգիները։ Նոր սկսած էիր հասկնալ անհիւթ բանին յաւերժական ճշմարտութիւնը, կիրքին ստեղծագործ զօրութիւնն ու պարզին բանաստեղծութիւնը։

Կը փորձէ շարունակել, բայց անկարելի կ՚ըլլայ ամբողջացնել։

Կը նստին երեքով։

Դառնութեան հետ հաշտուելու փորձով դրողները կու գան շրջապատելու դիրքը։

Յոգնած ձայնով մը Սեւակ կը խօսի՝ միանձնական չեչոով՝

— Մեղա՞յ, հազար մեղայ վարպետ։ Մեղա՞յ նաեւ յանուն ընկերներուս, որոնք միշտ իրենց հոգիներուն մէջ ուզեցին կրել քեզ, որոնք...

Վիրաւորուած, յուզուած՝ Յ. Օշական կը կտրէ Սեւակին թափը.

— Անցեալի քաղցրութիւնները թող մոցնեն մեզ, ոգա՛ս, ապագայի լոյսը մեզ թող առաջնորդէ։ Ես շատ անգամ հարուածած եմ, երբեմն ենթարկուած յարձակումներու, բայց միշտ հայ մշակոյթին հանդէպ խենթ սիրոյս համար։ Զեմ հանդուրժած որ Նարեկացիով, Սայաթ-Նովայով սրբացած մեր տաճարը արբեցնող, չեմ հանդուրժած, որ առեւտուրի վերածուի մեր հրաշածին դրականութիւնը։

«Քեզ ալ, համակրելի խափշիկ, քեզ ալ հարուածելու առիթը ունեցած եմ, ինչպէս չեմ նեցած ժամանակին երէց ընկերոջդ՝ Զարենցին։ Բայց դուն քեզ պարտադրեցիր։ Միշտ ըսած եմ, որ տաղանդը պատը ծակելով իսկ դուրս կու գայ։ Այսպէս եղաւ մ՚նաւանդ քու պարագայիդ։ Դուն ինքզինքդ կրցար պարտադրել, որովհետեւ դիւղացի էիր (բառին բանաստեղծական զօրութեամբ)։ Հայրենի հողին փառքը երգեցիր՝ հայ ժողովուրդի առհմիկ բարքերու հարուստ ժառանգութեամբ։ Ապրի՛ս, Սեւա՛կ։ Ապրիս, որ կրցար մեր սրբութիւնները բանաստեղծականացնելդ։

Կը շարունակէր Յ. Օշական։ Սեւակ ծանօթ էր վարպետին դեղումին։ Քանի մը օր առաջ էր տակաւին՝ փարը, իր սեղանին կէս ձգած էր Գրիգոր Օտեանի հետ անոր ունեցած անդրշիրիմեան զրոյցը ու կանչած իր սիրասուն գաւակը՝ Ամէնը, անոր հետ բաժնելու իր յուզումնախառն հրճուանքը։

— Այո՛, վարպե՛տ. ես սիրեցի հողը եւ անոր մարդաբանական անցեալը։ Ես ճշմարտութիւնը պատմութեան մէջ գտայ, իրաւունքն ու արդարութիւնը՝ դեղեցկութեան մէջ, իսկ դեղեցկութիւն կարելի չէ գտնել, առանց իրաւին ու արդարին։ Իրաւ է իմ ժողովուրդը, արդար է մեր հոգին։ Իրաւ է մեր ժողովուրդին պէս լոյսը, անխափան լոյսը, Արարատին վրայ դորտուոր ցոլքով յաւերժաբարբառ եւ դարերը արհամարհող լոյսը։

«Ես պայքարեցայ, ուժգի՛ն, քեզի՛ պէս «բիւրեւոր, տուտ, բութ՝ հաւատացեալներուն դէմ, խաւարին դէմ ու բարձրագոչակ ազօթեցի «Ողիցի լոյս»...

Այս սրտագրաւ խօսքերուն վրայ՝ Յ. Օշական պահ մը կը հանէ փափաքը, համակրական խառնութեամբ կը դիտէ շրջապատը, ցուցամատը երկու անգամ կը շարժէ, ապա կէս մը Սեւակին դարձած՝ կը պատրաստուի իր խօսքը ուղղելու դիրենք շրջապատող հայասառնեան գրողներուն, երբ Սեւակի ժամանման լուրով շանթահար ամէն կողմէ կը հասնին սփիւռքահայ գրողները։ Աւելի հանդիսաւոր կեցուածքով՝ Յ. Օշական հանդարտութեան կը հրաւիրէ բոլորը եւ գիւսի մը հրճուանքը նեղկաներուն փոխանցելու երանութեամբ կը սկսի խօսիլ, միշտ խօսքը ուղղելով Սեւակին.

— Սիրելի Գարոյր, մենք շնորհակալ ենք քեզմէ, որ մեր երկիրը, մեր դասը, մեր օրերու տքնանքը երգեցիր այնքան քաջութեամբ ու առնականութեամբ։

«Երգեցիր սէրը ազգային երանգով՝ համայնական պատասխին վրայ։ Մարդկայնական սիրոյ պատգամախօս դարձած՝ ժպիտ, բարութիւն ու քաղցրութիւն փնտռեցիր մարդոց հոգիներուն մէջ։

digitised by A.R.A.R.@

«Մեր հոգիներու փայլատակումները դրականութեան բերիր։ Անցեալի հպարտութեամբ, Արարատեան պատուանդանին վրայ կեցած ծառացար մեր ճակատագիրը մթագնող խաւարի թաքուն ապտեռներուն դէմ, վար առիր կեղծաւորներուն դիմակները, չկրցար ենթագիտակցութեան հայեցի ճնշումներուն առակայ։ Բաջողեցար դիւղի մէջ ծնած ու սընած, բարի, մաքուր հոգիդ քաղաքակրթութեան կեղծ պատմուճաններէն ղերծ դարձնել։

«Ապրի՛ս, պիտի ապրի՛ս, որովհետեւ պայքարեցար փոդահարելով մեր լայնածիր Հայրենիքին տեսիլքը, սահմանազանց հաւատքով մը։

«Այս Կիրակի եկէք պատարագենք քու «Եռամայն պատարագ»ով։

Ու հագիւ գլուխը վար առած, բոլոր դրոշները իրենց բամբ ու յուզումնախառն ձայնով կը սկսին արտասանել Սեւակի պատարագի առաջին տողերը։ Սեւակ կը միանայ անոնց՝ առանձնելով առաջնորդութիւնը.

«Երկնքից առկախ մի լեռնակղզի՝
Հայաստան աշխարհ։

Երկնքից առկախ այդ լեռնակղզու ուղիղ
կենտրոնում՝
Երկու զանգ հսկայ եւ անձեռագործ։
Եւ այնքա՛ն հսկայ, այնքա՛ն վիթխարի,
Որ չէին կարող որեւէ կեռից ոչ մէկ կերպ
կախուել,
Ուստի պարզապէս կործուած են հողին։

Անուանի՝ Արարատ
կամ
Սիս ու Մասիս։

Կանգ կ՚առնեն բոլորը մէկ։

Ակնարկները անգամ մը եւս կը հանդիպին Սեւակի աչքերուն, որոնք կարծէք կը մնան զամուած դրան մէջտեղ կոնգնած խոհուն ու խոր աչքերուն, որոնք Զարենց կը պոռթկային։

Զարենց չի կրնար սպասել ու կը նետուի.

— Դո՞ւն ալ եկար, դո՞ւն ալ, սիրելի՛ Պարոյր... ինձմէ ետք իմ անանդորը հոգիս իր անդորրը գտած էր քու ստեղծագործութիւններուդ մէջ, իսկ հիմա ե՞կա՛ր, որո՞ւն ձգեցիր մեր այրիներու խաղողաքաղը, մեր ճոխ սեղաններու քամադայութիւնը։

Փոքր մը ժպտուն, համեստութեան մէջ վիրաւոր, անկեղծութեամբ դողդողացող ձայնով մը՝ Սեւակ կը յարէ.

— Սիրելի Զարենց, սիրելի վարպետ, սնդին տղաք։ Եթէ սիրած էք տողերս, ընդունած ճշմարտութիւններս, ուրեմն հաւատացէք նաեւ, որ մեր բեկբեկուած ու որբացած մշակոյթը այսօր վերագտած է իր ստեղծագործ անդորրը ու կ՚սմրանայ, կը զօրանայ նոր ծնունդներով։

«Այնտեղ են, այսօրուան մեր պայծառ արեւները՝ նոր Զարենցներով, նոր Սեւակներով բերրի...։ Փառք մեր մայրերու օրհնուած արդանդներուն...»։

Բոլորին դէմքերուն կը ցոլայ խանդավառութեան, հրաշափառ յարութեան խորհրդանիշ ժպիտներ. ու բոլորը մէկ կը դառնան Ց. Օշականին, անոր շրթներէն ակնկալելով սեւակեան հաւատամքի դրոշմը։

Իսկ Ց. Օշական չի կրնար սպասել ու կը վերանայ.

— Այո՛, արդա՛ր ու իրա՛ւ։ Մեր քէնոտած արեւը այսօր սկսած է հեթանոսական զօրութեամբ ու երբեմնի կատաղանքով տաքցնել մեր սրտերը։ Եւ կը հաւատամ, այո՛, կը հաւատամ, որ այսուհետեւ մեր հոգիներուն պիտի չհասնին չարախինդ ու դժոխածին հողմերը, մեր մէջքերուն պիտի չհասնին զարերու դաժան տապարները։ Մեր երկին դարաւոր հունչը ալիք տալով մեր լեռներուն՝ պիտի կերտէ հայ մտքի նորանոր բազիններ...

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՒԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՄԵՆՔ ՔՈ ԴԼՅՄԷԹԸՆ

★

Սայաթ-Նովու քամանչայով

Մենք քո դիյմէթքն չըգիտցա՞նք···
Ջաւահիր վարդ,
Վարդասիրտ մարդ էիր, Սեւա՛կ···

Քո դիյմէթքն մենք չրնանչցա՞նք···
Գոզալ տաղի, օսկի խօսքի
Ջար – դալամքար,
Լոյսի նոքար էիր, Սեւա՛կ···

Վո՞ւնց դիմանանք մենք էս դարտին,
Վո՞ւնց հաւատանք,
Վո՛ւնց հաւատանք ու մահ ասենք
Մենք քո մահին···
Դու երգի ակ, մեր սրտի զարկ
Անլռելի զանգի լեզուակ էիր, Սեւա՛կ···

Զարանայ քիզ պոկոդի ձեռն,
Ջտեսնի օր ու արեգակ···
Իր արածը իր դա՛րտն ըլնի,
Իր հանքը իր գլխին գայ·
Դու է՛ն գլխէն գլխի չեկող,
Ցօ տնաւեր, խելքի չեկող,
Խելացի լաւ էիր, Սեւա՛կ···

Ց· ՁՈՐԵՑԻ

digitised by A.R.A.R.@

Ընդհանուր տարուան Ուլիսէն սկսեալ, «Բագին»ի յաջորդական վեց թիւերուն մէջ ընթերցողին ներկայացուցինք Գ. Սեւակի այն ուժեղ յօդուածները, որոնք նոր ժամանակներու լոյսին տակ առնուած դրականութեան էութեան, քնարականութեան ճշմարիտ կոչումին, մեր լեզուին սրբութեան, երիտասարդ ստեղծագործողներու նոր ճանապարհին եւ առհասարակ ժողովուրդի մը ապագային բոլանդակութեան կապուած հարցեր կը շօշափէին, ընդգծելով նոյն տանն մշակոյթով յագեցած եւ կեանքի փարձով հարուստ եզերաբախ բանաստեղծին մասնաւորական յորդ արժանիքները։

Իրենց պարտաւորեցնող խորութեամբ եւ պատկերաւոր մտածողութեան շնչին մեծ գրաւչութեամբ մը օժտեալ տեսակետներ այդ ընդհանրացումներուն առընթեր՝ աշխարհի մեծ մշակոյթները ներծծելով ու հայ ժողովուրդի կանխարտեսները պեղելով՝ Գ. Սեւակ կազմած էր նաեւ վսահելի էջերներ, որոնց նժարներուն համապատասխան՝ գուսաններ ու մեծարեց հին դարերու մեր հրաշագործները, պանծացուց ժամանակակից մեծերը, յարգալիր վերաբերում մը ունեցաւ իր սերնդակից արժանաւորներուն հանդէպ եւ գուրգուրանքով հետեւեցաւ մեր դպրութեան նորընծայ ազգ քայլերուն։

Հնագոյն էջերը երկուքէն դար, մէկ դար, կէս դար առաջ ապրած մեծերուն, սպրող արժանաւորներուն եւ խոստմնալից նորերուն ներքուած սեւակեան նմոյշներ են, որոնց մէջ ընդգծուած արժանիքներուն ու բանաձեւուած բաղձանքներուն հետ կ'երեւի գ'ր ձեալ ինքը, յափշտակուելու, յարգելու, գուրգուրելու քան ընդունակութիւններ ունեցող բուռ սիրտը, տարբերազգրող, համեմատող, կարիտող միտքը, էականին, մնայունին, խրատին, հոգեկիրակին պարտքերու դիմաց խանդաբորբ հոգին ու սոյնքաքմունքերու, վրէպներու ու խոտորումներու դէմ դղեակացնող զայրոյթով փոթորկող նախանձախնդիրը։

Տարբեր ժամանակներու մէջ եւ տարբեր դէմքերու մասին գրուած Գ. Սեւակի էջերը, ինչպէս նաեւ իր մասին գրուած ու դէմ յանդիման գրուած իր կարգ մը ընկերներուն գրութիւններէն ոմանք հատուածային բնոյթ մը ունին հոս, երկարաշունչ գրութիւններէ քաղուած մասեր են։

digitised by A.R.A.R.@

ՍԱՅԱԹ - ՆՈՎԱ

Իսկական բանաստեղծը չի կարող չբարձրանալ իր ժամանակից՝ թէկուզ եւ այն պարզ պատճառաբանութեամբ, որ պարտաւոր է ապրել այդ ժամանակից չատ աւելի:

Ժամանակավրէպ լինելը ժամանակաւոր լինել է:

Լինել ապայժմէական նշանակում է լինել անէական:

Լինել ապարդի մեեւնոյնն է թէ լինել քայլող դի:

Բայց ժամանակակից լինելը հաւասար չէ ժամանակին կից լինելուն:

Հարկաւոր է կրել իր մէջ ժամանակը, սակայն կրել սրա կշիռը եւ ոչ թէ բեռը, պահել սրա արժէքը եւ ոչ թէ գինը. ունենալ սրա հարստութիւնը եւ ոչ թէ ապրանքը, լինել նրա սնունդը եւ ոչ թէ եւրոպացիների ասած պարտադիր առարտիմենտը, — այլ կերպ ասած՝ դրսեւորել ժամանակի ոչ թէ արտայայտութիւնները, որոնք չեն կարող անցողիկ չլինել, այլ նրա ներքնայայտնութիւնները, որոնք չեն կարող մնայուն չլինել:

Սայաթ-Նովան չէր լինի Սայաթ-Նովա, եթէ լինէր ժամանակից դուրս: Բայց Սայաթ-Նովան չէր էլ լինի Սայաթ-Նովա, եթէ չլինէր ժամանակից վեր՝ ժամանակի կարգախօսային չարիքից, պարագայական պարտադրանքներից եւ չուկայական պահանջից:

Չլինել ժամանակից դուրս, բայց լինել ժամանակից վեր, — ահա երկրորդ դաղտնիքը Սայաթ-Նովայի մնայունութեան եւ թարմութեան եւ այն երկրորդ դասը, որի ուսուցումը պարտադիր է մնում այսօր էլ...

Գրականութեան դարաւոր պատմութիւնը գրաղատութեան առջեւ վկայում է, որ ժամանակն իր ընտրութիւնը կատարում է երբեմն անուղղակի, բայց միշտ էլ բաց քուէարկութեամբ: Եւ նրան էիր տուիս քուէն, ով եղել է իր ժամանակի արդար զաւակը եւ իւրովանն ղերծ է մնացել նոյն այդ ժամանակի մեղքերից:

Այլ պատկերով ասած՝ ժամանակը մի գետ է, որի մէջ չլողալ կարող են միայն մեռելածինները: Բայց այդ գետում լողացողների մի ժեռքը կապուած է նոյն այդ ժամանակի ժեռքերով: Լողալ ժամանակի մէջ եւ չխեղդուել ժամանակի մէջ, — ահա մեծութեան կարելիութիւնը, որ արուած է հաղուագիւտ երջանիկներին:

Եւ այդ հաղուագիւտներից մէկն է Սայաթ-Նովան...

(«Սայաթ – Նովա»)

digitised by A.R.A.R.@

Կան բանաստեղծներ, որոնք մի ամբողջ աշխարհ են վերապատկերում։ Մեծ են կոչում նրանք։ Եւ իսկապէս էլ մեծ են։ Բայց, դժբախտաբար, շուտ են հնանում, որովհետեւ, բարեբախտաբար, նորանում է աշխարհը։

Կան բանաստեղծներ էլ, որոնք մի նոր աշխարհ են ստեղծում։ Ե՛ւ նիւթն է իրենցը, ե՛ւ ստեղծողն են իրենք։ Այսպէս՝ բարի եւ մենասէր սարդն է գործում իր ոստայնը, եւ անմակդիր մեղուն՝ իր մոմն ու ակնամոմը։ Եռմահու դժբախտներ են այդ կարգի բանաստեղծները. ո՛չ միայն հնանում են, այլեւ հետզհետէ մոռացւում, որովհետեւ յիշողները պարտաւոր չեն ապրել մի աշխարհում, որ անիրական է եւ կամ օտար։

Կան բանաստեղծներ էլ, որոնք ոչ աշխարհ են պատկերում, ոչ էլ աշխարհ ստեղծում։ Նրանք բացում են իրենց աշխարհը։ Եւ սրանք չեն մոռացւում, որովհետեւ չեն հնանում։ Իսկ եթէ հնանում են, ապա սոսկ այնքանով, որքանով հնանում է նաեւ առաւօտը։ Սրանք չեն հնանում, որովհետեւ նորացող կեանքը նորացնում է նաեւ սրանց, ինչպէս որ նորանում են առաւօտները։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Պետրոս Դուրեա՞ն...

Սա աշխարհ չպատկերեց։ Եւ աշխարհ չստեղծեց սա։

Սա բացեց իր աշխարհը, որ իրենից յետոյ կոչուեց ու կոչուելու է իր իսկ անունով՝ դուրեանական։

Այդ աշխա՞րհը։

«Բոյլ մը նայուածք, փունջ մը ժըպիտ», «եթեր մը տրոփ, եռեմ մը շունչ», — ահա այդ աշխարհը։

«Գիշեր մը սուգ», «անգունդ մ'հառաչ», «դժոխք մ'անէծք», — ահա այդ աշխարհը։

«Գիշեր մը սուգ», անդունդ մ'հառաչ», «դժոխք մ'անէծք», — ահա այդ աշխարհը։

Ճիշդ է, որ յաճախ «խօսքն մեր հոգւոց անհունութիւնը կը պղծէ»։ Բայց դուրեանական կոչուած աշխարհի տէրը ո՛չ ծանրալեզու էր՝ Մովսէսի պէս, ո՛չ էլ պատրաստի պատուիրաններ կրկնող՝ Ահարոնի նման։ Դուրեանի համար՝ «խօսիլ, հատնիլ է լոկ»։ Եւ արդարեւ՝ նրա կեանքն այլ բան չէր, եթէ ոչ խօսելով հատնել եւ հատնելով խօսիլ։ Ուստի եւ «Բուրայ մը խօսք» էր այդ աշխարհը, «Բուրայ մը խօսք», որ դիւթեց մեր սրտերը, գարձաւ մեր խօսքը, ուստի եւ այդ աշխարհն էլ փոխարինուեց մեր աշխարհի։

***

Քանի տարեհիսն չկար նա, երբ աստղի պէս գնաց «յաւելուլ երկնից»։

Ուրիշներ նրա տարիքում նմանողա-

digitised by A.R.A.R.@

կան ոտանաւորներ են գրում՝ հաղուա-դէպ պահպանելով չափ-կշռոյթի եւ յանգ ու վանկի տարբական կանոնները։ Նրա տարբերում յաւպոյենները խոստում են տալիս, բայց ոչ գործ։ Նրա տարբերում սկսում են ճանաչել աշխարհը, բայց չեն ունենում մի աշխարհ, որի մասին ասէր.

Հոգ աստղերը չեն մեռնիր,
Ծաղիկներն հոգ չեն թոռմիր,
Ամպերը չեն թրջեր հոգ...

Մի աշխարհ, որի սպառիչ ահմոնումը կարող էր տալ եւ առել է այդ աշխարհի տէրն ինքը.

— Հոգ հրդե՞հ կայ, ո՛չ մառեան...

Համաշխարհային դարաւոր գրականութեան պատմութիւնը դիտէ շատ քիչ անուններ, որոնք կարող են գրուել Դուրեանի կողքին՝ նրա պէս մրմնջալով. «Իմ սկիզբս, վա՜յ ինձ, վախճանս եղաւ»։ Ապրելով ընդամէնը երկու տասնամեակ, ստեղծագործելով ընդամէնը մէկ-երկու տարի (1869–1871), գիտակցական ողջ կեանքում՝ մահամերձ, Դուրեանը իր «փունջ մը ժպիտ»ով ու «անգունդ մ'հառաչ»ով դարձաւ մէկն այն երջանիկներից, որոնցով համայն մարդկութիւնը ոչ թէ յիշում, այլ ամէ՛ն անգամ վերապրում է իր երիտասարդութիւնը։

Դուրեանի կարճատեւ կեանքը մի անպարզում մահ էր։ Եւ աշխարհում շատ քչերին է բախտ վիճակուել իրենց մահը դարձնել անմահութիւն։

Այդ շատ քչերից մէկը Դուրեանն է։

Մեր ժողովրդի տարաբախտ պատմութեան մէջ էլ եղել են բարեբախտութիւններ։ Մեր ապրելիս բարեբախտութիւններից մէկն էլ Դուրեանն է՝ մեր հաղթութեան վկայարանը։

Նրա դալուստը հրաշքի պէս մի բան էր, մանաւանդ եթէ ի միտ բերենք մեր նոր բանաստեղծութեան վիճակը՝ Մխիթարեանների գրչի տակ եւ «Հիւսիսափայլ»ի էջերում։ Եկաւ ողեւորող պատերին, եւ մեր բանաստեղծական միտքը մէկ դարով կտրեց իր նախորդներից ու թողեց մի որակ, որ չէին կարողանալու պահպանել նրանից կէս դար յետոյ եկած մեր շատ բանաստեղծներն էլ (եւ ոչ միայն տաղաչափ-ոտանաւորագիրները)։

Նա եկաւ՝ դառնալու այն կամրջաւորունը, որի վրայ՝ հնգայական ոգեղ դրծելով հակառակ կողմից պիտի մխանային հայրենները ու վարուժանը, Սայաթ-Նովան ու Տէրեանը։

Նա է մեր նոր քնարերգութեան առաջին մեծը եւ միշտ էլ կը մնայ վերջերի կողքին, որովհետեւ նա չի հնանում, ինչպէս չեն հնանում ժպիտն ու հառաչը, ծիծաղն ու հեծկլտոցը։

Հնանում են պատկերները, համեմատութիւնները, մակդիրները, փոխաբերութիւնները, այսինքն՝ բանաստեղծական «փրփուրը»։ Բայց չէ՞ որ ինքը Դուրեանն է գոչել. «Ո՛հ, յաստակն են իմ փրփուրներս»։ Ահա թէ ինչու՝ լինելով մեր նորերի առաջին մեծը, միշտ էլ կը կանգնի վերջինի կողքին։

Իր նամակներից մէկում Դուրեանը բացագանչել է. «Մի՞թէ կարելի է ողանանա մը հեծկլտալ»։

Ցաւաւ՝ անկարելի մի բան։

Բայց հանճարեղութիւնն էլ հենց այնտեղ է սկսում, որտեղ վերջանում է կարծեցեալ կարելիութիւնը։ Եւ Դուրեանը, արդարեւ, անկարելին կարելի դարձրեց։ Նրա քնարերգութիւնը՝ հեծկլտոց լինելով, միաժամանակ մի ողանանա է, մահուան տուայտանք եւ կեանքի փառաբանում, կսկիծի մրրկում եւ սիրոյ յափրանք։

Եւ Դուրեանն ինքն էլ գիտէր, եւ ինքն էլ է չեշտել. «Ես տխուր-զուարթ մ'եմ, ո՛չ, դողդոջ երջանիկ մ'եմ»։

(«Սովետական գրականութիւն» — 1972, թիւ 1)

digitised by A.R.A.R.@

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Մկրտիչ Պէշիկթաշլեանը մեր բանաստեղծներից ԱՌԱՋԻՆ վաղամեռին է, այն էլ «բանաստեղծական հիւանդութիւնից»՝ թոքախտից (Պ. Դուրեանից, Մ. Մնձարենցից, Վ. Տէրեանից առաջ):

Բայց մի՞այն զրանո՞վ է ԱՌԱՋԻՆԸ:

Մենք (արդէն քանի՛ տասնամեակ) հայ նոր քնարերգութեան հիմնադիր ենք համարում Յովհ. Յովհաննիսեանին՝ նրկատի առնելով, երևի, արևելահայ բանաստեղծութիւնը: Հիմա, վերջապէս, հայութեան երկու հատուածն էլ եկել են այլևս այն դիտակցութեան, որ ունենք մէկ եւ միասնական գրականութիւն՝ ՀԱՅՈՑ գրականութիւն, առանց «արեւելա...» եւ «արեւմտա...» երկփեղկումի: Ուստ այսմ Մ. Պէշիկթաշլեանն է այն ԱՌԱՋԻՆ բանաստեղծը, որով սկսւում է հայոց նոր քնարերգութիւնը:

Կեանքում դժբախտ բոլորովին՝ նա մեր ամենաերջանիկ բանաստեղծներից մէկն է եւ սակաւաթիւներից մէկը, որ ոչ հետեւ իր մահից հարիւր տարի անց՝ այսօր էլ շատ աւելի թարմ է, քան շատ-շատերը նրանցից, ովքեր նրա թոռը կամ ծոռն են բուն տարիքի: Նա վաղ մեռաւ, բայց մեռնելով՝ հետը տարաւ վաղանցիկութեան այն արատը, որ ոմներիմն է արուեստագէտների: Ո՛ւր էր թէ իւրաքանչիւր բանաստեղծի 50 բանաստեղծութիւնից զէթ մէկը մնար 50 տարի յետոյ: Մ. Պէշիկթաշլեանը է՛ն երջանիկ է, որի հրատարակած 50 բանաստեղծութիւնից առնուազն տասը ունեն այսօրուայ թարմութիւնն ու հնչականութիւնը՝ իր մահից հարիւր տարի անց: Դժուարն էլ հե՛նց այդ հարիւր տարին է. հետագայ հարիւրամեակները, իրրեւ օրէնք, ոչ թէ ներողամիտ, այլ պարզապէս անկարող են լինում շարունակելու ինքնամի իրենց պարտականութիւնը:

...Ընդհանրապէս նա մի ՀԱՄԱԿ Ո-ԳԻ էր՝ մարմնաւորուած զանազան բնապատառներում: Եւ պէտք չէ հաւատալ, որ նա մեռաւ թոքախտից: Աւելի ճիշդ կը լինէր կարծել, թէ նա մտովին արնաքամուեց Զէյթունի հերոսամարտում՝ նախապէս գրելով իր իսկ անմոռաց դամբանականը, որ է «Թագուհին քաջորդուոյն»:

Եւ մենք լիիրաւ ենք այսօր՝ իրենը իրեն վերադարձնելով ասել.

ՎԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՄԵՌԱՐ, ԴՈՒՆ ՇԱ՛Տ ԱԳՐԵՑԱՐ...

Եւ իսկապէս էլ, ապրում է նա այսօր իր անթերի եւ անթառամ բանաստեղծութիւնների այն չողփնջով, որի կիսակէտն է մեր հոգին: Նրա լաւագոյն բանաստեղծութիւնների բազմաթիւ տողերը ստացել են ո՛չ միայն առածի ուժ, այլեւ՝ կոչի զօրութիւն:

(«Գրական թերթ», 1968, թիւ 50)

digitised by A.R.A.R.@

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

...Թումանեանն սկսեց «Հառաչանք»ով, ապրեց «Հայրենիքիս հետ» եւ գրեց «Դէպի Անհունը»:

Եւ Թումանեանական այս երրորդ ակունքը՝ «Դէպի Անհունի» այս «ճամբորդութիւնն է, որ ամէնից քիչ է հետազօտուած, ուրեմն նաեւ դնահատուած՝ սկսած Թումանեանի օրերից եւ մինչեւ այս օրերը: Թումանեան ասելով նախ եւ առաջ հասկացել են «հառաչանքներ»ի հեղինակ, երբեմն չեն մոռացել նաեւ «Հայրենիքիս հետ»ի հեղինակին, եւ միշտ տարապատուել է երրորդ Թումանեանը, թէպէտեւ ինքը Թումանեանն է իր բարեկամներին ու դնահատողներին զգուշացրել այդ սխալից ասեմ, թէ թերացումից:

Դեռեւս 1902ին, Թումանեանը գրել է. «Այժմ ես տառապում եմ մի մեծ տարակուսանքով — արդեօք ես բանաստեղծ եմ, թէ չէ: Մտածում եմ ու գնում, գրում հասնում մինչեւ կասկածի ամենամութ անդունդները»:

Բայց չէ՞ որ դարասկիզբը, ըստ Թումանեանագիտական բոլոր պատկառազդու հատորների, եղել է Թումանեանի ստեղծագործական կեանքի ամենափայլուն ժամանակաշրջան: Եւ յանկարծ... այսպիսի՞ ճգնաժամային տառապանք:

***

Դարասկզբին ապրած իր ճգնաժամի արդիւնքը կը լինէր շատ արդիւնաւէտ, եթէ չճայթէր Համաշխարհային Առաջին արհաւիրքը իր անսպասելի եւ զարհուրելի վերջով՝ Եղեռնով:

«Դէպի Անհուն» ճամբորդելու փոխարէն Թումանեանն ստիպուած եղաւ ճամբորդել ո՛չ միայն դէպի Վան ու էջմիածին՝ դէպի հազարաւոր որբերի ու գաղթականների դժոխքը, այլեւ մեր դարուոր պատմութեան ահռելի տարտարասները՝ նոյից տապակուելու այն գեհենական կրակներում, որոնց չէր դիմանում այլապէս ատանտեան անդամ, ո՛չ մնաց թէ Ամենայն Հայոց բանաստեղծը:

Ու եթէ Թումանեանն էլ իր մեծ հոգեզբօր ու տարեկից՝ Կոմիտասի պէս չխելագարուեց, ապա թերեւս այն պատճառով, որ անողորմ Աստուած ստացել էր խելագարուելու տուրքը աւելցուկով:

«Դէպի Անհուն»ի ճախրանքը՝ դեռ նոր սկսուած՝ վերջացաւ:

Բայց ինչ էլ որ մնացել է այդ ճախրանքից, դեռ երկար պիտի ճախրի, որովհետեւ, իմ կարծիքով, Թումանեանի ամէնից աւելի չծերացող, չհնացող, յաւերժող ակունքը հենց այս «Դէպի Անհուն»ից բխածն է, որ դնում է դէպի Անհուն...

(«Գարուն» 1969, թիւ 9)

digitised by A.R.A.R.@

ՍԻԱՄԱՆԹՕ

Այսօր, երբ գաւառ յիշատակը նորից է քաղցրանում մեր սրտերում այս անգամ իր յոբելեանի առիթով, անկարելի է չյիշել Ծերուկ էսքիլեսի այն խօսքը, որ գրած է «Հոգեվարքի եւ յոյսի գահերի» բնաբանը. «Արիւնը եւ եղբայրակցութիւնը ամենամեծ ուժերն են»: Սիամանթոն ինքն էլ հէնց գրաւաւ երդիչը այդ ամենամեծ ուժերի՝ արեան եւ եղբայրակցութեան, մի երգիչ, որի ձայնից այսօր էլ պղպջում է մեր արիւնը, եւ մեր եղբայրակցութիւնը չի ճանաչում քարտէսի օրէնքները՝ կոխկռտելով բոլոր այն սահմանադրները, որ մեզ անջատում են մեզնից:

Սիամանթոյի համար քիչ է գալիս «բանաստեղծ» ածականը, ինչպէս որ Բաֆֆու համար՝ «գրող» մակդիրը: Առանց այդ անունների մեր նոր պատմութիւնը կը զրկուէր գլխագրերից, եւ մեր ժողովրդի արթնացումը կը կատարուէր առանց... աքաղաղի կանչի եւ «բարի լոյսի»: Աքաղաղ բառը չի կարող վիրաւորանք համարուել նրա յիշատակին. նա, ինչպէս ինձ է թւում, իր ժամին ինքը կը գործածէր այդ բառը, եթէ նրան չխանգարէր իր համեստութիւնը, որ նոյնքան անսահման էր, որքան իր երեւակայութիւնը: Եւ նա ծնուել էր «բարի լոյս» ասելու իր ժողովրդին եւ աշխարհին, բայց չտեսաւ ո՛չ բարին, ո՛չ էլ լոյսը: Եւ այստեղ է, որ նրա գժբախտութիւնը կրկնապատկւում է՝ նրան նմանեցընելով մի խորհրդաւոր դղեակի, որի բազմաթիւ դռներից մէկը բաց եղաւ, մինչդեռ միւս մուտքերով կարող էին ելուտուտ անել հրաշքն ու հրաշալիքը: Հաւանաբար նաեւ այս նկատի առնելով էլ նրա ժամանակակիցն ու բախտակիցը՝ մեծն Վարուժանը, գտաւ նրա գործի ամենաճշգրիտ բնորոշումը — «կիկլոպ մը»: Այո՛, «կիկլոպ մը», մի հսկայ միականի, բայց ոչ այն պատճառով, որ այդպէս է ծնուել, այլ այն պատճառով, որ չեղեալ ստուած նրա ազգին ու երկրին նայում է մէկ աչքով, զարհուրելի ու խարական աչքով:

Այսօր, երբ նրա յիշատակի ուխտադնացներ ենք մենք, զոհի փոխարէն ընծայաբերենք այն վառ լոյսը, թէ այլեւս բախտը մեր ժողովուրդին չի նայում մէկ աչքով, որպէսզի այդ ժողովրդի ուրէ նոր բանաստեղծ այլեւս մէկ աչքով չնայի կեանքին, աշխարհին եւ մեզ, ու Սիամանթոն էլ իր տխուր առաքելութեան ճանապարհին մնայ միայնակ եւ... անկրկնելի՛:

(«Գրական թերթ», 1963, թիւ 3)

digitised by A.R.A.R.@

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

...Անբնական տարօրինակ է թըւում, որ նորի եւ նորարարութեան այս նոյն քառապովը դնալով աւելի եւ աւելի էր յիշւում ու յիշեցնում հներին՝ սկսած Հոմերոսից ու Նազոնից մինչեւ Նարեկացի ու Դանթէ եւ հասած Պուշկինին ու Սիսմանեանին: Որովհետեւ նա ոխերիմ էր հնի, բայց ոչ նաեւ յաւերժականի, որ գալիս է հնից: Որովհետեւ արուեստի մէջ նորարար լինել չի նշանակում արուեստի պատմութիւնը դնել սեւ դրատախտակի տեղ, իսկ իրեն՝ թաց սպունգը ձեռքն առած մի դպրոցականի եւ... երկու վայրկեանում ընջել եղած-չեղածը: Եւ, վերջապէս, որովհետեւ գործում է ամէն տեսակ օրէնքներից ամենաօրինականը՝ ժառանգականութիւնը, որը նոյնքան անբեկանելի է, որքան հին յոյների հաստատած ճակատագիրը, ինչից որքան խուսափես՝ այնքան մօտենում ես՝ թշուառական Էդիպ Աքքայի նման: Այդ ժառանգականութիւնը Չարենցի գրական հակառակորդներից ոմանց հետ վարուեց նոյն դաժանութեամբ, նրանց վերջ ի վերջոյ իրենց ծնողի հետ ամուսնացնելով: Չարենցը ոչնչով չէր բարկացրել բանաստեղծութեան երկնային աստուածներին, ուստի եւ ո՛չ միայն չպատժուեց արեան խառնակութեամբ, այլեւ՝ մնաց ու մնալու է պաշտելի որդին իր մօր, մի ժողովրդի, որի բազմադարեան մշակոյթի ժառանգորդն էր, այնքան հարուստ ու մեծատուն ժառանգորդը, որ իրաւունք ունէր ու պիտի ինքն իր մասին ասէր.

Ինչ ունեցել է ժողովուրդը քո
Հնում, անցեալում լուսաւոր ու վեհ,
Ինչ ունի այսօր, ինչ ցնորք ու խոհ,
Ոգին հաւաքել ու քեզ է տուել...

Լինում են զաւակներ ապօրինի եւ զաւակներ օրինական: Իսկ անհայր զաւակներ՝ բնաւ: Եւ անկարելի է լինել մեծ գրող եւ չլինել օրինական զաւակն ու ժառանգորդը տուեալ ազգի մօտաւոր ու հեռաւոր հայրերի: Չարենցը հենց այդպիսի զաւակ էր եւ սրանով իսկ նա կրողն էր մեր դարաւոր աւանդների ու բեռուբարձի:

Բայց ամէն զաւակ չէ, որի անձնական անունը դառնում է գերդաստանի ազգանունը: Նրանք,

Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած.
Նստում են նրանք ձի՛շդ ժամանակին:
Եւ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց...:

(«Գրական թերթ», 1967, թիւ 40).

digitised by A.R.A.R.@

Հարուած, որ ցնցեց Հայութեան Աշխարհը

⊙

Նոր մի վէրք բացուեց մեր ժողովրդի սրտում: Այն սիրտը, որ թում է, թէ կորուստների անհամար վէրքերից կարծրացել, սպիների մի պիրկ հանգոյց է դարձել, կսկծում է առաջին հարուածի ուժգնութեամբ:

Եղիշէ Չարենցից յետոյ՝ մեր ամենաողբերգական, ամենամեծ կորուստն էր սա, եթէ այդ կորուստը չափուի ո՛չ միայն եղածով, այլեւ նրանով, որ պիտի լինէր: Չար, պպտիկ, փոքրոգի վայրկեանը կարողացաւ խառնել դարերի հաշիւը եւ կանխել արարումը հոգեղէն այն հարստութիւնների, որ դարերինն էին...

Չկայ Պարոյր Սեւակը:

Չկայ այն մարդը, որ վերջին մէկ-երկու տասնամեակում իրենով էր լցրել Հայաստանի բանաստեղծական մթնոլորտը, լցրել էր իր մեծաջուն բանաստեղծութեամբ, իր պրպտող մտքի փայլուն յայտնութիւններով, իր մարդկային հոգու լոյսով ու տաքութեամբ: Ու թում է, օդում պակասել է թթուածինը, շնչելը ինչ-որ դժուարացել...

Չկայ Պարոյր Սեւակը:

Չկայ այն մարդը, Արեւելեան Հայաստանի խուլ եւ անյայտ Զանախչի գիւղում ծնուած, գաղթ ու կոտորած չտեսած բանաստեղծը, որի էութիւնը՝ ինչ որ միստիկական հաղորդականութեամբ՝ առաջինը ընդունեց օդում եւ ժամանակի մէջ գործող անբռնելի ալիքները, որ կոչւում է արեան ձայն, սերունդների յիշողութիւն, եւ ընդունելով՝ վերահաղորդեց այն «Անլռելի զանգակատան» դողանջներով: Վերահաղորդուեց այնպէ՛ս, որ հինգ տասնամեակ յետոյ էլ աշխարհասփիւռ հայութեան հոգին ծիլաց նոյն կսկիծով, ինչպէս 1915ի Ապրիլ 24ի լոյս գիշերը Ստամբուլի վրայ բացուող արիւնոտ առաւօտին... Եւ դրանից է, որ Արարատի փէշերին ձգուող խճուղու քայլաչափ այդ աղէտավայրը, մեր ներաշխարհը ցնցող երկրաշարժի այդ էպիկենտրոնը, — իր ցաւագին շառաւիղները նետում է հեռու, շատ հեռու՝ ճաք տալով հողագնտի բոլոր այն ծայրերում, ուր կայ հայ ու հայութիւն:

Այո՛, նոր մի վէրք բացուեց մեր ժողովրդի սրտում, սակայն շատ վէրքեր տեսած սիրտը օժտուած է նաեւ տոկալու, դիմանալու, յաղթահարելու կարողութեամբ:

Ուրեմն այս անգամ էլ խեղդենք մեր հառաչը, եւ թող մեր կրծքերում խտացած ծուխ ու բոցից այս անգամ էլ ծնուեն սուրբ բաներ: Չէ՞՝ որ վաղնջական ժամանակներում մեր գոյութեան խորհուրդ Վահագնն էլ ծնուել է ծուխ ու բոցից, ծուխ ու բոցից...

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

...Ս. Կապուտիկեանին, ինչպէս յայտնի է, քննադատում էին նրա համար, որ շատ է լինում «իր հարազատների» մօտ եւ սակաւ՝ Հայաստանում: Հաւանաբար նա այդ քննադատութիւնը մտամբ իրաւացի է գտել, դրա համար էլ նրա նոր գիրքը բացւում է «Արարատեան դաշտ» դղեակի շարքով: Թարմ են այդ բանաստեղծութիւնները, ջերմ ու յուզաթաթաւ, նրանք ընթերցողին վարակում են իրենց պարզութեամբ ու անմիջականութեամբ, նրանց մեծ մասը՝ նաեւ բարձր արուեստով: Անպակաս են այստեղ նաեւ այսպէս կոչուած գիւտերը, բայց այժմ հեռք իսկ չկայ այն ճիգ ու ջանքից, որ մի ժամանակ զգացւում էր բանաստեղծուհու այս կարգի գործերում: Կարդացէք «Հայրենի երգը» եւ չէք կարող չզգալ, որ բանաստեղծութիւնը չի գրուած վերջին տողերի համար, ընդհակառակն, բանաստեղծութիւնից են բխում նրա եզրափակիչ տողերը: Ահա մի ուրիշ բանաստեղծութիւն, որ կարծես թէ գրուած է միմիայն «գիւտի» համար.

Փշատենի, փոքրիկ ծառ,
Հայաստանի ճամբէքին
Օրօրւում ես անգադար,
Օրօրւում ես մեղմագին:

Ու թարմ շնչում ես էլի,
Խնկում քոյրերդ առատ,
Թէեւ հայոց դարերի
Արծաթ փոշին է վրադ...

Ինչ ասես, որ չկայ այստեղ՝ արձակրի գեղագիտութիւնից սկսած մինչեւ փոքրիկ փաստով մեծ ընդհանրացում կատարելու բանաստեղծական կարողութիւնը:

Ափսո՛ս, որ այս շարքին տեղ են գտել բանաստեղծութիւններ, որոնք շատ են ծանօթ, կրկնուած կա՛մ իր՝ Ս. Կապուտիկեանի, կամ նրա գրչակիցների կողմից (օրինակ, «Մասիսին մօտիկ»):

Գրքոյկի սրարացութիւնը ամէնից շատ երեւում է սիրային բանաստեղծութիւնների մէջ: Ս. Կապուտիկեանը մեր այն սակաւաթիւ բանաստեղծներից է, որոնք սկզբից եւեթ ընթերցողին ներկայացել են իրենց անձնական ուրախութիւններով ու արտութիւններով: Նրա այդ կարգի գործերը գրուած են ջերմութեամբ ու անկեղծութեամբ, դրա համար էլ յուզում է. նա երգում է ապրուած զգացմունքներ, այդ պատճառով էլ վերարդել է տալիս ընթերցողին: Նրա հանրայայտնի «Թափառում եմ փողոցներում», նոր եւ ինքնատիպ «Ես անգիր գիտեմ», «Մեր մանկութեան առուն», «Սպասումի պահեր» եւ մի քանի այլ բանաստեղծութիւններ այս գրքի լաւագոյն կտաւներից են:

(«Գրական թերթ» 1955, թիւ 30)

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ԴԱՐՁԱԻ, ՄՆԱՑ

Մե՜ծ, անչա՜փ մեծ, անհնարին դրժուար կորուստ կրեցինք ամէնքս...

Բայց մի՞թէ ուրիշ բառեր չկան ասելու, երբ կեանքից հեռացել է Պարոյր Սեւակը: Զարմանալի է, վրդովեցուցիչ է, որ չկան: Որ չկայ ոչ մի միջոց հոգեպատահածը ետ դարձնելու եւ անողոք իրողութիւնը գոնէ այս անգամ համարելու անիրական, չեղած: Որ այս կորստի լուրն առնելիս պաշարուելով այլեւս մենակութեան զգացողութեամբ, ոչ մի բանով չես կարողանալու լցնել այն թափուր տեղը, որ իրենից յետոյ թողնում է մեծ բանաստեղծը:

Եկաւ ամէնքին տուեց իր անօրինակ գրքերը, սիրտը, միտքը, հաւատացրեց, թէ դեռ չիմացուած-չլսուած գանձեր է պարգեւելու, ու վեր կացաւ գնաց: Քայլ արաւ, անցաւ այն ամէնի վրայով, ինչը շարունակւում է դեռեւս նրա ոտնաձայնների ներկայութեամբ: Եւ շարունակուելու է առանց նրա: Ու երբեւէ այլեւս չի լինելու նա ինքը, եւ չի կրկնուելու ոչինչ, թէպէտ եւ նրան շնորհուած էր լինել անհրաժեշտ, կեանքով եւ ոչ թէ մահով մշտական, որովհետեւ աննախօրինակ էր, այլեւ անկրկնելի:

Իսկ մենք սովոր այն բանին, որ մեծերին ամբողջ ձայնով մեծ ենք անուանում նրանց մեռնելուց յետոյ, որ շատ բան զգում էինք ուելի առաջ, բայց միայն բաւականանում ենք երկար ու ձիգ այդ զգացողութիւնն ոտուգելով, այդպէս էլ չհաւատալով, որ մի անընթարթում է վրայ գալիս կորուստը, — մենք հիմա պիտի նստենք ու մտածենք, թէ ինչ՞ա՜ էինք հարուստ նախքան այդ չարաբաստիկ ակնթարթը:

Հայկական բանաստեղծութեան մեր ժամանակին պատկանող պատմութիւնը, այն, որ առաւել իրաւունք ունի հպարտանալու 20դդ դարին իր պատկանելիութեամբ, եղիշէ Չարենցից յետոյ ու նրա կողքին չի՛ կարող չտեղաւորել Պարոյր Սեւակ բանաստեղծի անունը: Այդ բանն արել է ինքը՝ ժամանակը, որ ասպարէզ է հրաւիրում շատերին, բայց ընտրում ու կոչում քչերին: Ահա՛ ինչու ահագին է մեր քիչ ունեցածներից մեծի ծանը, անմարդկայնօրէն անժամանակ կորուստը:

Ժողովուրդն ասում է, թէ մխիթարութիւն է այն ամէնը, ինչ մնում է գընացողներից: Մնում են մնացող գրքերը: Մնում է կենդանի յուշն ու յիշատակը ապրողների ուսերին, եւ այն անդադար հոլովուող, յաւիտենական, մահից զուրկ կեանքը, որտեղ լոյսի պէս անհրաժեշտ եղաւ Պարոյր Սեւակը իր շողշողուն, շընորհալից ծով-ովկիանոս տաղանդով:

Մենք հիմա գլխահակ կանգնած, ստիպուած, նրան ասում ենք, «Գնաս բարեւ»: Իսկ նրանք, որ գալու են դեռեւս, այլեւ անվերջ, ամէն անգամ նրա գրքերը բանալիս՝ մեծ ու փոքրով միայն կրկնելու են մեր սգահար խօսքի մի մասը. «Բարե՛ւ, Պարոյր Սեւակ, քեզ շա՛տ բարեւ»:

ՎԻԳԷՆ ԽԵՉՈՒՄԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԻԳԷՆ ԽԵՉՈՒՄԵԱՆ

Վիգէն Խեչումեանը այն պատմագիտաններն է, որ մեր պատմագրութեան հաւաքական գոյականները դարձնում է յատուկ անուններ եւ հանրային խաղեր ու դասեր՝ իրենց կենդանի կեանքով ու քայլքով, իրենց դասային մտայնութեամբ ու հոգեբանութեամբ։ Մեր պատմագիրների գրած փակագծերի բացողն է նա՝ ոչ թուաբանական, այլ գեղարուեստական եղանակով, փակագծերի լուծողը, չընթերցուած վիմագրութիւնների վերծանողը՝ ոչ հնագիտութեան, այլ գրականութեան միջոցներով։

Այսպէս է ստեղծագործել նա՝ սկսած իր «Աստուածամայր»-ից մինչեւ «Ելքեմ հասակ»։ Այսպէս է կերտել եւ իր վերջին կոթողը՝ «Գիրք ինքնութեան»ը, որի բոլոր հերոսներն էլ, ինչ ասել կ'ուզի, նոր են, բայց միաժամանակ ծանօթ եւ ծանօթ միայն մէկ աղբիւրից՝ նոյն Վ. Խեչումեանի նախկին երկերից։

...Վ. Խեչումեան անկրկնելի է՝ այս բառի բուն իմաստով։ Ոչ ոք չի գրել այդպիսի լեզուով՝ իրենից առաջ։ Եւ ոչ ոք էլ այդ լեզուով չպիտի գրի՝ իրենից յետոյ, չպիտի՛, եթէ չի կամենում ապացուցել, որ ինքը ո՛չ միայն խեղճ ու կրակ ընդօրինակող է, այլեւ անխելք ու անմիտ։ Վ. Խեչումեանի լեզուն դիւա է, բայց մի դիւա, որ պատկանում է միայն իրեն. ուրիշները կարող են օգտագործել, բայց ոչ գործածել։

...Վիգէն Խեչումեանը, ի պատիւ իրեն, պատմութիւն է վերակենդանացնում ոչ թէ յանուն պատմութեան, այլ ի սէր ներկայ իրականութեան. մեզ չի ասում անցեալ (որտեղ մենք անելիք չունե՛նք), անցեալն է բերում մեզ (որպէսզի մեր անելիքի հեռապատկե՛րը տեսնենք)։

Եւ — ո՛վ զարմանք, ո՛վ ուրախութիւն — Վ. Խեչումեանը՝ ամբողջովին տրուած նոյն այդ միջնադարին, մխուած նրա մէջ եւ համակուած նրանով, — Վ. Խեչումեանը իր բանաստեղծական մտածողութեամբ, պատկերների իր հմտակարգով եւ, վերջապէս, իր ղրեալաձեւով անհամեմատ արդիական է, այսօրուայ, թարմ ու նոր, քան իր բաղմաթիւ, բայց ոչ բաղմապան այն գրչակիցները, որոնք չափածոյ թէ արձակ տողերով մեր ժամանակակից անդաստանը... տափանում են՝ փոխանակ ակօսելու։

Միջնադարից խօսող — միջնադար նկարագրող Վ. Խեչումեանը իրրեւ (եւ ինչպէս ամէն մի) արդիական գրող (արդիական ոչ կենսագրութեամբ, այլ մըտածելակերպով) չի սերում գիծը՝ նախախութիւնը տալով կէսգծին, կէսի եւ դծի արանք-միջոցի լրացումը թողնելով մեզ, որ ընթերցող ենք կոչւում։

(«Գրական թերթ» 1966, թիւ 30)

digitised by A.R.A.R.@

ԱՆՀՆԱՐԻՆ Է...

•

Իւրաքանչիւր մահ անակնկալ է, անհաւատալի եւ սակայն հոգեկան առաջին ցնցումից ու կաթուածից յետոյ, եթէ ոչ արտով, ապա գոնէ ուղեղով հաւատում կամ ասիպում ես քեզ հաւատալ նրան...

Բայց այս մահը, Պարոյրի՛, Սեւակի՛, Պարոյր Սեւակի՛, երիտասարդ, կրքոտ, այրող ու այրուող մարդու, բանաստեղծի ու ընկերոջ մահը, որի հետ համաբեա՛ երեսուն տարի նոյն օդն ես շնչել, նոյն հացը կիսել, յուզուել նոյն յուզմունքով, ապրել նոյն խոհերով, ատել նոյնը, սիրել նոյնը, եղել ես ո՛չ միայն սուկ դրչակից, այլեւ սրտակից, մտքակից, համախոհ ու համայրդ... (եթէ նոյնիսկ իրարից հեռու լինէինք հազարաւոր կիլոմետրներով ու նոյնքան դարերով)։ Հաւանաբար, խոստովանեմ Աստուած չկայ, որովհետեւ եթէ լինէր այդ եղեալ ու չեղեալ արարիչը, ապա պիտի գոնէ Մեծին Մեծ մահ տար, վսեմ, մեծ ու խորհրդաւոր մահ, Սեւակին ու նրա մեծ ձիրքին ու կրքին արժանի մահ, բայց այսպիսի մա՞հ, հենց այսպէս, մի քանի բոպէում, ինչ-որ աւտոմոբիլեանի ինչ-որ վթարից, որպիսի՛ դաժան կատակ ու անհեթեթութիւն։

Անհնարի՞ն է, անասելի, անհաղորդելի, անիմաստ, անյարիր, ան...

Անհաւատալի է, անհեթեթ, անհնարի՞ն...

Մեծ դահլիճում նրա (հաւատո՞ւմ էք, Պարոյրի՛, Սեւակի՛) դագաղն էր, ծաղիկներ, պսակներ, պատուոյ պահակ, հոգեւոր ու պաշտօնական պատարագ, հեծկլտանք, ղեկի նրա հոյլերնի գիւղն ու տունը ծգուող սգոյ թափօր, իր տան բակում իր իսկ ձեռքով անկուած ծառերի ստուերում փորուած շիրիմ։

Զհանդիպե՞մ ու չահանե՞մ նրան կրքոտ վիճելիս, վայրապօրէն ծեծելիս, բորբոքուելիս ու քնքշանալիս, անյաղող երգելիս ու անդերազանց ձեռով պարելիս, չհանդիպեմ նրա նոր սէրերին, նոր, իմաստուն ու կրքոտ յօդուածներին, բանաստեղծութիւններին, դրքերին... անհնարի՞ն է։

Այո, չի կարող պատահել, որ այդ ամէնը չլինի, որովհետեւ ինչքան էլ շատ, նոյնիսկ չափազանց շատ լինի Պարոյր Սեւակի տուածն ու Թողածը, միւնոյն է, նա իր հետ տարաւ աւելին, քան Թողել է եւ անբնական է, անհեթեթ, որ նա, նրա պէս շատ տաղանդը այդ ամէնը պահէր իրեն, տանէր իր հետ, մանաւանդ որ՝ ո՞ւր տանէր եւ ինչո՞ւ...

Այո, անհաւատալի է, անհնարին է այդ ամէնը, ուստի եւ այսօր կամ վաղը, ինչ էլ ասեն ու անեն, եկէք չհաւատանք այդ անհնարինին, եւ վանենք մեզնից այդ մղձաւանջը, որն, անկասկած, կ՝անցնի, կը ցրուի։

Չհաւատանք ո՛չ միայն սրտով, այլեւ մտքով, ուղեղով եւ անիծքի ու աղօթքի պէս մրմնջանք.

— Թող չլինի, Թող կորչի, Թող չմոռնան նրան, նրա կեանքին ու յիշատակին՝ մահն ու խաւարը եւ Թող եղիցի՛ լոյս՝ լոյսը նրա պոեզիայի անմահութեան ու փառքի՝ այսօր, վաղը եւ յաւիտեան յաւիտենից, ամէն։

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

digitised by A.R.A.R.@

ԳԵՈՐԳ ԷՄԻՆ

Արուեստի հման դու էլ ես ասուած,
Հանդարտուի՛ր, ծովի՛կ, զուր ես
զգազգում:

Հնագոյն ճշմարտութիւնները յաճախ են վիրատին արդարացնում իրենց։ Այսպէս էլ «Ձիք չարիք առանց բարիքի»ն նորից է հաստատուում՝ այս անգամ Էմինի փորձով, որովհետեւ եթէ չլինէր «Որոնումներ»ի մոլորանքը, թերեւս այսօր չունենայինք նաեւ «Վերան ճամբաց»։ Թերեւս չունենայինք, որովհետեւ խորամիտ ընթերցողը պիտի նկատի, որ «Վերան» լուսագոյն բանաստեղծութիւնները յաջող շտկումներն են «Որոնումների» ձախողանքի, վճարումն մուրհակի, որ ծանրացել էր Էմինի ուսերին (իսկ եթէ կ'ուզէք՝ խղճին)։ Եւ հիմա ընթերցողը, անաչառ ու հմուտ ընթերցողը իր ներողամտութեանը պիտի խառնի իր շնորհակալութիւնը, որի կարիքը արդարեւ զգում է Էմինը, ա՛յն Էմինը, որ իր «Վերան ճամբայ»ի բարձունքին հասնելու ժամանակ ստեղծել է լիապոր եւ լիբրաւ բանաստեղծութիւններ, որոնք մերթ կենդանի վկայութիւններ են, մերթ դատախազներ, մերթ դատաւորներ, մերթ էլ դատապաշտպաններ այն մեծ «դատավարութեան», որի անունն է քսաներորդ դար։

...Բայց Գ. Էմինը միայն գինուորը չէ իր ժամանակի, ոչ էլ միայն վկան կամ դատախազը։ Նա նաեւ դատաւոր է ու դատապաշտպան, ուստի եւ որքան սրի է ու փաստաբկի, առաւել զիմում է խղճի ու կշեռքի։

«Գինուորութիւնից ու «դատախազութիւնից յոգնած մի պահ նա կարող է չլուսով ասել։

Բայց երբ անցնում է յոգնածութեան այդ պահը, բանաստեղծը վերյիշում ու վերյիշեցնում է, որ միայն «սազը թըմկարերդն առաւ»։

Եւ այստեղ, հենց այս «սազի վրայ էլ պիտի կանգ առնենք մի պահ։ Գիտի կանգ առնենք, որպէսզի նախ եւ առաջ (թերեւս ուշերդարար) յիշեցնեմ, որ «սազ» բառն այստեղ հոմանիշ է «արուեստին ընդհանրապէս, «պոեզիա»յին՝ մասնաւորապէս, եւ ապա՝ վկայեմ, որ Գ. Էմինը կեանքում ոչ մի երգ չի ասել այն «սազի վրայ, որ արդէն միայն նրաազարան չէ, այլ խարհրդանիշ ուշացած աչուզութեան ու սուտ ժողովրդայինի, մգլահոտ պահպանողականութեան ու բորբոսնած յետամնացութեան։ Ո՛չ մի երգ՝ «սազի վրայ, որովհետեւ Էմինը ծնուել է... ժամանակին եւ ժամանակից։

(«Սովետական գրականութիւն»
1963, թիւ 6)

digitised by A.R.A.R.@

Ընթերցողի Հպարտությունը

•

Մարդիկ բնությեան ծնունդն են, բայց հազարից մէկն է բնությեան պարգեւ լինում: Պարոյրը բնությեան այդ հազարից մէկն էր: Պարոյրն ինքը բնությունն էր. ինչպէս բոլոր արտակարգ մարդիկ, ինչ-որ մի տեղ կարմանալի ու անհասկանալի՝ թաքնուած արտասովորութիւն, առեղծուած անհատականութիւն: Պարոյրն անակնկալ էր: Եւ այդպէս էլ գնաց անակնկալներով լի:

Չարենցից յետոյ ոչ մի բանաստեղծ, աւագ թէ երիտասարդ, մեր գեղարուեստական մտածողութիւնն այնպէս չի մղել առաջ, ինչպէս Պարոյր Սեւակը:

Եւ արդեօ՞ք չկայ մի օրինաչափութիւն գրականութեան հետեւեալ զոյգ փաստի մէջ. բանաստեղծ Տէրեանի դադարը զուգադիպեց Չարենցի առաջին փայլատակումներին: Մի-երկու տարի էր անցել Չարենցի մահից, երբ գրականութեան շեմը ոտք դրեց 17-18ամեայ Պարոյր Սեւակը:

Չկայ այն Պարոյրը, որը որքան բարոյական, անհանդուրժող էր, նոյնքան մեղմ ու ներող: Չկայ այն Պարոյրը, որ «ձեւանում» էր, թէ ատել գիտէ, բայց յայտնի էր մտերիմներին իր փխրուն սրտով: Դէ՛, արի ու հաւատա՛, որ չկայ այն Պարոյրը, որ ո՛չ միայն գառոգամիտ չէր, այլեւ գրականութեան ասպարէզը նոր մտնողի համեստութիւնն ունէր:

Պարոյրի բոլոր գործերն ունեմ, բացի մէկից. ու երբ ձեռք բերեմ՝ դա կը լինի գրադարանիս միակ անմակագիր գիրքը Պարոյրից: Դրա հետ հաշտուելը հեշտ է: Դժուար է հաշտուել այն դաժան մտքի հետ, որ Պարոյրը չկայ եւ այլեւս չեն գրուի այն գրքերը, որ նրա մտքումն էին՝ բանաստեղծական, գիտական, քննադատական... Այսօրուայ Պարոյրի կողքին ապրում էր եւ վաղուայ Պարոյրը: Վաղուայ Պարոյրն անէացաւ, այսօրուանը մնաց: Մէկը ենթադրելի ու երեւակայելի, միւսը՝ արծարծուած իրականութիւն...

Երէկ շարադրած գրքից Պարոյրն այսօր քարար է լինում արդէն: Դա է պատճառը, երբ ասում եմ, թէ այն, ինչ անելու էր՝ նոր էր անելու եւ անելու էր այնպէս, որ ուրիշ ժողովուրդների աչքը զարմացած էր մնալու մերի վրայ. թէ այդ ի՞նչ զարմանահրաշ զաւակներ ծնելու է ընդունակ մեր ժողովուրդը:

Թէեւ մի ամբողջ տարի է անցել, տասներկու ամիս, բայց թւում է, թէ ողբերգութիւնը երէկ է կատարուել, մի օր առաջ ենք կորցրել մեր Պարոյրին, բոլորի Պարոյրին, ժողովրդի Պարոյրին:

Այսպիսի դէպքերում ասում են՝ մի՛ ողբայ, զլուխդ բարձր ու հպարտ պահիր, որ ունէիր մեծ ժողովրդականութեան հասած այդպիսի բանաստեղծ:

Ասելը հեշտ է, ենթարկուելը՝ դժուար:

Ես հիւանդանոցումն էի, երբ Պարոյրի մահուան անհաւատալի բօթը հասաւ այնտեղ: Հիւանդներից մէկը, որ բանաստեղծի երկրպագուն լինելով՝ շատ էր ազդուած եւ լուռ ու անխօս ապրում էր կսկիծը, մի խօսք ասաց միայն՝ *«լրուեց զանգակատունը»*:

Լաւ է ասուած, բայց ոչ ճիշդ:

Պարոյր Սեւակ ծնող ժողովրդի արգանդը երբեք ամուլ չի մնայ: Նա իր օրինաչափ դադարներն ունի միայն: Թող զանգակատունը չէն մնայ, նոր ժամեր աշխարհ կը գայ անպայման:

ՌՈՒԲԻՆ ԶԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԵԱՆ

Կարծես հարկ ու պատշաճ կը լինէր դոնէ այսօր «Դուքով խօսիլ մի մարդու հետ, որի 60ամեակն ենք տօնում սիրով ու մեծարանքով։

Մե՛ծ, շա՛տ մեծ բան է յարգանքը։ Բայց կայ մեծազոյնը, որ սէր է կոչւում։ Իսկ որտեղ ներկայ է սէրը, ընկնում են տարիքային տարբերութիւններն իրենց պարտադրանքով, եւ յարգելից, բայց սահմանադիր «Դուք»ի տեղն է գրաւում ջերմացնող ու սահմանազանց «Դուն»։

Ապրելով այսօրուայ մէջ եւ այսօրով, Ռ. Զարեանը միշտ էլ ունեցել է վաղուայ մտահոգութիւն։ Այսպէս կարող են լինել միայն նրանք, որոնց մէջ «թուլութիւն»ն է երիտասարդ լինելը, կեանքին երիտասարդի աչքերով նայելը, այլ կերպ ասած՝ վաղուայ մասին մտածելը։ Եւ միայն ոմանց ծանօթ Ռուբէնը բոլորին ծանօթ Զարեան դարձաւ հենց այն օրից, երբ իրեն նուիրեց... Ամբողջանին՝ այն դարմանալի երիտասարդին, որին մենք բոլորս մեր նոր գրականութեան հայրն ենք համարում։

...Ռ. Զարեանի մասին խօսելիս անկարելի է չյատկանշել նրա մի ունակութիւնն էլ, որ (առանց խնայելու իր համեստութիւնը) պիտի կոչել ասաղանդ։ Ռ. Զարեանը գրե՛լ գիտի, որ աւելին է, քան անուանի պրոֆեսոր-դոկտոր լինելը։ Այն, ինչ ուրիշ մէկը կ'ասի մի անհոռոմի պարբերութեամբ, յարգն ու ցորենը, ապն ու երկանքը խառնած իրար, սա ասում է մի շարք նախադասութիւններով. այն, ինչ ուրիշ մէկն ասում է մի շարք նախադասութիւններով՝ կենդանի մարդուն դարձընելով մարդակազմութեան դպրոցական դասագիրք, սա ասում է մէկ պարբերութեամբ։

Ռ. Զարեանը ոչինչ չի արել առանց որսի թրթիռի, ուստի եւ մենք էլ երբեւէ նրան չենք կարդացել առանց որսի թրթիռի։ Եւ կայ ախտորոշական մի խօսք, որ հոյնպէս կոչւում է «որսի թրթռում»։ 60ամեակը մի տարիք է, որ չի բացառում նաեւ այս «որսի թրթռումը»։ Բայց դա չի վերաբերում Ռ. Զարեանին եւ թող չվերաբերի նաեւ իր 80–90ամեակների ժամանակ։ Նրան «որսի թրթռումը» չէ, այլ որսի թրթիռը, որ տարափոխիկ է, երբ խօսքը վերաբերում է արուեստագէտ-դեղագէտին։

Թո՞ղ այդ տարափոխիկ որսի թրթիռը երկա՛ր, շա՛տ երկար տարիներ Ռ. Զարեանից փոխանցուի մեզ՝ իր բազմահազար երկրպագուներին, որոնք «Դուքով դիմելիս էլ՝ իրենց մտքի մէջ մրտերմիկ «Դուն»ով եւ որսի թրթիռով են շնորհաւորում Ռ. Զարեանին այսօր՝ իր մեծավաստակ 60ամեակի առթիւ։

(«Գրական թերթ» 1969, թիւ 48)

digitised by A.R.A.R.@

ԱՒԱԳ ԳՐՈՂԻ ՈՂՋԵՐԹԻ ԽՕՍՔՈՎ

ԱՐՏԱԿ ՈՍԿԱՆԵԱՆ

Ծ'ուռ մի նոր անուն՝ Արտակ Ոսկանեան...

Կրթութեամբ ու մասնագիտութեամբ նա ֆիզիկոս է, իսկ հակումով ու կոչումով՝ բանաստեղծ։

Արտակ Ոսկանեանը լուրջ երիտասարդ է, բարի մարդ, ամբարտաւան չէ, ոչ էլ ինքնագոհ, ուստի ուզում եմ չկասկածել, որ նա պրոկանութեամբ զբաղուելու է ոչ թէ իր (եւ այլոց) ղեղը քարքշելու, այլ հանգստացնելու համար, թերեւս նաեւ բուժելու։

Նա, ինչպէս իր համարեա բոլոր տերնդակիցները, գրում է սպիտակ տանաւորով՝ անյանգստութեանը միացնելով նաեւ շտապկոտութիւնը։ Չեմ ուզում շտապել։ Թերեւս նա շուտով գլայ, որ շտապկոտութիւնը իրեն աւելի խանգարում է, քան օգնում։ Բայց կայ մի տեղ, ուր իսկապէս հարկաւոր է շտապել։ Նրա որոշ տանաւորները բանաստեղծութիւն չեն դառնում լոկ այն պատճառով, որ չեն շարունակւում, այսինքն՝ լինելով մարմնամասեր, չեն ամրոցքանում՝ մարմին կոչուելու եւ ինքնուրոյնաբար ապրելու համար։

Բայց սրանք գիտակցութիւններ են, որոնց վերացման համար պէտք է ժամանակ՝ մինչեւ որ հասնի ինքնաճանաչողութեան մշտայաղագ պահը եւ շրջահայեցութեան ուշահաս շրջանը։ Կարեւորն այն է, ինչ ունի երիտասարդ բանաստեղծը։ Իսկ նա ունի բանաստեղծի աչք եւ նեարգայրն համակարգ։ Եթէ նա ընթանալով թոյլ գիմադրութեան ճանապարհով, իրեն իրաւունք է տալիս լեռներ բնորոշելու «բարձր, պացիկ» երկածականով, որ ոչինչ չի ասում, որովհետեւ ասուած է միլիարդաւոր անգամ, ապա տեղն ու տեղն էլ նկատում է լեռներն ի վար ձգուող «ծալծլուած, երկատուած ստուերի զիկզակը»։ Այդ նոյն ստուերները մէկ այլ անգամ քայլում են մեզ հետ «ստուերների նման ադեղնաւարուած», ու եթէ լքանում են «հոգոցների մէջտեղում» (այսինքն՝ լոյսերի ուղղահայեացութեան ասի), ապա դա ոչ թէ սոսկական շքացում է, այլ «աւելի շուտ՝ մեր ոտքերի տակից մեր գլուխների վրայ» բարձրացում։ Եւ միայն այսպէս զգացող մարդը կարող է ասել, թէ «մեզ մեր ստուերների ծանրութիւնից յոգնած, օրուայ ճանծրոյթը որպէս փոշի մեր կողերին առած՝ մեզ հետ բաշ տալիս լուսաթացով լցուած մի լուսազարդ գիշեր, ու գիշերի մէջ գիշերի հետ ֆենեցիսի կղզիկողքի երազելով արեւի մասին»։

«Հանելուկային է աշխարհն ինձ համար», — խոստովանում է Արտակ Ոսկանեանը։ Եւ գոմելին էլ դա է։ Եվ չի զգում աշխարհի հանելուկայնութիւնը, նա կարող է զբաղուել ամէն ինչով, բայց ո՛չ արուեստով։ Եւ լաւ է երկնակի, որ նորեկ բանաստեղծը չի ձգտում այդ հանելուկայնութիւնից շինել քառակուսի արմատ, այլ խանում է արուեստի միջոցներով լուծել այդ քառակուսի արմատը։ Դրա համար, ամէն քանից առաջ, հարկաւոր է ունենալ պատկերաւոր մտածողութիւն, որ ունի Ոսկանեանը։

Ես արտակը բարի գալուստ եմ մաղթում Արտակին, որ իր մասին մի տեղ ասում է. «Ինստի իմ գեստափին ոչ թէ լրի, այլ ժամանակի հետ ժամանակաւոր ու բարեկամավարի կատակ իմ անուն»։ Ցանդիմանելու հարկ չկայ։ Պարզապէս եկէք հաւատանք, որ ժամանակի հետ այդ ժամանակաւոր կատակը պէտք վերածուի աշխատանքի մտերմութեան, ինչպէս որ յանախ սիրախաղն է վերջանում ամուսնութեամբ եւ անանց սիրով։

(«Գեղարուեստական գրականութիւն» — 1966, թիւ 4) Գ. ՍԻՒԱԿ

digitised by A.R.A.R.@

ԱՒԱԳ ԳՐՈՂԻ ՈՂՋԵՐԹԻ ԽՕՍՔՈՎ

ԳԱԳԻԿ ԴԱՒԹԵԱՆ

Զղիտեմ, թէ շնորհալի բանաստեղծ Գագիկ Դաւթեանն ինչպէ՞ս է ուսանում պոլիտեխնիկական ինստիտուտում, բայց բանաստեղծութեան հինգտիտուտում նա լաւ է ուսանում։

Անձամբ ես հեռուում եմ նրա ստորագրութեամբ լոյս տեսնող բանաստեղծութիւններին (նորմոկ թարգմանութիւններին) եւ պարզ նկատում եմ նրա աճը։

Նա, որ բոլորովին գերծ է յաւուրցաստաւութեան ցուցից (ինչպէս իր սերնդակիցների մեծագոյն մասը), միաժամանակ չունի այն բովանդակութիւնը, այն (թող թոյլ տուրի ասելու) գոչ մի քան չասելութիւնը, որից տառապում են սերնդակիցներից շատերը՝ երեւի մոռանալով, որ լոկ մի գլուխով է մարդը խօսում՝ բա՛ռ տալու նպատակով, իսկ եթէ գրում է՝ առաւել եւս։ Զէ՞ որ բանաստեղծի գործը վերջ ի վերջոյ, եթան է հեռագիր կամ ճամակ գրելուն, այն տարբերութեամբ, որ սրա հասցէատէրը ինչ-որ մի անհատ չէ, այլ մտերիմների բազմահազար մի բազմութիւն։

Արդ՝ո՞ւմ մտքով կ'անցնի հեռագիր տալ կամ նամակ գրել, եթէ չկայ նրա անհրաժեշտութիւնը,այսինքն՝ մի կարեւոր, մի անյետաձգելի ասելիք։ Եւ ո՞ւմ մտքով կ'անցնի հեռագիր տալ կամ նամակ գրել այնպէս, որ հասցէատէրը՝՝՝ ոչի՞նչ չհասկանայ։

Այսպէս է կեանքում։

Գրականութեան մէջ էլ կա՛մ այսպէս պիտի լինի, կամ ոչինչ էլ չպիտի լինի (եւ չի՛ լինելու)։

Գ. Դաւթեանի մէջ, տեսա՛ ինչ գործ է գալիս նրա այն ձգտումը, որ ուզում է բան ասել եւ ասել այնպէս, որ բան հասկացուի։

Ահա այսպէս կարգալով Գ. Դաւթեանի ձեռքս տակ եկած մի քանի բանաստեղծութիւնները, ամէնից շատ հաւանում եմ «Այն գիշերը», «Ամնոյրությունը», «Դեռ չի՞ սիրեցիր» իսկ «Նապաստակները» մասին այնքան բան ունեմ ասելու, որ չի տեղաւորուի յանձնաժողովական կարճ խօսքում։

Բայց մի բան, այսուհանդերձ, պիտի ասեմ։

Գ. Դաւթեանը այն ստեղծագործ սկսնակներից է, որ միշտ ջանում էր պահպանել չափածոյի գոնէ չափը։ Հիմա, երբի ալէր տալով իր սերնդակիցների բազմութեանը, նա էլ է խոխտում չափը, որի հետեւանքով չափածոյ կոչուած ստեղծագործը դառնում է մի թեղջ ու իրակ սրձակ՝ ո՛չ միտքն չյդկուած, չյառեղուած, մինչեւ իսկ չասուած մի փոյտեղէն, որ մի կերպ կցմցուած է տարբեր չափսի մեխերով։

Ասածս թերեւս Գ. Դաւթեանին անելի գէշ է վերաբերում, քան իր ընկերներին, բայց արանից Գ. Դաւթեանը լի՛ չտեսում, սրսկեհնաս կորուստը միշտ էլ կորուստ է մնում՝ մանաւանդ իր հեռանկարի մէջ։

Գոնէ Գ. Դաւթեանը պիտի հասկանայ այն, թէ լաւ է ձեւակերպել Գ. Էմինը մէկ տողով. «Ամոյոնք է Էռ օրէնքը, Զառանա՛ս»։ Եւ իսկապէս էլ անոգոգ է։ Իրեն անտեսողին նա ինքն է անտեսում եւ այն էլ ինչպէ՞ս...

(«Գրական» 1970, թիւ 5) Գ. ՍԵՒԱԿ

digitised by A.R.A.R.@

Մեր Անկեղծ Բարեկամը

Երկու տարի առաջ Յունիս եւ Յուլիս ամիսներին, վեց շաբաթ անց եմ կացրել Հայաստանի մայրաքաղաքում, եւ չեմ լիշում, որ օրուայ մէջ մի քանի մարդ չասէ նրա անունը՝ բանաստեղծներ ու նկարիչներ, մատուցողներ եւ վարորդներ, միլիցիայի աշխատողներ եւ խանութի վաճառողներ: Նրանք խօսում էին Սեւակի մասին ոչ թէ արտասահմանցու համար, այլ՝ իրենց հաճոյքի: Նրա ժողովրդականութիւնը ձեւական չէր, կարդում եւ անգիր արտասանում էին նրա բանաստեղծութիւնները: Անծանօթ մարդիկ նրան կանչեցնում էին փողոցում իրենց տանջող հարցերի մասին խօսելու, կամ պարզապէս յարգանք մատուցելու համար: Մի քանի անգամ ինքս եմ ականատես եղել այդպիսի անակնկալ, բայց անմիջապէս մտերմութեան փոխուող հանդիպումների:

Պարոյր Սեւակի անուան ու ստեղծագործութեան հետ է առընչւում այն վերածնունդը, որ ապրեց հարուստ անցեալ ունեցող հայ պոեզիան վերջին 15 տարում: Իր ստեղծագործութիւններով նա կապուած էր միջնադարի խոշոր դասական Նարեկացու եւ 20րդ դարի մեծ բանաստեղծ Չարենցի հետ: Սեւակը միայն բանաստեղծ չէր, նաեւ բանասիրական գիտութիւնների դոկտոր էր եւ ունէր բանաստեղծական հրաշալի ուսումնասիրութիւններ, որոնցով մեծ ազդեցութիւն էր ունեցել երիտասարդ բանաստեղծների վրայ, նրանց մղել դէպի նոր ուղիներ:

Սեւակը շատ սիրալիր, շարաճճիօրէն լուրջ, եռանդուն, վերին աստիճանի զգայուն մարդ էր: Հոյակապ գիտէր ժամանակակից եւրոպական գրականութիւնը, անկեղծ սիրում էր Հունգարիան ու հունգարական մշակոյթը, 1966 թուականին եղել էր մեզ մօտ եւ հպարտ էր, որ «Եւրոպա» հրատարակչութիւնը «Անթոլոգիա սոնատ» վերնագրով հրատարակել է իր բանաստեղծութիւնների ժողովածուն: 1968 թուականին Սեւակը թարգմանեց ու հրատարակեց հունգարական ժամանակակից պոեզիայի անթոլոգիան: Հայոց լեզուն չիմանալու պատճառով չեմ կարող արտայայտել Սեւակի թարգմանութեան որակը, բայց կրքի յայտնութիւնը եւ հայ ընկերներիս հիացմունքը թոյլ են տալիս ենթադրել, որ գերազանց գործ է կատարել:

Ցանկալի մահը մեզնից խլեց հունգարական գրականութեան անկեղծ բարեկամին, մեր ժամանակի կարեւոր ու մեծ բանաստեղծին:

ԼԱՍԼՕ ՖԵՐԵՆՑԻ

(1971 թ., Յուլիս 4)

«ՄԱԳՐԱՐ ՀԵՄԶԵՏ»
«Հունգարական ազգ» օրաթերթ

digitised by A.R.A.R.@

ԱՅԴՊԻՍԻՆԵՐԸ Ո՞ՒԺ-Ո՞ՒԺ ԵՆ ԾՆԻՈՒՄ

Այդպիսիները, իր իսկ ստղով ասած՝

Ո՞ւշ–ո՞ւշ են գալիս, բայց ժամանակին...

Ժամանակին էր եկել նա, ժամանակի խօսքն էր ասել. ասել՝ մերթ կրքով ու ցասումով, մերթ՝ տառապանքով ու տուայտանքով, մերթ՝ սիրով ու քնքշանքով, սակայն ոչ երբեք հայեցողի անտարբերութեամբ: Ժամանակին էր եկել, բայց հեռացաւ անժամանակ: Հեռացաւ, երբ բերնէ բերան լիքն էր հրաշալիքներով: Հեռացաւ ու հարցումներ տարաւ իր հետ, որ ժողովուրդին էին...

Այո՛, Պարոյր Սեւակի տաղանդը պատկանում էր ժողովրդին:

Հայաստան երկրի դարաւոր տառապանքն էր իմաստաւորել այդ տաղանդը: Իր մեծ նախորդների՝ Նարեկացու եւ Շնորհալու, Աբովեանի ու Ալիշանի, Սիամանթոյի ու Զարենցի ոգին էր, որ հարազատ որդու իրաւունքով ժառանգել էր նա: Կոմիտասեան անլռելի դանդակատան արձագանգներն էին նիրհում նրա արեան մէջ, որ արթնացան ու հնչեցին այնքան ուժգին, այնքան հարազատ ու հայրենաշունչ... Հնչեցին, իրենց զօրանշները փռելով ամբողջ հայ ժողովրդի հոգում՝ Մայր Հայաստանից մինչեւ Սփիւռքի ամենահեռաւոր ծայրերը...

Գիտեմ, այսօր ամբողջ հայ ժողովուրդն է սգում իր սիրելի զաւակին, գիտեմ, անփարատ է բոլորի վիշտը եւ սակայն ծանր, անհունօրէն ծանր է բոլոր նրանց համար, ովքեր մօտիկից գիտէին նրան... Գիտէին, թէ լեռնային գիւղից քաղաք եկած զեղջուկ պատանին ի՛նչ գնով, ի՛նչ յամառութեամբ ձեռք բերեց այն վիթխարի կուլտուրան, այն բազմաղան ու բազմակողմանի իմացութիւնը, որ հիացնում ու զարմացնում էր ամէնքին, բոլոր նրանց համար, ովքեր գիտէին, թէ ինչպիսի մաքառում եղաւ նրա կեանքը, ինչպէս տպրեց, ինչպէս լոյս աշխարհ հանեց իր հոգու եւ մտքի հարստութիւնները, ինչպէս փոթորկուեց ու ալեկոծուեց, ինչպէս սիրեց ու տուեց. ինչպէս մրթնեց ու լուսաւորուեց...

Նա խաղաղ պատկած էր դագաղում, եւ ճակատին՝ ազնիւ ճակատին, մի փոքրիկ, դեռ տաք ու մխացող վէրք կար, ու այդ վէրքը պիտի այրի քեզ քո ամբողջ կեանքում, որովհետեւ նա չատ էր սիրելի, արիւնը չատ տաք, սառը չատ էր ձգող, որովհետեւ այդ իմաստուն այրը մի մեծ ու հրաշալի մանուկ էր միաժամանակ...

Պիտի այրի, որովհետեւ ապրում էր կողքիդ, ընկերդ էր, գիտէիր մեծութիւնը, սակայն չէիր չտապում ինչպէս հարկն է արժէքաւորել ու իմաստաւորել նրան, քանի որ թւում էր, թէ պիտի ապրի ու ապրի...

Բայց ահա եկել է դաժանը, անողորմը, անհերքելին, եկել, յաւիտեան փակել է նրա շողուն, խելացի աչքերը, պահանջում է խօսել, ու չես կարողանում մշտի ու արցունքի քառսից առանձնացնել այն խօսքը, որին արժանի էր նա...

Եւ կարողանում ես ասել միայն, որ կորստի մեծութիւնն անչափ է, որ մեր ժողովուրդը կորցրեց մի սիրելի զաւակ, մի լուսաւոր խելք, մի մեծ ազնուութիւն... Կորցրեց մի մարդ, որի անխօս ներկայութիւնն իսկ արդարութիւն եւ ազնուութիւն էր պարտադրում իր շրջապատին:

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

digitised by A.R.A.R.@

«ԵՒ ԱՑՐ ՄԻ՝ ՍԵՒԱԿ ԱՆՈՒՆ...»

Այն էլ գլուխ, յաւո՛ղ գլուխ,
Որ կարդուելուց յետոյ է միայն
Երբեւէ ծառի բուն հաստութիւնը:
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Նախանձեցին...
Աստուածները նախանձեցին
Ու խանձեցին
Որթատունկը մեր քերթութեան,
Անմահ բառի ու դպրութեան՝
Ողկոյզներով իր ծանրաբեռն,
Որ ելնում էր յաւէտուղէշ
Անմահութեան ծառն ի վեր...

Խաղով մի գէշ
Խորտակեցին մուրը նեղքող լոյսի մի սիւն
Ու դուռը մեր անհուն Յոյսի:
Հիմա՛՝ շուրթերդ ես կրծոտում,
Ծամում ես քո սիրտն ու հոգին՝
Ի լուր նման մի անմման, անհա՛մ, յիմա՛ր մի կատակի...

Եւ որքա՞ն դեռ պիտ' սպասենք,
Ասէ՛ք, ասէ՛ք,
Որ գայ նորէն,
Ինուի նորից
«Այր մի»՝ սեւաչ ու սեւորակ՝
Բորբ անունով Պարոյր Սեւակ...
— Դու խելօք խենթ, տագնապ ու տենդ խռովայոյզ,
Մգլոտ ու հին թումբեր քանդող վարարուն գետ,
Նորը փնտռող դու կիրք ու յոյզ, —
Դու՝ սեւաչեայ, սեւագանգուր Սեւակ Պարոյր...
Աստուածները նախանձեցին, նախանձեցին
Ու խլեցին այն «բանալին», որ մեր բախտի «դուռն» էր բացում,
Երգը մեր հին՝ նորոգում էր ու թարմացնում:
— Եւ որքա՞ն դեռ պիտ սպասենք,
Որ գաս նորէն,
Ինուես նորից՝
Դու նոր բանի ստեղծարար, կախարդող ուժ,
Դու «բանալին» մեծ անելի՝
խորախորհուրդ մեր պատմութեան,
սրտի՛, հոգո՛ւ ու դպրութեան
ու մեր քնած բախտի անքան, —
Օ՜ դու «այր մի» խենթ մի, տենդ մի՝
Սեւագանգուր ու սեւորակ,
Բորբ անունով Պարոյր Սեւակ...

ԱՐՄԱՆՏ

digitised by A.R.A.R.@

Գոթթ՝
ԳԻՈՐԳ ԵՍՐԱՅԵՆՆԻ

Աստվար բոլոր գէմքերուն պէս, Գարդր Սիւակի տագանդը ունէր ե՛և սուր հեղնանքի, ե՛և զուարթախոհութեան ուշագրաւ մասեր, ու նաև զուարթախոհութեան տարթ տուող կողմեր, ոճական ձեռնտու ձեւեր, որոնցմէ օգտուեցան թէ՛ դաղրանիկարիչները եւ թէ երդիծական հակումներ ունեցող արուեստագէտներ ի հաճոյս իրեն եւ իր ընթերցողներուն։

Եղերաբախտ բանաստեղծին կողմերուն չիչատակութեան, ուրուանկարին նուիրուած այս բացառիկը թերի պիտի ըլլար անտարակոյս, եթէ անտես ընէինք գիծերով ու բառերով իր մասին կազմուած զուարթախոհութեան հետագայ նմոյշները։

Կադրանկարներն ու պարոդիաները իրենք զիրենք կը բացատրեն, իսկ այս էջին վրայ արուած արձակը, որ առնուած է «Գրական թերթ»էն 31 Դեկտեմբեր 1963ի թիւէն, տասնեակ մը գրագներ երգիծող շարքի մը Գ. Սիւակին նուիրուած բաժինն է, ու գրածը՝ Գուրգէն Մահարիի եւ Համօ Սահեանի, որոնք Նոր Տարուան աւթիւ «Եղան մեր մի շարք բանաստեղծների ու արձակագիրների մօտ եւ գրի առան նրանց ներկայ եւ հետագայ անելիքները, նրանց ցանկութիւններն ու մտորումները»։

Լոյս տեսաւ իմ «Մարդը ափի մէջ» գիրքը։ Քննադատների եւ ընթերցողների մի մասը կարծում է, որ իմ ափը շատ է մեծ եւ նրա վրայ մարդը գրեթէ չի երեւում. միւս մարդի կարծիքով՝ իմ մարդն այնքան մե՛ծ է, որ չի տեղաւորուում իմ ափի մէջ։ Գոյութիւն ունեն եւ մարդիկ, որոնք իմ գրքում չեն տեսնում ոչ ափ, ոչ մարդ։

Պէտք է ասեմ, որ իմ ափի մէջ նստած մարդը ես եմ. եւ դուք չէք գտնի այնքարհում մի մարդ, որը համապատասխան չլինի իր սեփական ապրին։

... Այսպիսով ես՝ էլի, զարձեալ, նորից, կրկին, վերստին աշխատում եմ մարդկանց խելք հասկացնել։

Գալով նրանց, որոնք կարծում են, թէ իմ գրքում ոչ մարդ կայ, ոչ ափ, ես նրանց կ'անդրադառնամ հետագայում. նրանց մասին գրելիս, ես վերնագիրը չեմ դնի ոչ վերջում, ոչ առաջում։ Իսկի վերնագիր էլ չեմ դնի։ Բա ո՞նց։ Համ գլխիս բամփեն, համ չչխկչխկա՞մ...

digitised by A.R.A.R.@

ՀԻՐԱՍԻՐՈՒՄ ԵՄ

Հիւրասիրում եմ
Զմրան վերջերին՝ խաղողի ճութով,
Նրէ չէք ճաշել՝ կամուի ճուտով,
Որին, հաւատա՛, ես չեմ սպանել:
Պատիւ եմ անում,
Ով քաջ սպաներ,
Ձեզ՝ արծակուրդով,
Մեր պատմաբաններ՝ այնպիսի նիւթով,
Որ կը նախանձէր եւ Հերոդոտը:

. . . . . .

Լռակեաց ձորին՝
երգող արտաւոտով,
Յոգնած հնձուորին՝
արեւամուտով,
Ջրով՝ ծարաւին,
Սառած եիւսիսին՝ օդով հարաւի,
Պառաւին՝
երկար ու անվիշտ կեանքով,
Կեանքին՝ խնդութեամբ եւ
ուրախութեամբ,
Ուրախութեանը ոչ թէ թռիչքով, այլ
տեւողութեամբ,
Կախեալ լուսնակին՝ սեփական լոյսով,
Կախեալ գաղութին՝ փրկուելու յոյսով,
Ցոյսին՝ կատարմամբ...

Հիւրասիրում եմ
Անզուակ մարդուն՝ երազած որդով,
Ով չունի եւ տեսեմ՝ քառասուն պարտով,
Փոքր աշխարհին մեծ ժողովրդով:

Հիւրասիրում եմ մի վերջին անգամ
Գաղտնիք պահ տուող յուզուած սրտերին
Ինձ նման ձրի ու թանկ լոմքարդով,
Իսկ գեղեցկուհուն՝ ինձ նման ճորտով,
Ինձ նման ճորտին՝ մի շռայլութեամբ,
Որ չունի եւ վերջ,
Վերջին՝ սկիզբով,
Սկիզբին՝ յարմար շարունակութեամբ,
Որ ունի նաեւ... չափի զգացում:

Հիւրասիրում եմ ես ինձ էլ ճայնով՝
չափի զգացմամբ...

Պ. ՍԵՒԱԿ

(Հետեւեալ)

digitised by A.R.A.R.@

ՀԻՐԱՍԻՐՈՒՄ ԵՄ

■

Պարոդիա Պ. Սեհլեկի
«Հիրասիրում եմ» բանաստեղծությանն

Հիրասիրում եմ.
Հաւերին կուտով,
Հաւատէրերին՝ ձիով ու ճուտով,
Ընթերցողներին՝ խօսքի կարկուտով...

Թէ տանձի ծառը ուզում է ջրուել,
Հիրասիրում եմ նրան իմ երգով,
Ով ցանկանում է էլ երգ չգրել,
Հիրասիրում եմ իմ տպած գրքով...

Հիրասիրում եմ.
Սարին կայծակով,
Ճահճին՝ մոծակով,
Ասեղին՝ ծակով,

Հիրասիրում եմ.
Ձիերին թամբով,
Երկնքին՝ ամպով,
Երգին՝ քորէյով, դակտիլով, յամբով:

Հիրասիրում եմ.
Աղուէսին մորթով,
Կովին՝ լաւ հորթով,
Ով ձանձրացել է բլիթ ուտելուց՝
Հիրասիրում եմ լաւորակ տարթով:

Հիրասիրում եմ.
Իմ նոր երգերին՝ յանգով ու վանկով,
Ցանգին ու վանկին՝ ինձ նման ճորտով,
Ինձ նման ճորտին՝ մի ապատութեամբ,
Որ իր մի տողով թռչի դէպի ամպ՝
Ու նորից հողին իջնի յաջորդով:

Հիրասիրում եմ մի վերջին անգամ.
Արտերին հողով,
Վարդերին՝ ցօղով,
Իմ նոր երգերին՝ քաջ ընթերցողով,
Հայպետհրատին՝ տաս հազար տողով:

Օ՛, թողէք. նորից հիրասիրում եմ.
Թոյլ պոետներին՝ մոռացման քանտով,
Ջահելին սիրով,
Սիրողին՝ խանդով,
Սիրող-խանդողին՝ իմ մեծ տաղանդով,
Եւ ընթերցողի յոգնած ականջին՝
Երկաթբետոնէ թմբկաթաղանթով:

Ն. ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԴԱՓՆԵԿԻՐՆԵՐԸ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԵԱՐԹ

(«Գրական թերթ», 1968, թիւ 1)

★

Ես ի՞նչ եմ անում··· Ձեր աւանդական
Զրաղացները ես ջրատում եմ,
Հին ջախջախները
Ձեր գլխին ջարդում ու խրատում եմ,
Որ չկրկնէք, թէ արջը արջ է,
Եւ ձուկ է ձուկը:
Ես պսակում եմ արջը ձկան հետ,
Դարձնում մարդ ու կին···
Ես չեմ նահանջում, այլ պահանջում եմ
Անյապաղ թողէք
Ձեր խրիզանդէմն ու երիցուկը
Ճանապարհ տուէք իշակաթնուկին:
Ապա թէ դառնում
Վերստին, դարձեալ, նորից ու կրկին
Խրատում եմ ձեզ,
Որ երգը երգ է լոկ այն ժամանակ,
Երբոր նրա մէջ միտքն է միրաժը···
Հը, ի՞նչ էք կարծում, վերջում, վերջապէս
Ձեզ մի լաւ յանգով չգոհացնե՞մ,
Չգոչի՞մ նաեւ··· «Կեցցէ տիրաժը»:

(«Գրական թերթ»)

ԳԱՐՆԱՆԱՑԻՆ ԿՍՄԻԹՆԵՐ

ԱՊՐԻԼ ՄԷԿԻ ԺՈՂՈՎԱՆՈՒ

■

Պարտականութեան եւ սիրոյ միջեւ
Ցցուած է սուտը
Ուղեփակոցի գերանի նման:
Օ՛, դու իմ լխտիկ, թխլիկ անմման,
Ա՛ռ այս ձեռքիս, թէ հակառակ ես
Գոնէ մի օրուայ ուղղամիտ ստին:
Հաշուեցէք հապա հրատարակուած
Գրքերից բոլոր
Քանի ճիշդ խօսք է կպչում մեր ստին
Եւ քանի՛-քանի՛ ստեր են ցցուում
պարտականութեան եւ սիրոյ միջեւ
Ուղեփակոցի գերանի նման:
Ա՛խ, դէ եաման:

ՆԱՆՆԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Գ. ՍԻՐԱՆ

... Եվ այն էլ գիտեմ,
Եվ գիտեմ հաստատ
(Զարմանք ու ես անմեղսակ, խամ եմ...)
Հեռու Նեղոսի մի ափին նստած
Իմ տոտալիտար դեմքն է նկարում
Մեր Սարոյանը...
«Գ. Սիրան.— ես գիտեմ...»

digitised by A.R.A.R.@

ԴԱՐՁԵԱԼ ԻՐՄՈՎ

Տարի մը ամբողջ չհաւատացինք անհաւոր անակնկալին ու տարի մը ամբողջ բաղմապատկեցինք, բիւրապատկեցինք եւ կերտեցինք կորուստային կապուած նոր հաւատամք մը, չարունակեցինք գիր հաւատքով սպասել իր գալուն»:

Ու այդպէս ալ եկաւ ինք:

Վերադարձաւ՝

Պարոյր Սեւակ՝ բանաստեղծը:

Պարոյր Սեւակ՝ տեսաբանը:

Պարոյր Սեւակ՝ գիտնականը:

Պարոյր Սեւակ՝ քննադատը:

Բայց եւ միշտ ու ամէնէն աւելի մեզի հետ եղաւ Պարոյր Սեւակ Մարդը: Մարդը ափին մէջ, մարդը աչխարհին մէջ, մարդը՝ գինք ճանչցող ու չճանչցողներու սրտերուն մէջ...

Ու խօսեցան մարդիկ, պոռմեցին, գրեցին, յուշագրեցին, յիշեցին, ոմանք կրկնեցին իրենց արցունքները, ուրիշներ նոր յուզումներու, չպեղուած ապրումներու յոյզը յայտնաբերեցին:

Ամէն օր նոր գիւտ մը յայտնուեցաւ իրմէ, իր մասին. նոր լուսաբեր մը յորդեցաւ իրմով, լինելութիւն մը վերածնաւ իր յիշատակին հետ:

«Վախնանը» այստե՛ղ եւս դարձաւ «Սկիզբ»: Դա՛րձեալ իրմով փոխարինուեցաւ կորուստը, ի՛նք մխիթարեց սրտերը: Զինք սահմանելու համար իր բառերը փոխ առնուեցան, իր մեծութեան ոլեկոչումով մեզմացան յուզումները:

Մեկնեցաւ, բայց չաւարտեցաւ:

Մարմնեղէն գոյութեան դադարումով անհիւթ ներկայութեան զգայնութիւնը տարածուեցաւ կարծես եւ ան չդարձաւ յիշատակ, որովհետեւ չբացակայեցաւ երբեք:

Եւ արդէն ինչպէ՞ս կրնար բացակայիլ «Լոյսի ադբիւրը»:

Ինչպէ՞ս կրնայ չմնալ «ճառագայթային» ու ճակատագրային այդ «խստէն» ախտաւոր բանաստեղծը:

«Անկատար տեսիլները» կատարուեցա՞ն մթին:

«Ղօղանջին» խուլ արձագանգները լսեցի՞ն կարծէք:

Ինչպէ՞ս կրնայ աւարտիլ ան: «Հաշուիլ մեքենաները» դուրս եկա՞ն առարկաներու աչխարհէն եւ համարձակեցա՞ն հաչուել «կարօտի չափը, ծիծաղի տենդը, սպասումի տագնապը, կամուրջներու կորութիւնները, կասկածներու ահը, եղկլագունտի ծնունդները»:

Այս բոլորը չաւարտեցան ի հարկէ, չեն աւարտիր բնաւ: Երկրագունտի ծնունդներուն վրայ՝ այս բոլորը ծնունդ մը եւս աւելցուցին: Մարդուն եւ արուեստին մեծութեան հաւատալու հաւատքը ծրնան անանք. ծնան, մահ չճանչնալու միակ եւ վերջնական պայմանով:

ԳՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ԻՆՉՊԷՍ, ԻՆՉՊԷՍ

●

*Սեպտեմբեր*ի՞նչ բառերով ցաւդ տանիմ, սեւաչ Սեւակ,
Սեւասօսափ շշուկներո՞վ սօսիներու, Զուարթնոցի շարականո՞վ սեւաբարբառ,
Հայաստանի սեզ ժայռերուն հերթուածներո՞վ սեւաթախիծ,
Խաչքարերո՞վ արեւախանձ, թէ բառերուս թաւ տխրութեամբ սեւարդոմ:

Բառերս բոլոր քարի նման միանգամից սուգերգ դարձան կայծակնահար
Ու *«Հեռաձայն պատարագ»*ի զանգակահար կրքոտ այրին մեկնումին հետ,
Սեւականհար արցունքներուս մարգրիտներու հունչին փոխան՝ բառերս եղան
Ծով տխրութեան քարտէս անքան ու սպիտակ նոյն տխրութեամբ փուշէ
սահման:

Արծանացաւ կամրջընկէց Արաքս գետի ուրուականը հոգիիդ պէս,
Ու Կոմիտասը խելագար, Խալֆի Նոքար մեծ Սայաթ-ին հետ սիրավառ,
Անապատին չափ Տէր-Զօրի արեւախանձ եղան ցասում, ալեղուիա՜
Եղե՛ւ... եղե՛ւ... *«Եղիպի լո՞յս»*... Եղեւ արիւն, եղեւ խաւար...

Մեր սրտերուն մէջ յարաժամ անմահներու խորհուրդները հրամայող,
Ուշ-ուշ եկած, սերունդներու «կանչ»ը գոչող նորօրեայ այր,
Ինչպէ՞ս, ինչպէ՞ս սեւապսակն իմ այս հիւսեմ...
Ինչպէ՞ս կոչեմ ես ապրողաց, ինչպէ՞ս շանթեր ես բեկանեմ...

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՍ ԿԸ ՀԱՒԱՏԱՄ...

●

1971ի Յունիսի տաք օրերէն մէկուն ձիւնախառն մրրիկ մը պատեց մեր հոգիները։ Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ նոյնն էին տրամադրութիւնները, Սեւակի տառնեակ հայաբաւոր երկրպագուներէն իւրաքանչիւրը անսպասելի զոյժէն ցնցուած՝ կ'ընդվզէր ինչ որ անորոշ ուժի մը դէմ, կը բողոքէր՝ անծանօթ թշնամիներու հաւէն եւ կը մերժէր հաւատալ այդ մեծ սուտին, Սեւակի մահուան սարսափելի լուրին։

Ես այս վերջիններուն մէջ էի։

Չէի հաւատար իր մահուան, պարզ անո՛ր համար, որ անակնկալօրէն պատահեցաւ, յեսոյ Սեւակ՝ ըսելիքներով հարուստ երիտասարդ էր ու բանաստեղծ էր, այսինքն՝ բարի մարդ մը, անսահմանօրէն բարի, ա՛յնքան, որ չէր կրնար հեռանալ իր վրայ հիացող ընթերցողներէն։

Ո՛չ, Սեւակ չէր կրնար այդքա՜ն շար ըլլալ...

Ինչպէ՞ս կարելի է հաւատալ, որ այդքան արագ կրնան յեղաշրջուիլ դէպքերը, այդքան հեշտօրէն մարդը կրնայ այս ափէն մինչեւ անցնիլ...

Դժուար է հաւատալ այս բոլորին մա՛նաւանդ՝ երբ կը մերժես ընդունիլ, եւ կրնաս հաստատել, որ ան կը գտնուի այս մոլորակէն հեռու տեղ մը ու կը շարունակէ իր գրիչով հնչեցնել զանգակատուն կրող այլ գմբէթներ։

Ինծի կը թուի, թէ այդ մենք ենք, որ չենք լսեր իրմէ մեզի արձակուած արձագանգները, ինծի կը թուի, թէ մենք քնացած ենք եւ միայն ի՛նք արթուն է ու կ'երգէ, կը պատգամէ, կը պատարագէ ու կը յափշտակուի նոր տեսիլքներու ոլորտց։

Ես կը հաւատամ, որ երբ յոգնինք մեր համբուն վրայ, տաղտկանանք, յուսահատինք, խլանալ սկսինք, համբանանք կամ խուսափինք, յանկարծ պիտի հանդիպինք Սեւակին, միշտ կենդանի Սեւակին, միշտ երիտասարդ Սեւակին, աչքին՝ խորհուրդ, դէմքին՝ խրոսվք, ձեռքին՝ գրիչ...

ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ

digitised by A.R.A.R.@



Վերը՝ Պարույր Սևակի տունը, իր ծննդավայր գյուղի մէջ, ժամին՝ բանաստեղծին երևանի տունը։

***

Պարույր Սևակի մահուան տարեդարձի օրը Երևանի Կասեան փողոցի 3 տան պատին փակցուեց բանաստեղծի դիմաքանդակով մի յուշատախտակ, որը համաքաղաքացիներին յիշեցնում է, թէ այս տանը իր կեանքի վերջին տասնամեակում ապրել ու ստեղծագործել է Պարույր Սևակը։ Այստեղ է Սևակը գրել իր վերջին՝ *«Մարդը ափի մէջ»*, *«Եղիցի լոյս»* բանաստեղծական գրքերը, *«Սայաթ-Նովա»* մեծածաւալ աշխատութիւնը, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ անտիպ գործեր, որոնք տեղ կը գտնեն բանաստեղծի երկերի լիակատար ժողովածուում։

Յուշատախտակը կատարուած է զուսպ միջոցներով, սակայն արտայայտիչ է ու ճաշակով (գործ՝ Ա. Արամեանի)։

(*«Գրական թերթ»*, 1972, թիւ 27)

digitised by A.R.A.R.@

Պարոյր Սեւակ եւ իր հարազատները՝ մայրը, հայրը, ...
կինը եւ երկու զաւակները

digitised by A.R.A.R.@



ԳԱՐՈՒՆ Ա, ՁԻՒՆ Ա ԱՐԵԼ...

●

... Որ գարնան կէսին կարող էր ձիւն գալ՝ սկսել էինք մի քիչ հասկանալ,
Բայց որ ձիւն տեղար ամառուայ տապին,
Որ կարկտաբեր ամպերով պայթէր հրավառ արփին,
Որ հպօր բարդին մէկէն չորանար,
Որ տեսնող աչքը ընդմիշտ կուրանար,
Որ կեանքին, մարդուն բոլորանուէր սիրահարուածը
Ցանկարծ ի՞ր կեանքը պատահարին տար —
Ո՞վ կը հաւատար...
Տօ լա՜ճ տնաւեր...
Դու, որ քո ճամբան խոտոր ու աւեր անցար ժպտալով,
Դու, որ նոյնիսկ քո խնդութեան պահին ապրեցիր միայն ուրիշի վշտին
արցունքդ տալով,
Դու, որ մարդկային բնատրութեան խորխորատներում
Մարդուն գտնելու ջահեր վառեցիր —
Այս ի՞նչ արեցիր...

digitised by A.R.A.R.@

Մտածելն անգամ սարսափելի է,
Որ այս ունկերին չի կարող գերել, չի կարող թովել ոչ մի հորովել,
Որ այս աչքերին՝ վոյգ սեւակ օղեր, էլ չի հմայի եւ ոչ մի շողեր,
Որ այս ձեռքերը՝ իր եւ օտարի
երեխաների հայահոտ վարսը
հօ՛ր անկեղծութեամբ շոյած ձեռքերը
էլ թղթին չեն տայ
մարգարիտները պրպտող մտքի —
Դէ ե՛կ, մա՛րդ Աստծոյ, ու թէ սիրտ ունես՝
Բախտ յորջորջուածի դէմքին մի թքի...
... Արցունքը՝ արցունք,
Մորմոքը՝ մորմոք,
Մինչդեռ կատարուած իրողութիւնը մահուան սեւ դէմքով այդպէս էլ չոքեց
մեր դրան շեմին

Ու չի ընդունում եւ ոչ մի բողոք,
որ լուռ ցամաքեց ակը աղբիւրի,
Որի պարգեւած մի պաղ համբոյրին դեռ շատ-շատերն են կարօտ մնալու,
Ու կծու, կծու, ինչպէս անձրեւից հանգչող մի խարոյկ,
Այս շիրմաթումբը դեռ ծխալու է տեսնող աչքերում,
Դեռ երկար, երկար կը քայլեն մարդիկ վշտից կորամէջք,
Մարդիկ, որ ասես մի-մի կենդանի հատորներ էին Նրա ափի մէջ,
Մարդիկ, որոնց հին, անթել մոմի տեղ
Նա իր խնկահամ կանթեղը տուեց,
Բարուրեց սիրով,
Պարուրեց սիրով,
... Զնհալի հոսքից ձնծաղիկների բոցը կապուտաչ կ'ելնի սարալանջ,
Ցետոյ բողբոջի հրավառութիւն կը սկսուի այգում,
Ու ծիրանի տակ սրբացած հողին, որը այդպէս էլ մնաց անարեգ,
Իր ոդքի ինչ-որ էջը կը բացի դարերը ոսկի՝ մի յոգնած Նարեկ:
Եւ իր սիրոյ պէս յաւերժ անիծուած քարերի վրայ
Փշեր չունեցող վարդեր կը փնտռի մի Սայաթ-Նովա,
Եւ ցայգալոյսի զողանջների մէջ էլ ոչ մի եղէգ նրա կորցրածով չի պտղաւորուի:
Ապա Արաքսի սիւքի նման մեղմ աղօթքը շուրթին,
Հազին՝ սեւ կերպաս,
Այգի կը մտնի Հայրը՝ ԿՈՄԻՏԱՍ,
Ու մոխիրներից հրաշքով փրկուած արցունքի վերջին կաթիլը աչքին
կը պատարագի.

— Թո՛ղ եղիցի լոյս եւ բի՛ւր եղիցի շիրմին այս Արդար...

ՖԵԼԻՔՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Մեր Պարոյրին իր ինքնատիպ Ինկվիզիցիոն կազմած այս անունը Գրիգոր Խանջեան, անծանոթ մը չէ մեր իրականութեան։ Պ. Սեւակի «Անլռելի զանգակատուն» պոեմին երկրորդ տպագրութիւնը (Հայաստան) նկարազարդած ազգանպաստ նկարիչն է։ Իրեն համար թերեւս ցիչ է ազգանպաստ մակդիրը։ Ապարէզին կախարդներէն մէկը։ Անոնք որ նկարչութիւնէն շատ բան չեն հասկնար, թող անդամ մը դիտեն Խանջեանի պատատեսիները եւ պիտի տեսնեն, որ նոյն վայրկեանին պիտի յեղուշլնուի իրենց հոգին։ Պիտի ակռեն պաշտել նկարչութիւնը։

Սրատեսութիւն ու խորունկ է Դր. Խանջեանի «Ինկվիզիցիոն»։ Պ. Սեւակի մահուան առիթով հայ ժողովուրդի ապրած բռնանգակ սուգը պատկերի վերածած գլուխ-գործոց մը։

digitised by A.R.A.R.@

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԸ ՅԱՒԵՐԺԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

●

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը որոշում է ընդունել սովետահայ մեծ բանաստեղծ Պարոյր Սեւակի (Պարոյր Թոփչյանի Ղազարեանի) յիշատակը յաւերժացնելու մասին: Բանաստեղծի անունով է կոչուել Երեւան քաղաքի Օրջոնիկիձէի շրջանի № 123 միջնակարգ հանրակրթական դպրոցը: Աշխատաւորների դեպուտատների Երեւանի քաղաքային սովետի գործկոմին յանձնարարուած է Պարոյր Սեւակի անունով կոչել քաղաքի փողոցներից մէկը եւ յուշատախտակ փակցնել կասեան փողոցի № 3 շէնքին, որտեղ նա ապրել է:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը հանրապետական կուլտուրայի մինիստրութեանը պարտաւորեցրել է 1972 թուականի ընթացքում ստեղծել Պարոյր Սեւակի տուն-թանգարան Արարատի շրջանի Սովետաշէն գիւղում: Բանաստեղծի ծննդավայրում կը կանգնեցուի նրա կիսանդրին:

Հայկական ՍՍՀ գիտութիւնների ակադեմիայի Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտին յանձնարարուած է տպագրութեան պատրաստել եւ Պարոյր Սեւակի ծննդեան 50-ամեակի առթիւ (1974 թ.) հրատարակել մենագրութիւն նրա կեանքի եւ ստեղծագործութեան մասին: 1972–1973 թուականներին կը հրատարակուեն բանաստեղծի երկերի ժողովածուն, ինչպէս նաեւ նրա բնաբեր ստեղծագործութիւնների միհատորեակը ռուսերէն:

Սահմանուած է Պարոյր Սեւակի անուան մէկ թոշակ Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտէտի ուսանողների համար:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը անհատական կենսաթոշակներ է սահմանել բանաստեղծի ծնողների եւ ժառանգների համար:

(«Գրական թերթ», 1971, թիւ 38)

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ ԵՐԿԵՐԸ ՎԵՑ ՀԱՏՈՐՈՎ

●

«Հայրիկը» հաղորդում է, որ Պարոյր Սեւակի թողած գրական հարուստ ժառանգութիւնը՝ բանաստեղծութիւններ, պոեմներ, բանաքրքրական, գրականագիտական արժէքաւոր ուսումնասիրութիւններ եւ մենագրութիւններ, հայ դասական ու ժամանակակից պոեզիայի, լեզուի, մշակոյթի ամենատարբեր հարցերի վերաբերեալ յօդուածներ, ամփոփուելու է վեց հատորներում:

Առաջին հատորը ընդգրկում է «Անմահները հրամայում են», «Սիրոյ ճանապարհը», «Նոքին էզ հետ», «Մարդը ափի մէջ» բանաստեղծութիւնների շարքերը, երկրորդը՝ «Եղիցի լոյսը» եւ թարգմանութիւններ: Երրորդ հատորում կ'ամփոփուին Սեւակի «Անհաշտ մտերմութիւն», «Ուշացած իմ սէրդ», «Երգ երգոց», «Նահանջ երգով» պոեմները եւ թարգմանութիւններ, չորրորդում՝ «Անլռելի զանգակատունը», «Եռաձայն պատարագը», «Եւ այր մի Մաշտոց տնունը»: Հինգերորդ հատորում տեղ կը գտնեն նրա ուսումնասիրութիւնները, գրականագիտական, արուեստագիտական եւ հրապարակախօսական յօդուածները: Վեցերորդ հատորում ներկայացուելու են Պարոյր Սեւակի անտիպ բանաստեղծութիւններից, պոեմներից եւ յօդուածներից:

Բաժանորդագրութիւնը կատարւում է «Հայրիկ»-ի եւ Հայկապի խանութներում:

(«Գրական թերթ», 1972, թիւ 27)

digitised by A.R.A.R.@

ՊՍԱԿ ՊԱՐՈՅՐԻՆ

...ԵՆԶԻՐ ՈՒՐԵՄՆ ՍՈՒՐԲ ՇԻՐԻՄԻԴ ՑԱԿ,
ՔԱՆԶԻ ԱՐԹՈՒՆ ԵՍ ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐՈՒՄ։

Ս իրոյ պատկերումը ամէն գրականութեան փորձաքարն է։

Ե թէ ճշմարիտ ու մեծ բանաստեղծն է խօսում՝ լռում է նրա կենսագրութիւնը։

Վ ա՛յ այն բանաստեղծին, որ կաւճով է քաշում սահմանագիծն իր աշխարհամասի։

Ա րուեստի հարցերից խօսողը պարտաւոր է նախ եւ առաջ խօսել արուեստով, ոճի մասին դատողը պիտի ոճ ունենայ։

Կ եանքի մէջ իսկապէս ներթափանցելը գրողից պահանջում է խիստ, կրքոտ որոնում։ Պահանջում է ունենալ իր «ես»ը։

Ը նթերցողի մասին բնաւ չմտածելն անկարելի է, շատ մտածելը՝ կործանարար։

Մ եր արմատները թերեւս խորն են աւելի, քան բարձր է մեր սաղարթը։ Ով պատմութիւն ունի՝ չի կարող ետ չնայել։ Ով անցեալ ունի՝ չի կարող յիշողութիւն չունենալ։

Ե թէ նոյնիսկ կամենաս էլ, իսկական գրողը չի կարող չլինել ազգային։ Դա բացառուած է։

Ծ ննդի է նման իսկական բանաստեղծութիւնը. նա պիտի ունենայ իր մէկ գլուխն ու երկու ոտքը, մէկ սիրտը եւ երկու աչքը, մէկ բերանը եւ երկու աչքը։

Է ականը ոչ թէ փնտռելն է, այլ գտնելը։

ԵՒ չժխտելով մարդկանց «տարբերութիւնները», արուեստագէտներիս հիմնական գործը պիտի լինի զբաղուել մարդկանց «նմանութեամբ»։

Ա նկարելի է չպատկանել որեւէ ժողովրդի եւ դառնալ միջազգային։ Եւ անկարելի է երեւակայել ոեւէ ազգային մեծ գրող, որ չունի միջազգային արժէք։

Ն ոյնը լինելով՝ Մեծանում եմ ես, Հարունակում եմ...

Մ եծ գրող է դառնում նա, ով ողնուծուծով հասկանում է, որ ինքը նախ՝ մարդկութեան պատկան է, ոչ թէ միայն որեւէ ազգի։

Ա մէն ճշմարիտ գրող ժողովրդի անձնագիրն է կամ իր ժողովրդի «դատական գործը»։

Շ անճաք լինելուց առաջ եւ լինելու համար պէտք է նախ մարդ լինել, ինչպէս որ համամարդկային լինելուց առաջ եւ լինելու համար հարկաւոր է նախ լինել մարդկային։

Կազմեց՝ ՄԻՀ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Гос. Библиотека ZU Հ-ԱԲԱ.ՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան
digitised by A.R.A.R.@

ՍՏԱՑԱՆՔ

●

Ստացուած գիրքերուն յիշատակութեան յատկացուած այս սիւնակին մէջ, այս անգամ պիտի յիշատակենք միայն մէկը, որ գիրք մը չէ, Պ. Սեւակի շարք մը բանաստեղծութիւններուն մեկնաբանութեան նուիրուած ձայնապնակ մըն է, գործ՝ մեր բնմերէն ու հայկական ռատիօ-ժամէն հանդիսատեսներուն եւ ունկնդիրներուն ծանօթ

ԱՐԱ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆի

Ջերմօրէն յանձնարարելի ձայնապնակ մը, ուր Յովհաննէսեան մեկնաբանած է եղերաբախտ բանաստեղծին հետեւեալ յատկանշական կտորները.—

1.— Նորօրեայ աղօթք
2.— Ճակատամարտ պատի հետ
3.— Մաղրածուն
4.— Խաղալիք սարքուղը
5.— Պարապուրդիւն
6.— Մեքանում եմ
7.— Սխալ խօսք սխալի մասին
8.— Ճառագայթային ախտ
9.— Խոստովանութիւն
10.— Անորոշութիւն
11.— Սերունդների հերթափոխութիւնը
12.— Ողբամ մեռելոց

Adress. P. O. Box 1161
Beirut - Lebanon

باكين
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قزانجيان

●

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

●

ԲԱԳԻՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ
Գ. ՍԱՍՈՒՆԻ
ԽՄԲԱԳԻՐ
Գ. ՍՆԱԳԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ
Ց. ՖԵՂԱՐԴ
Տ. ՈՍԿՈՒՆԻ
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ
Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ
ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ
† ԵՊ. ՊՕՅԱՃԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI
Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

Հեռաձայնի թիւ 296898

ՅՊ. ՀԱՄԱԳՈՒՅՆ

digitised by A.R.A.R.@